Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

9147.925
Ч-84

1406

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.

19 AUG 2006

Ե. ՍՈՒՐԵՆ

ՄԵՐ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I

9(47.925)
Ե-84

ՄՈՍԿՎԱ—1928

05 SEP 2011
19 AUG 2006
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԱՑԵ՛Ք
Арм
3-4307а
9(47·925)
Ե-84
3-4307а

Ե. ՍՈՒՐԵՆ

ՄԵՐ ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I

1406
1286
22/67

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԵՂԻՆԱԿԻ

ՄՈՍԿՎԱ—1928

10 APR 2013

ՀՀՇ

Е. СУРЕН

НАШИ РАЗНОГЛАСИЯ

I

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ Նոր ՍՍՀ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

(1487-63)

ф 1344-91

Главлит № А 9191. Тираж 2000.

3-я тип. ГИЗ-а С.С.Р. Армении
Москва, Армянский пер., 2.

[redacted]

Բոլշևիկյան հին պայքարի ընկած ընկերները—
անմոռաց ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ,
անողոք ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ,
սայթաքած ԲՈՂԴԱՆ ԿՆՈՒՆՅԱՆԻ
հիշատակին

[redacted]

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներկա գրքուկի մեջ տալիս ենք այն մի քանի հոդվածները, որոնք զանազան ժամանակ լույս են տեսել Թիֆլիսի «Կարմիր Աստղ», «Մարտակոչ», Բագվի «Կոմունիստ» որթերթերում ու «Հայարտուն» ժողովածվում։ Այդ հոդվածներն են.—

I. «Ձերկու տենդենց»—«Մարտակոչ»—1927 թ.

II. «Բալշեվիկյան պատմության մեջ անման մի նմուշ»—«Հայարտուն» № 1—1925 թ.

III. «Փիգուրա Ողիոզա»—«Մարտակոչ»—1923 թ.

IV. «Գաղութահայ խնդիրները»—«Կոմունիստ»—1925թ.

V. «Ինքնաբնութագրման փորձ»—«Մարտակոչ» 1925թ.

VI. «Արշակ Չուրաքյան—նրա տեղը Անդրկովկասի բանվորական շարժման մեջ»—«Կարմիր Աստղ»—1923 թ.

Վոմանց—մանավանդ մեր չափազանց նրբազգաց ֆիլիսաերներին—կարող է թվալ, թե մեր հոդվածները գրված են խիստ վոճով, չափազանց «կրքոտ» առնով։ Ճշտակի խնդիրը և և հարկ չենք համարում նրանց ախորժակին համակերպվել։ Ավելին կասենք. մենք այդ չենք համարում մեր հոդվածների պակասավոր կողմը։ Մեր խորը համոզումն է, թե կիրքը, ատելությունը, «հայհոյանքը»—ինչպես նաև «անտարբերությունը», կոմպլիմենտը, սերը՝ «դասակարգային չափանիշներ» են իրենց հերթին և նրանք բեղմնավորում են մարդկային գրիչը։ Մեզ՝ բալշեվիկներիս չի տրված բոն-տոնով խոսել ու շոյել գլուխը պրոլետարիատի թշնամիներին, կամ «յերբորդ սերի» անհոգությամբ ու «օբյեկտիվությամբ» յերգել Հոկտեմբերի կա-

ռուսդողների պայքարը՝ քանի դեռ գոյություն ունի դասակարգային հասարակակարգը աշխարհիս վրևե անկյունում։

Ներկա գրքուկի մեջ բերված հոդվածներից յուրաքանչյուրը կարելի կեր գարձնել մի-մի ամբողջ ուսումնասիրության, գուցե և հատատկոր հատորների նյութ։ Մինչդեռ մենք կերբեմն մոտեցել ենք այդ հրատապ հարցերին չափազանց համառոտակի, համենայն դեպս միշտ խոսցած ու սեղմ։ Ավելի լրիվ աշխատանք կկատարի մի որ մեր բալշեվիկյան պատմաուսումնասիրությունը՝ Լենինյան մեր աճող սերնդի ոգնությամբ։ Մենք, դժբախտաբար, ժամանակ, տեղ ու հանգիստ չենք ունեցել հարկավոր մանրակրկիտությամբ այդպիսի կարևոր աշխատանքների համար, վորոնց համարյա «կոնսպեկտներն» են արված այստեղ։

Մեր ներկա հոդվածները գրված են շատպ ու միշտ— ինչպեն ասում են—մի շնչով։ Բավական է ասել, վոր որինակ «Փիզուրա Ոպիոզա»-ն ծրագրված ու գրված է մի պիշերվա մեջ,—«Յերկու տենդենց» հոդվածաշարքը կերեք որվա ընթացքում, վորի վ. Տերյանի արձակին վերաբերող հոդված-թերթոնը հոդվածաշարքի նուիրիսկ տպագրության պրոցեսում։ Այդ «տեխնիկական» հապճեպությունից գուցե տուժել և մեր հոդվածների արտաքինը, բայց նա բնավ չեր կարող ազդել մեր հիմնական տեսակետների վերլուծության ուղղության վրա։

1921 թվից մինչև 1927 թիվը տևող երար հակադիր յերկու տենդենցների պայքարի մեջ շատ ուսանելի կողմեր կան մեր նոր բալշեվիկյան սերնդի համար, վորը շատ քիչ կոնկրետ տեղեկություններ ունի մեր մինչ-հոկտեմբերյան բալշեվիկյան շարժումի և հակաբալշեվիկյան հոսանքների մասին։ Անկրազեկության հանգամանքը համենայն դեպս նոր սերնդինը չե։ Յեվ քանի վոր դեռ չունինք Անդրկովկասի հեղափոխական ու հակահեղափոխական

բոլշևիկների բալշևիկյան պատմությունը, իսկ ունենք շատ փորձեր այդ պատմության կեղծման ու falsification,—մեզ թվում է թե այդ շրջանին վերաբերող ամեն ոտղ իր գործն ունի կատարելու նաև մեզանում։ Այդ իսկ պատճառով անոգուտ չենք համարում մեր վերը թված հոդվածների ժողովումը և վերահրատարակումը մի գրքուկի մեջ։

Ե. Ս.

1—1928 թ.
Մոսկվա.

ՅԵՐԿՈՒ ՏԵՆԴԵՆՑ

I

«ՅԵՐԿՐԻՑ ՅԵԿՈՂ» ԲԱՄԲԱՍԱԳԻՐՔԸ ՅԵՎ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՐՁՎԱՆՔԸ

«Մեր արեւում ի՞նչ բան միայն չեն փորձում արդարացնել մարքսիզմով և ո՞վ միայն չի հայտարարում իրեն մարքսիստ»։ Ստեփան Շահումյան

Դաշնակցական մամուլը և ընդհանրապես հակախորհրդային խավերը Հայաստանի Պետհրատի դեմ վերջ մի հրատարակություն չեն ցուցադրել յերբեք այնպիսի ջղային հետաքրքրություն և անհամբեր շահագրգռություն, վորպիսին դեմ ամենքին ամենայն մերկությամբ վաղուց հայտնի ոդիոզ Դավիթ Անանունի,—ինչպես մեր աննման ընկ. Ստեփան Շահումյանն և վորակել իր ժամանակին,— անորինակելի սանձարձակ գրչի ամեն մի տողը։

Այսոր նորից նույնպիսի անհավասարակշիռ ուրախ-ադմուկ և տիրում այդ նույն սև բանակում—պոչը Յերևանում ճոճացած, հոգին ի սկզբանե անտի հակաբալշևիկյան ռեակցիային հիմնավորապես ծախված—այդ հակահեղափոխական հեղինակի մի յերկու ամիս առաջ լույս աշխարհ ընկած վերջին հատորի առիթով*), տպագրված Վենետիկի Մխիթարյան խուցերում «ազնիվ բարեկամային» աջակցությամբ և «արդար վաստակով» կուտակած թյուրքական լիրանների ու ամերիկյան դոլլարների ընկերային գաղտադողի արտահանությամբ։

Դաշնակցական «Հառաջ»-ը Փարիզում, դաշնակցական «Հուսաբեր»-ը Յեգիպտոսում, դաշնակցական «Հայրենիք»-ը Ամերիկայում և շատ թերթեր այլ դաղութահայ վայրերում՝ առաջնորդող հոդվածների և ընդհանրապես հոդվածների շարաններ են նվիրում այդ հակահեղափոխական հեղինակի անորինակելի սանձարձակ գրչի վերջին մարզանքներին։ Վրացյան, Նավասարդյան, Աբելյան և ուրիշ վոչ-պակաս վորակված դաշնակցական ժուռնալիստներ՝ առանձին պերճախոսությամբ ու պաֆոսով անձամբ-անձին հակախորհրդային ու հակակոմունիստական պռլեմիկայի կրկեսն են իջել մինչև վերջ ոգտագործելու առիթը մեզ մի ավելորդ անգամ ևս անատամ խածնելու, և իրենց են հարազատ մեկնաբանությունները կցելու դաշնակցական պռոգրամշչիկ Նիկոլ Ագբալյանի «սրտագին կարոտը քաղող» խարդախ հեղինակի մտքի անմաքուր արտադրանքներին։

«Յերկրից յեկող» անանունյան վերջին բամբասագրքի նեղշնչած վոգևորությունը հակահեղափոխական բանակին այնքան մեծ է, վոր Դաշնակցությունը այսոր սիրով նորից վերադառնում և այդ տխրահռչակ հեղինակի վաղուց մոռացված, տարիներ առաջ (21/22 թ. թ.) վիժած շարադրություններին։ Դաշնակցական մամուլը իր վերածնված ուշադրությունը դեպի հակահեղափոխական Անանունի նախկին ստահյուսությունները պատճառաբանում է նրանով, վոր—

> «շատ կարճատև լինում հայ բոլշևիկների մշակութային եջմիածնական նեպը և առհասարակ Հայաստանի «գրական նեպը»։ Դրա համար և, վոր իր աշխատության յերրորդ ու վերջին, արդեն իսկ պատրաստ հատորը գոնե պատահմանում տպագրելու ձեռնարկած և հեղինակը»...

Ավելի կոնկրետացնելով, թե ինչու դաշնակցական մամուլը և մանավորապես «Հուսաբեր»-ը այսքան ուշացած զբաղվում է դեռ 1922 թ. «եջմիածնական նեպի» շրջանում տպված ոդիոզ Անանունի բամբասագրքի յերկրորդ հատորով, թերթը նկատում է.—

> «Հայ մամուլը չեր կարող—վորքան և ուշացած—արժանի ուշադրությունը չդարձնել նման աշխատության վրա»*)։

Ու պատում է այսոր Դաշնակցության ստի ջրաղացը, հին հարցերը նորից քամուն տալու «յերկրից յեկող», ամեն մի դաշնակի համար «անսպառ» ու «հեղինակավոր վկայությունների» հիման վրա։

*) Դ. Անանուն—«Հուսահատների հասարակական զարգացումը», 1901—1918 թ. թ., Վենետիկ, 1926 թ.։

*) Տես՝ «Դարավերջին յերեսնյակը», Յեգիպտոսի «Հուսաբեր», № 166, հոկտ. 14,—1926 թ.։

Զգեցք և, առկայն, միամտորեն կարծել, թե այդ անհամբեր հետաքրքրությունը և ջղային շահագրգռությունը դեպի սահմռկի հեղինակի դրական արգասիքները պայմանավորված են նրանց պատմագիտական արժեքներով: Բնավ կարիք չկա հիմնավորապես թափահարելու հակահեղափոխական հեղինակի մասին դիղուճները, համոզվելու թե նրանք «պատմա»-«գիտական բա-
րա սագրության տիպիկ նմուշներ են՝ փոխարեն հասարակական հոսանքների զարգացման պատմություն լինելու, թե առհասարակ չափանիշ հոգվածների շարան են՝ փոխարեն մեր յերկրի քաղաքական առաջընթաց հատվածների վերլուծական լուրջ ուսումնասիրության:

Այդպիսի չափազանց համեստ կարծիքի յենք այդ հին վնասակար տիպի թերուս հեղինակի կարողությունների մասին վեր միայն մենք—բալշևիկներս, այլ անգամ նրանք- դաշնակցականները, վորոնք առանձին սիրով ու հարգանքով շատ տանչալ հոդվածներ նվիրեցին և դեռ շարունակում են նվիրել այդ տրվածահաչակ հեղինակի հենց այդ բամբասագրքին,—վորոնք փորձեցին ու յերկար փորձելու յին կատարյալ չափով շահագործելու այդ ստագրքի ամեն մի տող Խորհրդային իշխանության ու կոմունիստական կուսակցության դեմ:

Դաշնակցական «Հուսաբեր»-ը խոստովանվում է.—

«Վ ե ր լ ու ծ ու թ յ ու ն ն է (ընդգծումը բնագրինն է—Ս. Ս.), վոր պակասում է Անանունի աշխատության մեջ: Նա ըստ մեծի մասին բավականանում է անվերապահ պընդումներով, յերբեմն հոդևշահ խորհրդածություններով և կամ մեղադրանքներով»*)

Մինչ-Խորհրդային Հայաստանում դաշնակցական կարտ-
բլանշով**) խայտառակ Բախշի Իշխանյանի հետ բալշևիկների

*) Տես «Հուսաբեր» Յեգիպտոսի 1926, հոկտ. 28, № 178:

**) Բերում ենք այդ կարտ-բլանշին վերաբերող մի յերկու վկայություն.—

«Մարտակոչ»-ի 160-ում տպված «Փիգուրա Ոլիոզա» հոդվածի մեջ և մեջի այլոց ասված է.—«Բոնկում և մայիսյան ապստամբություններ Պ. Անանունը ու նե՛չ իսկ Ս. Գարագաշին չնմանող Բախշին առանում են առկրնախ լեստ և արտակարգ լիազորություններով մեկնում են գավառ: Դաշնակցության այդ կարտ-բլանշը տեսել են մեզանից շատերը: Այդ անզուգական դոկումենտի սեագրության իսկականը տեսել ե՛ւ մեջի այլոց՝ ընկ. Արշավիր Մելիքյանը: Մենք պահանջում ենք ընկ. Արշավիրից կատարել իր կոմունիստական պարտքը» և այլն:

«Փաստն այստեղ ճիշտ և արձանագրված: Հոդվածում հիշածս փաստաթուղթը ես կարդացել եմ Յերևանում իր ժամանակին: Հարկավոր դեպքում կարող եմ տալ մանրամասն բացատրություններ: Ա. Մելիքյան»: («Մարտակոչ» № 171, սեպտեմբերի 13-ին, 1923 թ.):

Բախշին և K° պատում հին դաշնակցական կարտ-բլանշներով և դաշնակցական հատուկ, վոր ասել և սպեցիֆիկ հանձնարարություններով նաև Հայաստանից դուրս: Ահա մի այլ վկայություն ևս.—

«1921 թ. ապրիլի 12-ին Յերևանի մեծ գաղթից ուղիղ իննը որ անց, Բեշիքթեշ գյուղից Հայաստանի տարագիր կառավարության հանձնարարությամբ, Իշխանյանը վորոշում է անցնել Յեգիպտոս և այնտեղ խոսքով ու գրչով ապաշտպանել հայ դատը: Նրա թղթերի մեջ «Հ. Հայրենիքի Փրկության Կոմիտեի» մի փոքրիկ կտոր պաշտոնաթերթիկի վրա (նախագահ Ս. Վրացյանի ստորագրությամբ) հետևյալ յերկտողը կա գրված.—

«Ընկ. Բ. Իշխանյանը մեկնում է Պարսկաստանի վրայով Յեվրոպա: Սրանով խնդրում եմ Հայաստանի հանրապետության պաշտոնատար անձանց և բարեկամներին ցույց տալ նրան հարկ եղած աջակցությունը: Ընկ. Բ. Իշխանյանին հանձնարարվում է արտասահմանում ներկայացնել Հայաստանի ներկա վիճակը, ինչպես նաև պրոպագանդ մղել հոգուտ Հայաստանի հանրապետության» (Բ. Իշխանյան՝ «Յերկու ամիս բոլշևիկյան բանտում», եջ XXX, վ. Նավասարդյանի առաջաբանով):

դեմ տուրն է դուրս յեկած այդ ողիղ հեղինակի ամեն մի տող վկայում է, վոր բախտի բերմամբ տարիներ խորհրդային պետական թանգարանում ընկած այդ միանգամայն պատահական պատմական-պատվերին, իպաշտոնեն շրջապատված անցյալի հարուստ ու բազմակողմանի պատմական նյութերով, — իր պարապմունքի առատ ու վարձատրված ժամերին քաղել է մեր անցյալ որագրությունից, քաղել իրեն հատուկ անբարեխղճությամբ ու ստահպարտությամբ, իր և իր նմանների ջրազային ջուր (միմիայն ջուր) ածող կատածելի եջեր վոչ թե հասարակական-հեղափոխական շարժման ընթացքը ուրվագծելու, այլ հատկապես խճճելու այն, պրոլետարական կոմունիստական պայքարի պատմությունը կեղծելու, ստելու, ապավաղելու, նսեմացնելու իր հինավուրց հոգատարությամբ:

Մի խոսքով՝ իր և իր նմանների համար պղտոր ջուր մի դումար շահելու մտադրությամբ:

Ողիղ հեղինակի ամեն մի տողի և ամբողջ հատորի արժեքը—հետապնդած տենդենցների մեջն է: Այդ տենդենցների համար է, վոր այսոր վոտի չի կանգնել ամբողջ հակահեղափոխականն ու հակախորհրդային բույերի բանակը: Այդ տենդենցների համար է, վոր այսոր բևակիան, սկսած եջմիածնի ու վենետիկի

սնապլուծնները մինչև «ձախ» դաշնակցականները,—իրենց ուշադրությունն են կենտրոնացրել այդ ոգիով հեղինակի սուտ ու կասկածելի պնդումների վրա։

Այդ, մերթ մերկացած՝ մերթ քողարկված, բայց միշտ խարդախ տենդենցների պատճառով է, որ նա ջերմ հյուրընկալված է կարմիր գծից դուրս.—տենդենցներ՝ որոնք պինդ նստած են ոգիով հեղինակի վորակի մարդկանց ամեն մի նախապատմության ու բառի մեջ, որոնց արմատները խորը հողված են մեր երևկվա հակահեղափոխական իրականության մեջ և որոնց հետևնկարները չեն շփվում մեր բալշևիկյան հետևանկարների հետ և՛ վոչ մի կերպ, և՛ վոչ մի կետում,—բայց հակադրվում են ամեն կերպ, և ամեն կետում։

Վ.ՈՐՈՆՔ ԵՆ ԱՅԴ ՏԵՆԴԵՆՑՆԵՐԸ։

II

«ԹԱՔԱՐ ՑԵՂԻ», «ՌՈՒՍ ՄՈՒԺԻԿԻ» ՅԵՎ «ՆԵՐՔԻՆ ԹՈՒՐՔԻ» ՆԱՂԼԸ։ «ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ» ԹԵՈՐԻԱՆ

Սորհրդային իրավակարգը արդյունք է պրոլետարիատի վոչ միայն բաց ճակատամարտում—քաղաքացիական կռիվներում ամեն կարգի շահագործողների դեմ, տարած արյունոտ հաղթանակի, այլև հետևանք բանվորության ներսում գործող բոլոր դասի համաձայնական հոսանքների նախապես անվերապահ ու կատարյալ պարտության։ Բանվորա-գյուղացիական իշխանությունը չէր կարող առնել աշխարհիս մի վեցերորդ մասում պրոլետարական պետության գոյության տանտիրությունը, եթե բանվոր դասակարգի ավանգարդ կուսակցությանը չհաջողվեր մերկացնել, մեկուսացնել, քայքայել, չախչախել մենշևիկ-եսերական «սոցիալիստական» ռեակցիայի շարքերը հիմնավորապես ու կատարելապես։

Ակներև է այնտև, վոր միջազգային հեղափոխության առաջխաղաց ընթացքի համար չկա ավելի խանգարիչ ու կասեցնող, կազմալուծիչ ու լքող հակահեղափոխական ուժ՝ քան կեղծ-սոցիալիստական և կեղծ-բանվորական կուսակցությունների գործունեությունը,—կուսակցություններ՝ վորոնք ամեն քայլափոխում յերդվում են «սոցիալիզմով» և հոլովում «հեղափոխություն» բառը՝ հենց նույն քայլափոխում իսկ դավաճանելու սոցիալիզմին և դավադրելու հեղափոխության դեմ, քողարկելու իրենց գործակցությունը բանվոր դասակարգի անհաշտ թշնամի տարրերի հետ*)։

Այլ պայքարի և ուժերի տարբեր բաղխումների յեղրակացություն չե խորհրդային իրավակարգը Արարատյան դաշտում։

Միամիտներին ու չարամիտներին միայն կարող է թվալ, թե Բաֆֆու յերազած ծակ-ազգային խայտաբղետ լաթի-կտորի

*) Տես՝ Լենինի «Ձախությունը կոմունիզմի մեջ»—թարգմ. Ռուբեն Քաջունյանի և Ս. Ցերզնկյանի, 1921 թ., Թեֆլիս։

վոխարեն Կոմունիզմի ալ-կարմիր դրոշակի ծածանումը Յերևանում՝ սոսկ մի «պատմական պատահականություն» եր, «յերկրից անկախ» ու «ժողովրդից դուրս» քաղաքական-հասարակական ուժերի դժբախտ դասավորման թյուրիմաց թելադրանք։

Յերբ Լենինգրադում բռնկաց և հաղթանակեց Հոկտեմբերյան հեղափոխությունը, նույնպես շատ-հատատապես ու կամքանոտ դեմքի արհամարհական ծամածռություններով պնդում եր, թե—

— ա ր տ ա ք ի ն ղինվորական ուժերի ներսի «դավաճան» ու «մատնիչ» տարրերի հետ համաձայնեցրած դ ա վ ա դ ր ո ւ թ յ ո ւ ն է «մեծ և միացյալ Ռուսիո» դեմ...

թե—

— «գերմանական կայզերի սադրած գործ է»...

թե—

— «Լենինը գերմանական ագենտ է»...

— «Նեմեց շպիոն» և այլն և այլն։

Դաշնակցության բռնակալության անկումից հետո, մեզ մոտ թուրքակի պես կրկնվել է նույն այդ հակահեղափոխական պատճառաբանությունը Դաշնակցության կողմից՝ խայտառակ Բախշիի և ոդիոզ Դավթի «գաղափարական» գլխավորությամբ։ Սակայն այսոր, Խորհրդային Հայաստանի ավելի քան վեցամյա գոյությունից հետո, ակարամիտներին թերևս կարող է թվալ, թե դաշնակցական ուժմին հաջորդեց պրոլետարականը, վորովհետև դաշնակ անճարակ Համո Ոհանջանյանը սիրալիրությամբ զիջեց իր նախապատերազմական աթոռը մեր պրեզիդիումի կոմունիստ Ս. Կասյանին՝ վերջինիս վոսկեգույն ակնոցների պատվին,—վորովհետև խմբապետ-մատուցերիստ Դրոն իր հավլունի թուրը կամովին դրեց կարմիր հրամանատար ընկ. Վելիկանովի վոտքերի տակ, վորպես «մեծ և միացյալ Ռուսիո» ղինվորության ներկայացուցչի...

Սակայն պատմական իրականությունը դրա հենց հակառակն է։

Խորհրդային իրավակարգը—ինչպես լայնածավալ պրոլետարական պետության բոլոր անթիվ մասերում, նույնպես և Հայաստանում—ձևավորումն է տասնյակ տարիների նախատնտեսական ու նախապատերազմական համառ աշխատանքների, Հոկտեմբերից առաջ ու հետո վարած հեղափոխական-կոմունիստական արյունոտ պայքարի։

Հայաստանում խորհրդային իրավակարգ հաստատելու առաջին մոտ յերկու տարին (1920 թ. նոյեմբերից—մինչև 1922 թ. յերկրորդ կեսը) շատ համառ եր մեր շուրջը ու տարածված այն կարծիքը (իհարկե, շարունակ խմորվող դաշնակների և սրանց ծպտյալ ու ակնհայտ արբանյակների ջանքերով), թե բանվորա-գյուղացիական իշխանության հաղթանակը և «մեծ ու միացյալ Հայաստանի» տապալումը ապահովվել է թաթար ցեղի և ոուս մուժիկի դավադրական ղինակցությամբ «նեքին թուրքի»—այսինքն հայ կոմունիստների հետ։

Այդ մասին ունինք ամենատուլդ վկայություններ կասկածից դուրս աղբյուրներից.—

«1920 թ. ամառը Հայկական հանրապետության ունեցած մի շարք վայլուն աջողությունները ներքին և արտաքին ճակատներում, ավելի լարեցին իր դեմ յերկու թշնամիների հարաբերությունները։

Այդ թշնամիները՝ Խորհրդային Ռուսիան և Քեմալական Թուրքիան, լինելով դաշնակիցներ, ունենալով ընդհանուր քաղաքական ձգտումներ Արևելքում անտանամի կամ դաշնակիցների դեմ, չեյին կարող հաշտ աչքով նայել դեպի մի հանրապետություն, վոր գոյություն ուներ դաշնակիցների հովանավորությամբ, և վորը—վորպես այդպիսին—տանում և դաշնակիցների որիենտացիայի դիծը Արևելքում, այսինքն հանդիսանում է ընդհանուր թշնամին ու խոչընդոտը ռուս-տաճկական դաշինքի վարած քաղաքականության դեմ Արևելքում»*)։

Այսպես, գնահատելով մոմենտը վորպես մի լավ դաշնակ, խայտառակ Բ. Իշխանյանը անխուսափելիորեն հանում է նաև հետևյալ դաշնակցական յեզրակացությունը։ Վ. Նավասարդյանը վկայում է, թե—

«Նա հորդորում եր շարունակ, վոր հայ ժողովրդի հաստվածները, տարրերը քաղաքական թևերն ու հոսանքները գեթ ժամանակավորապես մեկդի նետեն իրենց ճղճիմ հաշիվները ու ներհակ հակացողություններ, և հայրենիքի անկախության սպառնացող (թուրք և ոուս) մահացու վտանգի հանդեպ միանան այդ նույն հայրենիքի կորստից

*) Տես՝ Բ. Իշխանյան—«Յերկու ամիս բոլշևիկյան բանտում»։ Վ. Նավասարդյանի առաջաբանով (եջ 27)։

փրկելու նվիրական պատասխարի շուրջը, մեկտեղեն իրենց ձիերը և մի առանձար լծվեն ընդհանուրի գործին»*):

Ավելի դաշնակցական քան ինքը Դաշնակցությունը սպե-ցիֆիկի լիներ խայտառակ Բաշխին՝ դաշնակցական գործերին իրեն հատուկ իրազեկությամբ՝ պնդում է, իսկ պարզապես դաշ-նակ վ. Նավասարդյանն էլ հաստատում, որ դաշնակցական Հա-յաստանի գոյության իմաստը նրա «օրիենտացիայի» մեջն է եղել միայն, որ Հայաստանը անտանտի իրապես վարձ-կանն և եղել Անդրկովկասում և հատկապես Հայաստանում, —որոնք պատվավոր տեղ ունեն գրաված հակա-հեղա-փոխական պատմության մեջ և ամենից ավելի բացասական ռե-ակցիոն դեր կատարած ռուսահայերի հասարակական զարգաց-ման պատմության մեջ:

Մենք չերկար ու բարակ կանգ չենք առնի համեմատաբար կարճ ժամանակամիջոցում իրար հաջորդած ու իրար ժխտող այդ չերկու ստահոդ վարդապետություններից առաջինի վրա: Վազուց արդեն ամեն նյուանսի ինքնակոչ բամբասագիր-«տեսաբաններ» իրենք իսկ հրաժարվել են նման ցնդաբանական պնդումից, որ-քան էլ ցավոտ լիներ նրանց համար արթնացումը այդ իլյու-զիաներից: Նրանց հավատացող չկա անգամ մեր ամենաթերահա-վատ ընթերցողների շարքերում:

Բայց կարևոր է մի փոքր կանգ առնել պատմական ձա-ռայության հիպոթեզի վրա, քանի որ 1922 թվի չերկրորդ կեսից մինչև այսօր իսկ—այսօր անհամեմատ ավելի համեստ հանդգնությամբ մեզանում ու սանձարձակ կարմիր գծից դուրս,—այդ շինծու և խարդախ հիպոթեզը ուզում է իր համար մի տեղ կամ շաղափված անկյուն գրավել ոչ միայն ընդհանրապես մեր հասարակական, որ ասել է թե հեղափոխության և հակա-հեղափոխության շարժման մեջ (վերջինում նրա բաժինը անվիճելի չի բոլորիս համոզմամբ),—այլ տեղ գտնել հատկա-պես Անդրկովկասի հեղափոխական մարքսիզմի և Խոր-հրդային Հայաստանի հաղթանակով պայքարի կարմիր ալեկրում:

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՈ—ՈՈՈ ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Ա. им. А. Мясникяна

*) Նույն տեղ:

բայց դա փաստ է, որ մեր ուշիմ ընթերցողը շուտով կշոշափե ինքը:

Նշանակալիցը այն է, որ այս պատմական ծառայու-թյան նպատը կամ հիպոթեզը, ինչպես նաև թաթար-մու-ժիկյան թեորիան հյուսվել և այն հակահեղափոխական հոսանք-ների ներկայացուցիչների կողմից, որոնք ամենից ավելի տու-ժեցին բալշևիկյան կուսակցության և Սովետական իշխանության ջախջախիչ հաղթանակից Անդրկովկասում և հատկապես Հայաս-տանում, —որոնք պատվավոր տեղ ունեն գրաված հակա-հեղա-փոխական պատմության մեջ և ամենից ավելի բացասական ռե-ակցիոն դեր կատարած ռուսահայերի հասարակական զարգաց-ման պատմության մեջ:

Մենք չերկար ու բարակ կանգ չենք առնի համեմատաբար կարճ ժամանակամիջոցում իրար հաջորդած ու իրար ժխտող այդ չերկու ստահոդ վարդապետություններից առաջինի վրա: Վազուց արդեն ամեն նյուանսի ինքնակոչ բամբասագիր-«տեսաբաններ» իրենք իսկ հրաժարվել են նման ցնդաբանական պնդումից, որ-քան էլ ցավոտ լիներ նրանց համար արթնացումը այդ իլյու-զիաներից: Նրանց հավատացող չկա անգամ մեր ամենաթերահա-վատ ընթերցողների շարքերում:

Բայց կարևոր է մի փոքր կանգ առնել պատմական ձա-ռայության հիպոթեզի վրա, քանի որ 1922 թվի չերկրորդ կեսից մինչև այսօր իսկ—այսօր անհամեմատ ավելի համեստ հանդգնությամբ մեզանում ու սանձարձակ կարմիր գծից դուրս,—այդ շինծու և խարդախ հիպոթեզը ուզում է իր համար մի տեղ կամ շաղափված անկյուն գրավել ոչ միայն ընդհանրապես մեր հասարակական, որ ասել է թե հեղափոխության և հակա-հեղափոխության շարժման մեջ (վերջինում նրա բաժինը անվիճելի չի բոլորիս համոզմամբ),—այլ տեղ գտնել հատկա-պես Անդրկովկասի հեղափոխական մարքսիզմի և Խոր-հրդային Հայաստանի հաղթանակով պայքարի կարմիր ալեկրում:

III

«ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐԻԱՆՏԸ։ ՔԱՋԱԶՆՈՒՆՈՒ ՅԵՎ ՄԻՔ. ՎԱՐԱՆԴՅԱՆԻ ՀԻՊՈՏԵԶԸ

Կոմունիստաններիս մեղադրում կլին—և մեղադրուում պալատական արվեստին հատուկ բոլոր մանրակրկտութեամբ—ռուս մուժիկին ու թաթար-ցեղին ծախված լինելու մեջ շատ հայանի Դաշնակցութեյունը և մեր ներ սերնդին պակաս-հայտնի վոզորմելի սպեցիֆիզմը, վորի նույնքան կոլորիտ, վորքան և խայտառակ ներկայացուցիչներն են յեղել Բագվում թե Յերեվանում խայտառակ Բախշին, մեշչան Ռուբենին, ողիոզ Դավիթը և ելի մի-յերկու այլ բախտախնդիր պալիտիկիններ։

Դաշնակցութեյունը դեռ տասնյակ տարիներ առաջ արձանագրել և իր առելութեյունը դեպի ռուս ժողովուրդը, այո—ժողովուրդը, թեպետ այդ չի խանգարել նրան գրկախառնվել ցարական վոստիկանական իշխանութեյան հետ իմպերիալիստական պատերազմի ընթացքում, ինչպես նաև այդ պատերազմից առաջ ու հետո—Դենիկին-Չինկնվիչների հետ։ «Դրոշակը» իր «Պատմական դավաճանութեյուն» առաջնորդողում դեռ տասնյակ տներիներ առաջ հայտարարել է.—

«Քանի վոր ռուս ժողովուրդը շահագրգռված եր հայ ժողովրդի հետ բարեկամութեյուն պահպանելում, վորպեսզի նրա միջոցով նվաճի Կովկասը, նա բան չեր խնայում հայ ժողովրդի համար։ Իսկ այժմ, յերբ արդեն հայերը նրան պետք չեն, ռուս ժողովուրդը ճնշում է հայերին»։

Շահագործված աշխարհին Հոկտեմբեր բերող դրացի ռուս ժողովուրդի հանդեպ այլ դիպուծում չեն տածել վոզորմելի սպեցիֆիզմի վոչ-պակաս վոզորմելի ադեպանները, վորոնց կպատկանի «ռուս-մուժիկ» և «ռուս մուժիկի բարբարոս կուլտուրա» դարձվածքների հատուկ պատիվը Արարատյան բառամթերքում։

Շատ ավելի բուռն են յղել ու անհաշտ Դաշնակցութեյան և նրա ճակատ սպեցիֆիզմի դիպուծները դեպի «թաթար ցեղը»։

Մեր անձնական ընկ. Ստ. Շահումյանը այդ առիթով վաղուց նախատիպարել և մեզ, վոր—

«Թուրքի հոտը» խեղդում է, խելագարութեյան և հասցնում «սոցիալիստ» դաշնակցականներին...)*

Ահա այսպիսի մարդակեր ու հակահեղափոխական մտայնութեյան մեջ հավետ մնռած-կորած դաշնակ-սպեցիֆիկյան յեղբայրութեյունն է, վոր 1922—23 թ. թ. մի կատարյալ վոլտ-ֆաս դարձվելով—ստեղծում է «պատմական ծառայութեյան» հիպոթեզը։

Ինչում է կայանում դաշնակ-սպեցիֆիկյան այդ նոր մանյովրը։ Բննենք մի փոքր մոտից։

— Արհրդային Հայաստանը այլևս անչնջելի յա ու իսկ «հայկական իրականութեյուն»...

— Կոմունիստական շինարարութեյունը—շղարշելի փաստ։

Հիմարներ այլևս չմնացին կարմիր դծի ներսում (թեև դեռ կքավին դաշնակցական սեղանին կարմիր դծից դուրս), վորոնք հավատային, թե Խորհրդային իրավակարգը հայ ժողովրդական դանդվածներին մահ ու աւարյուն և բերում, ինչպես բերին դաշնակ-սպեցիֆիկյան քաղաքականութեյունն ու գործունեութեյունը Բագվում վամ Յերեվանում։ Արհամարական քմծիծաղն և պատասխանը, թե հայ կոմունիստները «ռուս մուժիկին» և «թաթար ցեղին» ծախված «հայրենիքի դավաճանները» են։

Ինչ անել ուրեմն, իրենց «պատմական գոյութեյան» արդարացումի համար, յերբ իրական գոյութեյան անհրաժեշտութեյան վրա մի սոսկալի սև խաչ և ցցված բանվորա-գյուղացիական մասսաների ջլուտ բազուկներով Խորհրդային Անդրկովկասում և հատկապես Հայաստանում.

Մի շատ հասարակ բան—դիմել ուզուրպացիայի։

Այսինքն հայտարարել թե այն՝ ինչ կատարվել և ու կատարվում և մեր յերկրում, վերջին հաշվում դա մի իսկական շարունակութեյունն և դաշնակ-սպեցիֆիկյան վաղուց հայտնի ջանքերի, թե այն՝ ինչ անում են (լսեցնք առանց վրթկալու) կոմունիստական կուսակցութեյունը և Խորհրդային իշխանութեյունը Հայաստանում,—դա վոչ ավելի և վոչ պակաս՝ քան դաշնակ-սպեցիֆիկյան հակահեղափոխութեյան վաղուց ընդ-

*) Տես՝ Ստ. Շահումյան՝ «Չիթխանովի հարը» և «Ալիքի» «Ազգայինները» հոդվածը—«Յերկերի ժողովածու» հատոր I—Մոսկվա, 1926։

դրկած գաղափարների ու նախագծված նպատակների սոսկ ձևավորումն է...

Միմիայն.—վոչ ավելին։

Անհավատալի չի այս հանդգնությունը. բայց այս այսպես է։

Մեր հակառակորդները պնդում են, փորձում են պրնդել այդ։

Բերենք փաստեր, դարձյալ հեղինակավոր վկայություններ։

Հայտնի չէ, վոր դաշնակցական Հայաստանի անպրանիկ պրեմիեր և այդ կուսակցության ճանաչված լիդերներից մեկը 1923 թ., Վիեննայի Մխիթարյան խուցերի տպարանում, լույս ընծայեց մի շատ հետաքրքրական բրոշյուր «Դաշնակցությունը անելիք չունի այլևս» վերնագրով։ Մենք դժբախտաբար դուրկ եյինք հնարավորությունից իր ժամանակին այդ խոստովանագրքի և նրա հետ կապված խնդիրների բավական մանրազնին ուսումնասիրության հրապարակի վրա դնելու և շեշտելու այն կողմերը, վորոնք մոռացության տրվեցին ու առանց անհրաժեշտ վերլուծության ծածկին մեր մամուլի էջերում։ Քաջադնունյան այդ խոստովանագրքի մեջ կա, ի միջի այլոց, նաև մի նշանակալից սրտի զեղում, վոր վրիպել է կոմունիստական քննադատության ուշադրությունից և վոր անհրաժան դաշնակ-սպեցիֆիկյան «պատմական ծառայության» հիպոթեզի հիմնավորումն է կազմում։

Նախկին դաշնակ վարչապետը,—ողիող Դավիթ Անանունի գովաբանած «հարազատության» ու «պետականության» առաջին վորմնադիրը,—վորոշակի շեշտում է իր բրոշյուրի մեջ.—

«Հասկանանք, հայ բոլշևիկները մեր ժառանգները են, վոր շարունակելու չեն ու արդեն շարունակում են մեր գործը։ Նրանք անում են և անելու չեն այդ, գիտակցեն թե չգիտակցեն, ցանկանան թե չցանկանան» (էջ 74—77)*)։*

Քաջադնունին այդ «ընդհանուր դեկլարացիայով» չի բավականանում։ Նա մանրամասնորեն քննում է հասարակական-քաղաքական ժառանգության հարցերը։ Նա, որինակ, գտնում է, թե ընավ իսկ վերապահվելու կարիք չկա և նշանակություն էլ չունի, վոր հայ կոմունիստները տասնյակից դուրս քշեցին դաշնակցական կառավարությունը և կուսակցությունը։ Դրանով խնդիրի էությունը չի փոխվում։

Նա պնդում է, թե այստեղ նույնիսկ ինչվոր չերախտադիտության տուրք կա.—

«Չերախտապարտ պիտի լինենք բոլշևիկներին. խորտակելով մեզ, նրանք չեթե չասեմ փրկեցին, գեթ ավելի ապահով վիճակի մեջ դրին մեր կյանքի գործը» (նույն եջ)։

Բայց կարող են մեզ առարկել, թե այդ մտքերը Քաջադնունիների համար սոսկ պատահական, լեզվից թռած մի անդիտակցական դարձվածք է։ Մենք ևս տրամադիր կլինեյինք այդպես կարծելու, չեթե իսկապես սոսկ պատահական կերպով մյուս շոշափված լիներ ժառանգականության խնդիր «Դաշնակցությունը անելիք չունի այլևս» խոստովանագրքում։ Ահա մեզ նույն հեղինակի դարձյալ մի այլ պնդում, նույնքան վորոշ և նույնքան նշանակալից.—

«Ուրիշ Դաշնակցություն պիտի փոխարինի նրան (այսինքն Դաշնակցության—Ե. Ս.), թերևս հայ պետական Դաշնակցությունը» (եջ 76—79)։

Ընդգծելու է այստեղ նաև այն, վոր արդեն յեսին թվով դաշնակցական Հայաստանի առաջին պրեմիերը մերժում է իր կուսակցությանը այն «պետականության» առաքելությունը, վորի անունից այնքան մեծադղորդ ճառում եյին իրենց ապրուստի վարպետ որերին առաջին հերթին «վոչ-դաշնակ» խայտառակ Բախշին ու ողիող Դավիթը։

Բայց թողնենք «պետականության» խնդիրը և գանք դարձյալ «ժառանգականության» հարցին։

Քաջադնունին յերկարորեն պատճառաբանում է ու բացատրում, թե վերն է այդ «ուրիշ դաշնակցությունը» և թե ինչպես պետք է ամրապնդել Հայաստանի անկախությունը, այդ «պետական Դաշնակցությունը»։

Նախկին դաշնակ պրեմիերը յեզրափակում է իր դատողությունների շարքը այսպես.—

«Այդ ամրացումը կատարվելու է (ու կատարվում է) բոլշևիկյան դրոշակի տակ—ահա թե ինչու հայ բոլշևիկները մեր ժառանգներն են։ Ցես չեմ ճանաչում հայ բոլշևիկներին, չունեմ անձնական ծանոթություններ, հեռվից էլ հնարավորություն չունեմ հետևելու նրանց գործունեությանը։

*) Առաջին թիվը Վիեննայի, յերկրորդը Թիֆլիսի հրատարակության եջն է նշանակում «Դաշնակցությունը անելիք չունի այլևս» բրոշյուրի։

թյան, չդիտեմ իշխող մտայնությունը։ Սրտիս խորքում մի համառ հավատ ունեմ, թե նրանք էլ ինձ պես ու իմ չափ հայ մարդիկ են։ Կոմունիզմը ինքն ըստ ինքյան արդելք չի հայերեն գրելու և հայերեն մտածելու։ Ջե՞ վոր էս ել հավատացյալ կոմունիստ եմ»... (էջ 89—92)։

Ի՞նչ է խանգարում «հավատացյալ» և «անհավատացյալ» կոմունիստներիս,—Դաշնակցության և մեր մեջ հավատարության նշան գծելու։

Վոչինչ։ Հենց այդպես էլ անում է դաշնակցական Հայաստանի նախկին պրեմյերը՝ դաշնակցական նախկին անթիվ պրեմյերներից մեկին ուղղած կշտամբանքի մեջ (ընդգծումները ամբողջապես հեղինակինն են).—

«Հայ բոլշևիկները—դաշնակցականներ են, մեկ դաշնակցականները այսօր, ավելի դաշնակցական՝ քան էեսուդու»... (նույն էջ)

Մենք—«վոչ-հավատացյալ» կոմունիստներս կամ պարզապես բոլշևիկներս հաստատապես համոզված ենք, թե դաշնակցական քյասաբախային «հարազատությունից» ու անտանտասերուկ «պետականությունից» բնավ վոչինչ չենք ժառանգել...

Համոզված ենք շատ համառ կերպով, վոր մենք նույնիսկ յերկիր ու ժողովուրդ (ամեն մի պետության այդ անհրաժեշտ տարրերն իսկ) չստացանք մեր նախորդներից, այլ միայն՝ առատ արյուն և անծայր ավերածություն։

Համոզված ենք—և դուր կլիներ հավատացնել մեզ հակառակը, վոր խորհրդային իշխանությունը մարդկային պատմության մեջ և Ամրատյան դաշտում բարել է մի նոր էջ, աննախանձելի ու աննման։

Բայց կարևորը այստեղ իրականությունը և փաստերը չեն, այլ այն հանգամանքը, վոր դաշնակների կողմից լուրջ փորձեր են արվել ու արվում հիմնավորելու «պատմական ժառանգության» հիպոթեզը։

Անտեղի ժուժկալություն կլիներ կարծել, թե Քաջազնունու պնդումը «ժառանգականության» մասին «Դաշնակցությունը անելիք չունի այլևս» հեղինակի սոսկ անձնական մտորումների արդյունք է։

Այդ հիպոթեզը «կոլեկտիվ» բնույթ ունի։

Դեռ այսօր էլ, 1926 թ. վերջերին, Դաշնակցության այլ «անհաշտ» և կարկառուն դեմքեր իրենց սերն ու համարանքն են

մատուցում Ստ. Շահումյանին և Ս. Մյասնիկյանին, վերջիններիս «հայկական հայրենասիրության» առիթով։ Իսկ այդ հայրենասիրությունը վո՞րտեղից կարող էին «ժառանգել» մեր բոլշևիկ ընկերները, յեթե վոչ Դաշնակցությունից.—

«Հարգանք դեպի հակառակորդը—դեպի պարկեշտ, հայրենասեր հակառակորդը—անհրաժեշտագույն պայմաններն են մինչև ամեն մի քաղաքակիրթ համակեցության։ Մի՞թե կզլանանք մեր հարգանքը անոնցմե (բոլշևիկներե) լավագույներուն։ Շահումյան ու Մյասնիկյան ամենեն խոշոր դեմքերն են հայ կոմունիստներու սակավամարդ ու աղքատիկ դերդաստանի մեջ։ Կարող ենք չդաժանել մեր բոլշևիկներու չափազանցված կարծիքները անոնց վարչական հանճարի և բարոյական ու հերոսական կարողություններու մասին, բայց չենք կրնար ուրանալ, վոր յերկուքն ալ դործիչներ էին, իրենց ժողովրդի ցավին կարեկից, անոր բարության նախանձախնդիր,—հայ գործիչներ, վորոնք իրենց հայկական հայրենասիրությունը գիտցան հաշտեցնել միջազգային հավատամքի հետ։

Յեվ յերկուքի մահն ալ անկեղծ ցավ պատճառեց դաշնակցական շարքերում»*)։

Այսպես և բառարառում այսօր «վետերան դաշնակ», դաշնակցության թեորետիկոս Մ[illegible]. վարանդյանը, վորին այնքան դառնորեն ծաղրել և մեր ընկ. Շահումյանը իր ժամանակին։

Անգամ ամենից անհաշտ ու «ձախ» դաշնակցականը, յերբ տեսնում է, վոր կոմունիստական-խորհրդային շինարարության մի նոր փաստ գալիս ավելանում և փաստերի շեմարանի վրա,—մահվան վտանգը բերնին շտապում է վորքան կարելի է պինդ դռռալ, թե «բոլշևիկների կատարածը սոսկ շարունակումն է դաշնակների սկսածի» (որինակ Շիր-կանալը, Խորհրդային Հայաստանի այսօրվան իրական անկախությունը, վոռոգման աշխատանքները, մեր կուլտուր-տնտեսական այլ ձեռնարկությունները), թե այդ ստեղծագործ աշխատանքի գոնե նախատեսության և նախաձեռնության պատիվը «պատկանում» է միշտ և ամենուրեք այդ դերազանցապես ավերիչ թայֆային։

Բայց Քաջազնունին—ինչպես ինքն էլ խոստովանվում է—պարզապես «հայ մարդ» է։ Նա չի ծակում նույնիսկ, վոր «ազ-

*) Տես՝ «Հայրենիք», 1926 թ. հուլիսի 29-ի №-ը և «Հուսարներ»-ի պատասխան հոդվածը 1926 թ. սեպտեմբերի 24-ի և հետագա №№-ում։

դասեր» եւ Նրանից հեռու չի գնացել Միք. Վարանդյանը, Նրանց և ընդհանրապես Դաշնակցության «ժառանգականության» ցնծությանն հավատալու համար դժվար և հարկավոր լսարան գտնել, հյուրընկալ հոգեբնական պայմաններ ստեղծել։

— Կոմունիստները — Դաշնակցության ժառանգնե՞ր?!

— Ժողովրդային իրավակարգը—Ա.Հարությանի ու Ո.Ստեփանյանի, Ա.Ահարոնյանի ու Վ.Բաբայանի յերազած ռեժի՞մ?!

Հավատացողից սոսկ առասպելական միամտություն չե, վոր պահանջում է, այլ զգայարանքների կատարյալ բթություն, մտավոր կարողության ուղղակի անհավասարակշռություն։

IV

«ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՍՊԵՑԻՖԻԿՅԱՆ ՎԱՐԻԱՆՏԸ։ ՈԴԻՈՋ ԱՆԱՆՈՒՆԻ «ՊԱՏՄԱԿԱՆ» ՎՈԼՏ-ՖԱՍԸ

Սպեցիֆիզմը կաշվից դուրս և յեկել միշտ ու ամենուրեք պնդելու և ապացուցելու, թե Դաշնակցությունը սոցիալիստական կուսակցություն է։

Յերևի դեռ յերկար չի մոռացվի,—պետք է հուշալ, թե հաշվեհամանության գիրկը չեն անցել բոլոր ունկընդիրները,—դատախոսությունների այն շարանը, վորտեղ խայտառակ Բախշին և ողիոզ Դավիթը Դաշնակցության հանրապետության մայրաքաղաքում և դաշնակ խուժանի կիսախելառ ծափերի ատկ հայտարարում էին, թե—

— «ժամանակ է վերջ տալ այն առասպելին, թե Դաշնակցությունը սոցիալիստական կուսակցություն չե»... թե—

— «ժամանակ է բոլոր սոցիալիստական կուսակցություններին՝—դաշնակներից, ևսերներից, մենշևիկներից, իհարկե մեջն առնելով նաև հատ ու կենտ սպեցիֆիկներին,—սոցիալիստական միասնական ներքին ֆրոնտ կազմել և հակադրել այն ռուս մուժիկի, թաթար-ցեղի և ներքին թուրքի միացյալ ֆրոնտին»...

Այդ մարգարեաշաղ հակա-հեղափոխական էքսկրոգիայի հնաքները ճաշացել են այն անհետ կորած ժամանակի սառած որդրության և առաջին հերթին դաշնակցական Յերևանի «Հառաջ» թերթի եջերում։

Սպեցիֆիզմի կարկառուն դեմքերի այդ կոմպլիմենտները Դաշնակցության հասցեին բնականաբար վոխադարձ կոմպլիմենտներ էին հրավիրում։ «Սոցիալիստ» Դաշնակցությունը, մատուցած ծառայությունների վորպես վարձ, նույնպես իր հերթին հանձնարարում էր խուժանին «հեղափոխական-մարքսիստ» սպեցիֆիզմը։

Ըստ Կրիլովի—«կուկուշկա խվալիտ պետուխա պա ատս, չտո խվալիտ ոն կուկուշկու»!

Այսորը եվ Դաշնակցությունը այլ կերպ չի խոսում խայտառակ Բախշիի մասին՝ քան—

«Մարքսիզմի առաջին տեսաբանը հայ բուրժուազիայի մեջ և հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցության կարկառուն դեմքերից մեկը»...*):

Յերևի նրա—այդ «կուսակցության» մյուս կարկառուն դեմքերն են մեջբերյան Ռուբենին, ոդիոզ Դ. Անանունը...

Դաշնակցության հաշվին գալիս ե, վոր իր ճետ սպեցիֆիզմը հայտարարվի նախ «մարքսիստական», հետո՝ յել՝ «կուսակցություն»:

Խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության դեմ ուղղած դաշնակի զրպարտություններին հավատացող չկա, նրանցից՝ վոնդված թայֆայի վերջավոր ինքնասիրության մաղձի հոտ ե գալիս: Հասկանալի յե, վոր որհասական կռվում ընկած դասակարգային թշնամին ուրիշ լեզվով չի կարող խոսել բոլշևիկների մասին: Բայց—թվում ե նրանց—գուցե ուրիշ կարևորություններ ստեղծվեն, յերբ բամբասանքն ու զրպարտությունը Խորհուրդների ու բոլշևիկների դեմ հրամցվեն այլ շաղախի տակ,—յերբ խորհրդային շինարարության նախաձեռնությունը և տանջյալ տարիների պրոլետարական պայքարի նախաձեռնությունը փորձվի մերժել կոմունիստներին հենց «հեղափոխական մարքսիզմի» անունով, «առաջին մարքսիստները» բառախաղով:

«Սոցիալիստ» Դաշնակցությանը չի աջողվում պատվաստել «պատմական ծառայության» հիպոթեզը: Սակայն Դաշնակցությունը շատ լավ հասկանում ե, թե ինչ ծառայություն կարող են մատուցանել այս ասպարեզում սպեցիֆիզմից անփառունակ ճեացած մի դույզ ու կենտ կասկածելի պոլիտիկաններըը:

Վերհիշվում ե հինավուրց մի տանտիկան ներքին ֆրոնտի ուխտը Դաշնակցության և սպեցիֆիզմի մեջ:

Ցեվ խայտառակ Բախշիից հետո՝ պախող ե յելնում ոդիոզ Դավիթը:

Հակա-հեղափոխական հեղինակի գրեթե 700 եջանոց բամբասագիրքը անվորակելի տանձարձակությամբ փորձում ե՝ մի այլ

*) Տես—Բ. Իշխանյանի «Ցերկու ամիս բոլշևիկյան բանտում» Դաշնակցության հրատարակած գրքին կցված Վ. Նավասարդյանի հառաջաբանի եջ 7:

դիմակի տակ՝ «հիմնավորել» դաշնակցական ժառանգականության թեորիան, «տեսաբանել» պատմական խարպախության թեորիան:

«Մարքսիստ» սպեցիֆիզմը—վորպես հավատարիմ զինակիցը «սոցիալիստ» դաշնակի—1922 թ. յերկրորդ կեսից իր հերթին սկսում ե կասկածելի կրքով առաջ մղել գաղտագողի նույն չարաբաստիկ «պատմական ծառայության» նաղլը:

Կարծես, պայմանավորված լինեն «մայը» և «վորդի» կուսակցությունները:

Վողորմելի սպեցիֆիզմը, վոր «արդի մելիքների»*), այսինքն Խորհրդային Հայաստանի այսորվան իշխանությունը միայն ծաղրանքով ևր հիշատակում նույնիսկ մեր Լուսժողկոմատի «ավտոնոմ հրատարակության» մեջ,—1922 թ. յերկրորդ կեսից վճռում ե իր համար արդեն «ընդունելի» հայտարարել Խորհրդային իշխանության գոյության իմաստը, անգամ ճանաչել կոմունիստական կուսակցության «հարաղատությունը հայկական իրականության»:

1922 թ. յերկրորդ կեսից կասկածելիորեն պապանձվում և ոդիոզ Դավթի ստախոս լեզուն: Այլևս վոչ մի բառ «ռուս-մուժիկի» և «թաթար-ցեղի» բնածին բարբարոսասիրության մասին:

1922 թ. յերկրորդ կեսից—կարծես ինչ վոր գաղտնի հայտնության—ըստ ինքյան «գիտակցվում ե», թե՝ ամեն ինչ կատարվել և ամենագեղեցիկ կերպով Խորհրդային Հայաստանում, ինչպես վոր գծել ևր ևն ամենից «հեղափոխական մարքսիզմը», նախագուշակել եյին ևն ամենից «առաջին մարքսիստները»:

Յեվ աստիճանաբար ծայր և տալիս մի ավելի խոր պատճառ, հիմնավոր աբխոդ, ստից ու խարդախությունից հյուսված ոձագալարումների, տողամիջի դարձվածքներով ու յերկդիմի խոսքերով «վավերագրային» կեղտոտ աշխատանքների՝ հասկացնելու կիսաբերան (մեկին-ուղղակի չափազանց յերկյուղալի կլիներ խաղը) թե—

— ինչքեր են այդ «հեղափոխական մարքսիստները»...

— ոնց պետք և հասկանալ «առաջին մարքսիստ» բառերի տակ...

Ասվեց մեզ մոտ—միշտ կիսաբերան ու հաճախ յերկդիմի—

*) Տես «Բամբեր» 1922 թ., հրատ. Եջմիածնի Ինստիտուտի, ինչպես նաև այդ առիթով բանավեճը Սերո Մանուկյանի և Աշոտ Հովհաննիսյանի մեջ—1922 թ. «Խորհ. Հայաստանի» № 112 և հետագա համարները:

շատ բան։ Բայց վերջ բոլորը՝ հիմնավորելու համար «պատմական ծառայության» հիպոթեզը։ Սակ վոտքերը այնուամենայնիվ կարճ էլին ու ավելի կարճ մնացին։ Պատմական խեղաթյուրումի,—թելը դրական խարդախության (այնքան բնորոշ իայատառակ բախշիական խմբակի համար դեռ ուսանողական նստարանից) կարվեց մեղնում, առանց դաշնակ-սպեցիֆիկյան «պատմական ծառայությունը» ապացուցելու, առանց հարկավոր «վավերագրությամբ» պատճառաբանելու կեղծիքը։ Այժմ դաշնակների հովանավորությամբ լույս տեսած նոր բամբասագիրքը փորձում է գեթ կարմիր գծից դուրս ձևավորել այն, ինչ չկարողացավ անել հակահեղափոխական հեղինակին մեզ մոտ, մեր սպարանի ոգնությամբ, անգամ «ՆԷՊ»-ի հրատարակության մեջ։

«Սոցիալիստ» Դաշնակցությունը շատ լավ հասկանում է,—հենց այդ պատճառով էլ նա անդադար թմբկահարում է և առանձնապես հանձնարարում ոդիոզ հեղինակի կեղծասեր գրչի ամեն մարդանք,—վոր բավական է մի փոքրիկ ճեղքված առաջ բերել պատմական ծառայության և ժառանգության խնդիրներում «մարքսիստ» սպեցիֆիզմի միջոցով, վորպեսզի նրան սողա ամբողջապես նաև «սոցիալիստ» Դաշնակցությունը։ Վերջինս իրեն արյամբ—շահագրգռված է զգում այդ հարցում, նրա կատարյալ սերն ու ամբողջ համակրանքը խայտառակ Բախշիի ու ոդիոզ Դավիթի և նմանների կողմն է, ինչպես միշտ։

Վերը մենք շատ հարևանցիորեն ծանոթացանք Դաշնակցության վորձերին կապելու բալշևիկներիս «հայրենասիրությունը» դաշնակցական հայրենասիրության հետ։

Ծանոթանանք մի փոքր մանրամասնորեն առաջադրած «պատմական ծառայության» սպեցիֆիկյան վարիանտի կամ, վոր նույնն է՝ սպեցիֆիկյան ժառանգականության նպատակի հետ, վոր փորձել և ձևակերպել «արդար վաստակ» լիբրանների ու դոլլարի գաղտագողի արտահանությամբ և «ազնիվ բարեկամային» ոգնությամբ վանականների խուցերում շարված տոպրքում, մանավանդ վոր այդ վերլուծությունը մեզ տալիս կատ ավելի խոր ըմբռնելու և մոտից յուրացնելու մի շարք հարցեր մեր, իսկապես վոր մեր, լենինյան ուսմունքից և շահումյան պայքարից։

V

ՍՊԵՑԻՖԻԶՄԸ՝ ՎՈՐՊԵՍ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԱՐԻԱՆՏ ԿԱՄ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՎԱՐԻԱՆՏ

Ի՞նչ է սպեցիֆիզմը և ո՞վքեր են սպեցիֆիկները...

Կարիք կա արդյոք մեզ այստեղ նորից անդրադառնալու այդ խնդրին, քանի վոր մեր այնպիսի հեղինակավոր ու իսկապես առաջին մարքսիստ-ընկերները, վորպիսիք են Սա. Շահումյանն ու Սուրեն Սպանդարյանը, նաև Բողդան Կնունյանն ու Արշակ Զուրաբյանը և շատ ուրիշները,—իր ժամանակին չանջղել են նրա գլուխը հիմնավորապես ու պատվելի կերպով։

Կարիք կա արդյոք մեզ նորից վերհիշելու տասնյակ տարիների մի ջազդային հեղափոխության և հակահեղափոխության անդրադարձումի պատմությունը Անդրկովկասի և մասնավորապես հայ իրականության մեջ, մանավանդ վոր մեր մի շարք հոդվածներում մեկից ավելի անգամ առիթ ենք ունեցել այդ մասին փաստերը ձեռքներիս խոսելու*)։

Կարծում ենք վերջ, ավելորդ է։

Բայց չեթե մի ընդհանուր հայտարարի բերելու լինենք մինչ ու չետ Հոկտեմբերը սպեցիֆիզմի մասին արձանագրվածը, չեթե չերկու խոսքով ուզենանք տալ սպեցիֆիզմի բնութագիրը, բնորոշել նրա էությունը,—ապա առանց մտաչափ թափրը, բնորոշել նրա էությունը,—ապա առանց մտաչափ անգամ սխալվելու հաստատապես կարելի չի ասել, վոր նա մեր հասարակական զարգացման պատմության մեջ մտել է վորպես—

— Դաշնակցության սոցիալիստական վարիանտ.

կամ—

— սոցիալիզմի դաշնակցական վարիանտ։

---

*) Տես—ի միջի այլոց—մեր հոդվածները—«Փիդուրա ոդիոզա», «Ձևլոսական ուսանողության անցյալից», «Ինքնաբնութագրման մի նմուշ», «Սուրեն Սպանդարյանի ապրումներից», «Անողոք բոլշևիկը», «Հեղափոխական եմիդրացիայի և ուսանողական անցյալից», «Պատմության մեչչանական ըմբռնման մի նմուշ» և այլն։

Այս պատմական պատասխանը, որ անջնջելիորեն հանել է արդեն բալշևիկյան պատմատուաբանասիրությունը, չի աջողվի քողարկել «սոցիալիստ» Դաշնակցության և «մարքսիստ» սպեցիֆիզմի իրար մեջ փոխանակած սիրալիր հավերտնարով։

Ռուսական առաջին հեղափոխության (1905—6 թ. թ.) դաշնակ-սպեցիֆիկների համար թյուրիմաց մղրամսի շոգիացումից հետո,—մղրամիս՝ յերբ ոչ ասես որ «սոցիալիստ» ու «մարքսիստ» չկր հայատարածում իրեն, անգամ «սոցիալ-դեմոկրատ» Ալեքսանդր Իվանիչ Ստախովը՝ մի կերպ դուցե ցարական Պետական Դումա նորս սպրդելու յերաշնորով,—այդ թյուրիմաց մղրամսի շոգիացումից հետո՝ փետրվարյան սպեցիֆիզմը յերկրորդից Դաշնակցությանը սրա բոլոր վոճրագործ ատբաքներում։ Ոդիսպ Դավիթը հենց ինքնը խոստովանում է Մխիթարյան խուցերից աշխարհ հանած վերջին բամբասապրքում ևս, թե սպեցիֆիզմը պրոլետարական շարժման անհրաժեշտության թելադրանք չեր, այլ դաշնակցական մի պատահական ու յերերվող, հազիվ մարդու վոտքի մատների թվով «մտավորականների»,—նման նրանց, վորոնք հետագայում Դաշնակցության ներսում «կովկասյան նախագիծը» պիտի ձևեյին.—

«... Դաշնակցությունից հեռացած մտավորականների մի ամբողջ խումբ 1903 թ. հոկտեմբերին հիմք դրին սոցիալ դեմոկրատական հայ կազմակերպության»...

Յեթե մենք վերհիշենք լինենք զարթարյան հայրենակցական ֆոնի վրա գործող այդ ծապլվարային հերոսների վոտքմելի խմբակի իրական անցյալը, կտեսնենք, վոր առաջին որվանից մինչև Պորտ-Սուդանի*) ջրերի անհայտությունը,—յերբ խայտառակ Բախշին և Կ⁰ շտապում էին իրենց կարտ-բլանշային ծառայություններով շարունակելու «մայր» կուսակցության,—սպեցիֆիզմը յեղել և ու մեռել և վորպես կիսադաշնակ և կեղծ-սոցիալիստ հատ ու կենտ մտավորականների խմբակ միայն, վոր յերբեք չկարեց իր պորտը Դաշնակցությունից։

Չի յեղել հայկական, ել չենք ասում անդրկովկասյան-ռուսական-միջազգային իրականության մեջ մի փոքր ի շատե աչքի

*) Դաշնակցական կատավարության հանձնարարականով Յեվրոպա գնմող խայտառակ Բ. Իշխանյանը մեռավ Պորտ Սուդանում—մուրդը փորում։

ընկնող ու լուրջ հասարակական, քաղաքական, անգամ գրական խնդիր, վոր սպեցիֆիզմը միշտ Դաշնակցության հետ յեղած չլիներ և ընդդեմ կամունիստական կուսակցության,—վոր սպեցիֆիզմի վորակված լիդեր խայտառակ Բախշին, ոդիսպ Դավիթը և ելի մի յերկու դեկլասե յեղած լնտելիգենտ՝ չլինեյին Գյուլխանդանյանի, Վրացյանի, Աղբալյանի, Նավասարդյանի ու նմանների հետ և Սո. Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի ու նրանց ընկերների, Լենինի հետևորդների դեմ։

Մեր առածները անփաստ խոսքեր չեն։

Ահա մեզ մի շարք խնդիրներ, իբ ժամանակին ավելի քան առաջնակարգ ու հրատապ և տաք կերպով ձեծվող հրապարակում.—

— ազգային խնդիր.
— հողային հարց.
— դաշնակցական կուսակցության դասակարգային բնույթը.
— հայ-թուրքական պատրոնները 1905—6 թ. թ.
— տաճկահայկական հարցը, «դասը» կամ «խնդիրների խնդիրը».
— իմպերիալիստական պատերազմը.
— կամավորական շարժումը.
— դաշնակցական Հայաստանը.
— հայ-վրացական փոխհարաբերությունը.
— «Թիֆլիսի խնդիրը».
— հայ-ադրբեջանյան փոխհարաբերությունը.
— հայ-տաճկական փոխհարաբերությունը.
— դաշնակցական Հայաստանի և կամավորական Ռուսաստանի փոխհարաբերությունը.
— «ներքին Թուրքի»—կոմունիստներիս հանդեպ բռնելիք ու բռնած դիրքը.
— Լենինի գնահատականը.
— որիենտացիայի (Անատանտի) խնդիրը.

և այլն, և այլն։

Մեկը մյուսից կարևոր հարցեր։

Յերկու տասնյակ ու ավելի այդ և նման հրամայողականորեն դրված ու պատասխանատու խնդիրներին սպեցիֆիկները ամենուրեք ու ցմահ պատասխանել են այնպես, ինչպես տասնյակ տարիներ պատասխանել և Դաշնակցությունն և ազգային ներքին ֆրոնտը՝ մեր դեմ խոսքով ու դրծով պայքարելիս։

Սպեցիֆիզմը միշտ և ամենուրեք յեղել է Դաշնակցության յերբեմն «ձախ» թևը, վոր կարծես միայն նախազգացել է 1905 թ. Դաշնակցության հայտնի «Կովկասյան նախագիծը», իսկ ավելի հաճախ նրա աջ թևը, վոր ձևակերպել է նրա շովինիստական իդեոլոգիան։ Պատահականություն չէ, վոր այն ժամանակ, յերբ կոմունիստական կուսակցությունը ծաղրում եր Դաշնակցության հերթական «սոցիալիստական» խաբեբայությունը, սպեցիֆիզմը առանձին հարգանքով եր խոսում այդ «Նախագծի» մասին, վորպես Դաշնակցության «ռուսական-հեղափոխականության» վերջնականապես նիշող մի «առաքինություն».—

«Ռուսաստանի հեղափոխական շարժումները, վոր ծայր առան անկախ հին ուխտի հայ հեղափոխականների կամքից ու սպասումից, վերագնահատության առիթներ ընձեռին նրանց։ Դաշնակցության վերագնահատական աշխատանքն արտահայտվեց «Կովկասյան նախագծի» մեջ։

Ինչ էլ ասելու լինենք այդ Նախագծի մասին, մի բան համենայն դեպս պիտի խոստովանենք, վոր նրա հրատարակումով (1905 թվի հունիս) Դաշնակցությունը բացարձակորեն անցնում է ռուսական հեղափոխության կողմը և հրաժարվում գաղտագողի դրծելու ձևերից։

Դա ինքնին մի առաքինություն եր...» (եջ 134)։

Պատմությունը վատ կերպով արձանագրել և սպեցիֆիզմի ճաշակին յեկող Դաշնակցության շատ «առաքինություններ», մանավորապես արձանագրել և թե ինչպես և վոր չափով դաշնակը «անցավ ռուսական հեղափոխության կողմը...

Բայց այստեղ տեսիլքը այդ չէ, այլ Դաշնակցության սոցիալիստական վարկյանա սպեցիֆիզմի չարաբաստիկ «Կովկասյան նախագծի» գնահատականը։

Հասկանալի յե ու բնական, թե ինչու այնպիսի հնշանակությամբ ընդհանուր լեզու հին դանում «մայր» ու «վորդի» կուսակցությունները «սոցիալիզմի» և «մարքսիզմի» շուրջը բառաբանելիս, թե ինչու «սոցիալիզմի» այդ յերկու սպեցիֆիկ ազեպանները առանց իրար խանդարելու և իրար լրացնելով ապրել են կողք-կողքի տասնյակ տարիներ՝ վորպես «Յերկբորդ ինտերնացիոնալի հայկական հատվածները»։

Հասկանալի յե նույնպես, թե ինչու դաշնակցական Հայաստանի «ամենից յերջանիկ որերին» խայտառակ Բանչին, ոդիով Խալիլն ու ելի մի յերկու ավանտյուրիստ պոլիտիկաններ իրենց «հավատո հայհոյած» հին համարում, յերբ կոմունիստները հանդգնում էին անգամ այն ժամանակվա դաժան պայմաններում հրապարակով կասկածի տակ առնել Դաշնակցության «սոցիալիստությունը» և սպեցիֆիզմի «մարքսիստականությունը»։

Ռուսահայերի հասարակական զարգացման բալշևիկյան-մարքսիստական ուսումնասիրությունը,—վոր գալու յե հրամայողականորեն ու շատ շուտով, և վայ Դաշնակցության ու նրա սոցիալիստական վարիանտ սպեցիֆիզմին, վորոնք «Ազգին հերթին անխուսափելիորեն ընկնելու յեն նրա ջարդող պտտամի տակ,—վերհիշելու յե մի փոքր մոռացված մեր իրականության իրականությունը, կրկնարձանագրելու յե, թե հակահեղափոխական հղինակի ու իր տիպի մարդկանց փայփայած սպեցիֆիզմի դոյության ամենափայլուն ու վառ մոմենտները յեղել են հենց այն որերը,—

— յերբ նա ծառայել է Ստ. Շահումյանին, Սուրեն Սպանդարյանի և ընդհանրապես անչակերտ հեղափոխական մարքսիզմի և խակապես առաջին մարքսխաների դեմ...

— յերբ նա բանվորության նեղության ամենայն որ նկատելի ու աննկատ դավաճանել է պրոլետարիատի անհավասար ու դաժան պայքարին հենց «հանուն սոցիալիզմի»...

— յերբ նա «Թաթար-ցեղի» և «ռուս-մուժիկի» «բարբարոս կուլտուրայի» դեմ նետվել է ասպարեզ պաշտպանելու՝ մինչև Պորտ-Սուդանի ավազոտ յերկնակամարի անհայտությունը՝ դաշնակ-սպեցիֆիկյան «հարատաության» կուլտուրան...

— յերբ 90-ական թվականների վերջին ու 900-ականի առաջին տարիներին արդեն ռելյեֆի կերպով ձևավորված մի կողմից մեր (այն ժամանակ Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության) և մյուս կողմից Դաշնակցության մեջ բռնկած անհավասար ու կատաղի կռվին՝ «Կովկասյան նախագծի» այդ շրջանում նա միջամտեց վորպես մի վարիանտ վարժապետական-սեմինարիստական սոցիալ-նացիոնալիզմի՝ յերկարատևելու Դաշնակցության կյանքը, թուլացնելու ռուս, հայ, թուրք, վրացի բանվորության ընդհանուր-միջազգային կազմակերպությունը, կասեցնելու պրոլետարական գրոհը բռնության ու նացիոնալիզմի դեմ,—մի խոսքով փրկելու Դաշնակցությունը այն հարվածներից, վոր վերջնականապես պիտի իջներ նրա գլխին 1920 թ. նոյեմբերի 29-ին։

Դաշնակ-սպեցիֆիկյան տասնյակ տարիները ևեթ պինակցության արմատները և դրդապատճառները պարզ են ու հասկանալի։

Ցերը դեռ պարտված չեր ռուսական առաջին (1905/6 թ. թ.) հեղափոխությունը և դաշնակցական կուսակցությանը հայտնի չեր, թե ինչ և պատրաստում նրան վաղվան որը, հայկական բռնապետությունը չեր ծածկում, վոր իր համակրանքը Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիզմի կողմն է ամբողջապես.—

«Մաժակը չեր ծածկում, վոր յեթե Դաշնակցությունը պետք է եվոլյուցիայի յենթարկվի, ապա նրա համակրանքները ավելի շուտ սպեցիֆիկների կողմն են, քան հեղ ն ե ր ի»*)։

Սակայն ռուսական առաջին հեղափոխության պարտության պատճառով շատ կարճատև յեղավ Դաշնակցության և սպեցիֆիզմի տարվածությունը «սոցիալիզմով» ու «ռուսական հեղափոխությամբ»։ Ստոլիպինյան ռեակցիայի առաջին իսկ նշույլներին՝ «նախագծերից» դենը չդնաց դաշնակ-սպեցիֆիկյան «սոցիալիզմը»։ Շուտով նույնիսկ այդ «նախագծերը» բնականաբեն մոռացվեցին՝ «ներքին ազգային մի ընդհանուր ֆրոնտ» դլուխ բերելու մտահոգությամբ,—ազգային ֆրոնտ, վորի սլաքներն ուղղված եյին բացառապես «թաթար-ցեղի», և «ռուս-մուժիկի» հետ «հայ ժողովրդի» դեմ իրը դավադրող «ներքին թուրքի»—կոմունիստներիս դեմ։

*) Տես՝ «Մարտակոչ» 1923 թ. № 14—մեր «Հեղափոխական եմիգրացիայի և ուսանողության անցյալից» հոդվածը։

VI

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ՊՐՈԼԵՏԱՅԱԿԱՆ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԻՐՔԵՐ։ ՍՊԵՑԻՖԻԿՆԵՐԸ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱԳՐՈՄՆԵՐԻ ԻԴԵՈԼՈԳՆԵՐ

Դիրքերը վորոշ են յեղել միշտ և միշտ էլ իրար հակադիր.—մերը—մ ի ջ ա զ գ ա յ ի ն-պ ր ո լ ե տ ա ր ա կ ա ն.

նրանցը—ա զ գ ա յ ի ն-բ ո ւ ր ժ ո ւ ա կ ա ն։

Մի կողմից՝ մեր կուսակցությունը՝ զեկավարությամբ Ստ. Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի,—յեթե բավականանանք լենինյան բանակի միայն հայ ընկերների մի յերկու անուն վերհիշելով։

Մյուս կողմից՝ Դաշնակցությունը զինակից ունենալով Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիզմը,—վորի «կառավարուն դեմքերն» եյին խայտառակ Բախշին, մեշչան ու յերեբուն Ա. Ռուբինին, ովքով Դավիթը,—և էլի մի յերկու գավառական թերուս վարժապետներ։

Վ.երը մենք թվեցինք մեր հասարակական-քաղաքական իրականությունը ամբողջապես լցնող մոտ յերկու տասնյակ հարցեր, վորոնցից և վոչ մեկի հանդեպ բալշեվիկներս ընդհանուր լեզու չգտանք «սոցիալիստ» Դաշնակցության և «մարքսիստ» սպեցիֆիզմի հետ,—բայց վորոնցից և վոչ մեկի շուրջը տարաձայնություն չծագեց Դաշնակցության և սպեցիֆիզմի մեջ։

Անհրաժեշտ է արդյոք հիշեցնել անցած յերկար ճանապարհը, վերլուծել այն բոլոր կետերը՝ մեզ իրարից դ ա ս ա կ ա ր գ ա յ ն ո ր ե ն բաժանող տարբեր դիրքերը տեսնելու։ կարծում ենք այդպիսի աշխատանքի կարիք չկա այստեղ, մեր «Մարտակոչ»-ի առանց այն էլ սուղ եջերում. դա մեզ շատ հեռուն կտաներ։ Բավականանանք վերը թված հարցերից միայն մի քանի կետերի քննությամբ։

Ահա մեզ ա զ գ ա յ ի ն ու հ ո ղ ա յ ի ն խնդիրները։

Հակահեղափոխական հեղինակը ինքն անգամ չի կարողանում ծածկել, վոր Ռուսաստանի Սոց.-Դեմոկրատական Բանվորական

(այսինքն մեր) Կուսակցության և սոցիալիզմի գաղնակցական վարիանտ կամ Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիզմի մեջ անհաշտելի տարաձայնություններ կային.—

«Տարբերությունը արտահայտվում էր ազգային ու հողային հարցերում» (էջ 94):

Զարժե խոստովանածի մասին յերկարել, մանավանդ վոր այդ մասին խոսել ենք մի ուրիշ տեղ:

Անցնենք այլ կետի:

Ահա մեզ 1905—6 թ.թ. Թուրք-հայկականական պատերազմների խնդիրը:

Բալշևիկյան կուսակցությունը շատ անյերկդիմի ու կարուկ վերաբերմունք ցուցադրեց իր ժամանակին դեպի այդ անիմաստ ու չարիմաստ արյունհեղությունները: Կոմունիստական կուսակցության տեսակետը ձևակերպել է մեր Անդրկովկասի կազմակերպության ամենատաղանդավոր ներկայացուցիչը, վորի առաջ պատկառում են այսոր անգամ «ութերեքական Թուրքաները»: Անմահ Սաենյան Շահումյանը իր ժամանակին բողոքել և բուռն կերպով ում դեմ վոր հարկն եր.—

«Հայ-Թուրքական կոտորածի ամբողջ մեղքը ընկնում է «Թուրք ժողովրդի» վրա,—այդ են ուզում ասել մեր «ազգասերները»:

Ի հարկե մենք շատ հեռու յենք այս բոլորով հայ ժողովուրդը «մեղադրելուց», «դատապարտելուց»: Այդ մենք թողնում ենք պանիսլամիստներին, ինչպես ձեզ էլ՝ պանտյուրքիստների թողնում ենք «դատապարտել» Թուրք ժողովուրդը:

Այդ կոտորածը վոչ հայ և վոչ էլ Թուրք ժողովուրդների հանցանքը չե, այլ նրանց դժբախտությունն է:

Հարկավոր չե միայն կեղծել, ծածկել մեր պակասությունները:

Հարկավոր չե մանավանդ անմեղ գառներ ձևանալ այն մարդկանց, վորոնք անմեղսակից չեն ժողովրդի ոգիության մեջ, վորոնք սիստեմատիկաբար—դիտակցությամբ թե անգիտությամբ— մթնացրել են ժողովրդի ինքնագիտակցությունը և պարարտացրել են իրենց «գործունեությամբ»,

պարոններ, այն հողը, վորի վրա բուսել և արյունոտ պրովոկացիան*):

Ստ. Շահումյան, Սուրեն Սպանդարյան և նրանց հետ էլ ամբողջ Կոմունիստական կուսակցության անդրկովկասյան կազմակերպությունը գտնում էին, վոր հայ-թուրքական պատրոմանները հայ յեվ թուրք ժողովուրդների դժբախտություն եր, մի արյունոտ պրովոկացիա:

Մի թե այս վորակումը կարող և վիճելի լինել:

Մի թե հեշտությամբ կարող են փորձել ազատել իրենց ոձիքը պատասխանատվությունից դաշնակցական «Ալիք» թերթի ազգասերներն ու նրանց գաղափարակից պատրոմասեր սպեցիֆիկները...

Ջենք կարծում. բայց, բնական և, վոր Դաշնակցության հետ և Դաշնակցության չափ իրեն շահագրգռված և զգում պատրոմային դրծելակերպի յեվ քյասոլատխային մտածելակերպի մեջ նաև սպեցիֆիկը:

Նա համաձայն չե ընկ. Ստ. Շահումյանի և սրա կուսակիցների վերը բերած գնահատականի հետ: Սպեցիֆիկը գըտնում է, վոր հայ Թուրքական 1905—6 թ.թ. կոտորածները վոչ միայն դժբախտություն կամ բացասական յերևույթ չեյին, այլ նույնիսկ մի ամբողջ դար յերազած «բարոյական հաղթանակ», ճիշտ հարյուր տարի ձգտած «վոդու ազատություն»...

Հակահեղափոխական հեղինակը պնդում է, թե 1905—6թ.թ. հայ-թուրքական պատրոմը—վոր նա սիրով «կռիվ» ու «պատերազմ» և անվանում,—անհպատակ չեր: Դաշնակցության մեջ «հարազատություն»**) գտնող վոգորմելի հեղինակը ուղղակի հարց և տալիս իր բամբասագրքում (էջ 260)—

—«Ի՞նչ շահեցին հայերն ու Թուրքերը յերկու տարվա ընդհարումներից»...

և ինքնագոհ պատասխանում (էջ 262—263)—

«Այդ կռիվը անհպատակ չեր թնդում քաղաք-

*) Տես՝ Ստ. Շահումյանի հոդվածը՝ «Զիթխանովի ճառը և «Ալիք»-ի ախիտասերները»,—«Յերկերի ժողովածու» հատոր 1-ին, յերես 151—152:

**) Տես՝ դաշնակցական «Բանակի որը», Յերևանի «Հառաջ»-ի 1920 թվի, հատուկ հավելվածը, վորտեղ ոչխող Անանունը դեռևս ունի «Հարազատություն» հոդվածը: Ս. Վրացյանի գրածը նույն №-ում արտի-«սոցիալիստատություն

(Թող ներվի մեզ գործածել այս բառը) դուրս չեկան բարոյականազրկով (ընդդծ. բնագրինն է)(Ե.Ս.)։ 1905 թվից հարյուր տարի առաջ ռուսները մաել էին Անդրկովկաս (Գանձակի խանությունը նվաճվեց 1804թ., Ղարաբաղի, Շեքիի, Շիրվանի և արևելյան Անդրկովկասի մյուս խանությունները հպատակություն հայտնեցին 1805 թ.)։ Այդ ուրվանից էլ հիմք է դրվել հայերի ֆիզիքական ազատագրման...

Ֆիզիքական ազատագրումը մեծ բարիք է։ Այն հիմք և կազմում մյուս բոլոր բարօրությունների։ Նրան պիտի հաջորդեր վոդու ազատագրումը։

Այդ էլ չեղավ 1905—6թ. թ.։

Հայությունը նյութապես տուժեց, բայց վերջ-կետ դրավ այն պատմության, որ 1805 թվականներից սկսած վորոճում եր ռուսական տիրապետությունը։ Հայն ու թուրքը հավասար դարձան։ Ցեղական առավելության առասպելը ջնջվեց հրացանների վորոտով։

Դա բացառապես հայերի համար։

Այս կետում թրքությունը նահանջեց և պատկառանքով ողջունեց հայության նկատմամբ։ Մեր ժողովրդի ազատության պատվանդանն ու վերնաշենքը ներդաշնակ վիճակ ստացան։

Ռուսների ձեռքով սկսածը՝ հայն ավարտեց իր ջանքերով, իր վշտակցությամբ, իր արյունով։

Ահա ինչ շահեց նա հայ-թուրքական ընհարումներից»։

«Հեղափոխական մարքսիզմի» գոհարներն են սրանք, վորի տակ ամեն մի դաշնակ խմբապետ-մասուղերիստ արյունոտ ձեռքերով անջնջելիորեն վաղուց արդեն ստորագրել է և այսօր էլ նորից ու նորից ստորագրում են բոլոր ուղղափառ դաշնակները կարմիր գծից դուրս—«Դաշնակցության որը» տոնելիս*)։

Պատրոնը—պրոդրեսիվ յերևույթ!

Ավելի հեռուն գնալ դժվար է։

«Իսկական հայ մարդը»—վոր միշտ էլ շահագործել և «հեղափոխականացրել» ու ապականել «մարքսիզմի» բառերը—համբուրվում է իր պատրոնային ներկրողի մեջ «իսկական ռուս մարդու» հետ, վորի պատմական ներկայացուցիչներն էին Կրուշևանը, Դրինդմուռը, Պուրիշկևիչը, Մարկով 2-ը, Նիկոլայ 2-ը և ցարական մարդակեր այլ գազանները։

Ստ. Շահումյանին, Սուրեն Սպանդարյանին և ընկ. Լենինի մյուս հետևորդներին մեղանում թվացել է նույնպես, թե պատմությունը քայքայում են ժողովրդական անտեսությունը, թե այդ արյունոտ ընդհարումներից տուժում է քաղաքությունը և մանր-բուրժուազիան։

Դարձյալ այլ կարծիքի էին ու են Դաշնակցությունը և Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիզիմը։ Բառապրքի հակահեղափոխական հեղինակը գրում է (եջ 262).—

«Զարգացման նոր թափ ստացավ հենց այն մանր-բուրժուազիան, վոր մարքսիստներից վոմանց կարծիքով շահ չուներ ընդհարումներից»։

Այստեղ մեռած սպեցիֆիզիմը անցնում է «տեսաբանական հարձակումի»։ Նա ուզում է խածնել, բայց խածնելիս արհեստական ատամները թափվում են բերանից։

Նախ նկատենք, վոր այդ «մարքսիստներից վոմանքը» Լենինի շուլայի մեր հայտնի հեղափոխական մարքսիստներ են, վորոնք հայ-թուրքական ընդհարումներից միանգամայն վոչինչ դրական ու լավ բան չեյին սպասում, բացի դժբախտություններից։

Այդ «մարքսիստներից վոմանքը» հակառակ դաշնակ-սպեցիֆիկյան վոճրագործ պնդումներին, գտնում եյին, վոր հայ-թուրքական ընդհարումներից շահ չունի վոչ միայն Բազուի բանվորը և Յերևանի գյուղացին, կամ՝ ըստ ախորհուրդ հեղինակի՝ քաղաքներն ու գյուղերը, այլև մանր-բուրժուազիան, մասնավորապես արհեստավորությունը, մտավոր աշխատանքով զբաղողները, աշխատավոր գյուղացիությունը և այլն։

Այդ «մարքսիստներից վոմանքը» շատ ճիշտ կերպով հասկացած եյին, վոր պատրոններից շահեցին վոչ թե «հայերը» կամ «հայությունը» (շարունակ կրկնվում է այդ «մարքսիստական տերմինալոգիան» ողիող հեղինակի բերանում), այլ բացառապես ցարական-պամեշչիկական իրավակարգը, վորի տակ ուռճանում եյին կապիտալիստ դասակարգը և մասնավորապես հայ հասթափորները—Մանթաշյանները, Ժամհարյանները, Արամ-

*) Տես՝ «Հուսաբեր» Յերեվանում № 168, 16 հոկտ. 1926 թ. «Համազգային ուխտի որը», վորի հինգ կոլոնանոց առաջնորդողը հյուսված է ամբողջապես ողիոզ Դավիթի ցիտատներից և հրճվանքով նույնիսկ բառացի բերված է վերի հատվածը։

յանները, Ղուկասյանները, Ծատուրյանները, Առաֆելյանները, Ադամյանները, Կրասիլնիկյանները, Լալայանները և նմանները։

Այդ «մարքսիստներից վոմանց» համար աքսիոմ էր, վոր պագրոմները ջլատեցին դեռևս չամրացած հեղափոխության ուժերը, միջազգային պայքարին ավելի ազգամիջյան կռվի ընթացք, և ցարական բռնակալությանը ապահովվեց մի ավելորդ տասնյակ տարի ևս անվերապահ տիրապետություն ու շահագործում Ռուսաստանում, սարկությունն՝ Անդրկովկասում։

Այդ «մարքսիստներից վոմանց» պնդումները այսօր էլ մնում են մեզ համար անդրդվելի։

Սակայն, ինչպես տեսանք, ուրուշ կարծիքի չեն յեղել Դաշնակցությունը և նրա սոցիալիստական վարիանտ սպեցիֆիկումը։ Զգետք և զարմանալ, վոր այսպիսի համոզումներով ու յերազներով պագրոմներին զոհ բերին նրանք ռուսահայ թե տաճկահայ մասսաների կյանքեր։ Ինչպես այժմ էլ խոստովանում են, դա —միասին առնորեն ծրագրված գործելակերպ և գիտակցած մտածելակերպ է յեղել։

Բարեբախտաբար այսօր այլևս պագրոմշչիկների ձեռքին չէ մեր յերկրի դեկը ու ժողովրդի բախտը։

Յեթե մինչև այսօր տիրող կարծիք էր, թե 1905—6 թ.թ. հայ-թուրքական պագրոմները գլխավորապես Գալիցինի, Նակաշիձեյի, Ալիխանով-Ավարսկու ձեռաց գործ էր, արդյունք ցարական վոստիկանության պրովոկացիայի,—այսօր մենք ունենք հեղինակավոր վկայություններ, վոր այդ ծրագրային պրովոկացիային համաձայն դեպս անմասն չեն յեղել Դաշնակցությունը և նրա սոցիալիստական վարիանտ սպեցիֆիկումը, վորոնց «վոդու ազատագրումի» նպատակներից ընդհանրապես դուրս չեն յեղել յերբեք պագրոմային ձեռնարկությունները։

VII

«ԽՆԴԻՐՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ» ԿԱՄ «ՏԱՃԿԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ»։ ԲԱԼՇԵՎԻԿՅԱՆ ՅԵՎ ԴԱՇՆԱԿ-ՍՊԵՑԻՖԻԿՅԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ

Վերցնենք մի այլ կետ, շոշափված ոդիոզ հեղինակի բամբասպրքում։

Ահա մեզ տաճկահայկական «դատը»։ Նա դաշնակ սպեցիֆիկների մոտ դեռ այսօր էլ կոչվում է «խնդիրների խնդիրը»։

Ստ. Շահումյան, Սուրեն Սպանդարյան և Լենինյան կուսակցության մյուս ներկայացուցիչները Անդրկովկասում համակրելն այն Տաճկաստանի ներքին խնդիրը,—այդ յերկրի ազատագրումը դերազանցապես նույն յերկրի աշխատավորության (առանց ազգի խորության) հեղափոխական պայքարի գործ։ Հակահեղափոխական հեղինակը, դառնալով այդ հարցին, մի ավելորդ անգամ ևս վկայում է, վոր Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիկումը «մայր»-կուսակցության վեր խղեպներով և բռնված յեղել միշտ դեպի չարաբաստիկ «խնդիրների խնդիրը»։—

«Ահա այսպես, և՛ գրականագետ, և՛ հասարակական գործիչ, և՛ հեղափոխական, և՛ պատգամավոր, և՛ կղեր—բոլորը միացած կուրցք կին ցցել Թուրքիայի դեմ և ռուսաց սպառնալիքներով բարենորոգում կին պահանջում Թուրքաց Հայաստանի համար։

Հայ մարքսիստներից այդ պահուն մամուլի մեջ արտահայտվեցին Բ. Իշխանյան և Ա. Մարաունին։

Իշխանյանը պետք էր դաշնակցության-իթթիհատական համաձայնության։ Բալկանյան պատերազմի ժամանակ նա պահում էր, վոր հասել և «հաբսբուրգյան բոպեն» կամ շեշտում էր հայկական «ըմբոստ պահանջների» անհրա-

ժ ե շ տ ու թ յ ան մ ա սի ն» («Մշակ» 1913 թ., 132—135)*):

Հայտնի չէ, վոր «տ ա ճ կահայ դ ա տ ի» մասին շարունակ արտահայտվել են,—դեռ շատ առաջ՝ քան Դաշնակցությունը կվիժեր սպեցիֆիզմը,—Ստ. Շահումյան, Սուրեն Սպանդարյան, Բողդան Կնունյան, նաև Արշակ Զուբարյան և մեր այլ «ռուսահ ա յ կան» մարքսիստները:

Նրանց մասին և վոչ մի խոսք, վորովհետև նրանք—«հ ա յ մարքսիստներ» չեն ըստ խայտառակ Բախշիի, մեշչան Ռուբենիի, ողիոզ Դավթի և դաշնակների: «Հայ մարքսիստներ» տերմինը—ինչպես նաև «հեղափոխական մարքսիզմ» և «առաջին մարքսիստներ» դարձվածքները—շարունակ շատ վորոշ ու խարդախ մտքով են գործածված դաշնակ-սպեցիֆիկյան հակահեղափոխության գրականում: Բայց այդ մասին հետո:

Ասում են թե մարդկանց վառնդի որերին են ճանաչում և քաղաքական հոսանքները՝ հասարակական կրիզիսների ժամանակ: Տաճկաստանը խակապես վոր ապրել և դժվարին վայրկյաններ: Այդ հանգամանքը չերբեք պատրվակ չէր կարող ծառայել մի իսկական սոցիալիստի,—վորը վերջնականապես թոթափել և ազգայնական մտածելակերպը,—ոգավելու մի դրացի չերկրի դըժբախտությունից նվաճողական նպատակներով: Խորհրդային Ֆեդերացիան 20 և 21 թ. թ.—չերբ նույն Տաճկաստանը ապրում էր շատ ավելի ծանր որեր—կենդանի որինակ ավեց սոցիալիստական վերաբերմունքի՝ ամեն կերպ ոգնելով նրան քակել այն հանգույցը, վոր միջազգային իմպերիալիստները ձգել էին հանրապետական Տաճկաստանի վիզը: Մի տեսակ մեր հռչակավոր պլադիատ Բախշիի «մարքսիստական» քայլվածքը:

Նա նեղսրտում է դաշնակցականների դեմ, վոր անդամ համաձակվում են մենշևիկյան համաձայնություն կնքել Իթթիհատի—չերիտասարդ Թուրքերի կուսակցության հետ...

Նա առաջարկում է «ըմբռոստ պահանջներ» ներկայացնել Թյուրքիային...

Մի՞թե սա տիպիք չէ Դաշնակցության սոցիալիստական վարկաբեկման համար:

Տխրահռչակ հեղինակը, ողիոզ Դավթը բերում է նաև,—այն ժամանակները դեռևս բոլշևիկյան կուսակցության չհարած—Ս. Մյասնիկյանի կարծիքը.—

* Տես՝ «Ռուս. հասարակական գործ.» էջ—529:

«Հայոց հարցի լուծման դժվարությունները բղխում էին հետևյալ «սպեցիֆիկ հայկական պայմաններից».—«1. Թուրքահայաստանի անհարմար դիրքը: 2. Հայերի ցրվածությունը: 3. Նրանց չչապատված լինելը մահմեդական վայրագ ցեղերով: 4. Հայկական շարժման համար բացակա Թուրքահայ իմինենտ ուժը: 5. Հայերի՝ վորպես ցեղի՝ անջատված կացությունը. վոչ մի յեվրոպական պետություն հայ ցեղակից կամ կրոնակից չէ»:

Ս. Մարտունին գտնում էր, վոր հայկական հարցի լուծման համար անհրաժեշտ է, վոր նախ Ռուսաստանի ներքին վիճակը փոխվի հարկավ ռամկավարացման իմաստով. ապա խորհուրդ էր տալիս «Թուրքահայ գործիչներին» ոգավել իմանալ Թյուրքիայի տարուբերվող դրությունից և «ինկատի ունենալով Թյուրքահայերի վերջին ծայր աննպաստ պայմանները», նրանց «յուրաքանչյուր բոլոր պատրաստ պահել դալիք որերի համար» («Մշակ», 1913 թ., 283)*):

Ի հարկե Ստ. Շահումյանին, Սուրեն Սպանդարյանի և սրանց համախոհների տեսակետը չէր այս: Բայց բարեխիղճ լինելու համար՝ պահանջվում էր նկատել, վոր մինչ-հոկտեմբերյան Մյասնիկյանը ազատ էր այլ կարծիք դավանելու՝ քան լենինյան բոլշևիկյանը ազատ էր թոթափել աչ դաշնակցականների ձեռքում նակը: Նա դեռևս չէր թոթափել աչ դաշնակցականների ձեռքում խաղալիք՝ խայտառակ Իշխանյանի և մեշչան Ռուբենիի կուսակցական ընկերությունը: Այդ շրջանի Ս. Մյասնիկյանը մեկից ավելի անգամներ բավական ցավոտ կերպով խարազանվել և մերկացման բալշևիկ Ստ. Շահումյանի կողմից իր սպեցիֆիկյան թերուսության համար: Յեվ ռուսահայերի հասարակական զարգացման անխարդախ պատմագիրը,—յեթե նրան խակապես հետաքրքրում և անցքերի ու անձերի օբյեկտիվ ու իրական զարգացումը—1926 թվին տպագրված մի գրքում կշտշտեր այդ հանգամանքը, մեչ կբերեր Ս. Մյասնիկյանի վոչ միայն սպեցիֆիկյան շրջանի անկազմակերպ մտքերը, մի լիներ ալ «Մշակում» տպագրված խակ-հոդվածներից հատվածներ,—այլ գլխավորապես նրա՝ վորպես Ստ. Շահումյանի հետևորդի և ժողկոմխորհի նախագահի՝ Յերևանում 1922 թ. ապրիլին արևմտահայերի համար դումարին արտասանած ճառը, վորտեղ բալշևիկ Ս. Մյասնիկյանը կրկնում է հեղափոխական մարքսիստների—Ստ. Շահումյանի,

*) Տես՝ «Ռուս. հաս. գործ.» նույն էջ:

Սուրեն Սպանդարյանի և սրանց հետևորդների լենինյան տեսակետը տաճկահայ խնդրում։

Սակայն մեռած սպեցիֆիզմի կիսակենդան լինելուտարի համար բնավ կարևոր չէ Ա. Մյասնիկյանի քաղաքական մտքի զարգացումը, վոր պիտի հանգեր սպեցիֆիզմից յերես դարձնելուն։

Ողիով հեղինակը շահագրգռված է հակառակ բանում։

Հակա-հեղափոխությունը փորձում է պարզապես շփոթել մտքերը, կարծես նկատելու, թե Խորհրդային Հայաստանի բոլշևիկումը դաշնակ-սպեցիֆիկյան «արմատներ» ունի, իբր շարունակվում է «ժառանգությունը» քանի վոր նրա 1923 թ. Դոգկոմխորհի նախագահը՝ 1913 թ. «Մշակում» այսպիսի հակաբոլշևիկյան թերուս մտքեր ունի արտահայտած խայտառակ Բախշիի գինակցությամբ։

Բայց այդ խաղը չի անցնի։

Բոլշևիկյան պատմության խեղաթյուրումի մեջ շահագրգիռ պատմաբանաբանապիրներին—Յերևանում նստած լինեն նրանք թե Մոսկվայում—թվում է, թե կարելի յե լենինիզմը փոխարինել սրոցկիզմով, կամ—վոր նույնն է—մինչ-հոկտեմբերյան սրոցկիզմը ճանաչել վորպես «բոլշևիկյան վարիանտ» լոկ մի պատճառով, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սրդեն Լ. Դ. Տրոցկին ծառայություններ ունի կատարած ВКП(б)-ի շարքերում։

Պետք է ինքներս պարզ գիտակցենք և վորոշապես ել ասենք մեր յերիտասարդ դվարդիային, վոր մինչ-հոկտեմբերյան շրջանի մի ընդհարոջ հետազա անվերապահ հարումը Ստ. Շահումյանի բանակին Հայաստանում՝ ինքնին սրդեն մի ինդուլգենցիա չէ այդ ընդհարոջ մինչ-բոլշևիկյան կոնսակցիական գերուժներն ու տատանումները վորպես լոկ լենինիզմ կամ հեղափոխական մարքսիզմ հանձնարարելու։

Թողը դարձնեն այս ճշմարտությունը մանավանդ հեղափոխական պատմության ու պայքարի կեղծարարները։

Բայց դառնանք մեզ հետաքրքրող դաշնակ-սպեցիֆիզմի դիրքին տաճկահայ «դատի» կամ «խնդիրների խնդրի» հանդեպ։

1905 թ. հեղափոխության առաջին վոգևորության շոգիանալուց հետո,—վոգևորությունն՝ յերբ, ինչպես նկատեցինք, անգամ ցիլինդրավոր ու ֆրակ հագած պարոններ «անձնվիրաբար»

բարձրանում էին Պետրոգրադի ու Մոսկվայի բարիկադները,—սպեցիֆիզմը հիմնավորապես հարեց Դաշնակցության վարքագծին բոլոր խնդիրներում և մասնավորապես նաև «տաճկահայկական հարցում»։

Մի անգամ ընդմիշտ պարզված է, վոր 1919|20 թ.թ.—յերբ սպեցիֆիզմը անորինակելի անձարձակությամբ գործում էր դաշնակցության հետ միաբան Յերևանում,—խայտառակ Բ. Խանյանը և ողիով Դ. Անանունը տաճկահայկական խնդրում հետազոտում էին ճիշտ նույն նպատակներն և գործում էին ճիշտ նույն մեթոդներով, ինչ վոր տասը տարի առաջ Բալկանյան պատերազմի շրջանում։

VIII

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ: ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ «ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՒՆԴԸ» ԹԵ՞ «ՎԵՐՋԻՆ ՀԱՇՎՈՒՄ ՄԻ ԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ»

Վերցնենք այժմ մի այլ կետ։

— Դաշնակցական կուսակցության դասակարգային բնույթը։

Այս խնդիրը շատ ուշագրավ ու հետաքրքիր վիճաբանության առարկա չի եղել իր ժամանակին։ Բալշևիկները պնդել են, և պնդել շատ իրավացիորեն, որ այսպես կոչված «տաճկահայկական դաշտը» բուրժուազիայի նվաճողական ձգտումների արդասիքն և եղել և Դաշնակցությունը այդ բուրժուազիայի մարտական դուռնդը։ Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիկումը կաշվից դուրս է եկել ապացուցելու իր սրտին հարազատ Դաշնակցության «հակա»-բուրժուական բնույթը, նրա «սոցիալիստական» եյությունը։

Ոգիով հեղինակը պնդում է դեռ այսօր էլ իր բամբասապրքում (եջ 102).—

> *«Կար մի տարածված կարծիք, թե Թյուրքահայ դաշտը հայ բուրժուազիայի նվաճողական ձգտումների արդասիքն է, քանի որ ընդհանրապես դաշնակցական քաղաքականության կրողը բուրժուազիան եր։ Դա համամնմանության մի շատ հեշտ բացատրություն եր, որ առանձնապես կատարեցնում եր հին ուխտի հեղափոխականներին, որոնք թե անձնապես հեռու էին բուրժուազիայից, և թե պիտեին, որ սոցիալիստական ինտերնացիոնալը հայկական հարցի անկեղծ բարեկամն է։*
>
> *Թյուրքահայ դաշտի մեջ հայ բուրժուազիայի մասի որոնումն անպայման անիրագեկության արդյունք եր և մարքսիզմի դեհհկացում։*
>
> *Թյուրքահայ դաշտը, որի վարիչն եր Դաշնակցությունը, նվաճողական հավակնություններ ունեցող բուրժուազիայի գործը չեր։*
>
> *Թյուրքիայում ռուսահայերի կողմից հայ հայրենիք և վերոնվել ռուսական ազգային հալածական քաղաքականության կերևից»։*

Կարդացեք նորից վերը բերած վոչ-«դեհհկացած» այդ «մարքսիստական» մտքի գոհարները, վորպեսզի համոզվեք, թե վորքան ճիշտ և գծված եղել մեր Սա. Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի և սրանց հետևորդների կողմից—ամբողջ քառորդ դար առաջ—«տաճկահայ դաշտ» եյությունը և դաշնակցական կուսակցության դասակարգային բնույթը։

Անանուն յան դրդյի սանձարձակությունն և հարկավոր պնդելու, թե դաշնակցականները և սպեցիֆիկները «անձնապես հետու չեն եղել» մեր բուրժուազիայից և Տաճկաստանում «հայ հայրենիք» վնասրելը գերազանցապես հայ բուրժուազիայի խնդրաղը չեր։

Բայց ով եր դեռ 70-ական թվականներին Դրիդոր Արծրունին—Տաճկաստանում «հայ հայրենիք փնտրողների» այդ առաջին պիոները և ճանաչված գաղափարախոսը։ Նա արդյոք մեր ամենից կենսունակ ու մարտնչող բուրժուազիայի վառ ներկայացուցիչը չե՞ր թե՛ անձնապես և թե՛ վոչ-անձնապես։

Ո՞վ եր դեռ 80-ական թվականներին ասենչում.—

— «տեսնել Մասիսի գլխին հայ դրոշակ»...

— «մեր քահերն էլ կանեն նոցա շանսատակ»...

Բաֆֆին, Գամառ-Բաթիլան և ընդհանրապես մելիոնատեր Արծրունու լիբերալ պլեադան,—վորոնց կրթած սերունդը հետագայում պիտի համախմբվեր դաշնակցական կուսակցության մեջ,—«հայ բուրժուազիայի ձգտումների» արտահայտիչը չե՞ր ուրեմն բացառապես ու ամբողջապես...

Թվում է, թե կարծես բացառապես ու ամբողջապես մի այն բուրժուազիայի։

Իսկ հետագայում, յերբ ձևավորված հանգես և գալիս Դաշնակցությունը մեր ռուսահայ իրականության մեջ հայ-թուրքական պատրոնների և քաղաքական գործադուլների ժամանակ, իսկ տաճկահայ իրականության մեջ—խմբեր ներս մուծելով դեպի «յերկիր»,—իմպերիալիստական պատերազմի, կամավորական շարժման, միջազգային դիվանագիտական ապերանքների

(Վերսայլից մինչև Լոզան՝ Սևրի վրայով իհարկե) և այլն, և այլն—նա «հայ բուրժուազիայի նվաճողական ձգտումներով» չի՞ ղեկավարվել ամբողջապես ու բացառապես, չի՞ր շարունակվում Դրիգոր Ալթըունու գիծը...

Թվում է, թե կարծես շարունակվում էր խակապես ամբողջապես ու բացառապես այդ նույն բուրժուական գիծը։

Իմպերիալիստական պատերազմի առաջին տարին, Տաճկաստանի դեմ պատերազմ հայտարարելու առաջին իսկ որը սպեկտիվ ու խայտառակ Բախշին շտապում է ցարական մայրաքաղաք Պետրոգրադ և ձեռնարկում մի ամբողջ «կամպանիայի» կամ՝ ըստ Սիմոն Վրացյանի մեզ հայտնի արտահայտության՝ պրոպագանդայի։ Ահա թե ինչպես է բնորոշում այդ ճամբորդության նպատակը խայտառակ Բախշիի մտերիմ ընկերը և նրանով աքանչացող հարյուր տոկոսանոց դաշնակ Վ. Նավասարդյանը.—

> «1915 թվին Բախշին ուղևորվում է Պետերբուրգ, ուր հայկական ակումբում հրապարակային մեկ դասախոսության մեջ այն գաղափարն է արծարծում, թե Ռուսաստանը պետք է հառաջնահ դեպի էրկրի խորքերը և իր տիրապետության տակ առնի թյուրքահայ վիլայեթները։ Այս գաղափարները հրապարակով նա արծարծում է այն ժամանակ, երբ հայության ճնշող մեծամասնությունն այդ որերին միջոցներ էր փորձում Տաճկահայաստանի ավտոնոմիայի գաղափարը իրականացնելու «մեծ պետությունների» չերաշխավորությամբ։

> Բախշու ձայնը հասնում է մինչև ռուսական շըրջանները և ռուսական մամուլի ազդնչիկ որգաններից «Ռեչը», Միլյուկովի խմբագրությամբ լույս տեսնող կադետական կուսակցության պաշտոնաթերթը (ընդարձակ թերթոնով ու Միլյուկովի ստորագրությամբ) պաշտպան է կանգնում Բախշու արծարծած տեսակետներին։

> Ռուսական հեղափոխությունը սակայն գալիս է և ամեն ինչ հիմն ի վեր դնում նաև հայ կյանքի այս փոքրիկ անկյունում»*)։

Ցերը սպեկտիվիկյան լրագրը Պետրոգրադի հայկական ակումբում, վոր ասել է ցարական մայրաքաղաքի գաղութահայ բուրժուազիայի համար իմպերիալիստական քարոզներ է կարդում Տաճկաստանի դեմ և կադետ Միլյուկովի հետ ծրագրում

*) Տես՝ Բ. Իշխանյան—«Յերկու ամիս բոլշևիկյան բանտում» էջ 17։

հայ վիլայեթների դրավումը—դաշնակ-սպեկտիվիկյան յեղբայրությունը արդյոք հայ և ռուս բուրժուազիայի նվաճողական ձգտումներով չի՞ ղեկավարվել...

Թվում է թե բացառապես ու ամբողջապես։

Կամ դուցե կադետ Միլյուկովը ռուս և ընդհանրապես Ռուսաստանի «առանց ցեղի և լեզվի խտրության» բուրժուազիայի ներկայացուցիչը չի՞ր ըստ սպեկտիվիկների իմաստակ փիլիսոփայության, այլ Տաճկաստանում «հայ հայրենիք վորոնողը ռուսական ազգային հալածական քաղաքականության յերեսից»...

Ցերբ դաշնակցական Հայաստանում՝ ըստ ախորհուչակ սպեկտիվիկների՝ «ազգային ներքին ընդհանուր ֆրոնտ» էր ստեղծվում,—ներքին ընդհանուր ֆրոնտ բոլոր կուսակցություններից՝ բացի բալշևիկներից, վորոնց միակ ներկայացուցչին (ընկ. Արշ. Մելիքյանին) մինչևիկ Նոյ Ռամիշվիլիի ոգնությամբ դուրս եյին քշում Ցերևանի պարլամենտից խեղդելու պրոլետարիատի բողոքի վերջին շեշտը,—յերբ ազգային ներքին ընդհանուր ֆրոնտ եյին ստեղծում Խատիսյաններից մինչև Սամսոն Հարությունյանները (սրանք բնավ հեչ-ան ձ ն ա կ ան-դ պ ան ի ու դ ա տ ա կ ա ր դ յին կապեր չեն ունեցել հայ բուրժուազիայի հետ!)—չի՞ր իրականում արդյոք բավական խոշոր կադետ (անդամ համառուսական մասշտաբով) Սեփան Մամիկոնյանի «ազգովին գործնք» պահանջը՝ հոգուտ հայ բուրժուազիայի նվաճողական ձգտումների, հոգուտ շարունակ իրար հետ զուգադիպող հայ և ռուս բուրժուազիայի նվաճողական ծրագիրների Մերձավոր Արևելքում...

Թվում է թե այո։

Դաշնակցությունը և նրա սոցիալիստական վարիանտ սպեկտիվիզմը բնորոշելով «տաճկահայ դատը» վորպես «հայ հայրենիք վորոնելու» փորձ «ռուսական ազգային հալածական քաղաքականության յերեսից», ուզում են կեղծել այդ «դատի» դասակարգային բնույթը և շեշտել նրա «համազգայինը» հյութը,—ուզում են շեշտել դաշնակցական-սպեկտիվիկյան յեղբայրության «ազգային» բնույթը, վոր իրը թե ասել է՝ ազգակարգային կամ դեր-դասակարգային համակցություն, և

շանը—վորի համար պատրաստ եմ մեռնել յուրաքանչյուր վայրկյան—շատ ավելի՝ քան իմ զգացմունքները և նվիրական համոզումները»*):

Տիպիկ դաշնակ-սպեցիֆիկյան «սոցիալիզմի» ու «մարքսիզմի» նմուշներ են, վոր ասում են մեզ, թե կարելի չե «սիրել մի ժողովուրդ», այսինքն ծառայել մի գործի՝ հակառակ համոզմունքների և զգացմունքների, առանց ներքին ներդաշնակության:

Ճիշտ են խոստովանում այդ գաճաճները, թե «սոցիալիստական» համոզումն ու զգացմունքը սպեցիֆիկի համար կողքից փակցրած մի պարագա չե յեղել միշտ, վոր ծալած դրված եր մի կողմը և վերհիշվում եր միայն հանդիսավոր բառախարերի ժամանակ պրոլետարիատին մոլորեցնելու, բանվորությանը դավաճանելու բոպեներին:

Այլ կերպ չե հասկացվել այդ մաքով աղքատ ու զգացմունքով ծախու խմբակի ապա-դասակարգային էյմ դեր-դասակարգային բնույթը.

Մենք չենք կարող ասել,—ինչպես պնդում է ախրահոչակ հեղինակը,—թե դա մեր հակառակորդների «անիրազեկության արդյունք է»:

Պատմական փաստ է, վոր ռուսահայերի այդ «ազգային գործելակերպը» Տաճկաստանի հանդեպ դեռ Աբծրուհյան շրջանից խրախուսվել է հենց «ռուսական հալածական քաղաքականության», վոր յարակից կատավարության ակտիվ մասնակցություն է ունեցել Տաճկաստանում Դաշնակցության համար «հայ հայրենիք վորոնելու» գործին:

Պատմական փաստ է նույնպես, վոր հայկական ղինված խմբերի տաճկական սահմանն անցնելը Ախալցխայի կամ Իգդիրի վրայով «Տաճկահայաստանը փրկելու» համար՝ կատարվել է Անդրկովկասի ռուս վոստիկանության ու զինվորական շտաբի գիտությամբ, հաճախ զուտնայով ու ճառերով: Ռուսական բանակի ներկայացուցիչ գեներալ Մելիք-Հայկազյանը, Կովկասի փոխարքայության զինանատան վարիչ հայտնի Միքայել Ամբարյանովը (Ամբարդանյանը) և ուրիշները խրախուսիչ ճառեր են արտասանել այդ ցույցերին. Իգդիրի հայտնի ուեզդնի նաչալնիկ—զավառապետ Շալիկո Փիրումովը—Փիրումյանը (մեր Սիմոնիկի հայրը) և այլ սահմանագծային պաշտոնյաները անձամբ հարմարություններ են ստեղծել ռուս-տաճկական գաղտագողի սահմանը անվտանգելու:

*) Տես՝ Ռ. Իշխանյանը—«Յերկու ամիս բոլշևիկյան բանտում», եջ 33:

«Ազգասիրաբար» չեր արվում ցարական իշխանության հովանավորությունը և վրչ ել «հայ հայրենիք ստեղծելու» ռոմանտիկ հեռանկարներով: Ցարական իշխանությունը և բուրժուազիան (հայ և ռուս միասին) դիտեյին, թե ինչ են վնտրում Մերձավոր Արևելքում—Տաճկահայաստանում:

Այն՝ ինչ մինչ այժմ ել վորոնում է նույն Տաճկաստանում միջազգային իմպերիալիզմը, միջազգային բուրժուազիան:

Ի՞նչ են վնտրում այսոր Բագվի նախկին նավթարդյունաբերողները՝ «Դեն» թերթի հրատարակիչ Ղուկասյանը, Յուդենիչի «պրեմյեր» Լիանոզովը (Լիանոզյանը) և ընկերությունը, յերբ Ռոթշիլդների, Մարկոնիների, Միլյուկովների, Նիկոլայ Նիկոլայևիչների և նմանների հետ մութ գործերի են ձեռնարկում...

Ռուս և հայ բուրժուազիայի շահերը յերբեք իրար չեն հակասել:

Ստ. Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի և սրանց հետևորդների կարծիքը «տաճկահայ դատի» բնույթի մասին հետևանք չեր սոսկ անալոգիայի («համանմանության»), այլ հայկական և միջազգային իրականության գերազանց հիմնավոր ծանոթության, մեզ շրջապատող իրերի լենինյան-մարքսիտական վերլուծումի,—մի բան, վոր շարունակ պակասել է ամեն դույնի սոցիալիստների և առանձնապես Դաշնակցության ու նրա սոցիալիստական վարիանտ սպեցիֆիզմին:

Ողիով հեղինակը անորակելի սանձարձակությամբ «մարքսիզմի գռեհկացումի» մեջ է մեղադրում Լենինի գործակիցներին, լենինիզմի լավագույն ներկայացուցիչներին Անդրկովկասում և մասնավորապես հայ իրականության մեջ:

Հարկավոր է ունենալ դաշնակ-սպեցիֆիկյան խարդախությունից ու սուտիրությունից բղխող բութ ճակատ պնդելու այդ աստիճի (102), թե—

«Այստեղ (այսինքն «տաճկահայ դատի» հարցում—Ե. Ս.) տաճկահայերը չեյին բաժանվում ըստ կուսակցական պատկանելության, այլ ըստ մարքսիտական ուսմունքի լրիվ կամ թերի յուրացման»:

Յերեթ կան դեռևս հիմարներ, թող հավատան՝—թե մեր անմահ Ստ. Շահումյանը, աննման Սուրեն Սպանդարյանը և Լենինի

հետևորդները յեղել են սոսկ «վանհկացած մարքսիզմի» ներկայացուցիչները Անդրկովկասում և Հայաստանում, իսկ «մարքսիստական ուսմունքի լրիվ յուրացնողները»՝ խայտառակ Բախշին, ողիող Դավիթը, մեշչան Ռուբենին և ելի մի յերկու ծապլվարական մասշտաբի ու տիպի վողորմելի վարժապետ-սեմինարիստները։

Այդ ծապլվարյան «մարքսիստների» համար և, վոր մեր ընկ. Ստ. Շահումյանը ասել և, դեռ ամբողջ 20 տարի առաջ՝ յերբ սոցիֆիզիմի կոկոնները չեյին բացվել իրենց ամբողջ փարթամությամբ.—

«Տարիների ընթացքում խոսել «ազգային» ներքին համերաշխության մասին, հակադրել իրեն սոցիալ-դեմոկրատությին (խոսքը վերաբերում և մեր կուսակցության—Ե. Ս.) հենց նրանով, վոր սոցիալ-դեմոկրատիան պաշտպանում և «մի դասակարգի» շահերը, իսկ Դաշնակցությունը «ամբողջ ազգի շահերը», հանդիմանել սոցիալ-դեմոկրատներին, մինչև անգամ «դավաճաններ» անվանվել, վորովհետև նրանք «դասակարգային կռիվ են առաջացնում հայկական կյանքում», մտրակներով ցրվել գործադուլ անող պրոլետարներին և հրահանգել նրանց, վոր չհանդգնեն խանգարել «ազգային դիսցիպլինան» և այլն, և այլն, և հետո հանկարծ կանգնել ու հայտարարել «մենք պրոլետարիատի դեկավարներն ենք»,—այդ առնվազն... ամոթ և, պարոններ»*)։

և վերջացնում և մեր անմոռան Սաենկանը իր սքանչելի հոդվածը.—

«Թուղթը, ճիշտ և, չի բողոքում վոչ մի բանի դեմ, ամեն ինչ տանում և, բայց, պարոններ, հարկավոր և մի փոքր ամաչել...»։

Անտրակելի սանձարձակության Թուլամորթ հերոսները յերբեք չեն փայլել Ստ. Շահումյանի շեշտած առաքինություններով, մանավորապես ամոթով...

*) Տես՝ Ստ. Շահումյան—«Յերկերի ժողովածու» հատ. 1։

IX

ԴԱՇՆԱԿ-ՍՈՑԻՖԻԶՄԸ ՑԱՐԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԳՈՐԾԱԿԱԼԸ ՄԵՐՁԱՎՈՐ-ԱՐԵՎԵԼՔՈՒՄ։ ԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՎՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱԴԵՏՆԵՐԻ ՀԵՏ

Ապացուցված պատմական ճշմարտություն և, վոր դաշնակ-սոցիֆիկյան տերող տրամադրությունը միանդամայն զուգադիպում եր իշխող ցարական-միլյուկովյան իմպերիալիստական ծրագրներին։

Նայտառակ Բախշին շտապում և չինովնիկական Պետրոգրադ «ազդեցիկ շրջանների» և մասնավորապես «Ռեչ»-ի ու Միլյուկովի իրը «քնած» ուշադրությունը արթնացնելու, բայց խոսկաս հարկավոր ինստրուկցիաները ստանալու հարկավոր կուլուարներում...

Ի՞նչ եր պահանջում սոցիֆիզիմը, վոր այդ ժամանակները բարբառում եր մերթ մշակական լիբերալիզմի, մերթ հոբիզոնական դաշնակիզմի անունից.—

— Թյուրքահայաստանի նվաճումը ցարի կողմից!

— Ռուսական տերապետությունը տաճկահայկական վիլայեթների!

Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սոցիֆիզմն այլ յերգ չեր տեսնում, քան ցարական-կալետական համերաշխությունը.—

«Յես տաճկահայկական հարցի լուծումը Թյուրքիայի սահմաններում չեմ հավատում։

Լավագույն լուծումն այդ հարցերի համարում եմ Ռուսիայի գրավումը տաճկահայկական նահանգների։

Լավագույն լուծումն այդ հարցի յես համարում եմ ռուսական տերապետությունը։

Տաճկաստանի վերածնությանը յես չեմ հա-

վատուհմ. իսկ Ռուսիայի ապագան ինձ համար աներկբայելի չէ։

Ցես կապելով իմ լավագույն հույսերը առաջավոր ռուս դեմոկրատիայի հույսերին և իմ բաղձանքները՝ նրա բաղձանքների հետ, չես չեմ տարակուսում, վոր չեմ հիասթափվի»*)։

Այսպես եր գրում «Մշակում» խայտառակ Բախշիի, ոլիով Դավիթի, մեշչան Ռուբենիի և ելի մի յերկու դեկլասե յեղած հայ մտավորականների ընկերակցությունը դեռևս չթոթափած մթնշաղի բանաստեղծը, վորի գրչի առավելությունը հենց նրանումն եր, վոր նա մինչև վերջ ու անկեղծ դուրս եր տալիս (վերբալիվալ) ինչ նրա գինակիցներն ասում եյին՝ մուդրոստվոյա յուկավո—նենգամիտ խմաստությամբ!

Մթնշաղի պոետը—ինչպես և այն ժամանակի ծապլվարային ինտելիգենտական խմբակի մյուս անդամները—ռուսական խմբելիզմի տարածման մեջ եր տեսնում «ինդիրների խնդրի» լուծումը, Անտանտի քաղաքականության հաղթանակի—այսինքն Տաճկաստանի անդամահատման մեջ տաճկահայկական հարցի լուծումը։

Դաշնակ-սոցիֆիզմի իդեալն եր սուլթանական բռնապետության փոխարինումը ցարական բռնակալությամբ, թեև մեր ազգասերները կարծես գիտեյին (տես «Դրոշակի» «Պատմական զավաճանություն» առաջնորդողից վերը բերած կտորը)՝ թե «հայ հայ ժողովուրդը» միայն նվաճողական դրդիչ և յեղել ցարերի զավադիր քաղաքականության ձեռքին Մերձավոր Արևելքում։

— Բայց դաշնակ-սոցիֆիզմը իր հույսերը կապում եր «առաջավոր ռուս դեմոկրատիայի» հույսերի հետ և վոչ թե ցարիզմի—կարող են առարկել մեզ...

Բառախաղերով չզբաղվենք։

Մենք գիտենք, վոր մինչ-հոկտեմբերյան «առաջավոր դեմոկրատիան» այլ յերազներ չեր վայփայում, ուրիշ նպատակներ չեր հետապնդում՝ քան այն, վոր ընդգծված կերպով հայտնաբերվեց Պետական Դումայի հանդիսավոր նիստին՝ Նիկոլայ 2-րդի ներկայությամբ՝ իմպերիալիստական պատերազմի հայտարարման առաջին որը։

Մենք գիտենք, վոր այդ «ռուս դեմոկրատիայի» իդեների վարպետը» հոդվածը։

*) Տես՝ վ. Տերյան «Յերկերի ժողովածու» 4-րդ գիրք, եջ 182—«Մեր

րակված արտահայտիչներն եյին «Ռեչ»-ի շուրջը համախմբված կադետները՝ հայտնի Միլյուկովի գլխավորությամբ և աշակերտությամբ մթնաշաղի ռուս պոետների պլեադայի—Բալմոնտից, Բրյուսովից, Սալոգուբից, Մերեժկովսկուց, Գիպիուսից, Անդրեևից, Գումիլևից և մյուսներից բռնած մինչև ամենավերջին «իսկական ռուս մարդը»,—վորոնք սլավ ցեղի «վոզու հաղթանակն» եյին փնտրում կարպատների լեռներից մինչև «պատմական» Ցարգրադը (Պոլիսը),—Պուրիշկևիչների ու Մարկովների հետ մեկտեղած։

Մթնաշաղի մեջ խարխափող պոետը—ինչպես իր բանաստեղծական անուրջներում՝ նույնպես և քաղաքական խակ-փիլիսոփայություններում—իր վրա յեր առնում ցարական վերջին ու անկման շրջանի տիրող մտայնության սարկական ազդեցությունը։

«Ռուս դեմոկրատիան», վոր ասել և պերազանցապես Միլյուկովյան լիբերալիզմը, իր աչքը անկած ուներ Ցարդրադի վրա, մյուս աչքը՝ կարպատների, և դեռ ուզում եր հիմադրացնել Ավստրո-Հունգարիայում ապրող «սլավ ցեղակիցներին» (լեհերին, չեխերին, սերբերին, սլավոններին, ուկրայինցիներին և այլն) ու Տաճկաստանում ապրող «քրիստոնյաներին» (հայերին, ասորիներին, և այլն), թե ցարական իշխանության բռնի ներս խուժումը, դենքի տարածումը իբր «վոզու ազատություն» և բերում նրանց...

Այդ մթագնող աշխատանքը կատարելու՝ կադետական լիբերալիզմը իր հույսերը դնում եր մի կողմից ինտելիգենցիայի «դիտացությանը», մյուս կողմից՝ մասսաների դասակարգային շահերի անգիտանալու վրա։

Ռուսական կապիտալիզմը,— հրաժարվելով հեղափոխության բարիքներից՝ ինչպես վոր հետագայում պիտի հրաժարվեր այդ նույն բարիքներից մեր դաշնակ-սոցիֆիկյան ռեակցիան,—իր ուշադրությունն եր կենտրոնացնում ինտելիգենցիայի վրա՝ նրա ողնության մշակելու «համազգային» կամք, կազմակերպելու «ապա»-դասակարգային կարծիք։

Կապկռեն նույնը կրկնվում եր հայ իրականության մեջ։

Լիբերալ «Մշակը» կամ հայկական կադետիզմը—վորի դեկավարները յերբեք չեն ծածկել իրենց կույր հիացմունքը Միլյուկովների, Մուրոմցեվների, Տրուբեցկոյների, Ռոդիչեվների, Պետրունկևիչների, կովալևսկիների, Կլյուչևսկիների, կիզիվետտեր՝ երի

հանդեպ,—նույնպիսի կոչեր և ուղղում հայ ինտելիգենցիային։

Ըստ ռուս-հայկական լիբերալիզմի՝ բուրժուազիային նվիրված ինտելիգենցիային վիճակված է մի աննախընթաց «միսիա», մի վերին աստիճանի «պատվավոր» ու «բացառիկ», պարտակատարություն։ Մեր մինչդեռ պոետը վառ թարգմանն է հանդիսանում այդ ինտելիգենտական լիբերալիզմի կամ լիբերալական ինտելիգենչիզմայի։ Նա ջերմ ջատագովն է մելյուկովյան եքսպանսիայի Մերձավոր Արևելքում—

— դեպի՛ Հայաստան մինչև Ալեքսանդրետտա !

Ինչո՞ւ են այդպիսի մեծ հույսեր դրվում ցարական Պետրոգրադում և փոխարքայական Թիֆլիսում ինտելիգենցիայի վրա մեր և ռուս հակահեղափոխականների կողմից...

Մինչդեռ պոետը բացատրում է մեզ.—

«Կազմակերպչական կարիքը պիտի զգար ամենից առաջ, իհարկե, այն ինտելիգենցիան, որ դեռ չեր հրաժարվել ազգային արժեքներից, այդ ինտելիգենցիան պիտի ձգտեր անհետաձգելի կերպով կազմակերպելու հասարակությունը, որ չի ջանք չպիտի խնայեր համերաշխության հող ստեղծելու հասարակական տարբեր խավերի մեջ, որպեսզի հնարավոր լինի միաձույլ ուժերով գործելու։

Պետք է, որ մեր ինտելիգենտիայի լավագույն տարրերը ազգային անդառնալի ավերների հանդեպ կարողանային անել իրենց մեջ վեհոգի պատրաստականություն՝ ազգովին գործելու յեվ այն՝ վո՛չ-ձևականորեն միայն յեվ թղթի վրա, այլ անկեղծ կերպով»*)։

— վո՛չ-ձևականորեն այլ անկեղծ կերպով..., շատ պատկերավոր է ասված։

Մեշչանականության ու իմպերիալիզմի,—մեշչանականություն՝ հայ իրականության և իմպերիալիզմ ռուսական մասշտաբով,—նման քարոզները բնավ կապ չունեյին հեղափոխական մարքսիզմի, այսինքն՝ լենինյան գերազանցապես պատմական պրոլետարական ուսմունքի հետ, որ «հասարակական խավերից» նախ և առաջ համակամահամերաշխություն էր պահանջում և որի կրողներն եյին հայ իրականության մեջ Սա. Շահումյանը, Սուրեն Սպանդարյանն և սրանց հետևորդները։

*) Տես՝ Վ. Տերյան— «Ցերկերի ժողովածու», էջ 260—«Մշակ»—1915 թ. № 227։

Ինտելիգենցիայի դերի այդ գերագնահատումը միայն լիբերալների մոտ չեր շեշտված։ Ինտելիգենցիային եյին ապավինում նաև լքված ես-էրները։ Ստալիպինյան ռեակցիայից հետո, հատկապես Բուրցևը՝ 1910-ական թվականների սկզբներին՝ պարզված ռուսական հեղափոխության «վերածնությունը» ուղղակի կապում էր «ինտելիգենցիայի բաղդի» հետ։

Մինչ-հոկտեմբերյան իրականության մեջ պրոլետարական մասսան միանգամայն անտեսվում էր կամ ավելի ճիշտ՝ արհամարված էր կադետ-եսէրական բանակից, որը գտնում էր, թե «ազգային արժեքները»—ինչպես մարզարիտները—չի կարելի դնել խոզերի առաջ !

Ինտելիգենցիան վոչ միայն կրողն և «ազգային արժեքների», այլև կազմակերպողը «ազգային կամքի»։ Հենց այդ տեսակետից էլ իրեն շահագրգռված և զգում դաշնակ-սոցիալիստական յերկրորդությունը։ Իմպերիալիստական պատերազմի, կամավորական շարժման արբեցումի շրջանում մեր «ազգային ներքին միացյալ ֆրոնտը» նույնպիսի շատ ավանդներ և անում մեր բուրժուական ինտելիգենցիային,—

«Ո՞վ պիտի կազմակերպի մեր ժողովուրդը. ո՞վ պիտի տանի նրան այն ճանապարհով, որը զոհարերությունն և արյունն ազատություն են բերում։

Այսօր հայ մտավորականության և վիճակված այդ բարձր, սակայն և ծանր պարտականությունը։

Արդյոք արժանի կլինի՞ հայ մտավորականությունը իր այդ դժվարին, բայց վեհ կոչման։

«Մշակը» կոչ է անում հայ մտավորականներին միանալու, համերաշխ գործելու, մոռանալու կուսակցական և անձնական նկատումները, ընդհանուր համաժողովրդական շահերի ու նկատումների հանդեպ։

Մի՞թե այս ճակատագրական րոպեին մենք չպիտի մոռանանք մեզ բաժանող ու չլատող զգացումները, չպիտի մոռանանք բարձր վոգևորությամբ մեր սրբազան պարտականության հանդեպ...» (էջ 198)*)։

Ցեվ պահանջվում է մեր հասարակական ներհակ խավերից ճիշտ նույնպիսի համերաշխություն, վորպիսին պահանջվում էր ռուսական իրականության մեջ,—վորպիսի համերաշխության մի որինակելի ցույց կազմակերպեցին Պետական Դումայում բոլոր

*) Տես՝ Վ. Տերյան—«Ցերկերի ժողովածու» հատոր 4։

կուսակցությունները, Միլյուկովն ու Պուրիշկևիչը,—բացի բոլշևիկյան ֆրակցիայից, որ Սիբիր աքսորվեց։

«Ռուս դեմոկրատիան» պահանջում է, որ՝ ավելի և ավելի սակաս, որ—

— «իշխանությունը գրկախառնվեին...»։

Ցավ այդ որ՝-ձևականորեն, այլ անկեղծ։

«Ներհակ» ու «անհաշտ» հոսանքների նույնպիսի անվերապահ գրկախառնումի կողմնակիցները են հայ իրականության մեջ բոլորն ու մանավորապես դաշնակ-սպեցիֆիզմը, և նույնպես մի այն բոլշևիկյան ֆրակցիան է—Ստ. Շահումյան, Ս. Սպանդարյան—որ աքսորավայրից թե Սիբիրից դիստանցիա եկին մացնում, խանգարում «մեկտեղելու» ջանքերը, մի կատարյալ «համազգային» և «մրաձույլ» ֆրոնտ կազմակերպելու.—

«Այստեղ, այսպիսի ժամին մարդիկ մոռանում են իրենց իրարից բաժանող բոլոր խոչնդոտները, փշրվում են բոլոր պատնեշները, միանում են իշխանն ու բանվորը, կինն ու մարդ» (էջ 198)*)։

Բանատեղծական սպեցիֆիկ մտայնությունը միայն կարող եր վիժել այսպիսի ցնդաբան պատկեր!

Այդպիսի միացումը—«իշխանի ու բանվորի»—պահանջվում է, վորպեսզի «ազգովին ասպարեզ գալ»... (նույնտեղ էջ 199)։

Անհրաժեշտ է ավելի ծանրանալ այս պոշլից քարոզների վրա, յերկարաբանել դասակարգային համերաշխության և ազգովին դրծելու նման մեշչանական մորալի մասին...

Հոկտեմբերյան հեղափոխությունը դեռ չեր թմբկահարել մթնշաղի պոետի «գանգի դոլչին» և նա շատ բաներում «միանդամայն համաձայն եր» ոդիոզ Անանունի հետ (էջ 225)։

Նա դեմս չեր դիտակցում, վոր յերբեք իշխան ու բանվոր չեն կարող բարեկեցի մի կողմում լինել, չեր պատկերացնում պրոլետարիատի, դասակարգային կռվի և ինտելիգենցիայի տեղն ու դերը ժամանակակից պատմության մեջ։

Նա գանվում եր «ազգովին գործելու» հմայքի տակ. նա կադետ Ստ. Մամիկոնյանի հոգևոր զավակն եր, ինչպես Լազարյան ճեմարանի մյուս սպեցիֆիկ մեզ ծանոթ մոնթերը։

Դաշնակ-սպեցիֆիկյան շատ ափեղցիզեղություններ ունի ասած Վ. Տերյանը այդ մինչ-բոլշևիկյան որերին, մանավանդ վոր այդ այն ժամանակ եր, յերբ խայտառակ Բախշին տուրն ե

*)Նույն տեղ, Վ. Տերյանի 4-րդ հատորից։

յեր դուրս յեկել դեպի ցարական մայրաքաղաքները՝ այնտեղի «հայկական ակումբներում» արծարծելու «հեղափոխական մարքսիզմի» գոհար-մտքեր և դաշնակ-սպեցիֆիկյան գործելակերպը համաձայնեցնելու ցարական իշխանության, ռուսական կադետիզմի գործելակերպի հետ։ Խայտառակ Բախշի և Կ° կամովին և գիտակցաբար, վարձու թե անվաստակ (այդ նույնպես կպարզվի մի որ) ագենտներն եյին դառնում ցարական իմպերիալիզմի...

Մի յերկու խոսք ցարական մայրաքաղաքներում գործող «հայկական ակումբների» մասին, վորոնք վերջին տեղ չեյին բռնում դաշնակ-սպեցիֆիկյան հաշվումներում և վորոնց մեջ տիրող տրամադրությունը այնքան բնորոշ է միացյալ ազգային ներքին ֆրոնտի համար։ Մթնշաղի պոետը՝ սրտի առանձին դեղումով՝ պատմում է մեզ.—

«Մոսկվայի հայը կուլտուրական-ազգային տրադիցիա ունի, և այդ «Հոսքը փրկող» պատերի հիշատակը լցնում է Մոսկվայի հային մի հպարտ գիտակցությամբ և իր ազգային բացառիկ միսիայի համային զգացմունքներով» (էջ 202)*)։

Հետաքրքիր է անշուշտ տեսնել, թե այդ կես-միլիոնանոց պրոլետարական բանակ ունեցող հսկա քաղաքում վո՞րն է մեր «Մոսկվայի հայը», վոր լցնում է մեր մթնաշաղի պոետին «ազգային բացառիկ միսիայի համային զգացմունքներով»։

Գաղութահայ քաղաքներում մենք ունենք յերկու շերտ «հայության», մեկը՝ ընդհ, «տրադիցիայով» հայ վաճառականությունը, վորի տիպիկ ներկայացուցիչն եր իմպերիալիստական պատերազմին, այդ ժամանակվա Մոսկվայում ցարին դուր գալու («միջանկյալ» անշուշտ նաև իր առևտրական դործերը տեսնելու) բարեպաշտ նպատակով հայ զինվորների համար «հայոց լազարեթ» բացող միլիոնատեր Պապովը (էջ 202),—մյուսը՝ գյալմա, անտրադիցիոն կամ չունեվորության տրադիցիայով ամենուրեք շահագործվածը։

Այդ վոր «հայի» կյանքով և այդքան վոգևորված մթնշաղի պոետը 14—15 թ. թ.—

«Խոսքս, ի հարկե, ընդհ, հին մոսկվացիների մասին և, և վո՛չ այն պարվենյուների մասին, վոր վերջին տարիները ապրականում են տեղիս հասարակական մթնոլորտը։

Ահա այս տեղական «հին», «ընդհ» հայը, վորքան և հե-

*) Վ. Տերյան—նույն տեղ։

ռու լինի հայրենի հողից, դեռ խպտռ չի վառնել իր դեղեցիկ ժառանգությունը, նա դեռ ընդունակ է գիտակցելու և զգալու ազգային շահերը, ազգայի ցավն ու խինդը» (էջ 202*)։

Պապովների և ժամհարյանների մասին է յեղել խոսքը, այդ «կարգին մարդկանց», այդ «իսկական հայի» մասին...

«Պարվենյուների» համար չէ վոր խոսել է Մոսկվայի և Պետրոգրադի «հայկական ակումբներում» խայտառակ Բախշին, այլ «հին-մոսկվացիների», «բնիկ-պիտերցիների», վորոնց մեջ «ազգային ցավ ու խինդ» կա եղել...

Բայց ներեցեք—ասում են «իրազեկները»—սպեցիֆիզմը բուրժուազիայի հետ անձնական և գաղակարգային առնչության բնավ յերբեք չի ունեցել?! Ասում են—խայտառակ Բախշին ժամհարյանների հասցեն չգիտեր?!

Սպեցիֆիկ-դաշնակ ինտելիգենցիայան—վորի առաքյալ տխրահռչակ Բախշին պատում է մայրաքաղաքներում—ընդհանուր լեզուն գտնում զմայլելի տրաղեցիաներով հարուստ, վոչ-պարվենյու ու բնիկ գաղութահայ զրպանավոր ու պալատական շրջաններում կապ ունեցող տարրերի հետ։

Մշակվում է Միլյուկովների ոգնությամբ մի «համազգային» գործելակերպ ու անցնում գործի մեծագույն ուժերով։ Բերենք մի նմուշ այդ մաքրեր աշխատանքից, վոր անմահացրել է գարձյալ նույն մբնշողի գրիչը.—

«Ավանդաբար այսպես է ընթացել մեր կյանքը.—հայությունը, մանավանդ գաղութներում, յեկեղեցու շուրջն է հավաքվում, յեկեղեցու հետ է կապում ազգային գործերը։ Այդ է փաստը։ Այս անգամ էլ «հայկական ցույցը» յեկեղեցուց սկսվեց։

Յեվ յեկեղեցու գավթից, զգեստավորված հայ քահանայի առաջնորդությամբ, տեղիս հայությունը՝ Հայոց փողոց, Լազարյան ճեմարանի առաջից, հանդիսավոր կերպով գնաց դեպի Ալեքսանդր II կայսեր արձանը, հավաքելով իր շուրջ մի բազմահազար ամբոխ։ Այստեղից անցավ դեպի Սկոբոլևի արձանը և գլխավոր փողոցներով գարձավ նորից Հայոց փողոցը։

Վորքան է հակառակ լինենք ցույցերին, վոր մոլության բնույթ է առացել մեզանում, այնուամենայնիվ գժվար է

*) Վ. Տերյա—նույն տեղ։

ժխտել, վոր կան րոպեներ, յերբ այդ ցույցերը բարոյական մեծ նշանակություն են ստանում, և այսպիսի նշանակությունից գուրկ չպետք է համարել Մոսկվայի հայերի ցույցը, մանավանդ վոր նա ամենաանկեղծ զգացմունքների մի անմիջական արտահայտությունն եր» (էջ 203)*)։

Զեն բավականանում այդ «ամենաանկեղծ զգացմունքների անմիջական արտահայտությամբ»։ Խայտառակ Բախշին և Կ° ինչ գնով ուզում են և ինչ հետևանք էլ ունենալու լինի, կողմնակից են հարկավոր շրջանների բերանները ուղղելու տաճկահայկական վիլայեթների վրա՝ քաղցրությամբ այն կլլել տալու գաբական իմպերիալիզմից։

Մբնշողի պոետը մեծ ցավով նկատում է, վոր հայանի կաղետ Ստ. Մամիկոնյանի մի նշանակալից առաջարկությունը —վոր կարող եր շատ վորոշ ազդեցություն ունենալ—հարկավոր արձագանք չի գտնում «հայության» մեջ։

Վ.ՈՐՆ և այդ «ազգովին գործենք» իդիոլոգիայի ամենավատ ներկայացուցչի մերժված առաջարկը, վորի մասին ցավում է իր մբնշողի անուշներում.—

«Ուշադրության արժանի է թե տեղիս, թե ընդհանուր հայության մեջ հայանի հասարակական գործիչ Ստ. Մամիկոնյանի առաջարկը, վորը թեև չհանցավ, սակայն կարող է այնուամենայնիվ վորոշ ազդեցություն գործել գանազան հայ հատվածների գործելակերպի վրա։ Նա առաջարկում եր աշխատել վոր համայն հայությունը հանդես գար այս գործում իբրև մի ամբողջություն և մի մեծ ձեռնարկությամբ վկայի իր զգացմունքները Ռուսաստանի առջև։

Քանի վոր Մոսկվան վճռավորներին և պատերազմից շահավածներին ոգնող կազմակերպությունների կենտրոնատեղին և նշանակված, Մամիկոնյանը յենթադրում եր, վոր հարմար կլիներ յերթ հայությունը այդ գործով հանդես գար հենց Մոսկվայում բանալով մի հսկայական հայկական հիվանդանոց ամբողջ ռուսահայության անունով։

Իսկ յերթ դա այս կամ այն պատճառով անհարմար լինի, հավաքել մի խոշոր գումար և դնել այդ թաղա-

*) Վ. Տերյան—նույն տեղ։

վոր կայսրի տրամադրության տակ իբր նվեր հայ ժողովրդի կողմից։

Այս առաջարկը չհնացավ։ Գլխավոր առարկությունը այն եր, վոր շատ դժվար և համաձայնություն կայացնել հայության զանազան հատվածների մեջ, թեև այդպիսի մի դործի ահագին բարոյական նշանակությունը ներկա որերին չժխտեց վոչ վոք։

Սակայն չե՞ վոր հենց դրանումն և մեր դժբաղդությունը, վոր մենք չենք կարողանում ազգովին հրապարակ գալ, չենք կարողանում ամենաբարձր նպատակների համար, իսկ զոհաբերել նույնիսկ մեր զաղութային պատերազմը»*)։

Այս եր դաշնակ-սպեցիֆիկյան տիրող մտայնությունը, վոր ավելի ևս շեշտելու համար պրոպագանդայի յեր յելել դեպի հյուսիս խայտառակ Բախչին։

Ցարերի ուշադրությունը պիտի դրավվեր Տաճկաստանի վիլայեթների վրա, կարծես թե բավական ուշադիր չեյին ինքնին Լաբանով-Ռոստովսկուց սկսած մինչև Սազոնովը դեպի Մերձավոր Արևելքի «հայկական գործերը»։ Սպեցիֆիկները «մարքսիստական» մեծ գործի եյին...

Հնդկաստանի հայերը «ազգովին» փղոսկրյա գահընծայեցին ռուսական թագուհուն...

Ռուսահայերը «ազգովին» մի կլոր գումար եյին ուզում տրամադրել Նիկոլայ վերջինին...

Ինչպես տեսնում ենք, մեծ եր ու խորհրդաստ հայկական ակումբների և յեկեղեցիների հեռավոր հյուսիսի գաղութահայ կենդրոններում կազմակերպված մոնարխիստական ցույցերի «ազգային» նշանակությունը։

Ամեն մի շարժում պետք և ձևակերպել վորոշ լոզունգներով։ Այստեղ Բախչին և Կ° նույնպես հրապարակ եյին իջել շատ վորոշ լոզունգով, վոր հիշեցնում եր հինավորաց յերդը.—

— Դեպի, դեպի Հայաստան...

Ահա մեզ գործյալ մթնշաղի դժբաղդ պոեմի սրտի դեղումներից՝ ժամանակի հոսանքի այդ լոզունգների մասին.—

«Այդ հոսանքի լոզունգը, բացարձակ ու վճռական, նրա դրոշակի վրա գրված և—«Դեպի Հայաստան»!

Ինչպես և լինի, ինչ դնով և լինի, ինչ հետևանք և ունենա՝ միևնույն և—«Դեպի Հայաստան»։ «Հայաստանը պիտի ազատվի». անդրդվելի մի պնդում և սա, վորի հանդեպ վո՛չ մի ուժ չի կարող կանգնել, վորին վոչ մի արգելք չի կարող կասեցնել։

Ցեվ հասկանալի յե դա։

Չե՞ վոր ամեն մի հայ մտավորականի, վո՛չ միայն մտավորականի, այլև ամեն մի հայ մարդու՝ համար այդ հարցը սրբազան մի ավանդ և դարձել, նվիրական յեղերական, արյունաներկ պատկերով»*)։

Ցարիզմը իր թաթերը տարածելիս դեպի Մերձավոր Արևելք հիմնավորապես շահագործել և մեր յեկեղեցականությունը և վաճառականությունը։

Նա միաժամանակ հայ ինտելեգենցիային ներշնչել եր, թե ռուսական բռնակալությունը արշավում և Տաճկաստանի խորքերը «Հայաստանը ազատելու»։ Այս և յեղել մթնշաղի պոեմի ակնարկած սրբազան ավանդը, վոր պատրաստվել և վոստիկանական իշխանության կողմից եջմիածնական կղերի, հայ հատուկան իշխանության կողմից եջմիածնական կղերի, հայ հատուկան իշխանության կողմից եջմիածնական կղերի, հայ հատուկան

պում» գաղափարական իմաստով—ահա ինչ եմ հասկանում «հոգևոր Հայաստան» ասելով*)։

Այդ ժամանակները մթնշաղի ոուս պոետների մեջ ևս շատ «կենդան» եր սլավական յերկրների «հավաքման» տենչը, զորեղ եր ոուսական հոգու կամ վոգու կուլտը, վոր դառնորեն ծաղրել է՝ նույնպես իր ժամանակին (կարծեմ 1916 թ.)՝ մեր Մաքսիմ Գորկին իր «Две души» ալեկոծող հոդվածում։

Մթնշաղի պոետի «հայության հավաքումից» մի փոքր պագրամշչիկ Նիկոլ Աղբալյանի «անհայրենիք հայրենիքի» հոտ և գալիս, և շատ ավելի հոտ կուլտուր-արեզերյան սումբուրի։

Դեռ չեյին գիտակցվում խայտառակ Բախշիի, ոդիոզ Դավթի և նրա մի յերկու վոզորմելի վարժապետների կողմից «ոուս ցեղի բարբարոս կուլտուրայի» սարսափները...

Չեր ճաշակված դաշնակ-սպեցիֆիկյան «պետականության» համը...

Չեր յեկել միացիալ հակահեղափոխության «հարազատության» հերթը...

«Ուտելու ժամանակ և գալիս ախորժակը»—ասում և հայտնի առածը!

Ինչպես մթնշաղի մեջ խարխափող պոետի մինչ-հոկտեմբերյան անուրջները, մանավանդ վոր հետագայում նա քավեց իր մոլորությունները և շարվեց մեր աննման Սա. Շահումյանի աշակերտների շարքը,—բայց ներողամտության ու արդարացումի խոսք չենք կարող գտնել վոչբացյալ պոետի դրական քաղաքական բա-ցարձակ ժառանգության հրատարակչի ու խմբագրողի համար, վոր առանց լենինյան-մարքսիստական խմբագրական վերլուծականի Տերյանի ամեն ափեղցփեղություններ անվերապահ հանձնարարում են մեր յերիտասարդ գվարդիային։

Պահպանը սոսկ տեխնիքական հրատարակչական կամ վերհրատարակչական ապարատ չե՝ պուրկ իդեոլոգիական բովանդակություն։

«Ակադեմիական հրատարակությունը» մենք այնուամենայնիվ այնպես չենք հասկանում, ինչպես Հայաստանի սեյիդները։

Թեև դժրախտ վ. Տերյանն ինքն իր մասին գրել և, թե—

«պոետը մնքենա չե և նրա տրամադրությունների ու ճաշակի վրա բռնալը՝ անվայել»...**)

այնուամենայնիվ այս աֆորիզմը և սոֆիզմը—դարձյալ հին կըրկնություն և խակության ապացույց—բալշևիզմի հետ կապ չունի։

Լենինիզմը ճաշակի ու տրամադրության հարց չե, և մենք չենք կարող մեր մտածելակերպի ու գործելակերպի մեջ առաջնորդվել իմպերսոնիստական կրքաերեւումներով։ Հազարյան ճեմարանի աշակերտական-ընկերական հիշատակները և հիշողությունները չի կարելի չափանիշ ծառայեցնել մի լուրջ գործում։

Բայց վ. Տերյանի ժառանգությանը մենք կդառնանք մի այլ, ավելի ազատ ժամանակ, ավելի լրիվ կերպով։

Այժմ բավականանանք այս փոքրիկ լուսաբանությամբ, վոր մեզ առիթ տվեց ոդիոզ Դավթի բամբասագիրքը, թե ինչ բանի եյին խայտառակ Բախշին և K⁰ ցարական մայրաքաղաքներում, հայկական ակումբներում, «Ռեչ»-ի կուլուարներում և յերևի նաև այլ կասկածելի՝ թեև «ազդեցիկ» ցարական շրջաններում, վորոնց մասին մի որ մանրամասնորեն կխոսի բալշևիկյան պատմաուսումասիրությունը դաշնակ-սպեցիֆիկյան հակահեղափոխության ամբուր յեվելիս։

Մի՞թե ճիշտ չեր մեր աննման Սա. Շահումյանը, վոր՝ ազգային մի ցցյալ ներքին ֆրոնտի նման գործեր տեսնելիս՝ նկատում եր.—

«Դադարե՞լ և նա արդյոք միաժամանակ լինել բուրժուական, ազգային, քաղաքական ռեակցիոն կուսակցություն—ինչպիսին եր 15 տարվա ընթացքում։

Ամեն, այդ կուսակցության գործունեությունը մեր առաջն է. նա ներկայումս թերևս ավելի բուրժուական և, նացիոնալիստական ու ռեակցիոն, քան յերբեք»*)։

Այս խոսքերը միայն Դաշնակցության այդ «հայ ազգային բռնակալության» (եջ 156) չեն սազում։ Նրանք կատարյալ չափով ձեռնահալության են նաև Դաշնակցության սոցիալիստական վարկանիշ սպեցիֆիկի համար։

Բայց թողնենք մթնշաղը և դառնանք մեր սկսած լի որերի՝ ոդիոզ վերջին հեղինակի հակահեղափոխական մտքի ու գրչի անողոք ակնարկի սանձարձակ արտաքրանքներին։

Բամբասագրքի մեջ «հեղափոխական մարքսիզմի» գոհարներ կան, վոր ափսոս և չհանձնարարել մեր յերիտասարդ գվարդիայի հատուկ ուշադրության։

*) Սա. Շահումյան—«Յերկերի ժողովածու», եջ 66։

*) Վ. Տերյան—նույն տեղ—եջ 225։
**) Տես՝ «Մշակ», 1916, № 40, կամ «Յերկերի ժողովածու» հատոր IV.

X

ԱԶԳԱՅԻՆ ՆԵՐՔԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖՐՈՆՏ ԲԱԼՇԵՎԻԶՄԻ ԴԵՄ։ ՈՒՈՒԶ Դ. ԱՆԱՆՈՒՆԸ ԳԵՆԵՐԱԼ ԿԱԼԵԴԻՆԻ ԱԳԵՆՏ

Կանգ առնենք բամբասագրքի մի կետի վրա ևս։

Իմպերիալիստական պատերազմի բռնկման առաջին րոպեյից՝ Սա. Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը և նրանց համախոհները—վորպես գիտակից հետևորդներ Լենինի—ժողովրդական մասսաների համար վոչինչ լավ բան չեյին սպասում ցարական կենքի աջողություններից։

Բալշևիկներին մտազբաղեցնում եյին պայքարի այլ հեռանկարներ, վորոնց շուրջը համախմբվում եյին պրոլետարիատի ցրված ուժերը։

Ծայր և տալիս հայտնի կամավորական շարժումը Դաշնակցության ղեկավարությամբ և «ազգային ներքին ընդհանուր ֆրոնտի» սիրահար կուսակցությունների ամենաջերմ դրդակցությամբ։ Իհարկե, այդ շարժման առաջին շարքերումն և Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիզմը իր ծալվարյան մասշտաբով։ Ղարաբաղի թեմականի շուրջը խմբված այդ վոդրմելի վարժապետությունը խորհրդակցում և հրահանգներ և ստանում Մեսրոպ յեպիսկոպոսներից ու Ծատիսյաններից, հիմարացնում և յերիտասարդներ, խաչ ու խաչվառով մաղթանքներ կազմակերպում Շուշում, յերգներ հյուսում «մեծ և միացյալ Հայաստանի» մասին (ապագա մինիստրական պորտֆելների ցնորքներն արդեն իսկ հանգիստ չեն թողնում քնել), վառ դույներով նկարագրում և «թաթար ցեղի» բնածին «բարբարոսությունը», բացատրում և զենքի գործածության յեղանակը ու որվան պատշաճ այլ դիտելիքներ։ Իհարկե, այդ խեղճ ու կրակ «զինվորներին» բաժանվում եր նաև մի քանի տասնյակ ռուբլու գումար—ստացած ցարական կառավարությունից և հայ բուրժուազիայից։

Վերը մենք տեսանք, վոր սպեցիֆիկ ու խայտառակ Բախշին նույնիսկ Պետրոգրադ եր մեկնել Մելյուկովից դիրեկտիվներ ստա-

նալու Տաճկահայաստանը «փրկելու»։ Ցարական վոստիկանությունից հալածված բալշևիկները, և առաջին հերթին ամենամտ Սա. Շահումյանը, այդ ընդհանուր շովինիստական արբեցումի հակառակ պահանջում են արթնանալ կամավորական մղձավանջից, վոր 1905—1906 թ. թ. հայ թյուրքական պագրոմների դժբախտության կրկնությունն եր անհամեմատ ավելի մեծ մասշտաբով։ Պահանջում են մանավորապես զսպել դաշնակցական խմբերի վայրագությունները թուրք խաղաղ ազգաբնակության հանդեպ։

«Ազգային ներքին ընդհանուր ֆրոնտով» գրկախառնված Դաշնակցության և սրա սոցիալիստական վարիանտ սպեցիֆիզմի կատաղությանը բալշևիկների դեմ չափ ու սահման չունեյին, մանավանդ յերբ Սա. Շահումյանը առաջարկում և հայ-թյուրքական ազգամիջյան խաղաղության փորձեր անել։ Դաշնակ-սպեցիֆիկյան վոդրմելի վարժապետությունը պարզապես մեղադրում և Շահումյանին «ազգային դավաճանության» մեջ, «թաթար ցեղին» ծախված լինելու և մուսավաթի հացին յուղ քսելու մեջ։ Տեսնք թե ինչպես և ընորոշում ոդիոզ հեղինակը Սա. Շահումյանի բալշևիկյան գործելակերպը.—

> *«Սահակյանը պահանջեց, վոր կոմիտեն*) իր դեկլարացիայի մեջ հայտարարի, վոր հայ կամավորները կոտորում են Ղարսի շրջանի թուրքերին։*
>
> *Բնական ե, վոր Ռասուլ-Զադեներին հաճույք պատճառելու համար յեղած պահանջը պիտի մերժվեր» («Մշակ», 1919 թ. № 69)։*

Այսպես եր իրականությունը հենց սխրահռչակ հեղինակի ինքնախոստովանությամբ։

Ընկ. Սա. Շահումյանը բողոքում և հայ կամավորության խժդժություններ դեմ։ Դա հատկապես հայ բալշևիկների առաջին պարտականությունն եր։ Հասկանալի ևն այս ամեն մի կոմունիստին։

Դաշնակցությունը պայքանում և։ Փրփուր և լցնում բերանը նաև նրա սոցիալիստական վարիանտը, վոր «մայր»-կուսակցության պոչից բռնած՝ հետևել և նրա բոլոր կեղտոտ գործերին մինչև Պորա-Սուդանի անհայտությունը։

Բայց յեղել են մեկից ավելի անգամ կուրիոզ դեպքեր, յերբ

*) Խոսքը այստեղ վերաբերում և Բագվի մենշևիկ-կուսակցական կոմիտեյին, վորտեղ սպեցիֆիզմը ներկայացված եր հենց ոդիոզ հեղինակով։

սպեցիֆիկը ավելի հեռուն է գնացել՝ քան դաշնակցությունը նացիոնալիզմի մեջ։

Այդպիսի գեղեցիկ որինակներ մենք բերինք վերը, յերբ խայտառակ Բախշին բողոքում է դաշնակցական և յերիտասարդ Թուրքերի կուսակցությունների մեջ կնքված համաձայնության դեմ և առաջարկում է ավելի «ըմբռոստ պահանջներ» ներկայացնել,—յերբ Միլյուկովի ու ցարական «ազգային շրջանների» հետ Տաճկաստանի դեմ գործելակերպ է մշակում, և այլն։

Անգամ Հնչակյան կուսակցության ծաղրն է շարժում Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիկի այդ զուտ լոգիական նացիոնալիզմը։ Ոդիոզ հեղինակը զայրացումի մեջ բացականչում է (եջ 118).—

«Հայ կազմակերպությունը, յերևում է, նրանց (այսինքն հնչակյանների—Ե. Ս.) մաղձը շարժեց։ Նացիոնալիզմի կասկածներ են հարուցանում հայ առաջին մարքսիստների դեմ...» և այլն։

Այստեղ ուշագրավ է ոչ միայն հնչակ-սպեցիֆիկյան վեճը նրանցից յուրաքանչյուրի «ինտերնացիոնալիզմի» անաղարտության մասին, այլև այն, որ հակահեղափոխական հեղինակը Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիզմի ադեպտներին՝ խայտառակ Բախշին, մեշչան Ռուբենին և, ի հարկե, նաև իրեն՝ ոդիոզ Դավթին ու ևս մի յերկու զույգ բժ. Տիգ.-Իսախանյանի ոճի վոզդրմելի «գենոսսե»-ներին մեծարում և «հայ առաջին մարքսիստներ» անունով...

Մեր ընկ. Ստ. Շահումյանը այդ սպեցիֆիկյան կարգի «մարքսիստների» համար է, որ ասել է.—

«Զզվանք և անեծք «հեղափոխության» և «սոցիալիզմի» մեծ գաղափարները արատավորող ու շահագործող այդ դասճաճներին...»

Բայց թողնենք—մի առ ժամանակ—այդ խակապես գաճաճներին մխիթարվել նրանով, թե իրենց ծապլվարական գործունեությունը զարթարդյան հայրենակցության ֆոնի վրա կարող է յերբևե վորակվել վորպես «առաջին մարքսիստների» կամ ընդհանրապես «մարքսիստական» արարք, և շարունակենք մեզ հետաքրքրող հարցի քննությունը։

Բռնկում է Փետրվարյան հեղափոխությունը։

Մեր ախորհուրդ հեղինակը «Կովկասյան նախագծի» առիթով հայտարարել էր մի փոքր վերը,—թող ներվի մեզ այստեղ մի անգամ ևս հիշեցնել,—թե—

«... Դաշնակցությունը բացարձակորեն անցնում էր ռուսական հեղափոխության կողմը»...

թե—

«դա ինքնին մի առաքինություն էր»...

Բայց արի տես, վոր դաշնակ-սպեցիֆիկյան մտայնությունը այնքան էլ գոհ չէ ստեղծված հենց այդ ռուսական հեղափոխությունից։

Հակահեղափոխական հեղինակը անհրկդիմի նկատում է այդ առիթով.—

— «հեղափոխությունը ուրախություն չէր հայերի համար»...

Մխանգամայն արդարացնելով Դաշնակցության վարքագիծը (վոր նույնն է յեղել նաև գաճաճների խմբակի համար) ինչպես մինչ-հեղափոխությունը, նույնպես հեղափոխությունից հետո,—ոդիոզ Դավթին ընդգծում է մյուս բուրժուական կուսակցությունների հետ վարած համաձայնողական խոհեմ քաղաքականությունը դաշնակցական Հայաստանում։

Դաշնակցության զինակից և նրա չափ պատասխանատու ու վոճրագործ գաճաճների խմբակի շահերի թարգմանը գտնում է, վոր միայն «յեղիննայա ի նեզելիմայա Ռոսսիա»-ն կարող է բերել Անդրկովկասին ցանկալի «ուրախությունը».—

«Դաշնակցությունը կույր չէր, վոր չնկատեր, թե փրկությունը միաձույլ Ռուսաստանից է գալիս և վչ թե անգամալուծված պետությունից։ Դաշնակցությունը մի կողմից եր ծալել իր կուսակցական անփութությունը և ջանում եր համաձայնության մեջ մնալ մյուս հայկական կուսակցությունների հետ։

Համերաշխության մեջն եր տեսնում նա փրկության ուղին, մտածելով ազգային կամքի ու յերանդի կենտրոն ստեղծելու»*)։

Ուրիշն «ինքնին առաքինությունը» այս անգամ նրանումն եր, վոր Դաշնակցությունը ժամա զեմքով և զիմավորում ռուսաստանի հեղափոխության։ Նա փորձում է խուսափել նրա բարիքներից՝ համերաշխության մեջ նետվելով մի կողմից հայկական այն կուսակցությունների հետ, վորոնց համար նույնպես ռուսական

*) Տես՝ «Ռուս. հաս. զարգ.»—եջ 602։

հեղափոխությունը «ուրախություն չէր», և մյուս կողմից՝ «միաձուլ Ռուսաստանի» գիրկը, որի համար նույնպես «ուրախություն չէր» բերում Հոկտեմբերը։

Ուրախությունը—«միաձուլ Ռուսաստանն» էր, թեև վերջինս ցրվել-խորտակվել էր Հոկտեմբերյան հեղափոխության հարվածների տակ։

Ողիոզ հեղինակը մի այլ տեղ, խոսելով հենց այդ «միաձուլ Ռուսաստանի» մասին, ավելի կոնկրետ բացատրություններ է տալիս, թե ինչու՞ հեղափոխությունը «ուրախություն չէր» իր և իր նմանների համար, թե ինչո՞ւ համենայն դեպս Հոկտեմբերյան Ռուսաստանը չէր «հեղափոխական ուրախության» կրողը և այն Անդրկովկաս բերողը։

Հեղափոխությունը բռնկել էր ակամա, հակառակ տխրահռչակ հեղինակի ու նրա համախոհ դաշնակիների ցանկության.—

«Ի՞նչ էր հնում անել։

Ուղղել նեբքին ազգային ֆրոնտը, վերջ տալ անտեղի կրքոտ քննադատություններին ուժեղ ձեռքին և հայ հեղափոխական ուժերը մղել ինքնապաշտպանության։

Յես սրտաբաց[ությամբ] այն կարծիքը հայտնեցի, որ բալշևիկյան Ռուսաստանից մենք ոգնություն չենք ստանալու։

Մեզ կարող է ոգնության հասնել միայն կալեդինը, որովհետև նրա մեջ ամուր և նատած թե ռուսական պետականության ամբողջության գաղափարը և թե այն հասկացողությունը, որ կորցնել Անդրկովկասը՝ նշանակ է վտանգի չենթարկել Հյուսիսային Կովկասը և Ռուսաստանի հարավը*)։

Մեր հակահեղափոխական հեղինակը, որ հոխորտում էր, «ռուս-մուժիկի» ու նրա «բարբարոս կուլտուրայի» դեմ՝ ազգային նեբքին ֆրոնտով ապավինում էր ցարական գեներալ Կալեդինի պետականության՝ հրաժարվելով «հեղափոխության ուրախությունից»։

Դաշնակցական—իբր «անկախ» ու «սուվերեն»—Հայաստանում այդ նույն կամավորական Ռուսաստանի «պետականության» (Դենիկին—Ջինկևիչի) շվաքին ապավինած եկին սողում դաշնակցական ազգայինջինները։ Բայց հակահեղափոխական վոչ մի զավադրություն և զավաճանություն չփրկեց նրանց Հոկտեմբերյան հեղափոխության «ուրախությունից», որ իսկապես մի մեծ գործ էր ազգային նեբքին ֆրոնտ կազմած պալիտիկանների համար, և իսկապես մի մեծ բարիք մեր չերկրի հայ, թուրք, վրացի ժողովրդական զանգվածների համար։

*) Տես՝ «Մշակ» 1919 թ.—№ 19.

XI

ԲԱԼՇԵՎԻԶՄԸ՝ «ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՎՈՐՈՒԵՍ «ԽՈՐԹ ՈՒ ՈՏԱՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիկումի սիրած ծակ-փիլիսոփայություններից մեկն էլ այն է, թե բալշևիկները «հայ իրականությանը ոտար տարրեր» են, թե Ստեփան Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի և սրանց հետևորդների կուսակցությունը—հայ իրականությանը խորթ կուսակցություն է։

Այդ թեզը,—ինչպես նաև խայտառակ Բախշիի, ողիոզ Դավթի և ելի մի յերկու սրանց նման վարժապետների մյուս բոլոր թեզերը—սահմանան ուղեղի աշխատանքի արդյունք չեր։ Նա ամբողջապես վերցրած է պարզյալ նույն «մայր»-կուսակցության արահնալից։

Դաշնակցության թեորեթիկոս Միքայել Վարանդյանը, վորին մեր աննման Ստ. Շահումյանը ախեղերական թութակ էր կնքել նրա «կոմմոսային սոցիալիզմի» սերուն,—նույն մեղադրանքն է ուղղել հայ բալշևիկներին սպեցիֆիկներից առաջ, վոչ պակաս հաստափոր ու նույնչափ էլ աղքատամիտ հատորներում («Հայրենիքի գաղափարը»—«Հոսանքները», և այլն)։

Ստ. Շահումյանը իր «Տիեզերական թութակը» սքանչելի քննատականում այդ առթիվ հետևյալն է նկատել էր.—

«Այժմ իր նոր գրքի մեջ՝ նա (այսինքն Միքայել Վարանդյանը—Ե. Ս.) մեղադրում է հայ մարքսիստներին, վոր նրանք լավ և բավականաչափ խանդով չեն մասնակցել ազատագրական կռվին»...

Դաշնակցության «ազատական կռիվը»—հենց սպեցիֆիկների «հայ իրականությունն» է։

«Հեղափոխական մարքսիզմի» և «առաջին մարքսիստների» դավինիներով մատղաշ՝ Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիկումը փոխ է առնում Ստ. Շահումյանին, Սուրեն Սպանդարյանի և Լենինյան կուսակցության ներկայացուցիչների

պեժ Դաշնակցության ուղղած նաև այդ արգումենտները, թե—

— բալշևիկյան կուսակցությունը «հայ մարդկանց» կուսակցություն չե...

թե—

— «հայ իրականության» և «ազատագրական գաղափարի» հարազատ են բոլորը՝ պահպանողական, լիբերալ, հնչակյան, ևսեր, մինշևիկ կուսակցությունները,—մի խոսքով «ազգային ներքին ֆրոնտով» համերաշխած բոլոր հոսանքները, բացի լենինյան հոսանքից, բալշևիկյան կուսակցությունից, Ստ. Շահումյանի և Սուրեն Սպանդարյանի, Բուղդան Գնունյանի (մինչև սայթաքումը) և Արշակ Զուրաբյանի (մինչև մենշևիկ-բալշևիկյան անջատումը) կազմակերպությունից։

Սպեցիֆիկ ու խայտառակ Բ. Իշխանյանը պատկերավոր կերպով նույնը հրահանգում է մեր կուսակցության մասին.—

— «Մի խորթ ու ոտար բույս հայ կյանքում»...*); Ինչո՞ւ «խորթ» ու «ոտար».—

— վորովհետև, ինչպես զգեցիկ կերպով բնորոշել է մեր դերքերը ընկ. Ստ. Շահումյանը դեռ յերկու տասնյակ տարի առաջ, մենք չենք շեղվել դասակարգային տեսակետից և չենք նեխվել ազգայնականության կաղապարում.—

«Առաջին և ամենագլխավոր նպատակը, վոր դնում է իրեն կովկասյան սոցիալ-դեմոկրատիան, ինչպես իսկական մի ջազդային կուսակցություն,—դա բոլոր կովկասյան բանվորների, առանց ցեղի ու ազգության խտրության, պրոլետարական դրոշի տակ ի մի խմբելն է»։

Շահազրկիռ ու չարամիտ, կեղծավոր ու խարդախ պատմաբանաբաններին,—վորոնց «սոցիալիզմը» և «մարքսիստականության» յերբեք ազգային ներքին ֆրոնտից ու բոլոր բուրժուական կուսակցությունների համագործակցությունից դենը չեն անցել,—հենց միայն նրա համար, վոր Ստ. Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը և Լենինի մյուս հետևողները մեր բանվոր-գյուղացիական մասսաների բազը չեն կապել ազգային սպեցիֆիկ հետանկարների հետ, միայն նրա համար, վոր հավասար չափով և միացած ուժերով գործել են ռուս, հայ, թուրք, վրացի պրոլետարական զանգվածների լավագույն իդեալների համար,—ըստ դաշնակ-սպեցիֆիկ դատողության—հենց դրանով ևս-իբրև դադարել են «հայ իրականության» սահմաններում լինելու իրավունքից, անմասն են մեր «ազատագրական գաղափարից»։

Թեև, ասենք միջանկյալ, վերը բերած հատվածից՝ Ստ. Շահումյանին և Ա. Մյասնիկյանին «Հայրենիքում» նվիրված ներբողից՝ այն էլ տեսանք, վոր այսօր—1926 թվին կարծես այլ կարծիք չեն Միք. վարանդյանները՝ քան յերեկ—1906 թվին։

Սառնց յեփին ու խարդախ մտքի չե, վոր սպեցիֆիզմը վորոնում և հյուսել հերթական մի սուտ, թե մեր առաջին մարքսիստները—Ստ. Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը,—նաև Բաղդասարյանը, Արշակ Զուրաբյանը, և յելի շատ շատերը—«ռուսական» (յերեք վո՛չ ուղղակի «ռուս») գործիչներ են հակառակ նույնիսկ այն հանգամանքի, վոր վերը թված ընկերներն ապրել ու գործել, կռվել ու զոհվել են Անդրկովկասում։ Նրանք «խորթ ու ոտար են» թեկուզ միայն նրա համար, վոր անդամ են յեղել Ռուսաստանի սոց.-դեմ. բան. կուսակցության։

Բայց, կարծում եք, թե այդ ինսինուացիայով բավականանում է Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիզմը։ Ոդիոզ հեղինակը հայտարարում է, վոր մեր առաջին մարքսիստները՝ Ստ. Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը, նույնպես և Բաղդան կնունյանն ու ընկերները վո՛չ միայն իրենք անձնապես «հայ իրականության խորթ ու ոտար» դեմքեր են, այլև նրանք «խորթացրել են իրենց հետևորդների միտքը հայ կյանքից ու իրականությունից»... Նրանք—մեր ընկերներին նույնիսկ—

— «բաց արձակեցին հետապնդում ուժերի ձեռքերը՝ մեր ժողովրդին առաջնորդելու ծուռ ուղիներով»*)։

Անհավատալի յե թվում այս ամեն չափ ու սահման անցնող անորակելի սանձարձակությունը։ Բայց այդ այդպես է։

Ահա լսեցեք այդ ամբողջ տիրադան ևս «ազնիվ բարեկամային» աջակցությամբ ու «արդար վաստակ» թուրքական լիբերալների ու ամերիկյան դոլլարների գաղտագողի արտահանությամբ Ղազարի կղզում հրատարակված բամբասագրքից.—

«Յեթե առաջ ազգայնական կուսակցությունները մեկուսացնում էին հայ քաղաքացու միքը համազգային հարցերից և մեր առաջին մարքսիստները իրենց քննադատությամբ փլցրին այդ պատնեշը, ապա հետագայում Ռուս. Սոց. Դեմ. Բան. կուսակցության ան-

*) Տես—«Յերկու ամիս բոլշևիկյան բանտում» եջ 193։

*) Տես՝ «Ռուս. հաս. զարգ.» եջ 99.

դաշինքն ամեն բան նեռելով ազգայնական նախապաշարումների կողմը՝ խորթացրին իրենց հետևորդների միտքը հայ կյանքից ու իրականությունից և այսպիսով բաց արձակեցին հետադեմ ուժերի ձեռքերը մեր ժողովրդին առաջնորդելու ծուռ ուղիներով» (էջ 99)։

Տեսանք բալշևիկներիս կատարած գործը—«խորթացում ու ոտարացում» հայ իրականությունից և ռեակցիոն ուժերի «խրատումն»։ Պարզ է, որ յոթե «հայ իրականությունից» աջողի ջնջել Ստ. Շահումյանի, Սուրեն Սպանդարյան անունները, ապա հրապարակում կմնար դաշնակ-սպեցիֆիկյան «կարկառուն» դեմքերը թե որպես «առաջին» ու «հեղափոխական» «մարքսիստներ» և թե արդի Խորհ. Հայաստանի «հեղինակներ»...

Բարի լեղեք լսելու սոցիալիզմի դաշնակցական վարիանտ սպեցիֆիզմի այդ «պատմական ծառայությունը».—

«Դրա (այսինքն Ստ. Շահումյանի կուսակցության—Ե. Ս.) հակառակ՝ հայ կազմակերպության անդամները խորամուխ լեղան հայրենի միջավայրի և նրա հարցերի ուսումնասիրության և ջանացին ըստ չափի ու կարողության դիմադրել այն բոլոր ձեռնարկներին, որոնք խանգարում էին մեր ժողովրդի տնտեսական ու քաղաքական զարգացմանը» (Ն. տ. էջ 99)։

Այսքան հեռու դժվար թե գնացած լինի մեր կուսակցության վորևե բամբասագիր, անգամ ամենատես բանակից։

Սուտն ու կեղծիքը նստած են հակահեղափոխականի յուրաքանչյուր խոսքի ամեն տառի մեջ։

XII

«ԹԻՖԼԻԶԻ ԽՆԴԻՐԸ»: ՍՊԵՑԻՖԻԶՄԸ—ՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ «ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՊԱՇՏՊԱՆ

Շարունակենք արդյոք վերլուծել վերը թված յերկու տասնյակ հարցերի մյուս կեսերը։

Կարծում ենք ավելորդ է։ Մյուս բոլորը խնդիրներում ևս կատարյալ համերաշխություն և տիրել դաշնակ-սպեցիֆիկյան «ազգային ներքին ֆրոնտում»։

Բայց մենք չենք կարող ղրկել մեր կոմունիստ ընթերցողին բավականությունից հիշելու յերկու միջադեպային կետեր։

Դրված է հայ-վրացական փոխհարաբերության խնդիրը, վոր ազգային ներքին ֆրոնտի համար ասել և գերազանցապես «Թիֆլիսի խնդիրը»։

Հայ Սոլոլակային իսկ բուրժուազիան, վոր Թիֆլիսի «շինարարության պատիվը» իրեն է վերապահում, «հրաժարվում է» այդ քաղաքից «հոգուստ ոտարի»։

Անգամ Դաշնակցությունը, վորի պարլամենտի նախագահ լալկան Ա. Ահարոնյանը—քաջը կարած—1918 թ. հայ-վրացական անխմաստ պատերազմին Նապոլեոն 3-ի նման սպառնում եր ճաշել Յերևանում, իսկ ընթրել Թիֆլիսում,—անգամ այդ մարտական Դաշնակցությունը «զիջում է» Թիֆլիսը «տուտուց վրացուն»։

Սակայն առյուծի նման անհողդողդ է Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիզմը։ Նա անհաշտ է, նա անկարող է ստորագրել մի այդպիսի «ազգային խայտառակության» տակ։

Մի կարդացեք նրա այս չքնաղ ու հոխորտալից վեհտոն.—

«Այն հայերը, վորոնք անպատճառ կամենում են ամրանալ ազգային տերբիտորիայի վրա, հասկանալի է. վոր պիտի հաշվեն Թիֆլիսից հրաժարվելու մտքի հետ։ Նման հայերը գյուղացիական մատյանության տեր մարդիկ են, և առավելապես դուրս են գալիս Դաշնակցության շարքերից։ Սրանց ավելանում են իրենց

դասակարգային շահին ու դերին անգիտակ հայ բուրժուաները։

Միմիայն հայ սոցիալ-դեմոկրատիան է, որ ուշնանալով իր ուրուշն (այսինքն սպեցիֆիկ—Ե. Ս.) պայմանին քաղաքականութիւնը և գերակշիռ տեղ հատկացնելով այդ քաղաքականութեան մէջ ազգային հարցին, չի ուզում հրաժարվել Թիֆլիսից և այդ մասին բարձրաբարբառ հայտարարելց ազգային շահախորհրդում» («Ռուս. հաս. զարգ.» եջ 636)։

Ուշադրութեան արժանի է «ազգային շահախորհրդում» արված այս աննման «հեղափոխական մարքսիզմի» և նոյնպես աննման «առաջին մարքսիստների» բարձրաբարբառ հայտարարութիւնը՝ իրենց «սոցիալիստական» ու «բանվորական» ինչ որ «կազմակերպության» անունից։

Մի՞թե սա միաժամանակ ապացուցց չէ սպեցիֆիկների մասնավորապես «պատմության մատերիալիստական հասկացողության», քանի որ «նրանք»—այդ ոգիով Դ. Անանունը, խայտառակ բախշին և ընկերությունը «չի հրաժարվում Թիֆլիզից»...

Ահա ձեզ մի ավելորդ իլլուստրացիա էլ, որ սպեցիֆիզմը ո՛չ միայն դաշնակիզմի մի սոսկ վարիանտն է եղել, այլև ապացուցց, որ նա հաճախ այդ կուսակցության աջ թևն է, և մեր բուրժուազիայի ամենատիպիկ մասի դասակարգային շահերի թարգմանը «հայ իրականության» մէջ։

Ուշագրաւն այստեղ այն է, որ ոգիով հեղինակը—յերևի դարձյալ իր սովորական «արտաքացութեամբ»—խոստովանում է, թե սպեցիֆիզմը նորից ոգնության է յեկել հայ բուրժուազիային իր շահերը գիտակցելու։ Իսկ յերբ բուրժուազիան «իր դասակարգային շահերին ու դերին անգիտակ» է հանդիսացել, ապա նրա շահերի ու դերի պաշտպանությունը հոժարությամբ սիրով («առանց» վարձատրության) ստանձնել է սպեցիֆիզմը՝ հավերժացնելով կարծես հանգուցյալ կաղնա Ստեփան Մամիկոնյանի ազգովին գործելու պատգամը։

Իսկ «ազգի շահերը» ինքրկն անպայման թելադրում են—Թիֆլիսը պահել «հայության» ձեռքին...

Վերց ժողովրդի սիրտը «ահ ու դող» գցելով, սպեցիֆիզմը չէր լինի սոցիալիզմի դաշնակցական վարիանտը, յեթե նա չրոներ նաև Ադրբեջանի ոճիքից։

Վորպես իսկական սպեցիֆիկ՝ ոխերամոլ հեղինակը թուքակերե և։

Յեվ յեթե չի աջողվում շատ անգամ առիթ գտնել «թաթար ցեղի» դինը հայհոյելու, գոնե փնտռում է իր բարկության զոհերն այսօր խորհրդային իշխանության հետ աշխատող գործիչների մեջ։ Յեվ այս անգամ նա իր հաշիվն է տեսնում Մամեդ Հասան Հաջինսկու հետ.—

«Մամեդ-Հասան Հաջինսկին (լինժեներ և Բագվի ձայնատվոր) իր կողմից հայտարարում է.—«Ես, համշարիներ, ի՞նչ եք ուզում, ինչո՞ւ եք բունթեր անում. չէ՞ք հիշում, որ մի քանի տարի առաջ 12—15 ռուբլի եյիք ստանում, իսկ այժմ 20—25 ռ., ել ի՞նչ եք ուզում, մեզ հետ խոմ յերբայրանալու չեք. ախ, ասում եմ ձեզ, յեթե վաղվանից չէք գնա գործի, խմացած լինեք, որ բոլորիդ ել ձեռքերով պիտի վռնդենք Բագվա շրջանից» («Ռուս. հաս. զարգ.»—եջ 193)։ Ինչո՞ւ համար է այս անձնական հարձակողականը Մամեդ Հասան Հաջինսկու դեմ այդ բամբասպրքում։

Ի՞նչ կարիք կա նման հիշատակության, վորը լուրջ տուդության կարիք ունի, քանի որ նրա հեղինակը ամենին հայտնի ստասեր ճիվաղն է։

Ինչո՞ւ, որինակ, հակահեղափոխական հեղինակը չի հիշում այն զզվելի ու յերկդիմի դերի մասին, վոր խաղում էին սպեցիֆիկները հայ նավթատերերի և բանվորների մեջ, մանավանդ ցարական կառավարությունից կրհոսոնների ստացած նպաստից վշրանքներ բաշխելիս...

Ինչո՞ւ, որինակ, ոգիով հեղինակը չի վերհիշում մի ամբողջ կուսակցության շատ ավելի խավար դերը Բագվում վոչ-«համշարիների», մեր ավելի գիտակից բանվորների կյանքում,—այն դերը, վոր հետևյալ կերպ եր բնորոշել ամնման Ստ. Շահումյանը.—

«Զզվելի ևս հարյուրակայն վատախկանների դերը, վոր խաղացին դաշնակցական հերոսները 1906 թ. ոգոստոսի 25—26-ին Բագվում, գինված դուրս գալով սոցիալ-դեմոկրատիայի կողմից հայտարարած քաղաքական գործադուլի դեմ»...)

Ոգիոզ հեղինակը լռում է Դաշնակցության Բագվի գործուղյանական կուսակցությունը» հոդվածը—«Յերկերի ժողովածու» հատոր 1, եջ 68։

*) Տես՝ Ստ. Շահումյանի «Գալիք ընդհարումները Թիֆլիսում և դաշնակ-

նեյության մասին, վորովհետև Դաշնակցության ուղղված քննադատական խոսքի արձագանքը պիտի անխուսափելի անդրադառնար Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիկ խմբակի դեմքին, վոր տասնյակ տարիներ կենակցել և «ազգային ներքին ֆրոնտով» վոչ միայն դաշնակների, այլև ժյուս բոլոր բուրժուական հոսանքների հետ:

Իսկ չե՞ վոր,—գրձյալ ըստ մեր ընկեր Ստ. Շահումյանի արտահայտության,—Դաշնակցությունը Բազումում—

«վաձկան գինվորների ու բուրժուազիայի թիկնապահների մի բանակ եր... հայոց ազգային բռնակալություն»...

Այս գիտեյին «մայր»-կուսակցությունից ծնած ու պորտը յերբեք չկտրած սպեցիֆիկ ճիվաղները, խայտառակ Բախշին և K°, բայց լռում եյին: Այս գիտե ողիոզ Դավիթը, բայց լռում և իր բամբասագրքում ասելիք չունի, այդ մասին...

Լռում եյին յերեկ, վորովհետև նրանց հաշվին չեր գալիս այդ: Ողիոզը լռում է այսոր, վորովհետև,—հավատարիմ դաշնակ-սպեցիֆիկյան արադիցիայի,—նրան հարկավոր է ծաղրել «համշարինների», վորովհետև «թուրքի հոտը» նրան խեղդում է, և կարիք է զգում ցուցադրել «հայի» իբր «ցեղային դերապանցությունը թաթար ցեղի վրա»:

Մամեդ-Հասան Հայֆինակու հասցեին ուղղված ծաղրանքների փոխարեն, ավելի լավ չե՞ր լինի խոսել պիկանտ դրությունների շուրջ ավելի հարուստ և ինքնին շատ խոհուն ծապլավարիչ հերոսների ասածներից ու արածներից, վորոնք անհամեմատ ուսանելի կլինեն մեր նոր սերնդի համար:

Ինչո՞ւ ախորհուրդ հեղինակը չի հիշում, որինակ, իր և իր նմանների դաշնակցականների հետ միասին «ազգային ներքին ֆրոնտով» կապակերպված «ցույցերը»:

Ինչո՞ւ որինակ, նա չի նկարագրում մեզ այն սքանչելի բանկետը, վոր «հայ ազգը»—իմա Դաշնակցությունը. և նրա հետ սպեցիֆիզմը—կազմակերպեց փետրվարյան հեղափոխության նախորյակին Յերևանում, «Որիանտ» հայտնի հյուրանոցում, բառես Դաշնակցության լիդերներից լավ-թամադա ու ավելի լավ նաստեղծ Վալերից Բրյուսովի պատվին: Ո՞վ չի հիշում, թե ինչ-վոտքեր-խաղացնող Տեր-Հարությունյանը յերկու սպեցիֆիկների հետ փոդոցե-փոդոց ընկած հյուրերը եյին վորսում այն բանկետի համար, վորի սեղանի մի ծայրին բազմած եր ցարական Յերևանի նահանգական դատարանի «ճարտասան» պրոկուրորը Գ. Բ. Ջ. Ե. Ն. Կ. Ո. Ն, իսկ մյուս ծայրին՝ Յերևանում վոչ-պակաս հայտնի նահանգական ժանդարմերիայի պետ՝ պալկովնիկ Վ. ա. ս. ի. լ. յ. ե. վը: Մի անգամ ել պատկերացրեք ու տեսեք՝ թե կարելի յե յերևակայել ավելի սրտաճմլիկ տեսարան, քան Դաշնակցության ձայնակցող սպեցիֆիկյան դուետը—իմպրեսիոնիստ գրականագետը և պարզապես վարժապետը՝ գանգուր մազերը քամուն տված՝ հաղթական պոզայով—«բոժե ցարյա խրանի» հիմնը յերիցս հոտնկայս կրկնելիս, յերբ պրոկուրորի ու ժանդարմի զեկավարությամբ պատվելի բանկետը «նորին կայսերական մեծության արևշատության» բաժակն եր կուրծքի հարկավոր պատկառանքով ըմպում: Կարո՞ղ եր ողիոզ հեղինակը, վոխանակ Մամեդ-Հասան Հայֆինակու «համշարինների» ուղղած «ճառից» մեջբերել սպեցիֆիկ բանկետների անշուշտ շատ ավելի համով-հոտով ու «գեղարվեստական» ճառերը, վորոնք ցարական նենդ պրոկուրորի ու դաժան ժանդարմի, ինչպես նաև դաշնակի ու հաստատված հայ վաճառականի ախորժակները բացող ժպետներն եյին շարժում և անկեղծ «բրավո-բրավո»-ները կորզում...

Ինչո՞ւ հակահեղափոխական հեղինակը չե հիշում, որինակ, մի այլ պատկեր «հեղափոխական մարքսիզմի» և «ամենամեծ մարքսիստների» ամենից կարկառուն դեմքի փայլուն արարքներից.—պործադուլության տեղը Մոսկվա, բոլոր յերկրների ու անխտիր բոլոր աղգությունների «համշարինների» քրտինքը մզող միլիոնատեր ժամհարյանների նախասենյակը! Սադ ֆրակ ու անմխիթար վիշտ: Յերաշխավորում ենք, վոր «հայ իրականության», (ասել և թե դաշնակ-սպեցիֆիզմին) միանգամայն հարազատ պատկեր և յեղել այն...

Ինչո՞ւ ողիոզ հեղինակը չի հիշում մի այլ պատկեր վերը-վարի 18-ի հակահեղափոխությունից: Կարծում և մոռացվե՞լ և թե ինչպես դաշնակ-սպեցիֆիկյան սև աստյանը—ողիոզ Դ. Անանունի ցուցամատով—ջոկում եր սպիտակին կարմիրից, վոչ-բալշևիկին բալշևիկից և հանձնում մասնչերխանաներին քրքրելու...

Ավելի լավ չե՞ր լինի հիշել և վերհիշել դաշնակ-սպեցիֆիկյան յերկար ու ձիգ տարիների միաձույլ ու համերաշխ «ազգային» խայտառակ անցյալից դեպքեր ու դեմքեր—վորոնց թիվ ու համար չկա—փոխարեն «թուրքի հոտից խեղդվելու»...

Բայց դրա համար թուղթ ու թանաք չի բավի:

Բայց դրա համար թուղթ ու թանաք չի բավի: Կասկած չկա, վոր Դաշնակցության հրճվանքի ու ծափերի

սիրուն գրված, «աղնիվ բարեկամային» աջակցությամբ և «արդար վաստակ» թուրքական լիրանների ու ամերիկական դոլլարների գաղտագողի արտահանությամբ՝ վանական խուցերում տպված նման խարդախ ու նենգամիտ «մաքուր աշխատանքները» չեն, որ գծելու կեն մի ժողովրդի ու կրկրի հասարակական զարգացման եռապները և վո՛չ ել վառնգելու «համշարինների» ու «կոռնելի» յեղբայրական անկեղծ կենակցությունը խորհուրդների հովանու տակ։

XIII

ԽԱՅՏԱՌԱԿ Բ. ԻՇԽԱՆՅԱՆԻ «ՅԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԲԱՆՏՈՒՄ» ԲԱՄԲԱՍԱԳԻՐՔԸ։ ԴԱՇՆԱԿ-ՍՊԵՑԻՖԻԿՅԱՆ ԴԱՎ-ՅԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՏՈՒՄ

Մի վոքը կանգ առնենք սարսափելի դաշնակ Վ. Նավասարդյանի գլխակցությամբ լույս տեսած խայտառակ Բախշիի՝ «Յերկու ամիս բոլշևիկյան բանտում» դաշնակ-սպեցիֆիկյան շարադրության վրա, քանի վոր մեկից ավելի անգամներ մենք վերը մեջբերումներ արինք նրանից։

Պարզենք-տեսնենք, թե այդ ինչ «գազան» և յերել բոլշևիկյան բանտ սասդ Յերևանում 1920 թ. վերջին և 1921 թ. առաջին ամիսներին, վորին սպեցիֆիզմի կարկառուն լիդերը 200-եջանոց մի ամբողջ հատոր է նվիրել։

Պետք է նկատենք, վոր այդ բրոշյուրը,—նույնպես մի սիպլիկ ու սպեցիֆիկ բամբասագիրք և գարձյալ նույն հակահեղափոխական շրջանների ստեղծագործության արդյունք,—իր ժամանակին հարկավոր վերլուծության չի առնվել մեր քննադատության կողմից։ Այդ մասին միայն ցավել պետք է, վորովհետև նա արժանի յեր առանձին ուշադրության։

Ողիոզ Դավթի հոգեկից ընկերը խայտառակ Բախշին պաշնակ-սպեցիֆիկյան սոսափրությամբ փորձում է նկարագրել բոլշևիկյան բանտի «սարսափները»։ Բայց այդ չի աջողվում, վորովհետև նա մի առանձին սարսափ չունի տեսած Յերևանում։ Չեր կարելի տեսնել մի բան, վոր չի յեղել։

Բնական է, վոր խայտառակ Բախշիի տիպի մարդիկ չպիտի ղգային իրենց քչուչի մեջ պրոլետարական հեղափոխության իրավակարգում։

Բայց ի՞նչ է տեսել դաշնակ-սպեցիֆիկ հակահեղափոխության կարկառուն լիդերը անձնապես Յերևանի բանտում։ Հենց ինքը արձանագրել է իր կոտրած ձեռքով.—

«Ճիշտն ասած, մենք չեյինք զգում մեզ բանտում»...)։*

*) Տես՝ «Զորս ամիս բոլշևիկյան բանտում», եջ 29։

«Բանա» կոչված առանձնասենյակում նա ազատ ընդունում է վիզիտյորները, մանավանդ իր քաղցրիկ՝ ոդիոզ Դավթին, որի հետ նա շարունակ սիրալիր պրպտրության մեջ է միաժամանակ։

Բայց թողնենք, որ խայտառակ Բախշին ինքը պատմի մեզ այդ.—

«Պահակ զինվորը մոտեցավ և ներողություն խնդրելով ասաց, որ կոմենդանտը արդեն արթնացել և հագնվել է, կարող է տեսնել դրսի խմբված մարդկանց հետ ձեր խոսակցությունը և նկատողություն անել» (էջ 23)։

Թվում է, թե արթնացած կոմենդանտը—մեր ընկերը, դաշնակներից սպանված հերոս Մովսես Զուբաբյանը իսկապես առանձնապես դաժան մեկը պիտի լեղած լիներ։

Բայց տեսնենք թե ինչ է պատահում.—

«Ցես կոմենդանտից թուլլտվություն խնդրեցի և ընկերներից մի քանիսին նրա հրավիրելով, տեսնվեցի նրանց հետ» (նույն էջ)։

Սա վոչ մի յերկրի—վո՛չ մեր և վո՛չ էլ մեր հակառակորդների լեզվով «բանտ» չի կոչվում, ինչպես էլ հասկանալու լինենք այդ բառը։

Միևնույն կամենդատուրայից—ուր տեղի յե ունենում վերը նկարագրածը—խայտառակ Բախշին փոխադրում են մի այլ «բանտ»։

Թվում է, թե ռեժիմը պիտի խստանար։ Բայց այդ նոր բանտն էլ բանտի նման չե յեղել, այլ մի քանի պատուհաններով ու արեգակով լի դահլիճի չափ մի մեծ սենյակ։ Թեև պակասել է սենյակում հարկավոր տաքությունը, բայց այդ դրությունը դաշնակ-սպեցիֆիկյան հակահեղափոխության ժառանգություններից էր։ Յայտնի յե, որ մինչ-հոկտեմբերյան Ցերևանում չկար վո՛չ միայն վառելափայտ, այլ նույնիսկ նավթ, թեև Բագուն յերկու քայլի վրա յեր։ Եվ չենք խոսում հացի ու մյուս մթերքների մասին։

Ցերեկոները քաղաքի լապտերները չեյին վառվում, քաղաքում տիրում եր կատարյալ խավար։

Ժողովրդային իրավակարգը—հակառակ մենշևիկների հարուցած խոչընդոտների—բացեց փակված ճանապարհները։ Շուտով Բագուն ու Թիֆլիսը յեղբայրաբար ու անբաժան կապվեցին Ցերևանի հետ։

Բայց դաշնակ-սպեցիֆիկյան լիդերները սովոր չեյին զրկանքների, վորոնք միայն ժողովրդական մասսաների բաժին եյին հակահեղափոխական Հայաստանում։

Բախշին պատմում է.

«Հաջորդ որը, դեկտեմբերի 5-ին, իսկապես մեզ տեղափոխում են նոր շենք, տեղավորում են դահլիճի չափ մեծ սենյակում մի քանի պատուհաններով, բայց շատ ցուրտ է. միակ մխիթարությունը արեգակի ճառագայթներն եյին, որ ուղիղ նստում եյին մեր պատուհանների և փոքր ինչ ջերմացնում եյին մեզ» (էջ 39)։

Սակայն փայտի և նավթի այդ սովի տարին իսկ—

«փայտ յերբեմն տալիս եյին» (էջ 39)։

Նոր շենք փոխադրվելով, արդյոք ավելի խստանո՞ւմ է «բանտային ռեժիմը»։ Թող խոսի ինքը խայտառակ Բախշին.—

«Հերթի կանգնող պահակի զինվորները հայեր եյին, վորոնք՝ խիստ սակավ բացառությամբ՝ շատ լավ տղերք եյին, ընդառաջում եյին մեզ՝ ինչ բանում կարող եյին, յեկող այցելուներին բաց եյին թողնում առանց դժվարությունների։

Նարդի եյին բերել դրսից, այնպես վոր մենք բացի կարդալուց ունեյինք նաև ուրիշ զբաղմունք» (էջ 39)։

Կարծես դարձյալ վոչինչ, նարդին ու ընթերցանությունը արեգակով կուշտ դահլիճում, ուր դրեթե ազատ մուտք ու ելք ունեն բարեկամները, այնքան էլ բանտ չի հիշեցնում։

Նարդուց և ուրիշ զվարճալիքներից ազատ ժամերին խայտառակ Բախշին լրացնում է իր մտավոր բազմազ.—

«Ցես կարդում եյի Լենինի վերջին անաջող աշխատություններից մեկը՝ «Պետությունը և հեղափոխությունը» վերնագրով։

Ընդհատեցի ընթերցումը հենց այն կետում, ուր Լենինը հայհոյում եր կաուցկուն։

Լենինը իր հայհոյանքների ազատ պրակը թափում է կաուցկու վրա իր «Պրոլետարական հեղափոխությունը և renegat կաուցկին» վերնագրով ավելի անաջող գրվածքի մեջ. հայհոյանքներ՝ վորոնց առաջ կարմրել կարող եր վերջին կատապանը, ամենահայհոյասեր ռուս մուժիկը։

Լենինը վորպես թեորետիկ մտածող արժանի չե կատեգ-

կու անգամ կոշիկների քողերը արձակելու» (էջ 30—31)։

Այստեղ խայտառակ Բախշին կրկնում է այն, ինչ ոչխոր Դավթի հետ միասին իրենց կենցաղի յերանելի շրջանում շարունակ պնդում էին՝ բերանացի ավելի լսիրշ կերպով Լենինի մասին, դաշնակցական խուժանի կիսաթևեղաս հրճվանքի համար տրված դասախոսություններին, պարլամենտի շենքում։

Բայց թողնենք մի կողմը դաշնակ-սպեցիֆիկ ընկերության Լենինի հասցեին ուղղած հերթական զրպարտությունն ու սուտը։ Բանի՞ կոպեկ արժե խայտառակ Բախշին, ոչխոր Դավթի ու Նլի մի յերկու մեշչան վարժապետի կարծիքը Լենինի մասին, վորին ծնելու համար հազարամյակներ են հարկավոր։

Մեզ այստեղ հետաքրքրում է հատկապես, թե այդ ինչ «հրեշավոր բանտ» և «սարսափներ» է ապրել խայտառակ Բախշինը, վորոնց սրտաճմլիկ նկարագրությամբ դաշնակ-սպեցիֆիկյան յեղբայրությունը փորձում է շարժել «մարդասեր Յեվրոպայի» զութը։ Ժամանակավոր կացարաններից—կամենդատուրայից ու պահլիճից հետո—վորոշվում է բանտարկյալներին տեղափոխել քաղաքի բանտավայրը, վոր բոլշևիկներից առաջ լավ կառուցված և վորից ոգտվում էին մեր դեմ դաշնակ-սպեցիֆիկները փառավորապես։

Խայտառակ Բախշին գրում է այդ յերբորդ տեղափոխության մասին.—

«Նոր միայն հաղնվում էինք, յերբ պահակի գինվորների ավազը բերավ մեզ մի թուղթ և ասաց, վոր մինչև յերկու ժամը մենք պիտի տեղափոխվենք գինվորական բանտ։ Թղթի մեջ գրված եր—ընկերներ...» և այլն (էջ 48)։

Թվում է, թե—

«Սա արդեն հասարակ բանտավայր չէ, այլ իսկական բանտ» (էջ 50)։

Յեվ ինչ եք կարծում. այդ «իսկական բանտում» էլ շարունակվում է վիկտորների յերթևեկությունը։

«Հաջորդ որը, դեկտեմբերի 11-ին, հակառակ մեր սպասածի, գալիս են այցելուներ...» (էջ 52)։

Այս էլ կյանքը «իսկական բանտում», վորը հաղիվ մի քանի որ է տևում, վորովհետև—

«դեկտեմբերի 17-ին, ուրբաթ յերեկոյան ազատվում եմ նաև յես, յերկու շաբաթ բանտ նստելուց հետո» (էջ 63)։

Այդ յերկշաբթյան բանտարկության շրջանում նա իրավունք է կատարելապես քաղաքի ու յերկրի երեքազարձին։ Նա նույնիսկ դրություններ է շարադրում և—պատմում է ինքը խայտառակ Բախշին—

«միաժամանակ այդ գրության պատճենը ուղարկում եմ դուրսը իմ ընկեր Դավթի Անանունին, ի պահպանություն» (էջ 34)։

Յեվ յերբ այդ ծածուկ գրագրությանը վերջ տալու նպատակով խուզարկվում է Համո Ոհանջանյանների հետ «ազգային գործերի» համար տեսնվող խայտառակ Բախշիի կամերան, վոչինչ չեն գտնում.—

«Մեզ մոտ վոչինչ չգտան, Դավթից ստացած տոմսը խլկույն վոչնչացրել եյի» (էջ 117)։

Այսպես եյին անցնում որերը ձերբակալության մեջ։

Առանձին «սարսափներ» չտեսանք մենք խայտառակ Բախշիի կիսատրանտային կյանքում։

Չի պահպանված անգամ ամեն մի բանտարկության նպատակը՝—մեկուսացնել և առանձնացնել հակահեղափոխականին։ Մեղավորը բոլշևիկները չեն, յեթե սպեցիֆիկներին հատուկ են՝ «ահը վեր և քան թե մահը» զգացմունքները, վորոնցով փայլել են այդ «հեղափոխական մարքսիստները» զեղյան գարական որերում և վորոնց մասին մեր աննման Ստ. Շահումյանը տվել և անմահ բնորոշումներ*)։

Բայց մեզ կարող են առարկել, թե «սարսափները» սկսվել են խայտառակ Բախշիի յերկրորդ բանտարկության շրջանում, վորը նույնպես տևեց մի յերկու շաբաթ։ Բայց այստեղ էլ նա ստանում է—

— «թալթ, անկողին, սպիտակեղեն» (էջ 95).

— «ճաշ» (էջ 96).

— «մի շարք գերմաներեն ու ռուսերեն գրքեր ֆրանսիական հեղափոխության և տնտեսական հարցերի վերաբերյալ» (նույն էջ)։

Բանտի վերին հարկում գտնվում եյին դաշնակցական նախարարները։ Խայտառակ Բախշին,—վորը փակված եր առաջին հարկում,—տեսակցում է իր սրտակիցների հետ։ Նա պատմում է իր այդ տեսակցությունների մասին հետևյալը.—

«Վաղ առավոտյան ծառան առաջարկում է ինձ գնալ գաղտագողի կերպով և յես ընկնում եմ Համոյի և մյուսների

*) Տես՝ «Պայքար», 1916 թ. № 33.

կամերը։ Հերթապահ գինվորը, լավ տղաներից մեկը, ինքնաբերաբար խոստանում է մի բան լինելուց ինձ համց տալ. մոտավորապես մի ժամ եր Ցնում մինչև առավոտյան տոուդումը, յերբ ամեն մի բանտարկյալ պետք է անհրաժեշտուբեն իր տեղումը լինի» (էջ 131)։

Մի ամբողջ ժամ տևող խորհրդածության ժամանակ իրար պատմում են «լսածները» և «ունեցած տեղեկությունները»։

Այդ առաջին տեսակցությանը հաջորդում են նոր տեսակցությունները, վորոնք պարբերական բնույթ են կրում.—

«Այնուհետև աջողվեց ինձ զանազան դիպվածներով մի 3—4 անգամ ևս տեսնվել Չամոյի խմբի հետ և փոխանակվել որվա նորություններով» (էջ 134)։

Ահա մեր բանտային «սարսափելի» ռեժիմը, վոր ապրել և խայտառակ Բախչին՝ իր վկայությամբ։

Ներանք տեսած պիտի լինեյին իրենց մաքին ու սրտին հարազատ դաշնակ-մենշևիկների որով Մ ա ե ի ն ու Գ ո ւ բ ե ր նակի բանտերը, յերբ բալշևիկներիս ածում եյին պ ի տ ա մ ա ր ի փ ո վ հիվանդացած ու կողքիդ մեռնող քրեական հանցավորների մոտ (նրանց թիվը 1400-ից անցնում եր այդ յերանելի որերին), թե ինչպես հակահեղափոխությունը բնական ճանապարհով ազատվում եր մեզանից—ձեռքերը Պիղատոսի նման լվանալով...

Բայց ինչո՞ւ ես չեղած տեղը այդքան ազմուկ բարձրացնում խայտառակ Բախչին։ Ինչո՞ւմն է նրա փ ո ր ա գ ա վ ը։

Խնդիրը նրանումն է, վոր խայտառակ Բախչին, վոր բանտումն անգամ դաշնակցականների հետ դավադրում եր Խորհրդային իրավակարգի դեմ, փորձում է իր վրա վերցնել կասկածելի «բարոյախոսի» դեր, վորպեսզի սպեցիֆիզմը յուրացրել եր դաշնակցական Հայաստանում։ Ցեվ թեև նա չի սիրում կոմունիստներին, բայց սրտապնդելով, գրում է աջ ու ձախ՝ փորձելով «կապվել նրանց հետ», շարժել մերոնց սիրտը։ Այսպես, Ցերևանում իր համար բնականաբար անսովոր պայմաններում ու անսովոր տրամադրությամբ նա դիմում է ընկ. Աշոտ Հովհաննիսյանին և խնդրում է անցնել մոտը.—

«Անսովոր տրամադրությունների վիճակում գրում եմ Աշոտ Հովհաննիսյանին մի տոմս ճիշտ հետևյալ յերկտողից բաղկացած.—Հարգելի Աշոտ, յես գտնվում եմ ձեր մեխայի կոմենդանտի շենքում բանտարկված։ Հանուն մեր նախկին ընկերության, խնդրում եմ անցնեք ինձ մոտ (ստորագրություն)»,

Ընկ. Աշոտը, հասկանալի յե, մերժում է տեսնվել խայտառակ Բախչիի հետ, վորը իր անզոր բարկությունն է թափում նրա վրա.—

«Խիստ սակավ բացառությամբ, յես ընդհատել եյի իմ ծանոթությունը բոլոր հայ բոլշևիկների հետ։ Աշոտ Հովհաննիսյանը, մեր կուսակցական կազմակերպության նախկին անդամ, պատկանում է հակակրածս բալշևիկյան տիպի շարքին» (էջ 22)։

Կասկած չկա, վոր խայտառակ Բախչին, ոգիով Դավթի և հակահեղափոխական նման կատեգորիայի մարդկանց ատելությունը միայն պատիվ կարող է բերել բալշևիկներիս։

Բայց շատ համառ եր ցանկությունը՝ տեսնվել բալշևիկների հետ։ Առաջին անաջողությունը նրան չի վհատեցնում։ Խայտառակ Բախչին, վոր իրեն ևս դասում է «հին տիպի բալշևիկների» շարքին, դիմումի նոր փորձեր է անում, թեև նույնչափ անոգուտ.—

«Բեկզադյանը բոլշևիկ եր հին տիպի—ինչպես և տերբես գրողը» (sic!)։

«Այդ կատեգորիայի յե պատկանում Դավթյանը։ Նա տարբրական միայն կրթություն է ստացել, անգամ եր հարմարվում մեր կազմակերպության, իսկ վերջին հեղափոխության շրջանում անցել է բալշևիկների շարքը» (էջ 46),

Յերբ այդ նոր փորձերը ևս չեն աջողում, նա՝ ըստ սովորականի՝ դիմում է հայհոյանքի Ի. Ի. Դավլեթյանի դեմ ևս.—

«Նա շատ քիչ հասկացողություն ունի այն գործից, վորին նա ծառայում է, մինչև վերջն էլ սոցիալիստական հասկացողությունների այբուբենը մուրում եր իր ավագ ընկերներից» (նույն էջ)։

Վոր խայտառակ Բախչին դժգոհ պիտի լիներ և չհավաներ պրոլետարական իշխանությունը, նրա ներկայացուցիչներին,—դա շատ հասկանալի յե ու բնական։ Խորհրդային իշխանությունը նրա վրա ավելի ուշադրություն չի դարձնում, քան մի սովորական հակահեղափոխականի վրա։ Այդ հանգամանքը վերավորում ու կատաղեցնում է Դաշնակցության պ ե ր ս ո ն ա գ ր ա տ ա ի ն։ Թեև—մենք համաձայն ենք—խայտառակ Բախչին ավելի յեր՝ քան մի «սովորական հակահեղափոխական»։

Պարզ է, վոր մեր բեժիմը, բալշևիկյան բեժիմը չեր կարող հարկավոր սեր ու հարգանք ներշնչել Միլյուկովի հաղթանակը

մինչև Ալեքսանդրեւտա ու Ցարդրադ յերազողներին,—Դաշնակցության հարաստությունը զգացած հակա-ներին։ Բայց այստեղից դեռևս չի բղխում, թե Յերևանի բոլշևիկյան բանտում վորևե «սարսափ» և կրկ խայտառակ Բախչին։

«Յերկու ամիս բոլշևիկյան բանտում» բամբասագիրքը, դրված հատկապես իբրեև ապացուցելու 1920—1921 թ. թ. ընկ. Ս. Կասյանի որով Յերևանի բանտային ռեժիմի «սոսկալիությունները»,—ապացուցում և միայն հակառակը, շեշտում և միայն մեր բանտային կարգերի մեղմությունը նույնիսկ քաղաքական հռիվնների այդ հասկանալի դաժան շրջանում։

Բայց մեզ հետաքրքրում տարավ խայտառակ Բախչիի այս մի ջանկյալ միայն շոշափած բամբասագիրքը։

Դառնանք ոդիոզ հեղինակի հիմնական բամբասագրքին։

XIV

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԵՑԻՖԻԿՅԱՆ ՇՓՈԹ ՄԵՐ «ԻՍՏՊԱՐՏԻ» ՎՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ

Վերը մենք մի անգամ արդեն նկատեցինք—խոսելով պատմական ծառայության հիպոթեզի սպեցիֆիկյան վորձի մասին,—թե վերջինիս բամբասագրության համար կարծես ստեղծվել եր հոգեբանական «ավելի հյուրընկալ» միջավայր։

Բնավ Լենինյան կուսակցության շահերը չեն պահանջում չտեսնելուն տալու, վոր ուրիշ կուսակցությունից մեզ ժառանգություն անցած հատ ու կենտ ինտելիգենտներ արամադիր են յերբեմն ճանաչել սպեցիֆիզմի «պատմական ծառայությունները» բոլշևիկյան պայքարում,—կարծես լռելյայն համաձայնել, թե այսօրվա Խորհրդային իրականությունը Հայաստանում հետևանք և խայտառակ Բախչիի, մեշչան Ռուբենիի, անգամ ոդիոզ Անանուշի ու ելի մի յերկու սպեցիֆիկյան ստվերների «քրտնաթոր աշխատանքների» մատնակցության։

Փաստեր—դարձյալ համեցեք։

Մենք դեռևս չունենք մեր Իստպարտը Յերևանում, վորպես հեղափոխական մարքսիստական պատմագիտության ոջախ, վոր հին դուսաններն նման յերդեր ու յերգեր անվերջ Սա. Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի և Լենինյան կուսակցության տաղանդավոր տարիների հերոսամարտը։ Սակայն ունենք «Հայաստանի կոմունիստական կուսակցության կուսպատի գրադարան», վորի անորանիկ գիրքը՝—№ 1 ը—խոքում է «Զորս տարի Հայաստանի բանվորական շարժման պատմության (1903—1907)» մասին։

Նա արդյունք է Յեր. Մելիք-Յոլչյանի գրչի։ Գիրքը լույս է տեսել 1924 թ.։ Հեղինակը,—բնականաբար նաև հրատարակիչ «Իստպարտի դրադարան»-ը,—շատ դեղեցիկ նպատակ են դրել, վոր դրքին կցված առաջաբանի մեջ հետևյալ կերպ է բնորոշված.—

«Ցալ յերիտասարդ պարբերական մեր ոլեորում

կատարված մեծ դեպքերի պարգացման պատմության ընթացքը»:

Կարծես դիվելի միտք, վողջունելի յեռանդ: Բայց ծանոթանանք, թե ինչպիսի ընթացք և տրված «մեծ դեպքերի պարգացման պատմության ընթացքին»: Մենք այսուհդ չենք զբաղվի անձնապես այդ գրքի քննադատությամբ: Մենք զբաղված ենք այսոր ողիոզ հեղինակի հայտնի բամբասագրքի վերլուծությամբ: Բայց բերենք Կուսպատի №1-ի ամենաանհաչո քննադատի, ամենանհաչա թերթում իր ժամանակին արտահայտած բավական կոմպլենտա կարծիքը, մեր Իսպատրատի պատմա-ուսումնասիրական այդ անդրանիկ փորձի շատ նշանակալից գնահատականը.—

«Ընկ. Մելիք-Յոլչյանը ձգտում է իր պատմական աշխատությանը գիտական բնույթ տալ, վորի համար և նա ընկղմվում է անտեսական, ագրարային հետազոտությունների մեջ. բայց նրան լիարկե չի հաջողվում»:

Գիտական բնույթ տալ աշխատանքին չի աջողվում: Ապա ի՞նչ և աջողվել: Տեսնենք:

Ավելի ևս մոտից բնորոշելով գրքի իսկական բնույթը, քննադատը նկատում է.—

«Նրա գիրքը սպեցիֆիկ աշխատության տպավորություն է գործում, չնայած վոր նրա վերաբերմունքը—ըստ յերևույթին,—բացասական է դեպի «սպեցիֆիկ» անունով հայտնի ազգային ս.-դ. կազմակերպությունը»:

Ընկ. Մելիք-Յոլչյանի քննադատը յերբորդ և չորրորդ անգամ դառնալով նրա գրքի ընդհանուր բնութագրմանը՝ համառությամբ պնդում է.—

«Վոր ընկ. Մելիք-Յոլչյանի գրքից սպեցիֆիզմ է բուրում, բերենք դարձյալ մի ապացույց և այլն»:

Այսպիսի արժեքավորում տրված է «Խորհրդային Հայաստան» թերթի*) յերկու մանրազնին ու յերկար թերթոններում,—հյուրընկալած առանց խմբագրական ծանոթության, վերապահումի, վոր ասել է թե՝ կոմունիստական այդ մեծ որաթերթի խմբագրությունը նույնպես համախոհ է յեղել տրված գնահատականին:

Նշանակալիցն այն է նույնպես, վոր մեր կոմունիստական Իսպատրատի հրատարակությունը մեղադրվում է Դաշնակցության սոցիալիստական վարիանտ սպեցիֆիզմին համակրելու մեջ

*) Տես՝ «Խորհ. Հայաստան» 1924, նոյեմբեր 16 և 18, №№ 262 և 263.

հայտնի մենշևիկ Գևորգ Ղարաջի կողմից, վորը—ինչպես ասում են—ան-ատու-լատ ստորագրել էր այդ թերթոնների տակ:

Վոչ վոք չհերքեց,—վոչ Պատմաբանը և վոչ էլ հեղինակը—«Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում տպագրված քննադատականը: Անպատճառ հերքման ձևական փորձ իսկ չարվեց...

Ինչո՞վ բացատրել հրապարակով արձանագրված մեր կոմունիստական Իսպատրատի սպեցիֆիկյան մոլորությունը, անթույլատրելի լապսուսը:

Պատմական ուսումնասիրություններ կատարող հեղինակի անփորձությա՞մբ:

Նրա «կոմսոմոլային» ծանոթությա՞մբ չափազանց մեծ ինքնավստահությամբ ստանձնած գործի հետ:

Թո՛ղ այդպես լինի: Թող մի րոպե յենթադրենք անգամ, թե վոչ միայն «Զորս տարիի» հեղինակը, այլև այդ հեղինակությունը ստուգող ու աչքի անցնող ընկերը իսկապես չափազանց մակերեսային ծանոթություն և ունեցել ռուսական առաջին հեղափոխության նախորդող և հենց այդ առաջին հեղափոխությանը վերաբերող (1903—1907) չորսամյակի մասին: Դրանով ժժբախտաբար չի փոխվում խնդրի էությունը: Ըրկեկոխվորեն—պատասխանում է փաստ: Մեր Իսպատրատի № 1 «պատմագիտական» հրատարակությունը մեղադրվում է նույնպիսի մենշևիկների կողմից սպեցիֆիզմի մեջ:

Սակայն Յեր. Մելիք-Յոլչյանի «սպեցիֆիկ պատմությամբ» սահմանափակվում հակացողությունների շղթը:

XV

«ԳՌԵՉԿԱՑԱԾ ՄԱՐՔՍԻԶՄ» ՅԵՎ «ԼՐԻՎ ՄԱՐՔՍԻԶՄ»: «ԾՈՒՆՐ ԴՆԵՆՔ» ՍՊԵՑԻՖԻԶՄԻ ԱՌԱՋ: ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՐՋԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ՝ ՍՊԵՑԻՖԻԿ ՄԵՇՉԱՆ ՌՈՒԲԵՆԻ ԱՐՋԱՆԸ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Հայտնի չէ, ինչ բամբասագրքում հաճախ հիշատակված մեշչան ու սպեցիֆիկ Ռուբենին - Ծատուրը - Ծատուրյանը—ինչպես ուզում են թող մնծարեն սպեցիֆիկները՝ սպեցիֆիկարար ու դաշնակները՝ դաշնակարար—ավելի լավ կամ ավելի վատ չէ չեխղել, այլ միանգամայն համապատասխան ու համամիտ ծապլվարչյան «հերոսամարտի» մյուս տիպիկ ներկայացուցիչներին՝ խայտառակ Բախչինին, ոգիով Դավթին և ևլի մի չերկու գավառական մեշչան ինտելիգենտներին՝ Դաշնակցության վարիանտ բանակից։

Մեզ շատ հեռուն կտաներ, և առանց այն էլ մեր հոդվածը շատ չերկարեց մեր «Մարտակոչ»-ի ծավալի համար, վերլուծելու այստեղ այդ վոզորմելի Ռուբենիի «հեղափոխական մարքսիզմի» փորձերը՝ հայտնաբերած խմբագրությամբ խայտառակ Բախչիի «Կյանք»-ի և սարսափելիք «առաջին մարքսիստ» «գենոսսե» բժ. Տիգ. Խանթանյանի «Ձայն» շաբաթաթերթերի էջերից։

Յեթե ժամանակը ներեր,—արժեր իսկապես մի փոքր կանգ առնել սոցիալիզմի ապագային զարաբաղյան հայրենակցության զանգակատունից նայող մեշչան Ռուբենիի մասնավորապես «Սոց.-դեմ. կազմ. սիստեմը»*) հոդվածաշարքի վրա, վոր մեր որերին

*) Տես՝ «Կյանք» և «Ձայն» շաբաթաթերթերը, Թիֆլիս—1906 թ. Ահա միայն մի նախադասություն մեշչան Ռուբենիի այդ հոդվածաշարքի ոեզյումեյից.—

«Այսպիսի անկազմակերպ ղուլթյան հետևանքն է այն անարխիան, վոր իշխում է «Ռուս. Սոց.-Դեմ. Բանվ. Կուսակցության» շարքերում և վորը կազմալուծեց նովկասի պրոլետարիատի ուժերը» («Կյանք», 1 հուլ. 1906 թ., եջ 16)։

Այս պարբերությունը ինքնին արդեն բնորոշում է, վոր պակաս քամբասագիր ու ստապիլ—ի հարկե նույնպես «մարքսիոտորեն» ստասեր ու բամբասաեր—չէ յեղել սպեցիֆիզմի այդ «պատրիարքը»՝ քան խայտառակ Բախչինը, ոգիով Դավթը և Դաշնակցության, սոցիալիստական վարիանտ ևլի մի ադեպտ։

Ո՞վ եր պրոլետարիատի ուժերի կազմալուծողը և անարխիա բերողը բանվորության ներսում, և ո՞վ—ընհակառակը—պրոլետարիատի առաջնորդողը հաղթանակից դեպի հաղթանակ—պատմությունը արձանագրել և անջնջելի եջերով։

Այսպես եր բերում այդ թշվառական Ռուբենին, վոր մինչև վերջ ինաց մի վթած սպեցիֆիկ ու մեռավ վորպես տիպիկ վարժապետ, գավառական սեմինարիայի պարիսպների մեջ փետրվար-հոկտեմբերյան որերին սպասող՝ թե քամին ինչ կփչի,—կասկածանքով հետևող, թե Լենինը իսկապես «նեմեց շպիոն» ե,թե ոչ?!

Հեղափոխական գործունեությունից փախչող վարժապետ Ռուբենիի համար շատ բնորոշ և Շուշվա թեմականի նրա հարգող աշակերտներից մեկի՝ ներհատարդ բժիշկ կոմունիստ Սուրեն Մուսայելյանի վկայությունը.—

«Ռուբենին աշակերտությանը հորդորում եր.—«Հարկավոր չի դնա նատարանի վրայից այս կամ այն կուսակցությանը հարել, այլ պատրաստվեցեք ու հիմնավորեցեք ձեր սկզբունքները» («Դարբաղը և նրա խորհրդարնցումը».—«Կոմունիստ» 1925 թ. ապրիլ 28, № 93, Բագու).

Դե՛, լավ—կասենք ուրիշ բան չեյին պահանջում ուսուցչությունից, այլ նույն այդ շատ հայտնի «ակադեմիզմը» ցարերի պայծա՛ռ որերի դպրոցներում...

հանրապես Լենինի կուսակցությանը՝ մեր «գռեհկացած» մարքսիզմին հակադրելով «լրիվ յուրացրած» սպեցիֆիկյան «մարքսիզմ», վորի կրողն ևր «առաջին մարքսիստ» այդ խղճուկ Ռուբենին:

Յեվ իսկապես: Հանկարծ, որվան մի որ, ծրագրվում է— ինչպես ասում են—կանոնիզիրովատ թեմականի վարժապետ Ռուբենիին «բալշևիկ», «Հոկտեմբերյան մրրիկի առագաստ», «կոմունիստական պատրիարք» և այլն և այլն,—վորի նմանը վոչ ծնել է և վոչ էլ կրծնի յերբեք վոչ միայն Հայաստանը, մեր վողջ կովկասը, այլ անգամ լայնածավալ Ռուսաստանը...: Արևմտյան-Յեվրոպայի մասին—չգիտենք ինչու—խոսք չկա!?

Սկսվում է մի ամբողջ պատմաբամբասագրության արշավանք:

1923 թ. ոգոստոսին մեր թերթերում լույս է տեսնում ինչվոր «անհայտ» «խմբագրության կողմից» հետևյալ դիմումը.—

«Բոլորին.

Ա. Ռուբենու (Ծատուրյան) յերկերի ժողովածուի հրատարակության գործն արդեն գլուխ է գալիս. պակասում են միայն մի քանի գրվածքները, վոր խնդրում ենք մինչև ս. տ. հոկտեմբերի 1-ը հասցնել մեզ: (Թվում է, թե ինչ գրություններ են վորոնվում—Ե. Ս.):

Պետք է հասցնել կամ հոդվածները, կամ հիշածս թերթերը: Բացի այդ խնդրում ենք ուղարկել նամանավանդ Ռուբենիի նամակները ու անտիպ ձեռագիր յերկերը: Ոգտագործելուց հետո նյութերը կվերադարձվեն:

Պահանջի դեպքում կլինի վարձատրություն»*):

Թվում է, թե՝ յեթե խարիք կար մեր որերին—1923 թվին իսկապես առաջին մարքսիստների յերկերի ու իսկապես հեղափոխական մարքսիզմի ժողովածուների հրատարակության, ապա նախևառաջ պետք ևր մտածել անմահ Ստ. Շահումյանի, աննման Սուրեն Սպանդարյանի ու մյուսների մասին, և բնավ յերբեք հերթ չպիտի հասներ սպեցիֆիկներին—մեշչան Ռուբենիին, խայտառակ Բախշիին և նմաններին:

Կասկած չկա, վոր տեղի ուներ գործել հասկացողություններ շփոթ և թյուրիմացություն, վորն ինքնին հեռանար մի այլ վնաս-պակաս անտեղի շփոթի ու թյուրիմացության:

---

*) Տես՝ «Մարտակոչ» 1923 թ. № 141 և հետևյալները: Այդ կոչը կրկնված և յերկար անգամ:

1922 թվի ապրիլին Յերևանի հասարակական գրոսավայրերից մեկում, մեշչան ու սպեցիֆիկ Ռուբենիի թեմականի մի յերկու նախկին աշակերտ-գինակիցների ջանքերով գրվում է նրա անվան «հուշարձան», վոր բալշևիկների համար մի յեղել է և կմնա մոռակ մի գերեզմանաքար: Վոչ ավելի:

Այդ հակաբալշևիկյան այսպես կոչված «հանդեսը» առիթ է տալիս հրապարակային գրավոր ու բերանացի սրտի մի այնպիսի անթույլատրելի դեղումի, վոր ապշեցուցիչ է թվում դեռ այսոր էլ, յերբ վերհիշում կամ թերթում ենք բալշևիկյան որագրության եջերը:

Ահա վողորմելի Ծատուրին նվիրված ներբողական յերկար հոդվածից մի շատ փոքրիկ նմուշ.—

«Ծատուրն որոշի է՛ դասախոսակվում եր վորպես հեղափոխական մարքսիստ» և՛ դիրք բռնում ու տղեղություն վաստակում վորպես նոր զաղափարների պատգամախոս»:

«Մտքի սուր դիալեկտիկայով, հոհոտրական աճող տաղանդով նա ստանում եր անպարտ պոլեմիստի հռչակ Անդրկովկասի հայ շատ կենտրոններում»:

«Այստեղ (այսինքն նրա աշխատությունների մեջ—Ե. Ս.) կգտնեք ընդարձակ տեսություններ և՛ պատմական մատերիալիզմի, և՛ նրա «քննադատների», և՛ ռուսական և՛ հայ լիբերալիզմի, և՛ հայ քաղքենիության ու իր կուսակցության՝ Դաշնակցության մասին: Հեղինակը գրում է «լայն խավերի համար», ուստի և չի գրաղվում նյութին վերաբերող հիմնական աղբյուրներով, ավելի շատ հրապարակագրում է, քան ուսումնասիրում»:

«Ավելի մշակված, ավելի ամբողջացրած և պայքարի տեսակետից ավելի անմիջական նպատակ ունեցող հոդվածները, վոր շոշափում են սոցիալ-դեմոկրատական կազմակերպչական խնդիրները»:

«Իր դերն ավելի համեստ յեղավ, քան պետք եր յենթադրել իր տաղանդի չափից և իր գործի աղմկայնությունից: Իր խոսքն ու գրիչը հույզ սկզբնավորություններից: Իր խոսքն ու գրիչը չունեցավ քաղաքական արժանի կշիռ ու նշանակություն: Իր գործունեության շրջանը սեղմվեց, ամփոփվեց:

վելով հեղափոխական մարքսիզմի գրավոր ու բերանացի պրոպագանդայի»:

Մի ամբողջ պաղվալ բռնող այդ հոդվածում մարքսիստական-բալշևիկյան անալիզի վոխարեն,— անալիզ, վոր պիտի յուցադրեր մեզ ելբիտասարդ գվարդիային վողջմելի Ծառուսի և նրա այսպես կոչված «կամմակերպուԹյան» հակա-պրոլետարական բնուԹյունը,—կգտնենք յերկչոտ ու խուսափող նեղրոպական, վոր աշխատում է կոկել մի կերպ անկյունները, ծամծմել «անախորժ հարցերի» պատասխանը, մոռանալ հեղափոխուԹյան-բալշևիզմի և հակահեղափոխուԹյան-սպեցիֆիզմի մեջ տեղի ունեցած անհաշտ կռիվը և այլն: Կարծես նույնիսկ ցավել է, վոր սպեցիֆիկ «հեղափոխական մարքսիզմի պատգամախոսի» դերն ու նշանակուԹյունը «ավելի համեստ յեղավ»՝ քան սպասվում էր վոմանց կողմից:

«Սոցիալ-դեմոկրատական կազմակերպչական խնդիրները» շոշափող մեջբեր Ռուբենին—հեղափոխական մարքսիզմի «անպարտ պոլեմիստ»?!

Ո՞ւմ աչքում և ում համար է,—նա յերբևե «հեղափոխական մարքսիզմի» «պատգամախոս» յեղել... և այն էլ «անպարտելի»: Պետք էր այս հարցին պատասխանել:

Պատմական դրեթե 15—20 տարվա վրա՞ մի յետադարձ հայացք ձգել և մոռանալ, վոր մեկից ավելի անգամ այդ վողջմելի Ռուբենին իր վոչ թե «սուբ», այլ սուտ «դիալեկտիկայով» հիմնավորապես ջարդ ու փշուր է յեղել հեղափոխական մարքսիզմի—լենինյան հայ աքանչելի գվարդիայի առաջին մարքսիստների ներկայացուցիչների կողմից?!

Ո՞ւր են վարժապետ Ռուբենիի գովքն անող մատապատկերների մեջ Շահումյանը, Սպանդարյանը, Կնունյանը, և սրանց ընկերներն ու հետևորդները?!

Բայց լսենք հեղինակի աշակերտական յերկյուղածուԹյամբ ամփոփումը.—

«Կույլուչևսկին համեմատում է իր հերոսներից մեկին առաջնորդի հետ, վոր միայն մբրիկի ժամանակ է իր դերի մեջ, մինչդեռ խաղաղուԹյան ժամին քարշ է ընկնում կայմից՝ վորպես անպետք լաթ:

Հոկտեմբերը այն մբրիկն էր, վոր հուզելով հին հեղափոխականի մեջ պայքարի հույզն ու կիրքը, նմանեցրեց նրան տաբերային ուժերի

ներքոծության յենթարկվող այդ առագաստին»:

Այս պատկերը նախ՝ յերևակայական է, ինչպես յերևակայական է մեջբեր Ռուբենիի «ուռճացումը» մանավանդ «Հոկտեմբերի տարերային մբրկում»:

Հոկտեմբերը անցել է մեր բոլորիս աչքի առաջ և ով վոր—բացի իր մի յերկու անուղղի աշակերտներից—թեկուզ հատ աչքով նկատել և «բալշևիկ» Ռուբենին պրոլետարական մբրիկում՝ խնդրում ենք մատ բարձրացնել...

Կասկած չկա, վոր Հոկտեմբերը իսկապես անսպասելի և մբրիկ:

Դա համաշխարհային մասշտաբով հայտնի ճշմարտություն է, թեև դեռևս չի ապացուցված, թե մբրիկի ժամանակ բացում են առագաստը: Սևանա լճի վրա կարելի չէ վորձ անել և մբրիկի ժամանակ ծով չելնել դեպի վանք առագաստանավի վրա...

Կլյուչևսկին շատ վատ նավասաի չեր, թեև պերճախոս լիբերալ պատմաբան,—Միլյուկովի, Կավելինի, Տրուբեցկոյի, Կիզևետերի—Մոսկվայի տարադեպին լիբերալ պրոֆեսուրայի պետադայից: Մբրիկի ժամանակ առագաստը ընկած և վորպես անպետք լաթ, հակառակ դեպքում մբրիկը կխորտակի նավը: Մեքենատրեն կրկնվել և չսուտված մի պատկեր: Սակայն կարևորը այստեղ վատ յերևակայուԹյունը չէ: Միանգամայն ճիշտ է, վոր տիպիկ սպեցիֆիկ Ռուբենին Հոկտեմբերյան մբրիկին խոչընդոտ վոր միայն մի անպետք լաթի կտոր եր, վոր անգամ չփորձեց բացվել հատկապես հենց նրա համար, վորպեսզի չխորտակվեր: Հոկտեմբերի և ԴաշնակցուԹյան վարիանտ սպեցիֆիզմի մեջ քաշված և յեղել մի շարժ, դեռ Հոկտեմբերից առաջ, մի անանցանելի վիհ, թեև վոմանք փորձում են ցեխի կամուրջ գցել մեր և նրանց մեջ:

Պակաս ուշագրավ չէ «Յորերդային Հայաստանի» նույն այդ համարում *) նույն այդ մեջբեր Ռուբենիին նվիրված առաջնորդող հոդվածը: Արժեր, վոր այն ամբողջապես առաջ բերվեր այստեղ, վորպես յերիտասարդ գվարդիային հանձնարարվող «պրակտիկ հոդված»: Բայց մենք կբավականանանք կրճատ մեջբերումներով, ավելի պատմասեր կոմունիստ ընթերցողին հանձնարարելով քննական հայացք ձգել խայտառակ Բախշիի վինաիգրետին:

*) Տես՝ «Յորերդային Հայաստան» 1923 թ., ապրիլի 9-ի №-ը:

կից սպեցիֆիկ Ռուբենիին նվիրված այդ պատմական №-ի վրա։

«Սորբրդային Հայաստանի» այդ առաջնորդողը ընդգծում է.—

«Դժբախտաբար մինչև այսօր նրա թեորեթիկական նշանակությունը, ուժը ըստ հարկին չի գնահատված։

Նա կովկասում խոշորագույն հեղափոխական ուժը կրթված մարքսիստների մեկն է եղել։ Սակավաթիվներից, հազվագյուտ ընկերների մեկը։

Բայց վորովհետև այդ գործիչը մեծ մասամբ աշխատել է պրակտ ասպարեզում, ամենից առաջ ընկերական նեղ շրջաններում, լայն մասսաների համար այնքան ելույթի կամ հաճախ չի կրկնվել նրա անունը։

Հայ կյանքում, վորպես մարքսիստ հեղինակ—նա առաջինն է։

Իսկ վողջ կովկասում—նախկին մարքսիստ ժողպանիայից հետո, թեորեթիկ չերկրորդը։

Նա պետք է վոր պատվավոր տեղ բռներ չեվ ռուսական մարքսիզմի ասպարեզում...

Այսօր նա մեզ մոտ կենտրոնում կլիներ, կոմունիստական պարտիայքը կլիներ անշուշտ։

Հին ընկերները, կռված ու կռփված մարքսիստները, թեև ձեր միջից շատերին արդեն խլել է մահը, թեև ձեր շարքերը որեցոր նոսրանում են, բայց դուք շրջապատված եք չերիտասարդ ու թարմ ուժերով, այն սեռրունդով, վոր թողել են մեզ Ռուբենիինները։

Ռուբենին չի մոռացված, նա ապրում է մեզ հետ, վորովհետև նրա միտքը, նրա ցանած սերմերը ծլել են ու ծաղկել։

Հայկական մարքսիզմը, հայ բալշևիզմը, Հայաստանի կոմունիզմը այսօր ուժեղ է և ապրում է իր թիվս այլոց և շնորհիվ Ռուբենիի, նրա թափած աշխատանքի ու վոթած արյունի...

Այսօր դա մանավանդ զգալի է...

Նրա անմահ հիշատակը մեր հոգում, անզուգական ընկերոջ պատգամները ամուր սեղմած մեր կրծքին, այս պահուն, այս վայրկյանին ծունր դնենք Ղարաբաղի լեռներում, քար ու քանդ եղած քաղաքի անշուք վայրում սեղավորված նրա հեռու ու մենավոր գերեզմանի առաջ։

Այսպես, ուրեմն, «Սորբրդային Հայաստանի» առաջնորդողը խորհուրդ է տալիս սպեցիֆիզմի ելույթյանը ու մեշչան Ռուբենիի խղճուկ գործունեությանը անիրազեկ մեր չերիտասարդ գվարդիային «ծունր դնել»,—ծունր դնել բալշևիզմին խորթ ու թշնամի հակահեղափոխական խմբակի մի պատահական գերեզմանի առաջ, վորովհետև—

— կոմունատական պարտիաքն եր նա...

— հայ կյանքում, վորպես մարքսիստ հեղինակ—առաջինն է...

— վողջ կովկասում—նախկին մարքսիստ ժողպանիայից հետո թեորեթ չերկրորդը...

— պատվավոր տեղ պիտի բռներ նաև ռուսական մարքսիզմի ասպարեզում...

— նրա թեորեթիկական նշանակությունը ըստ հարկին դեռ չի գնահատված...

— հետևողական մարքսիստներից... հազվագյուտ ընկերներից է չեղել...

— շրջապատված ենք այն սերունդով, վոր թողել են Ռուբենիինները...

— նրա միտքը, նրա ցանած սերմերը ծլել են ու ծաղկել...

— հայկական մարքսիզմը, հայ բալշևիզմը, Հայաստանի կոմունիզմը այսօր ուժեղ է և ապրում է նաև շնորհիվ Ռուբենիի...

Կասկած չկա, վոր մեր որերին այս «տեղյաչի վաստորգը» բնավ կապ չունի ընդհանրապես լենինյան մարքսիզմի, բալշևիզմի, կոմունիզմի հետ, լինի նա «հայկական» թե «միջազգային»։

Նշանակալից է առանձնապես, վոր մեշչան Ռուբենիին նվիրված «Սորբրդային Հայաստանի» առաջնորդողը, անշնիկ ժողպանիային վորպես կատարյալ «մարքսիստի» տիպար ու չափանիշ է հանձնարարում մեր աճող սերնդին։

XVI

ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ՍՈՑԻՖԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ: «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ» ՑԱՎԸ

Շարունակենք բամբասագրքի թափահարումը, վորի փառած պատղները դրեթե բոլորը թափվեցին։

Թվում է, թե առանց այն էլ բավականին չերկար կանգ առանք,—թե էնավ ամբողջապես չսպառվեցին բոլոր հարցերը—«ազնիվ բարեկամային» աջակցությամբ և «արդար վաստակ» թուրքական լիրանների ու ամերիկյան դոլարների գաղտագողի արտահանությամբ հեռավոր Ղազար կղզու վանական խուցերից լույս աշխարհ ընկած ողիոզ հեղինակի «պատմական», (իսկապես վոր այսուհետև պատմական այդ) բամբասագրքի վրա։

Այդ բամբասագիրքը հյուսված է հակահեղափոխական հեղինակին հատուկ գծերով, վոր վաղուց արձանագրել է մեր աննման Ստ. Շահումյանը նրա—այդ ողիոզ հեղինակի մի այլ բամբասագիրքը վերլուծելիս.—

«Դ. Անանունը չի կարողացել ազատվել լալկան տիրացուական վոգուց ու վոճից, վոր այնքան հատուկ է հայ հրապարակախոսության»*)։

Ինչպես խաղաթղթից կառուցված անհիմն մի անակ, քննական-վերլուծական մի անշնչան հարվածով, այսօր փլվում է նաև պատմական ծառայության հիպոթեզը, ժառանգական նրության մխիթարանքը՝ Դաշնակցության և նրա սոցիալիստական վարիանտ ապեցիֆիզմի համար։

Բայց վոր եղից են սկիզբ առնում մեռած-կորած, իրենից չերբեք վոչինչ չներկայացրած այդ հակահեղափոխական խմբակի նման վոռնձգությունները։ Տասը տարի առաջ արդեն գրի չեն առնված կեղծարարության ու սուտիբրության դրդապատճառները «հայ իրականության» ամենից հեղինակավոր բալշևիկ գրչով.—«Խոսելով 1905 թվին և նրանից առաջ հայկական

*) Տես՝ «Պայքար» № 33—1916 թ., Թիֆլիս։

կյանքում չերևան չեկած նոր հոսանքների և ազդեցությունների մասին, նա վոչ մի խոսքով չի նշում այն ազդեցության մասին, վոր ունեցել է հայկական կյանքում համամասսայական մարքսիստների կուսակցությունը։ Բայց լռության տալով այն գործը, վոր կատարել են այդ կուսակցությունը, ինքը ընդհանրապես և նրա դրոշի տակ պայքարող հայ մարքսիստները մանավորապես,—Դ. Անանունը պարծեցողությամբ հայտնաբերում է իբրև «խոշոր պատմական չերևույթ» հայկական կյանքում, վոր 1904 թվին առաջ է չեկել մի նոր «կուսակցություն»—«армянская соц.-дем.-раб. партия»!

Հրատապ է, վոր այն միջոցին, չերբ համամասսայական մարքսիստների շարքերից բազմաթիվ ինտելիգենտներ ու բանվորներ լցրել են տարիների ընթացքում բանտերն ու այժմ էլ տառապյալներով լիքն են տաժանակիր աշխատանքների դատապարտված և հավիտյան Սիբիր ուղարկված,—այդ միջոցին վոչ ժանդարմները և վոչ էլ պրոկուրատուրան չեն կարողացել՝ խոշորագիտակի մեջ իսկ՝ նկատել «հայ ս.-դ. կազմակերպության» գոյությունը, վորպեսզի գոնե մի հատիկ ձերբակալություն տեղի ունեցած լիներ այդ «կազմակերպության» պատկանելու համար։

Յեվ Դ. Անանունը անհրաժեշտ է համարում տեղեկացնել աշխարհին այդ կարևոր պատմական «կուսակցության» մասին, այն էլ փոխելով նրա նախկին ավելի համեստ «կազմակերպություն» անունը։

Այդ նշանակում է, վոր մարդիկ այրվում են ըեկլամի և շատ շատ պում են մտնել պատմության մեջ*)։

Կարծես ողիոզ հեղինակի այսօրվան նոր բամբասագրի համար լինեն գրված մեր ընկ. Ստ. Շահումյանի այս անջնջելի տողերը։

Այստեղ էլ վերջակետ դնենք ռեկլամի ու «պատմության» համար ձեռնարկած կեղտոտ գործի մեր վերլուծականին։

*) Տես՝ «Պայքար» № 33. 1916 թ., Թիֆլիս. Ստ. Շահումյանի հոդվածը (տարագրված միայն Շ. տառով)։

XVII

ՄԱՐՔՍԻԶՄԸ՝ ԲԱԼՇԵՎԻԶՄՆ Է ՅԵՎ ԲԱԼՇԵՎԻԶՄԸ ՄԻԱԿ ՄԱՐՔՍԻԶՄԸ: ԼԵՆԻՆԻԶՄԸ ՅԵՎ ԼԵՆԻՆՅԻՆԵՐԸ ՄԻԱՅՆ ԱՊԱԶՈՎՎԵՑԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՆԱ՛ՅԵՎ «ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄԵՋ ՅԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏՈՒՄ

Յեթե ուզենք մի խոսք քաշել Հոկտեմբերյան հեղափոխության Սբարատյան դաշտում ամրապնդվելուց հետո անցած պայքարին,—նոյեմբերի 29-ից մինչև մեր որերը, փետրվարի 18 դաշնակ-սպեցիֆիկյան հակահեղափոխությունից՝ մինչև խորհրդային իշխանության մոտալուտ տապալումը,—յեթե մանրավորապես փորձենք մեզ հաշիվ տալ «հայ իրականության» ջախջախված հակահեղափոխական հոսանքների վերջին 6—7 տարիների դավադրական ոտնձգությունների մասին,—մենք չենք կարող չարձանագրել այն անհերքելի փաստը—

— թե՝ հակահեղափոխությունը (որ հայկական իրականության մեջ ասել է միայն դաշնակիզմ) իդեոլոգիական վորոնումներ և կատարում ներս սողալու մեր շարքերը իր սոցիալիստական վարիանտ սպեցիֆիզմի դիմակի տակ.

— թե՝ հակահեղափոխությունը փորձում է սպրդել խորհրդային իրականությունը և դերք բռնել մեր դեմ՝ սոցիալիզմի դաշնակցական վարիանտ սպեցիֆիզմի միջոցով։

Տասնյակ տարիներ առաջ, տասնիվեցնյան ռեակցիայի հենց սկզբի որերին (1907—8 թ.) հիմնավորապես քայքայված սպեցիֆիզմը, որ այնուհետև ապրեց կամ լիբերալ «Մշակի», կամ դաշնակ «Հառաջ»-ի (Յերևանի) կյանքով,—մինչ-խորհրդային Անդրկովկասում՝ Բագու, Թիֆլիս, Յերևան տատանվել էր մարքսիզմի «իդեալական» ներկայացուցչությունը։

Ինչպես մենք մի այլ տեղ նկատել ենք*), առանց իրենց հատուկ քաղաքական ուժի, քաղաքական բանակ ներկայացնելու, խայտառակ Բախշին, ողով Դավիթը և ևլի մի յերկու դեկլասե յեղած ինտելիգենտ փորձում էին ծախու ուղեցույց լինել մի կողմից դաշնակցության, մյուս կողմից հայ բուրժուազիային՝ հաշտարարելով հերթով թե մեկին և թե մյուսին իրենց պատակարգային շահերի թե դիտակցությունը, նախապատրաստելով նրանց յերկուսին միատեղ բալշևիզմից սպառնացող վտանգը։

Անթիվ անհերքելի փաստեր ու անհերքելի վկայություններ—վորոնցից մենք հազիվ մի քանիսը միայն բերինք վերը դաշնակ-սպեցիֆիկյան միության մթերանոցից—հաստատում են այս ճշմարտությունը։

Բախշականության ու ռուբինիզմի—վորոնց մեջ մագաչափ անգամ տարբերություն չկա—աննկատ ու անպատիժ վերածնությունը՝ վորպես «հեղափոխական մարքսիզմի». բախշականության ու ռուբինիզմի—վորոնց դեմարից հյուսվում է սպեցիֆիզմը—հակադրումը լենինիզմին ու նրա «հայկական» արտահայտություն «շահումյանիզմին»,—ինքնին արդեն մի չափազանց հանդուգն վոտնձգություն և, անթուլատրելի սուտ, վրդովեցուցիչ խարդախություն, վոր մեր որերին ավելի նշանակություն ունի՝ քան սոսկ «պատմական»,—ինչպես սխալմամբ կարծում են անիրազեկները։

Մեր նոր սերնդին, ամող կոմունիստական յերիտասարդությանը որը ցերեկով այսոր հանձնարարել, վորպես «կոմունիստական պատրիարք», «Հոկտեմբերի մրրիկի առագաստ» այդ առաջին կարգի հակա-Շահումյան (վոր բալշևիկներիս հատմար ասել և դերազանցապես հակալենինյան ու հակահեղափոխության գործիչ) Ռուբինիին—կնշանակե սոսկ իր սեփական անանկության տակ։

Այսոր, յերբ մեր անսրինակելի վ. կա. պա. բ.ն մեր լենինյան շարքերից վերից-վար պահանջում և բալշևիկյան իսկական կայունություն, պահանջում և կոմունիստական անշեղ պատկերացում, պահանջում և լենինյան կուռ պիտակություն,—յերբ կոմունիստական կազմակերպությունը տատանումներից վերծ պահելու համար չի խնայվում անգամ կոմիտեների նախագահը...

— Ատացեք, խնդրեմ, ձեմ ջրազացին և ջուր ածվում՝ և ձեմ հացին յուղ քսվում, յերբ շատ ուշ է «ծուռը դնել» և հանձնարարում են մեր յերիտասարդ գվարդիային «ծուռը դնել» պիտակնած սպեցիֆիզմի վտղորմելի պիտակի առաջ։

*) Տես՝ մեր «Փիգուրա ողլոզա»—«Մարտակոչ», 1923 թ.,

«Ազնիվ բարեկամային» խնդիրներ չեն սրանք և վա՛չ էլ Լազարյան Ճեմարանի աշակերտական հիշողություններ—ա ն ա ս ա վ ա ր ի անուրնելու...

Յեթե իսկապես բալշևիկյան տ ր ա մ ա դ ի ք ա ն «պահանջում» է «ծունր դնել» վորևե շերմի առաջ, ապա մենք ունենք մեկից ավելի մեր սեփական «կուռքերը» Հոկտեմբերյան հեղափոխության դրոշակակիրներից—Լենինից սկսած մինչև Սա. Շահումյանը: Փոխառության կարիք չենք զգում Դաշնակցությունից ու նրա վիժած մեշչան խմբակից, վորքան էլ վերջինս վարպետ լիներ ռեկլամի ու ինքնահանձնաբարական արվեստում: Ջմոռանանք նաև նայնպես նկատելու, վոր չենք մտաբերելու նաև վորևե մեղսևիկի, մանավանդ վոր մենք մի առանձին մեծ կարծիքի չենք ժորժանթալի հեղափոխականության ու մարքսիզմի մասին...

Ք յ ա ո ա ր խ ա յ ի ն - պագրոմային արտիցիալի վերածնումը,—վոր փորձում է պատվաստել կարմիր գծից դուրս շպրտված դաշնակցությունը սպեցիֆիզմի որնությամբ—պատասխանատու և միանգամայն անհաջողության:

Յեթե կոմունիզմի թշնամիներին, բալշևիզմի հակառակորդներին հարկավոր է ռուբենիզմ ու բաշխիականություն,—ապա մեզ անհրաժեշտ է լենինիզմ ու «շահումյանիզմ» կռվելու չերի- տասարդ դավրովային այն պողպատ բռունցքը բալշևիկյան, վոր միշտ պատրաստ է չեզոք նորից ու նորից իջնելու—մաքով մեշչան՝ գործով բանվորության դավաճան—այն բոլոր հոտանքների գլխին, վորոնց ջախջախումով Սա. Շահումյան, Սուրեն Սպանդարյան և մյուս լենինցիները մեզ ապահովեցին հատկապես հայ իրականության մեջ պրոլետարական ռեժիմի հաստատումը:

Մարքսիզմը մեզ համար բալշևիզմ է և բալշևիզմը մարքսիզմ: Մենք չենք թույլ տա իրար հակադրելու այդ հասկացողությունները:

Կոմունիզմի և դաշնակիզմի, լենինիզմի և սպեցիֆիզմի, «շահումյանիզմի» և բանշի-ռուբենիականության մեջ պատմությունը կատարել է իր ընտրությունը: Յեվ այդ ընտրությունը չեզոք և մեր և հակառակ՝—զարձյալ ըստ մեր աննման ընկ. Սահակյանի կասիկ արտահայտության («Պայքար» № 39—1916).—

— կ ի ս ա - մ ա ր ք ս ի ս տ ն ե ր ի,
— ա ռ ա - մ ա ր ք ս ի ս տ ն ե ր ի,
— վ ա չ - մ ա ր ք ս ի ս տ ն ե ր ի...

այսինքն՝ հակառակ բոլոր հակա-լենինցիների:

Յեվ վայ նրան, ով չի կարողացել դեռևս իր ընտրությունը կատարել հեղափոխության ու հակահեղափոխության մեջ...

Թիֆլիս, 4/II 1927 թ.

ԲԱԼՇԵՎԻԿՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՇՉԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԱՆ ՄԻ ՆՄՈՒՇ*)

I

Սիրելի ընկեր!

Բարի յեղեք կարգադրելու «Յորերդային Հայաստան»-ին ապագրելու ձեր «Բաց նամակի» պահանջած պատասխանը: Այն հանգամանքը, վոր պատասխանս նախապես ուղղվում է ձեզ՝ հնարավորություն տալով հոդվածիս անմիջապես կցելու նաև ձեր պատասխանը, ինձ հուշս է ներշնչում, թե դուք անձնապես ձեզ համար անհարմար չեք զանի նրա առանց աղճատումների ու ապակողմնորոշման նույնությամբ լույս աշխարհ տեսնելու:

Ձեր պատասխանի անմիջական կցումը հոդվածիս կունենա նաև այն առավելությունը, վոր ամեն մի դիտակից ընթերցող-ընկեր այդպիսի հակադրությունից պարզորեն կտեզրակացնի, թե—

— *Ի՞նչ եմ ասել յես և ի՞նչ եմ ասում յես.*

և թե—

— *Ի՞նչպես եք պատասխանել յես և ի՞նչպես եք պատասխանում դուք:*

Ինդրում եմ հոդվածիս վերջին մասը (post scriptum-ը), ինչպես նաև ներկա յերկտողը տպագրել պետությամբ—8-ով և պահպանել ընդգծումները:

Պատասխանս մի վոտք ուշացավ Աբասթումանում հայերեն գրամեքենայի համ արտագրիչներ չլինելու պատճառով:

II

ՀԱԿԱԲԱԼՇԵՎԻԿՅԱՆ ԲԱՆԱՎԵՇԻ ՄԵԹՈԴ

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանին խիստ պայթացրել և մեր անհամաձայնությունը և միջամտությունը «Մարտակոչ»-ի էջերից վիճաբանական «Նորք»-ի բալշևիկյան-կուսակցական պատմության նեղլուսային ընթացքին, մանավանդ վոր մենք հարմարման ու խեղաթյուրման գործին, մանավանդ վոր մենք հարմարման ու խեղաթյուրման գործին,

*) Բագվի «Հայաստան» ժողովածուի խմբագրությունը կցել էր հետևյալ խմբագրական ծանոթությունը.—«1923/24 թ. թ. մեր մամուլի էջերում բալշևիզմի և սպեցիֆիզմի, «Նորք»-ի և «Մարտակոչ»-ի մեջ ծագած «վավերագրային տարաձայնությանը» միջամտեց «Նորք»-ի խմբագիր ընկ. Աշոտ Հովհաննիսյանը «Յորերդային Հայաստան»-ի էջերից Ե. Սուրենին ուղղած մի «Բաց նամակով», վորի պատասխանը իր ժամանակին հրաժարվեց զետեղել նույն

կավոր հարգանքով չէինք խոսել—ինչ վէճ մի այն մեր իրա-վունքն էր, այլև ուղղակի պարտականութունը կուսակցական—հայկական իրականութեան մէջ մինչ-Հոկտեմբերը գործող ամեն կարգի ու գույնի սոցիալիստական հակահեղափոխական հոսանքների, և մասնավորապես ընկ. Աշոտի սրաին գուցե դեռևս հիշողութիւններով ամփոփան մոտ՝ վոզոբմելի սպեցիֆիզմի մասին:

Կարծես Դավիթբեկյան շրջանի անվախ ասպետ, նա հրապարակ է նետվել «Խորհրդային Հայաստան»-ի № 163-ում, ու փոխանակ ըստ եութեան հերքելու—ինչ այնքան էլ հեշտ չէ—մեր անհերքելի պնդումները, ցույց տալու թէ՝ ինչ հարցերում և կետերում մենք սխալ ենք պատկերացնում բոլշևիզմի ծագումն ու եութունները, զարգացումն ու նվաճումները հայկական իրականութեան մէջ մեր գարու առաջին տասնեակին,—մատնանշելու, ո, իհարկե, վոլոս չափազանց հեղինակավոր մարքսիստ և վո՛չ-պակաս հեղինակավոր պատմաբան, հեղափոխական կոմունիզմի դեմ մեր աննկերելի մեղանչանքները (այսպիսի թեթև սպրդումներ?! պատահում են վիճեգրեսային հանդիսանեներում, վորոնք յերկար ամիսներ ունեն մտածելու-խմբագրվելու),—անձնական «անվանարկութեան» մի անաջող ժեստով փորձում է ասեղային ծակոցների անցողական եֆեկտ գործել՝ հույսը դրած ընթերցողի տգիտութեան կամ անիրազեկութեան, գուցե և Աստաֆյան փողոցի բամբասասերների վրա: Փորձում է մասնավորապես խուսափել մեր—այսինքն Ե. Սուրենի ու «Մարտակոչի» և ընկ. Աշոտի ու իր վիճեգրեսային «Նորք»-ի—տարաձայնութեան տարակարծիքութեան եութեան վերլուծման ու լուծման շիտակ և անսայթաք ճանապարհից:

Յեվ վորպեսզի ամբողջապես ու հիմնավորապես ընդգրկած լինի մեր լրագրական բարքերին միանգամայն խորթ ու ոտարոտի այդ ուղին, ընկ. Աշոտը չերմորեն գերադասում է խորհրդային-կոմունիստական իրավակարգում վաղուց արդեն մոռացված՝ դեպի մամուլին հատուկ ձևեր՝ («Բաց նամակ», պլխոտիր «Ձեր», «կենսագրական նոթեր» և այլն), վորոնց ա՛յնպիսի մարդված ու

թեթևը: Ի նկատի ունենալով արձարծված-խնդրի չափազանց կարևոր նշանակութունը բալշեվիկյան պատմագիտութեան համար, տալիս ենք այստեղ ընկ. Ե. Սուրենի պատասխանի եական մասը, բայց թողնելով նրա post scriptum-ը (IV-րդ հատվածը), թեև վերջինս իր ծավալով հոդվածի մի յերրորդն է կազմում և պակաս հետաքրքիր չէ մեր կուսակցութեան պատմութեյան համար: Բայց հոդվածի այդ մասը կհանձնվի հատկապես արխիվին»:

ակտիվ ներկայացուցիչն եր Շուշվա պատվավոր քաղաքացի՝ իսկ հանդուգնել Համբարձում Առաքելյանը:

Յեթե իսկապես հասարակական-կուսակցական վորևե հետաքրքրութուն ելին ներկայացնում ընկ. Աշոտի կամ ընկ. Ե. Սուրենի կենսագրական նոթերը՝ պարզելու—որինակ—մեր յերկուսիս բեղմնավոր կամ անբեղմն, բծավոր կամ անբիծ անցյալը, անգամ մեր հորն ու մոր և պապերի зачатие-ի արմատները վոչ մեր պատշաճավոր մարմինների առաջ, այսինքն՝ ներքին կարգով,—այլ անհրաժեշտ եր անել հրապարակով, պոցում,—ապա անգամ այդ նպատակին հասնելու՝ բավական կլիներ ընկ. Աշոտին հենց նույն «Խորհրդային Հայաստան»-ի էջերից հրապարակ հանել մեր յերկուսիս ինքնակենսագրութուններ, վոր ներկայացրել ենք իր ժամանակին մեր կուսակցութեյան համապատասխան որգաններին: Ամեն մի ընթերցող ընկեր ինքը կզտաներ թե մեզանից ո՛վ է անփութ կամ կրելովի գորտի նման փքված հանձնարարում ինքն իրան:

Ինքնակենսագրութունների այսպիսի հակադրութունը գուցե ավելի պերճախոս ու ոտանավոր կերպով ապացուցեր բոլորը, ինչի ձգտում է ընկ. Աշոտը իբր «իր» «Բաց նամակում», այն է՝ վոր ինքը գրեթե (միայն գրեթե) «հին գվարդիա» է և մենք էլ նույնպես գրեթե «կոմսոմոլ», վոր Ե. Սուրենը ամբողջապես Հոկտեմբերի արդյունք է կոմունիստական-սոցիալիստական իրականութեյան մեջ, իսկ ընկ. Աշոտը՝ մոր արգանդում արդեն 1906 թվից լենինյան-մարքսիստ (sic)—ինչպես վոր այդ ապրարում է միամիտ ընթերցողներին Խորհրդային Հայաստանի Պետհրատի պատ. եժանագին որացույցը՝ չենք հիշում վոր հանդիսավոր որվան թերթիկի վրա:

Մի որ մենք անխուսափելիորեն կգանք այն յեզրակացութեյան, թե պետք է մեր ինքնակենսագրութունները տպագրութեյան հանձնել, վորպեսզի ընկ. Աշոտը հարկադրված չլինի նման ան «աշխատանքներ» կատարելու—և այն էլ մեր կուսակցութեյան խորթ ու թշնամի խորհուրդատուների ոգնութեյամբ և վազելով իջնելու մինչև մեշչանական մամուլի մակարդակը և Աստաֆյան փողոցի պորտաբույծների բամբասախրութեյունը:

Առանց մտադիր անդամ խուսափելու անձնական վորևե հարցի մինչև վերջ հրապարակային լուսաբանութեյունից, թո՛ղ ներվի մեզ հիշեցնել ընկ. Աշոտին, վոր մեր կուսակցական, այսինքն բոլշևիկյան մամուլի

արագիլյան թույլ չի տալիս նման խնդիրներով զբաղեցնել մեր թերթերի էջերը։

Մենք շատ ավելի բարձր կարծիքի ենք, քան ընկ. Աշոտը Ազգային Հայաստանի կուսակցական ինտելիգենցիայի ու մասսայի մասին, վորպեսզի մի բոլոր թույլ տանք մեզ մխիթարվելու, թե Շուշվա Աքսելյաց լեհեղեցու տերտերի տղայի լացքը Թիֆլիսի Վանքի լեհեղեցու տերտերի տղայի հետ,—թե ընկ. Աշոտի որինակ աված մեթոդով լրագրական տուրնիրը վոչ և շահեկանություն կարող է ներկայացնել մեր կուսակցության, բանվոր-գյուղացիական իրավակարգի, և ընդհանրապես ընթերցողի համար։ Թևե՝ չենք չերաշխավորում և դժվար է չերաշխավորել վինեգրեթային «Նորք»-ի և նրա անվաստակորեն ինքնագոհ խմբագրի ճաշակի համար, քանի վոր այդ ճաշակի մի շատ տիպիկ նմուշ մեզ հրամցվեց «Ազգային Հայաստան»-ի էջերից—մեր կուսակցության պատմության մեջ աննախընթաց կասկածելի գինակցությամբ—հենց հանձին ընկ. Աշոտի այնքան ինքնահանձնարարող «Բաց նամակի»։

Այս տարրարական փոքրիկ հանգամանքը պարտավոր չեր անտեսել ընկ. Աշոտը, վորին վիճակված է բարձր բաղտ նորընծայի կենդանի որինակները տալու։

Պարտավոր չեր անտեսել անգամ այն դեպքում, եթե սովորական մահկանացուներից վորևե մեկը—մի բոլոր չենթադրենք—մեղանչած լիներ։

— Ջե՞ վոր ինչ ներելի է յուլերին, ներել չե Յուլիաներին—ասում է լատինական առածը...

Բայց անցնենք բոլոր առաջ բուն խնդրին, մեր անհամաձայնության ու վեճի էությանը, վինեգրեթային «Նորք»-ի և «Մարտակոչ»-ի մտեցումին դեպի բալշևիկյան «պատմական» հարցերը։

III

ԲԱԼՇԵՎԻԿՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԴԻՏԱԿ ԿԱՄ ԴԻՏԱԿՅԱԿԱՆ ՏԵՂԱԹՅՈՒՐՈՒՄ

Թվենք չարաբաստիկ «վավերագրի» շուրջը և առիթով մի կողմից՝ ընկ. Աշոտի ու իր վինեգրեթային «Նորք»-ի և մյուս կողմից՝ մեր ու «Մարտակոչ»-ի մեջ ծագած բանավեճի կետերից գեթ մի քանիսը։

1. Բալշևիկյան պատմագրության նպատակը և մեթոդը։—Պատմական վավերագրերի տպագրությունը բալշևիկյան որգաններում—թեկուզ այդ որգանները լինի ըստ Նալբյանի չերկրի տաղանդավոր բանաստեղծի շատ պատկերավոր ու ճիշտ բնորոշման վինեգրեթային տիպի մի հանդես՝ այն ժամանակ միայն կոմունիստական նպատակներին համապատասխանող արժեքն ու նշանակությունն ունի, չերբ այդ վավերագրերը հրամցվում են ընթերցողի ուշադրության—

— կամ (1) առանց բալշևիզմին անտարբեր, խորթ, կողմնակի, ոտար, ուր մնաց թե ակնհայտ թշնամի մեկի կասկածելի մեկնաբանություններով։

— կամ (2) ուղեկցում են բալշևիկյան պայքարի անցյալ հեռանկարները ճշտությամբ, վոր մեզ համար ասել է թե՝ հոդուտ Հոկտեմբերի արմատները հիմնավորող լուսաբանություններով։

Հոդուտ Հոկտեմբերի չենք ասում, վորովհետև մեզ հայտնի չե մեր ժամանակի վոգուն համապատասխանող բալշևիկյան պատմատեսության ուրիշ մեթոդ—«սուբեկտիվ» թե օբյեկտիվ—թևե՝ բալշևիկյան-մարքսիստական պատմագրությունը չենք տիվ—թևե՝ բալշևիկյան-մարքսիստական պատմագրությունը չենք ուզում հասկանալ «Արարատ»-ի էջերից, վանական պեղումների թուղթերում, վինեգրեթային «Նորք»-ից մեզ հրամցվող Թոնդրակեցոց կոմունիզմի (Լեոի հոդվածը) «պրինցիպների» վրա։

Բայց այս կարծիքի չե հայկական պատմատեսության մոնոպոլիզացիայի ձգտող ընկ. Աշոտը և նրա պրակտիկան վինեգրեթային «Նորք»-ում։

Գուցե մենք սխալվում ենք?!

Ջենք հասկանում «օբյեկտիվ պատմագրության» արժեքը?!

Թող բարի լինի այդ դեպքում մեզ ու ամենին բացատրելու վինեգրեթային «Նորք»-ի մեթոդոլոգիական պրիոմները ընկ. Աշոտի մայր աթոռի արխիվներում ու խուցերում չերկարատև «մարքսիստական» ճգնումների և զրույցների «գիտական» հայտնություններ։ Բայց խնդրում ենք հորս չհայհոյել։ Չայրական այս-տեղ գործ չկա։

2. Բողոք բալշևիկյան պատմության ապավազումի դեմ։—Վինեգրեթային հանդեսի № 3-ում հրապարակ ենք նետված այն միանգամայն չերբորդական ու չորրորդական արժեքի պատահական «վավերագիրը» վոչ թե իր ինքնարժեք առավելություն-

նների կամ առանձնահատկությունների պատճառով (պետք է հուսալ, թե մեր արխիվներում կգտնվեն բալշևիկյան պատմության ու որքանի համար շատ ավելի կարևոր ու հրատապ, արժեքավոր ու նշանակալից դոկումենտները, և նրանք բոլորը զոհ չեն գնացել հակահեղափոխության չարամիտ հրդեհին),—այլ նրա «անմեղ», կուսականին չափ անմեղ ծանոթությունների համար, հյուսված մարդու մեկի ծախու գրչով (թո՛ղ ներեն մեզ ընկ. Աշոտը և նրա պես մտածողները այդ «անձնական վիրավորանքը»), մի մարդու, որի ճակատին շիկացած շամփրով և վո՛չ մի ուղղագրական ռեֆորմի չենթարկվող այբուբենով դրոշմված կա ու կմնա վառիչ ութողոսը։

Այն փաստը, որ որը ցերեկով այլանդակվում է,—միանգամայն մտածածին, չեհին մաքով, հետևողաբար, ցինիկաբար,—մեր հեղափոխական շարժման պատմությունը, ներկա դեպքում մեզ վերագրվող (թեև մեզ չպատկանող) մի պատահական «վերագրի» ոգնությամբ—մեզ՝ Խորհրդային Անպրկովկասի կոմունիստական կազմակերպության շարքային անդամներիս մեկին, «ներքին թուրքիս» իրավունք էր տվել՝ նույնպես հրապարակով՝ վերականգնելու իրերի ընթացքի իրական պատկերը, խոսել վիճեցնել «Նորք»-ի էջերից «պետական» հավակնոտությամբ և «պատմության» քողի տակ սառնորեն կատարվող խեղաթյուրումների մասին։ Ընկ. Աշոտը բնավ չի հակացել մեր հոդվածը, չեթե կարծում է, թե մենք լուրջ, այսինքն բալշևիկյան-պատմական նշանակություն ենք տալիս անմաքուր ձեռքերով վինեգրետային «Նորք»-ին մատակարարվող «վավերագրերին» ընդհանրապես։

Իրավունք ունե՞ինք ժընևի մեջ քսան տարի առաջ տեղի ունեցած անցքերի մասին արտահայտվելու—նույնիսկ անկախ նրանից թե՝ «վավերագրերի» հեղինակը ընկ. Աշոտը լեհած լիներ թե ընկ. Սուրենը կամ իքսը,—անկախ անգամ նրանից՝ «վավերագրի» մեջ ակնարկած անցքերի դերակատարներից մեկը մենք լինելիք լեհած թե վոչ...

Իրավունք ունե՞ինք արտահայտվելու հակառա՛կ սպեցիֆիզմի ու մենշևիզմի, թե մահացու մեղք ենք գործել մեր կուսակցության պատմության ու Խորհրդային Հայաստանի պրոլետարիատի դեմ՝ բալշևիզմի ծագման ու զարգացման («հայ իրականության» մեջ) մի եջ թերթելով մեր ներկա տասնյակ առաջ,—պատմության մի եջ՝ որը թեև չի համապատասխանում սոցիալիստական հակահեղափոխության հայացքներին ու

նպատակներին, բայց վորաեղ չերվում են Շահումյանի և Կոնունյանի (պարձյա՛լ շուշեցի, ընկ. Աշո՛տ!) կատարած խոշոր գերը արտասահմանյան ուսանողության մտավոր աղատագրման գործում և մենշևիզմի ու սպեցիֆիզմի (մանավա՛նդ սպեցիֆիզմի) վորմնելիությունը և անանկությունը արդեն չերկու տասնյակ տարի առաջ...

Թո՛ղ բոլե առաջ շատպի ընկ. Աշոտը հայտնել «անգիտակ» հրապարակին իր չափազանց «կոմպետենտ» կարծիքը՝ կուսակցական վո՛չ-պատմաբան ընկերների նման «պատմական» հարցերի բնագավառում ունեցած իրավունքների սահմանների մասին։ Գո՛ւցե մենք՝—պատմատեսությունասիրության վո՛չ-բարձր քվալիֆիկացիայի «սիրողներս» (ամատորներս), վորոնք հիմնավորապես չենք անցել վանական դպրության շկոլան և ծանոթ չենք «Արարատ»-ի պատմագիտական մեթոդներին՝ ընդով իրավունք չունե՞նք վինեգրետային «Նորք»-ի «վավերագրային բաժինը» թերթելու...

Թո՛ղ շատպի ասել, բայց խնդրում ենք հորս չհայհոյել։ Հայրական գործ չկա այստեղ!

3. Ինչպես և խեղաթյուրվում պատմությունը վինեգրետային «Նորք»-ում։—Այսոր ամեն մի կոմսոմոլ, անգամ լենինյան կոչի դեռ չմշակված կանդիտատ գիտե, վոր Կոմունիստական կուսակցության (նախկին Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատիայի) և «Բունդի» մեջ «տարաձայնություններ» սոսկ «կազմակերպչական» չեն չեղել։ «Հրեական սպեցիֆիզմը» 1903 թ.,—կան սպեցիֆիզմը,—գուցե և ավել իր սոցիալ-շովինիստական ժանիքները հայտնի նացիոնալիստական լոզունգով, թե.—

— հրեյա բանվորներ, միացեք մի այն ազգային սոցիալ-շովինիստական կազմակերպություններ շուրջը և հեռո՛ւ կացեք միջազգային կազմակերպություններից։

Այսպե՞ս են պատկերացնում իրերի դրությունը բալշևիկ պատմագիտությունը, այդպես է պատկերացնում գոնե Յերրորդ Ինտերնացիոնալի նախագահը՝ իր «կուսակցության պատմություն» աշխատության մեջ, գրված հատկապես ոպորտունիզմի և հեղափոխական մարքսիզմի չերկու տասնյակ տարիների պայքարին անհրաժեշտ նոր ընկերների համար, թեև չեր խոնգարի ընկ. Աշոտին էլ ժամանակ առ քամանակ—մանավանդ

վանդ վինեգրեատային «Նորք»-ի վավերագրային բաժինը խմբագրելիս—թերթել այդ տաբրական ձեռնարկը։

Ընկ. Զինովիևը գրում է.—

«Յերկրորդ Համագումարին սուր կերպով բոնկաց տարաձայնությունը բալշևիզմի և մենշևիզմի մեջ։ Տարաձայնության առաջին կետը՝ ազգային հնդիրն եր, ուրիշ խոսքով՝ սեր վերաբերմունքը դեպի «Բունդը,» վորը պատմության մեջ մաել և վորպես ոպորտյունիստական և շովինիստական։

«Բունդը» իր հաոկությունները ցուցադրեց ամենայն պարզությամբ ազգային խնդրում։ Նա պահանջում եր, վոր նրան ճանաչեին վորպես միակ ներկայացուցիչը ամբողջ Ռուսաստանում ապրող հրեական պրոլետարիատի։

Մենք չենք կարող համաձայնել մեր կազմակերպությունների չլսամանը ազգային կուրիանների, վորովհետև մենք միանական միջազգային կուսակցություն ենինք, վոր կռիվ եր մղում մեջազգային կապիտալի միասնական ֆրոնտի դեմ։

Բայց «Բունդը» առաջին անգամ մերկացնելով իր ապագա սոցիալշովինիզմը, կարուկ պահանջում եր բանվորների չլսաումը ըստ ազգությունների, և առանձին ազգային կազմակերպություններ. ունենալու իրավունք։

Թվում է թե վեճը կազմակերպչական եր։ Բայց երբեմն վեճը վորոշներում եր քաղաքական շատ կարեվոր տարաձայնության, վոր իր մեջ պարունակում եր ապագա դիսկուսիաները ազգային հարցի և ինտերնացիոնալիզմի մասին։

Համաձայն են այս տեսակետների հետ մեր շատ-շատերը հետևինակավոր մարքսիստ ու պատմաբան ընկ. Աշոտը և նրա quasi-բալշևիկ վինեգրեատային «Նորք»-ը, յերբ մենք նույն չափանիշ կիրառում ենք հայկական իրականության մեջ և «զարաբատյան բունդիզմի» հանդեպ?!

— Վո՛չ, համաձայն չենք։

Բացեք վինեգրեատային հանդիսի № 3-ը։ Նա մի այլ «վավերագրի»,—Նո՛ւնքան պատահական ու անհնշան, և նույնպես միայն «անմեղ» ծանոթություններ համար հրապարակ նետված,—Լոնդոնից «Մշակ»-ին ուղղած ինչ վոր թղթակության տակից կարդում ենք, թե 1907 թվի Լոնդոնի կուսակցական համագումարին մասնակցելու ճանապարհ ելնն ընկել մեր յերևելի և աներևույթ սպեցիֆիկների կողմից (իհարկե լսում ե, վոր «Բունդի» մասին ցուցումով ու պրամներով) մեր սարսափելի «հեղափոխականները»,—բացվի կատելնի զավոդի գործավար Նարիման Տերղազարյանը՝ իր յեղբայր Ղազարի ու կնոջ յեղբայր Տիգրան Խանդանյանի հաճելի ընտանեկան ուղեկցությամբ,—Ռուսաստանի Սոց.-Դեմ. Բանվորական (այսինքն մեր) կուսակցության հետ

«ձուլման» մասին գործեր տեսնելու և գրելու (բերում ենք հիշողությամբ՝ Արաքսումանի գրադարան-ընթերցարանում վինեգրեատային «Նորք» չի տացվում).—

«Կազմակերպչական տարաձայնությունները Ռուս. Սոց.-Դեմ. Բան. Կուսակցության և Սեց.-դեմ. հայկ. կազմակերպության մեջ»։

Մեզ համար պարզ ե, վոր կամ բալշևիկյան պատմաուսումնասիրությունը և կոմինտերնի նախագահն են սխալվում (վերջինս, դե, հեղինակավո՛ր պատմաբան-մարքսիստ չե), կա՛մ վինեգրեատային «Նորք»-ի խմբագիր ընկ. Աշոտը, վոր առանց վերապահումների տպագրում և հակահեղափոխական մի վոզորմելի մեկի նման սուտ, միտումավոր ու կեղծ հայտարարություններ։

Թո՛ղ ասի մեզ սպեցիֆիզմի «պատմական արդարացումի» մեջ ա՛յնքան իրեն շահախնդիր ցուցադրող ընկ. Աշոտը,—բայց ասի առանց խուսափումների, էքիվոկների, սոփեստությունների և մանավանդ ընթերցողին հասկանալի վոճով—թե հայկական սպեցիֆիզմը ոպորտյունիստական ու սոցիալ-շովինիստական մի մանր-բուրժուական անհող վարժապետական-ինտելիգենտական հոսանք եր, թե վոչ։

«Գո՛ւց» մենք սխալվում ենք?!

Գո՛ւցե «անիրազեկ» ենք Թբիլիսյան «մարքսիզմի» վանական պարիսպներում կատարված «պատմափիսական» «լենինյան» խորացումներին?!

Գո՛ւցե անտեսում ենք Պեզ-ազբյուրյան «հեղափոխական» նվաճումները?!

Գո՛ւցե սպեցիֆիզմը—Բաշխի Իշխանյանի և tutti quanti «սոցիալիզմը»—բալշևիկյան մի վարիանտ եր (sic) «հայկական իրականության» մեջ, ինչպես վոր կուլիսներում պատրաստի սիրում են յերբեմն անմեղորեն հոլովել մութ տարբերը...

Թո՛ղ ասի ընկ. Աշոտը, առանց քաշվելու և ամոթխածության։ Спой светик, не стыдись!

Յեվ քանի վոր այս հարցի պատասխանից խուսափելու չե մեր ընկ. Աշոտը, թո՛ղ միաժամանակ պարզի մեզ նաև, թե ուրիշ բան ու գործ չունեն բալշևիկյան պատմաուսումնասիրությունը ու վինեգրեատային հանդեսը և թե ո՞ւմ և ա՛յսօր հետաքրքրում սպեցիֆիզմի այդ «կարկառուն» դեմքերի ու դեպքերի վերհուշումները և «արդարացումները», վորտեղ փորձ և փորձում գաճաճ սպեցիֆիզմը ներկայացնել մեզ վորպես Ռուսաստանի հակապրոլետարական կուսակցության գրեթե «ախոյան», համենայն

դեպ՝ հետը «չափվող» ու «վաճքը ձգող» մի մարմին!? Կարծես մենք Մարսի վրա ենք ապրել և Բախչի Իշխանյանի ու Կ⁰-ի «ամբողջ գործունեությունը» անցած չլիներ վէչ միայն մեր ակնոցների տակ, այլև Բագվի տասնյակ հազարավոր պրոլետարների առաջ և այդ կարկառուն «հեղափոխական» ու «սոցիալիստ» մեշչանների ուրվականները դեռ այսօր էլ մեր շուրջը մանր մանելիս չլինեին։

Չե՞ վոր կասկածելի սոցիալիզմի ուրվականները կարիք չունեին «մարքսիստական» հանձնարարության, և վո՛չ մի հանձնարարություն չի կարող վրկել սպեցիֆիզմի հիմնավորապես թրջված քաղաքական բևեռացիան, վրկել անգամ վինեգրետային «Նորք»-ը և մանավանդ ընկ. Աշոտի թիկունքում կանգնած ձախու պրիչնների «վավերապրային» հանձնարարությունները։

Վինեգրետային «Նորք»-ի վավերապրային լաժնի ուղղակի պարտականությունն է լուշևիզմի գովքն անել և վո՛չ թե «ազնիվ բարեկամային» ծառայություններ մատուցանել «ազնիվ բարեկամներին»...

Ուղղակի պարտականությունը՝ հակադրվել լենինյան կուսակցության պատմության մեծությունը և վեհությունը մենշևիզմի և մանավանդ մեշչան սպեցիֆիզմի ամենքին այլևս ակնհայտ վոտրմելիությանը և անանկությանը։

Այսինքն՝ պարտականությունը արձանագրելու իակոբի ճշմարտությունը։

Թո՛ղ պարզի մի անգամ «Արարատ»-ի պատմական լաժնի ամենեն «մարքսեստա-լենինիստ» աշխատակիցը, թե վերջ ի վերջո վո՞րտեղ և ազատական որլևկով ճշմարտությունը»։

Բայց խնդրում ենք հորս չհայհոյել։ Հայրական այտեղ ընավ գործ չկա։

4. Յերկրորդ Համապատմաբի նշանակությունն և Բողդան Գնունյանի դերը։—Պատմությունը հոգուստ սպեցիֆիզմի ձգող վինեգրետային «Նորք»-ին մենք ուղղել էլինք և այժմ էլ պնդում ենք մեր ուղղության մանրամասնությունների վրա, վոր ըստնկի հայ ուսանողության մեջ սոցիալդեմոկրատական շարժումը ծայր էր ավել մեր կուսակցության Յերկրորդ Համապատմաբի ցնցող հարվածների տակ՝ 1903 թվի աշնանը՝ և լուշևիզմի հզեմոնիայի տակ։ Այդ շարժման ինիցիատորները չեղել են վո՛չ թե այս կամ այն՝ ըստնկում պատահաբար թափառող մենշևիկը կամ մանավանդ կիսապաշնակ սպեցիֆիկը,—ինչպես փորձում է կուսական անմեղությամբ խեղաթյուրել վինեգրետային հանդեսը,—այլ ընկ. Նազանավոր բալշևիկներ՝ Բողդան Գնունյանը (հայտնի Радин-ը) և անմահ Սահեյան Շահումյանը, ընկեր Լենինի дорогой друг-ը։ Մասնավորապես նկատել էլինք, վոր մարքսիստական հակա-«ջանքիստա» ուսանողական կրուժոկը,—վորի անդամներից մեկը լինելու պատիվը և անում մեզ անգամ վինեգրետային «Նորք»-ը, ուրևմն մենք և վերապահում անցքերին մատնահացող-ակտանատների բոլոր իրավունքները,—Բողդան Գնունյանի անխոնջ կառավդի ու համառ աշխատանքի գործն էր ամբողջապես, այո՛—ամբողջապես։

Ի՞նչ ուշի հակադրվու մեր պնդումներին ընկ. Աշոտը, թո՛ղ ասի, թեկուզ առաջ նետելով շնչավոր ու անշունչ, հեռավոր ու մոտավոր իր բոլոր բևեռվները, իր ամբողջ պիտակմարքսիստական համությունը և «Արարատ»-ի խմբագրատանը ամբարած պատմա-«լենինիզմը»?!

Շատ հետաքրքրական է իմանալ այդ յեզակի կարծիքը։

Բայց խնդրում ենք հորս չհայհոյել։ Հայրական ամենևին գործ չկա այստեղ։

5. Սպեցիֆիզմը՝ վորպես հրեական «Բունդ»-ի վիժվածք։—Վինեգրետային «Նորք»-ի մեզ վերագրած «վավերապրի» առթիվ նկատել էլինք, թե՝ սպեցիֆիզմը ամբողջապես «Բունդ»-ի ձեռաց գործ եր, վորը նման մարիոնետային «պրոլետարական»—թող ներվի մեզ այս անտեղի խոսքը—կազմակերպությունների միջոցով ուզում եր «բարոյական ճնշում» գործ դնել Ռուսաստանի Սոց.-Դեմ.-Բանվ. Կուսակցության վրա, փորձում եր իր հաշվենները առնել Ռուսաստանի իսուերոնացիոնալ կազմակերպության հետ։ Նկատել էլինք և շատ տեղին ու այժմ էլ չենք հրաժարվում,—մանավանդ վոր հորս հայհոյելով և Աստաֆյան փոդոցի արձագանքը հանդիսանալով՝ ընկ. Աշոտը դեռևս չատացուցեց մեզ հակառակը,—թե՝ հրեական հարուստ և ուժեղ «Բունդ»-ի մատավոր ու նյութական փշրանքներով եյին կերակրվում «հայկական Բունդ»-ի շուրջը խմբված՝ դաշնակցությունից փախած, բայց դաշնակցականիզմը ամբողջապես չմոռացած մի բուռը գավառական վարժապետներ,—թե սպեցիֆիզմը՝ ըստնկում մանավանդ՝ ուներ ընդամենը չերկու ագեպ (մեկը հիմնավոր «ջանքիստներից»),

վորոնցից առաջինը մինչև վերջին ժամանակները ծառայում էր Հայկոպի թե Արմենտորգի առևտրական բաժնում (Դ. Տեր-Ղազարյան), իսկ յերկրորդը՝ ինժեներ անզուգական Միքայել Բաղդասյանը, վոր իր մի շարք գեղեցիկ գործերի համար հարկավոր հաուցումը ստացավ Զեկայից Մոսկվայում: Բագվի և Դրոզնոյի բանվորները մոտից ճաշակել են այս սպեցիֆիկ պատուղի համը:

Ահա եյինք ու այժմ էլ պնդում ենք—վորքան էլ այդ զայրացնի և դուր չգա ընկ. Աշոտին—թե սպեցիֆիկ բառը ծաղրական խոսք էր հայ ուսանողության շրջանում և «կենտրոնի» մարդիկ իսկ ամաչում եյին այդ անունը տալ հրապարակում և հասարակության մեջ: Այսպես, որինակ, Ղազար Տեր-Ղազարյանը իրան ծախում էր վորպես թո՜ւնդ «սինդիկալիստ», Լապարդելի ու Սորելի հետևորդը:

Յեթե այսպիսի բաներ ասելով մենք վրդ միայն անձնական վերլավորանք ենք հասցրել ընկ. Աշոտի սպեցիֆիկյան կամ Պեղաղբյուրյան քաղցր հիշողություններին, այլև մեղանչել բալշևիզմի դեմ, վորի անաղարտությունը՝ անշո՛ւշտ՝ չափազանց մոտ պիտի լինի մեր ամեն մի պատմաբան-գիտնական ընկերոջ սրտին,—յեթե քսանամյա ժամկետ ունեցող անցքերը ակամա, վիներեսային «Նորք»-ի ու ծախու գրչի պատմական կեղծումներից հարկադրված վերհիշելով՝ մենք «վերլավորանք» ենք հասցրել մեր Կոմկուսին,—թո՛ղ բարի լինի ընկ. Աշոտը «ուղղել» մեզ իր ավելի «կոմպետենտ» գրչով, թեկուզ Գրիգոր-Մաքիսորսական վոճով: Յեվ վոչ միայն մենք անձնապես, այլև շատ-շատերը մեր ընկերներից յերևի շնորհակալ կլինինք պատմական նրա նորանոր «խորացումների» և «ուղղումների» համար...

Բայց դրա համար կարիք չկա անպայման հորս հայհոյել: Հայրական այստեղ հեչ գործ չկա:

6. Սահփան Շահումյանը Յեվրոպայի մարքսիստական ուսանողության միանական ֆրոնտի լիդեր:—Վիներեսային «Նորք»-ի պնդումներին՝ սպեցիֆիզմի արտահայտման ուսանողության շրջաններում մերկացրած հե-վա-փո-խա-կո՞ն (ըը-ռռռը՞) «գործունեության»,*) մենք—վորպես անցքերին մասնակցող ու կենդանի վկա—հակադրել եյինք մեր ընկ. Սահփան Շահումյանի խոշոր դերը յեվրոպական ուսանողության ազգային կուսակցությունների հեգեմոնիայից ազատագրվելու գործում: Ցույց եյինք տվել—այո՛, չափազանց կարճ հոդվածում, վոր պետք է լրացնել ապագայում թե ընկ. Սուրենի և թե հենց ընկ. Աշոտի (թեկուզ և հակառակ վինեգրետային «Նորք»-ի կասկածելի «վավերա-դրերի») ջանքերով և նույնիսկ մեր, բալշևիկյան հանդիսի դերի, յերբ «Նորք»-ը դադարի վինեգրետային տիպի մամուլի եջերից, յերբ «Նորք»-ը դադարի վինեգրետային տիպի մամուլի ներկայացուցչությունից,—ցույց եյինք տվել իսկապես շատ թռուցիկ կերպով, վոր ընկ. Սահփան Շահումյանը կենդանի ակա-դաշնակցողակը, ղեկավարը, առաջնորդն եր հակա-դաշնակցական, մարքսիստ ուսանողության միանական ֆրոնտի:

Այստեղ վիճելու խնդիր չկա բալշևիկների համար:

Դուր գա այդ թե վոչ ընկ. Աշոտին կամ նրա վինեգրետային «Նորք»-ին—դրանով չի փոխվի վոչինչ: Վոչ վոքի, այո՛, վոչ վոքի չի հաջողել խեղաթյուրել այս փաստը, պատմական իրականությունը, յեթե անգամ ոգնության կոչվին սպեցիֆիզմի բոլոր հին ու նոր ննջեցյալները:

Ապա մի թող բարեհաճի ընկ. Աշոտը—վորը՝ ըստ մեր եփրիկի պատի որացույցի՝ քսանամյա՛ թե ավելի սոցիալիստական-մարքսիստակա՞ն-լենինյան, իհարկե ընկ. Ե. Սուրենի անցյալին չնմանող ու աննման անցյալ ունի,—վոր մեր «հի՞ն ուխտի հեղափոխականներից» և և ուրե՞մ 1903/04/05 թ. թ. ժընևի անցքերին դրեթե «ժամանակակից» գիտակից կուսակցական և յեղել,—թո՛ղ մի բարեհաճի պարզել մեզ, առանց խարխափանքների, թե-կուզ աշխատակցության կանչելով բոլոր վանական ու վոչ-վանական թանգարանի կենդանի ու անշունչ ինվենտարը, թե այդ ինչ յեղբակացություններ են բերում նրան պատմական կրկնա-խորացումները?!

Բայց խնդրում ենք հորս չհայհոյել: Հայրական ինչ գործ կա այստեղ:

*) Մեր թանգարանում յերևի բացի սպեցիֆիկների ամեն տարիքի և դասակարգի դերքի լուսանկարներից—վոր թանգարանի սպեցիֆիկ վարիչը ընկ. Աշոտի որինակով առանձին խնամքով ժողովում է—կլինեն տեղեկություններ, թե

— քանի սպեցիֆիկ և մանավանդ դասակարգային ու կախվել?!
— քանիսը բանտ տանելիս հրացանակրկնել ճանապարհին?!
— քանիսը մեռել բանտերում հիվանդություններից?!
— քանիսը Սիբիր և այլուր աքսոր գնացել և այլն?!

Ընկ. Աշոտը—վոր այնքան փափկանկատ և դեպի մեր այդ պեղ-աղբյուրյան սոցիալ-շովինիզմը,—կբարեհաճի պատմական խորացումները կատարել, ավելի ճիշտ՝ կատարել տալ պատրաստի ծախու գրչին այդ ուղղությամբ, վորպեսզի գոնե պատկումները «յերախտամոռ» չլինեն, ինչպես վոր յերախտամոռ են լենինյան կոմսոմոլները...

7. *Մեր առաջին մարքսիստները և առաջին բոլշևիկները։*—Այսպես պատկերացնելով վինեգրեաային «Նորք»-ի վավերագրերի հետ կապված պատմական պերսպեկտիվան և, վոչ թե à la ընկ. Աշոտ, à la *սպեցիֆիկ*, կա՛մ à la *մենշևիկ*,—կոմունիստ-ընթերցողը մեր հոդվածից բնականաբար պիտի հանգեր այն յեզրակացությանն (և այս կարծես պակաս չեր վայրագրել ընկ. Աշոտին ու ելի գուցե մի յերկուսին) թե հայկական իրականության առաջին մարքսիստները պետք է փնտռել վո՛չ թե այն օրիենտացիայի մեջ, վոր ընդգրկել և վինեգրեաային «Նորք»-ի վավերագրային բաժինը,—այլ՝ մեր մատնանշած ուղղությամբ։

Այստեղ անզոր է լինելու ընկ. Աշոտի «Արարատ»-ի խմբագրատանը շահած «պատմագիտականն» հմտությունը և «մարքսիստականն» կոմպետենցիան,—հատկություններ, վորոնց մենք բնավ ավելի ցած չենք դասում, քան «Արարատ»-ի լիբերալ վարդապետները։

Դաղտնիք չէ, և մեր մամուլի մեջ արձանագրված փաստ է, վոր մեր շրջանում կան մտածողներ—անշուշտ անիրագեկ բոլշևիկյան պայքարին ու դեմքերին, բայց գուցե և՛ իրագեկ, և՛ շահագրգիռ,—վորոնք տրամագիր են «առաջին մարքսիստ» բարձր պատիվը շռայլել այնքան ակնհայտ վոզորմելի ու մեշչան սպեցիֆիզմի հասցեին, թեկուզ այդ լինի հանձին տիպիկ սպեցիֆիկ Շատուբ-Ռուբենի,—յերբ վերջինս (սպեցիֆիզմը կամ Ռուբենին) բնա՛վ վորակված չէ այդպիսի անուն վաստակելու և չի կարող վաստակել վորքան էլ խարուսիկ լինին այսօրվան իլյուզիոնիստները՝ բոլշևիկյան պատմության և Անդրկովկասի բանվորական-հեղափոխական շարժման մասին։

Թանգարանների գույքերում վերջին հաշվում բոլշևիկներս ենք պրպտելու և վավերագրերը արժեքավորելու...

Ակներև սխալի մեջ համառելը՝ անթույլատրելի է այլևս և նրանից բուրում է ճիշտ նույն մանր-բուրժուական ոչխարը, վոր զրահվեց մեր վերջին կուսակցական դիսկուսիան, և վճռականապես զատապարտվեց մեր կուսակցության Համամիութենական կոնֆերենցիայի ու համագումարի կողմից, ինչպես նաև Կոմինտերնից։

Դժբախտաբար մեզ համար, և գուցե բարեբախտաբար մեզ հետ վիճող ընկ. Աշոտի ու նրան «հում նյութեր» մատակարարող՝ հրապարակում չերևացող, բայց բոլորին տեսանելի աղբյուրների,—Արտասթումանում փոխարեն թերթերի, գրքերի, պրոգրամների, թանգարանների, շրջապատված ենք Koch-ի բացիլներով (թե՛ պետք է խոստովանել, վոր նման բացիլները շա՛տ ավելի պակաս վտանգավոր են յերիտասարդ որգանիզմի համար, քան վինեգրեաային «Նորք»-ի մեջ սպրդող բացիլները), չունենք մեր տրամադրության տակ վո՛չ արխիվ և վո՛չ էլ ծախու գրչի ծառայականության հետ մրցող քարտուղար,—ցույց տալու համար թե վերպիսի կուրության (յերեք վո՛չ ավելի) մեզ մատնում են «լենինյան-մարքսիզմի» նման գոհարները։

Մենք պնդում ենք.—

ա.) *մեր առաջին մարքսիստները*—մինչև Ռուս.-Սոց.-Դեմ. Բանվ. Կուսակցության բոլշևիկ և մենշևիկ հատվածների բաժանումը—յեղել են՝ ընկածներից ընկ. ընկ. Սահակ Շահումյանը, Բողդան Կնունյանը և Արշակ Զուրաբյանը, կանդանիներից ընկ. Գևորգ Ղարաջյանը, վոր դեռ 1898 թվին Զիլիաքյանի հետ գործարանում մարքսիստական կրուժոկները եր կազմակերպում հայ բանվորներից.

բ.) *մեր առաջին մարքսիստ-բոլշևիկները* յեղել են՝ նույն Կնունյանը—հակառակ նրա վերջին սայթաքումին—Սահակ Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը—ընկ. Լենինի անմիջական ընկերները և գործակիցները, մեր մեծ ուսուցչի ուղղակի ղեկավարությամբ նաև հայ բանվորության շարքերը միջազգային պրոլետարական շարժման ու կազմակերպության մասնակից անող այդ ընկած՝ բայց կենդանի ճյուղերից ավելի բարձր ու մի՛շտ-կանգուն կոճղերը։

Դո՞ն ծաղր կլիներ մեր որերին, յեթե մեկը Ռուսաստանի կոմկուսի շարքերից փորձեր հրամցնել մեր փայլուն ընկ. Տրոցկու մինչ-հոկտեմբերյան գործունեությունը և պայքարը, վորպես նմուշ առաջին մարքսիզմի։ Թո՛ղ ներվի մեզ այս պրոֆանացիան համեմատության առնելուն համար,—բայց շա՞տ ավելի ծիծաղելի չե հնչում բոլշևիկի ականջին նման վորակումը սպեցիֆիկ վո՛րևե մեկի հասցեին, ներկա դեպքում մի վորմնելի գավառական վարժապետ Ա. Ռուբենի, վորը՝ վորպես ամբողջություն ճիշտ, և սիրո՛ ճիշտ անխուսափելիորեն,—վորքան էլ ժամանակավորապես կեղծվեն փաստերը,—մի տիպիկ սպեցիֆիկ, այսինքն՝ բուրժուազիայի մասը ատրի «սոցիալիստ», հաճախ և ավելի շուտ սոսկ իսկ գեմատրի «սոցիալիստ», հաճախ և ավելի շուտ սոսկ իսկ գեմոկրատ՝ Ղարաբաղի մեշչանական-գավառական շրջապատում

դերադասող «Ժողովրդական համալսարանի» հանրամատչելի դասախոսությունները՝ անգամ Շուշվա գավառական փոքրիկ թերթիկի աշխատակցությանը։

Թող ընկեր Աշոտը մեզ պատմի—աշակերտի և ընկերի բոլոր ակնածություններով հանդերձ—«բալշևիկ» Ա. Ռուբենի յատուկ սպեցիֆիկյան, այսինքն՝ «բալշևիկյան» գործունեությունից, վորովհետև՝ խա՜ռն ժամանակներ էին, և գո՛ւցե «վրիպել» է մեզնից շատերի ուշադրությունից...։ Մատնանշի մասնավորապես այն «բալշևիկ» տողերի վրա, վոր «բալշևիկ» Ռուբենին արձանագրել է թեկուզ—կրկնում ենք—ընկ. Աշոտի փոքրիկ «Նեցուկ»-ի հինգ համարներից գոնե մեկում կամ մի այլ բալշևիկյան որդանում։

Ա. Ռուբենին ֆիզիքապես հնարավորություն ու ժամանակ չունեցավ ցույց տալու, թե նա «սոցիալիզմին» տակ ի՞նչ է հասկանում—լենինի՞զմ թե մի այլ շաղախ, Տեր-Ղազարյանների կամ Դ. Անանունի հետ կի՞նար, թե՞ Յերևանի կոմկուսին «կհարեր»։

Իսկ շատ չերկար ժամանակ ապացուցեց և ապացուցեց հիմնավորապես Բ. Իշխանյանի և Կ⁰-ի հետ, վոր «մարքսիզմը»՝ նրա համար չեղել չի հայկական բունդիզմ, սպեցիֆիզմ, սոցիալ-շովինիզմ,—Բլթուջուրյան «սոցիալիզմ», Պեզ-ազբյուրյան «մարքսիզմ»,—մի խոսքով ամեն բան, բացի լենինիզմից։

Առաջին մարքսիստ և առաջին բալշևիկ հասկացողությունների խնդրում անթուլլատրելի չե այլևս վորևե անորոշություն, վո՛րքան էլ մենք սիրենք կամ չսիրենք անձնապես Ռուբենին։ «Ազնիվ բարեկամային» խնդիր չե այս և վոչ էլ աշակերտական-ընկերական չերախտապիտության պարտքի հատուցում։ Պատմական, վոր ասել է մեզ համար բացառապես բալշևիկյան ճշմարտությունը թելադրում է անողոք լինել հեղափոխական պայքարի խեղաթյուրումների և պատմական կեղծիքների դեմ։

1919 թվին—յերբ վորպես Կովկասի Յերկրային Կոմիտեյի հրատարակչական բաժնի քարտուղար-վարիչ՝ մենշևիկների որով՝ Թիֆլիսից ձեռնարկեցինք բավական լայն մասշտաբով գրավոր պրոպագանդայի և լուսո տեսան մեր հրատարակությունների առաջին սերիանները, ծուլ ու մանկաբ Ռուբենին դեմեց մեզ խնդրելով մի կերպ ազատել նրան մուսավաթական կրած-կարված անհամբույր Շուշուց, թեկուզ մենշևիկյան Թիֆլիսի ծխական դպրոցներից մեկում նրա համար ուսուցչության պաշտոն պահելով, իսկ

յերեք անկարելիլն այդ—մասնակից անել մեր դրական վորևե աշխատանքի,ապրուստի միջոց հայթայթելու թարգմանություններով։ Մեր բանտարկությունը և հետագա աքսորը արգելեցին անձնապես ոգտակար լինել անոդնական Ռուբենիին։ Բայց ընկերական-մարդկային փոխ-հարաբերություններից դեռ հեռու չե այն միանգամայն սխալ յեզրակացությունը, թե սպեցիֆիզմի, այսինքն՝ մինչ-բալշևիկյան կամ հակա-բալշևիկյան պերիոդի Ռուբենիի գործունեությունը՝ Բախշի Իշխանյանի և նմանների մասնակցությամբ և աշխատակցությամբ՝ կարող է վորևե չափով ծառայել «կլասիկ նմուշ» մարքսիզմի կամ բալշևիզմի, թե Կնունյանը, Զուրաբյանը, Ղարաջը չեն մեր առաջին մարքսիստները և Ստեփան Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը՝ նույն Կնունյանի հետ մեր առաջին մարքսիստ-բալշևիկները, այսինքն՝ այդ համա-խորհրդային մասշտաբի և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի կապերով՝ միջազգային բանվորական հոսանքի հետ կապված գործիչները՝ այլ Բլթուջուրյան մանգզիլի մի սոցիալ-շովինիստ, սպեցիֆիկ վարժապետ!

Մենք խոսիվ պնդում ենք վերը թված առաջին մարքսիստ և առաջին բալշևիկ պատվոն արժանի անունների կլասիֆիկացիայի վրա։ Թո՛ղ մատնանշի մեզ մեր հեղինակավոր մարքսիստ և վեչ-պատա հեղինակավոր՝ պատմաբան ընկերը, թե այդ վո՞ր անունն է նրա աչքը ծակում կամ ականջին անախորժ հնչում,—վո՞ր անունը կցանկար փոխարինված տեսնել մեր կլասիֆիկացիայի մեջ, և ի՞նչ գործ ունի այստեղ խեղճ ու խղճուկ Ռուբենին։

Թո՛ղ վինեգրետային «Նորք»-ի խմբագիրը խորացնի ու կրկնախորացնի հեղափոխական շարժման պատմությունը, թեկուզ «Արարատ»-ի լիբերալ վարդապետների հետ պատմագիտության համար միասին մշակած «մարքսիստական» մեթոդներով։

Բայց խնդրում ենք հորս չհայհոյել։ Հայրական խնդիր չկա մեջտեղը։

8. Ռեաբիլիտացիայի փորձ։—Ընկ. Աշոտի ամբողջ հոդվածում միայն վերնագիրը ունի հասարակական սիմպատիկ նշանակություն և արժանի մեր բոլորիս ամենամանրամասիկ ուշադրության։

Ճիշտ և բնորոշել Յերևանի մեր հեղինակավոր պատմաբան-պիտնական ընկերը այն պայքարը, վոր ծայր է տվել վինեգրետային «Նորք»-ի անգիտակ թե շատ գիտակ նախաձեռնությունից

թյամբ՝ կասկածելի «վավերագրերի» շուրջը և աղիքով։ Գլուխը չհասկանալու չի տալիս ընկ. Աշոտը—կարծես Սոնատա պատահարիկը ունկնդրելիս լիներ—յերը կարծում է, վոր հրապարակում հավատացող կլինի, թե այս կամ այն անհատ-ընկերը հետապնդում է, և այն էլ ընկ. Ե. Սուրենի ընտրած միջոցներով, վորևե կարգի ռեաբիլիտացիայի կամ կարիերա։

Ընկ. Աշոտը հիմնավորապես գիտե, թե վորքան Ե. Սուրենը անփուլթ ու անուշադիր, գուցե և անշնորհք է յեղել մինչև շարունակ դեպի այդ կարգի մտազրաղմունքները, անձնական հաշիվները։

Ինչ արած.—

Нам *не* завещал Ильич
Угождать всем людям без изъятья...

Բայց թողնենք այդ մասին խոսելու մեր հաջորդներին։

Հրապարակում կարծես ճիշտ վոր հետապնդվում է մի ինչ վոր ռեաբիլիտացիա, շատ ավելի կարևոր մեր կուսակցության համար՝ քան իքս կամ իքրեկ ընկերոջ, Աշոտի կամ Սուրենի սաաժի խնդիրը։ Վերջին կարգի ռեաբիլիտացիան յերբեմն յենթադրում է մեր ԵՔբՐԿի պատի որացույցի եժանագին սիրալիրությունը. մինչդեռ առաջին կարգի ռեաբիլիտացիան շատ ավելի բարդ գործողություն է և կապված է այսպես ասած՝ կոմբինիրովանի նախապատրաստական աշխատանքների հետ։

Հարցը այստեղ վերաբերում է մի ամբողջ հավաքական ռեաբիլիտացիայի և պետք է գործել—ինչպես ասում են—կոմպլեքսային մեթոդով!

Համեցեք պահերը.—

1). Վինեգրետային «Նորք»-ի էջերից ուսուցանվում է, հակառակ բալշևիկյան պատմության պնդումների, թե Թրթռջուրյան բունդը—սպեցիֆիզմի և կոմկուսի մեջ տարաձայնությունները լոկ «կազմակերպչական», ինչպես ելի՝ յերրորդական-չերրորդական խնդիրների շուրջն են պատել և մենք դրեթե ձուլվում ելինք—յեթե արդեն ձուլվա՛ծ չելինք հենց ի ծնե անտի...

2). Սպեցիֆիզմը «բանվորական» կամ «պրոլետարական» կազմակերպություն եր և վէչ թե հայ նացիոնալիստ ու մեշչան գավառական կիսա-գաղնակ ինտելիգենցիայի մի անհող կրուժոկ, թայֆա, և այն էլ Թրթռջուրյան մասշտաբի և Պեզ-ազրյուրյան հորիզոնի, մի խմբակ—վորի հակահեղափոխական և նացիոնալիստական ալանդակ պահերը իր ամբողջ «մեծություն»-ներկայացավ Դաշնակցության տիրապետության որով...

3). Սպեցիֆիզմը ներկայացվում է վորպես «պրոլետարական հոսանք»՝ չափվող անգամ Ռուսաստանի Սոց.-Դեմ. Բանվ. Կուսակցության հետ, և վոչ թե իսկական «Բունդի» խրտվիլակը, չուչելան, կրևատուրան, խաղալիքը...

4). Հակառակ ակնհայտ ավյալների, վոր արտասահմանյան ուսանողության ազատագրումը նացիոնալիզմի թույնից կատարվել է բալշևիզմի (հատկապես Յերկրորդ Համագումարի) հարվածների տակ և Լենինի անմիջական ընկերների ու աշակերտների (Շահումյանի և Կնունյանի) ղեկավարության,—վինեգրետային «Նորք»-ը կաշվից դուրս է գալիս հակառակը հեղափոխականի կեղտոտ գրչով ապացուցելու, թե սպեցիֆիզմը իր կաղ հշով քարվանի մեջն է յեղել...

5) Վինեգրետային «Նորք»-ի № 4-ում հետին թվով տպագրվում է բոլոր մեռած կամ մոռացված սպեցիֆիկների ևն ամենևն ճանաչված լիդեր և ուսուցիչ՝ Բախչի Իշխանյանի մոռացված ու մեռած գրքի «գրախոսականը»։ Ո՞ւմ համար և ինչի՞ համար։ Չե՞ վոր տասն տարի չե անցել սպեցիֆիկների լիդերի այդ գրքից և հեղինակը հավիտյան մեռած է, ինչպես և հավետ մեռած է բախշիականությունն ու սպեցիֆիզմը!

Բայց այդքան եժան գնով բախշիին չի կարելի սպեցիֆիզմի նավից գցել ծովը։

6). Մեծարվում են վորպես առաջին մարքսիստներ վէչ թե Կնունյան, Զուրաբյանը, Ղարաջյանը, և առաջին մարքսիստ բալշևիկները՝ Ստ. Շահումյան, Սուրեն Սպանդարյան, Կնունյան,—այլ առ առավելն «կոմսոմոլի սաաժով» և «բալշևիկ» անհատ գործունեությամբ՝ կատարյալ սպեցիֆիկ Ռուբենին։ Կտպագրվի նրա ժողովածուն և կմերկանան նրա «մարքսիստական» ծառայությունները ու գործունեության «հեղափոխական» մասշտաբը!

7). Հրապարակում չունենք վէչ Շահումյանի, վոչ Սպանդարյանի, վոչ Կնունյանի կենսագրությանը և գործունեությանը նվիրված ուսումնասիրություններ, հանրամատչելի բրոշյուրներ, նրանց ճառերի և հոդվածների թեկուզ ժողովածուներ՝ հակառակ մեր յերկրի խորհրդայնացման չորս տարիներին։ Մինչդեռ՝ մեր մամուլի մեջ հայտարարվում է,—և հայտարարվում է չափազանց հեղինակավոր կուսակցական մարմնի անունից,—թե պատրաստվում է «հայ առաջին մարքսիստ» և «բալշևիկ»

Ռուբենի աշխատությունների (հոդված, նամակ և այլն) ժողովածուն, որ անհրաժեշտորեն ու անխուսափելի կերպով պետք է վերաբերի սպեցիֆիզմի շրջանին, վորովհետև՝ վարժապետ Ռուբենին բոլշևիկյան-մարքսիստական դոգմատիզմության շրջան չե՛ ուենցել։

8). Գրվում է Ցերևանի թանգարանի մեջ ողնությամբ մի ամբողջ՝ թեկուզ շատ կասկածելի վորակի «պատմական ուսումնասիրություն», վորտեղ կաշվից դուրս են գալիս «ապացուցելու», թե սպեցիֆիզմն է «փրկել» հայ աշխատավորությունը և բոլշևի-իշխանականության գաղափարական հաղթանակին (sic!) ենք պարտական մեր այսորվան խորհրդային իրականությունը Հայաստանում։

Այս կեսի վրա կանգ առնենք մի փոքր ավելի։

Գ. Ղարաջը 1923 թվի աշնանը վերադառնալով Ցերևանից և իր տպավորությունները հաղորդելով մեզ (ինձ և ուրիշ շատերին «Մարտակոչ»-ի խմբագրատանը), ի միջի այլոց վրդովմունքով պատմեց, թե թանգարանի հայտնի վարիչը պատրաստել և գրիզոր-լուսավորչական մեթոդով գրված իր գրքի յերրորդ պրոկը, վորտեղ Բախշիի հռետկից բարեկամը ու գինակիցը, և Նիկոլ Աղբալյանի կարոտը քաշող հայտնի ողիոզ ֆիդուբան Խորհրդային Հայաստանի ներկա վերածնունդը կապում և սպեցիֆիզմի պատմության հետ, համարում է վո՛չ թե Լենինի անմիջական ընկերների ու լենինիզմի հաղթանակի գործ, այլ «իրանց»—Բախշիի և ընկ.։

Պատմության falsification այնքան ակնհայտ ու լրբորեն է յեղել և բնականաբար ծանր թվացել, վոր վրդովվեցրել է անգամ մեր համբերատար ու ներողամիտ վոչ-բալշևիկ ծերունի Ղարաջին։ Վերջինս նախազգուշացրել է առաջինը բողոքել այդ անբարեխղճության ու կեղծիքի դեմ, յեթե մի որ այդ մաքրը «աշխատասիրությունը» լույս աշխարհ տեսնի։

Մեր զարմանքին, թե նման մի կեղտոտ գործ յերբեք չի կարող հրատարակության արժանանալ մեր իրավակարգում, վոր նախ և առաջ բոլշևիկյան-կոմունիստական հասարակարգ է, Գ. Ղարաջը վո՛չ առանց հեգնանքի նկատեց մեզ.—

— Ո՛վ գիտե, ձեզնից ամեն լինչ սպասելի յե...

Չի կարող պատահել, վոր հրապարակին արդեն հայտնի Ցերևանի «պատմագիտական» այդ չքնաղ եայուղի մասին անիրազեկ լինի ընկ. Աշոտը, վոր այնպիսի մեծ թուլություն ունի դեպի պատմական պեղումները և մանավանդ սպեցիֆիզմի «վավերագրային» խորացումները վինեգրետային «Նորք»-ի «վավերագրային բաժնում»։

Իհարկե, իհարկե, ընկ. Աշոտը «պատասխանատու չե» վո՛չ վինեգրետային «Նորք»-ի եջերից արվող պղծի կասկածելի մարդկանց, և վո՛չ ել մեր պետական թանգարանում նստած պաշտոնեի պատմական խարդախությունների ու կեղծիքների համար?! Բայց փաստը մնում է փաստ, հրապարակային փաստ, նշանակալից յերևույթ վինեգրետային «Նորք»-ի և ընկ. Աշոտի շուրջը պատմական ուսումնասիրության ընդհանուր մտայնության ու որիենտացիայի, վոր մեր թանգարանի այցելուներին շա՛տ-չափազանց «հիմնավոր» պատմական խորացումներ են հրամցվում և այն ել ո՛չնչքան մշակված ու ծամված ձևով, վոր թանգարան մտնողը պրպտումների վրա շատ ժամանակ չի կորցնելու ղուբ։

Ցերևի ընկ. Աշոտի սրտին մոտ «պատմաուսումնասիրական նվաճումներից» մեկն և այս մեր իրավակարգում,—վորի առավելություններից մեկն ել այն է, թե կարծես նկատելի յե՝ վինեգրետային «Նորք»-ի վրայով դեպի «Արարատ»-ի պատմա-«մարքսիստական» բաժինը տանող հաջորդականությունը—преемственность—իհարկե ԵՂմիածնի «Բանբեր»-ի ողակով...

Այսպես, մի ընդհանուր հայացք ձգելով այս «անմեղ» և «տարերային» ղուդպտիպությունների հասարակական յերևույթի վրա, ընկ. Աշոտը չե՛ր կարող իր սրատես ինթուիտիվ մտքով ճիշտ վոր չնկատել մի ամբողջ ռեաբիլիտացիայի վորձ. բայց վո՛չ-անձնական-անհատական, այլ կոլլեկտիվ-համբակ, վո՛չ թե որացույցային տիպի ռեաբիլիտացիա, այլ հայ հեղափոխական բանվորության ներսում մի ամբողջ հակահեղափոխական հոսանքի «բարոյական ռեաբիլիտացիայի», հեղափոխական-պատմական արդարացումի։

Վինեգրետային «Նորք»-ի գենե բալշևիկ ընթերցողին շատ ել միամիտ չպետք է կարծել։ Յեվ հորս ել հայհոյելով չի կարելի հերքել փաստերը կամ փաստարանել ու մեղմել բալշևիզմի պատմության խեղաթյուրումը։

Բավականանանք մեր և ընկ. Աշոտի տարակարծիքության այս ուրվագիծը կետերով, վորոնց պատասխանելով—շուտակ ու փաստ—[illegible] կետերը։

[illegible]ալից,—ինքնին կլուծվեն ուրիշները և [illegible]

Ընկ. Աշոտը կարծես համբավավոր մարքսիստի և շա՜տ ավելի համբավավոր պատմա-գիտնականի հռչակ ունի Յերևա-նում։ Թող ցրի մեր անտեղի յերկյուղը, մասնանշի մեր սխալ-ները, մերկացնի մեր աչք ծակող անիրազեկությունը, ընդգծի մեր մեղանչումները բալշևիզմի դեմ,—ապացուցի, թե մենք ենք խեղաթյուրում պատմությունը և վո՛չ թե վինեգրետային «Նորք»-ը իր «վավերապրային բաժնով», վորտեղ մենք կարող ենք մեր իսկապես հեղափոխական մարքսիստների ու անկասկած բալշևիկների մասին վո՛չ-չակերտավո՛ր վավե-րագրեր կարդալուն։

Ջունե՞ք դուք այդպիսի վավերագրեր, ընկ. Աշոտ?

Մենք շա՜տ ունենք և կարող ենք տալ—միայն մեր վավե-րագրերի մեջ հարկավոր բևեռան չե՛ք գտնի մենշևիզմի և մանավանդ այն վոլորալի սպեցիֆիզմի հատկյին, դե՛պի վորի ռևաբիլիտացիան այնպիսի բուռն և անտեղի կիրք և ցուցադրում ընկ. Աշոտը։

Վախում ենք, թե վինեգրետային «Նորք»-ի ճաշակին շատ էլ չգան նման նյութերը։

Սպասում ենք, վոր ընկ. Աշոտը իր պատասխանի կամ մի նոր «Բաց նամակ»-ի մեջ ապացուցի ի՛նչ վո՛ր ուզում է, միայն ապացուցի փաստերով ու լոգիկայով. բայց ան-պայման կոմունիստական լոգիկայով ու բալշևիկյան փաստե-րով, մանավանդ ի՛ր աքնած լոգիկայով ու ի՛ր քրտնած փաս-տերով...

Մենք այնքա՜ն ավելի ուրախ կլինենք «սխալված» լինելու մեր պատմական «վորոնումների» ու բալշևիկյան քննադատու-թյան մեջ, վոր թե՛ ընկ. Ե. Սուրենը և թե՛ ընկ. Աշոտը պատիվ ունեն ծառայելու նույն լենինյան-կոմունիզմի (կան նաև վավերապրային և թռնդրակեցոց «կոմունիզմներ»!) բարձր իդեալին, վորից դուրս մեզ համար չկա և չպիտի լինի ճշմարտություն։

Իսկ չարաբաստիկ «վավերագրի» շուրջը և առիթով ծագած հարցերի վո՛չ-խուսափողական պատասխանները կարևոր նշա-նակություն ունին լենինյան մարքսիզմի համար։

Ուզում ենք հավատալ, թե ընկ. Աշոտը այս անգամ գուցե դանի ավելի լուրջ արգումենտներ, քան գտել եր իրեն միայն բնորոշող «Բաց նամակ»-ում—ցույց տալու, թե սխալվում են Ե. Սուրենը և նրա պատմական դիտողությունները «Մարտա-

կոչ»-ում և վո՛չ թե ընկ. Աշոտը և նրա վավերա-վինեգրետային «Նորք»-ը։

Հակառակ դեպքում ընկ. Աշոտի հրապարակ նետվելը—թե-կուզ Դավիթբեկյան գովելի ավյունով ու Գրիգոր-Մագիստրոսյան անապարա վոճով—մեզ միայն կհիշեցնի ֆրանսիական հայտնի որորոցի յերգի ծանոթ յեղանակը, այնքան բնորոշ սպեցիֆի-մի «պատմական արդարացումի» և «հավաքական բեռբելիտա-ցիայի» մեջ շատ-չափազանց շահախնդիրների համար, թե—

Փոքրիկ մարիոնետները անում են
յերկը փոքրիկ շրջան և—անհետանում...

Աբաստուման, 15 սեպտեմբ., 1924 թ.
Առաջին Սանատորիում, սենյակ № 20։

ՁԻԳՈՒՐԱ ՈԳԻՈՋԱ

I

Վերջին ժամանակներս մեր մամուլի էջերում—Յերևանի «Խորհրդային Հայաստան», Բագվի «Կոմունիստ», Թիֆլիսի «Մարտակոչ»—քննվում եր այն հարցը, թե վերքան պարոն-պատվելի Դ. Անանունը վորակված և լինել Խորհրդային Հայաստանի Հեղափոխական Թանգարանի վարիչ։

«Մարտակոչ» այն կարծիքն եր հայտնել մի շարք հոդվածներում թե այրբենական ճշմարտություն և, վոր Անանունի «քաղաքական ռենոմեյի» մարդիկ իրենք-իրենց ղրկել են Խորհրդային վէչ միայն վորևե հաստատության, մանավանդ Հայաստանի կամ Թանգարանի թեկուզ աննշան թղթերը պարունակող սենյակի կամ արկղի գլուխ կանգնելու իրավունքից, այլև վոտք անգամ դնելու մեր վորևե հաստատության շեմքը։

Դ. Անանունը մի յերկար ու բարակ պատասխան շարադրեց, վորտեղ ըստ էության ղրված հարցին չի պատասխանում և հասկանում և, վոր չի ել կարող պատասխանել։ Այլ հարձակվում է Ս. Գարագաշի անձնավորության վրա և ցույց է տալիս, թե իրեն մեղադրողը «Մշակ»-ի մի նախկին թղթակից է, վոր վերջինս այսպիսի կամ այնպիսի անցյալի տեր է, և նրա մասին այսինչ թվականի այսինչ ամսին ու որը իքսը կամ իգրեկը և գլխավորապես ինքը Անանունը բացասական կարծիքի յեն յեղել։ Մի խոսքով վանում է իր վրաքը Ս. Գարագաշի հետ, վորի անձնական կյանքը մեզ բնավ չի հետաքրքրում, ինչպես և Անանունինը։

Ի դեպ, միջանկյալ ասենք, վոր մենք վէչ Ս. Գարագաշի և վէչ ել Դ. Անանունին անձնապես ծանոթ լինելու «պատիվը» չենք ունեցել, վորի մասին այնքան ել չենք ցավում։

Ո՛վ և ավելի մաքուր անհատապես ու ժուժկալ։ Ընդունենք մի րոպե, թե Անանունը պակաս ցուփ վարքի տեր է, քան

Ս. Գարագաշը կամ հենց նույն Դ. Անանունի սրտակից ընկ. Բախշի Իշխանյանը, վորից ավելի պղվելի արարած անհատական թե հասարակական կյանքում դժվար թե հայ իրականությունը տեսած լինի։

Հետո ի՞նչ...

Դրանով պատասխանվե՞ց այն հարցին, վոր պրվել է, պրվում է և կպրվի շարունակ—քանի Անանունին և վերապահված Յերևանի Թանգարանի վարիչը լինելու—այն հարցին, թե—

— արդյոք պարոն Անանունը վորակվածե և այլն...

Չկարծենք թե Դ. Անանունը չի հասկանում վեճի ծանրության կետը, իմաստը։ Նա չափազանց աղվես և այդքան միամիտ ձևացնելու իրեն։ Նա հասկանում է, վոր ուղղակի ղրված հարցին ինքը պատասխանելու վոչինչ չունի, վորքան ել հարցիկ լինի պատասխաններ հերյուրելու մեջ։ Յեվ դիմում է այնպիսի սլրիյոմի, վոր հաշվված է ընթերցողի անիրազեկության, դյուրահավատության, միամտության կամ նույնիսկ հիմարության, բայց վոչ-յերբեք տրամաբանության վրա։

Մենք պնդում ենք և «Մարտակոչ»-ը բնավ չի հրաժարվելու Դ. Անանունի մասին շատ անգամ հայտնած իր ավելի քան բացասական կարծիքներից.—

— վորովհետև, առանց իրենից վորևե մի առանձին հասարակական արժեք ներկայացնելու, չափազանց ոդիոզ դեմք է յեղել Անանունը Անդրկովկասի հայ հակահեղափոխական իրականության մեջ Հյուսիսային Կովկասից վերադառնալուց հետո՝ մինչև Խորհրդային Հայաստանի «արդի մելիքների» որը։

Բայց այստեղից բնավ թող չեզրակացվի, թե նա Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ մի շատ ղրական ընթացքի տեր մարդ է յեղել մեր հասարակական կյանքում։ Արդեն ինքը Անանունը իր կոտրած ձեռքով արձանագրել է, վոր դեռ 1912 թվականին, ուղիղ տասն և ավելի տարիներ առաջ, անմոռանալի ընկ. Ստեփան Շահումյանը նրան վորակելիս և յեղել ըստ արժանվույն և այդ պարոնը այն ժամանակվա մեր հեղինակավոր ընկերների աչքում յեղել և այն, ինչ և մեզ համար շարունակում է դեռ այսոր էլ ու միշտ մնալ։

II

Ինչպես հայտնի է, Դ. Անանունը վերադառնալով Հյուսիսային Կովկասից Թիֆլիս՝ սկսեց աշխատակցել «Մշակ»-ին, որի գլխավոր խմբագրությունը—արդեն «մեկենաս» Հակոբ Մելիք-Բախտամյանի կամքով (վերջերս գնել էր թերթի սեփականությունը Լ. Քալանթարից)—կարճ ժամանակով անցել էր Արշակ Զուրաբյանին։ Անանունի անսպասելի մասնակցությունը վրդովից Արշակին և նա հրաժարվեց «Մշակ»-ից.—

— Я не могу работать с этим мерзавцем !

Ահա, ելբը «Մշակ»-ը Արշակից հետո ընկավ Անանունի ձեռքը՝ նա սիստեմատիկ պայքար բացեց—ինչպես վայել և այդ «սոցիալիստ» պարոնին—«թաթար ցեղի» ու «ռուս մուժիկի» դեմ։ Այդ մարդատեցության կամպանիայի որերին «Մշակ»-ում նա տպագրեց իր հիշողությունները «Բ ա գ վ ի շ ե բ ի մ ն ե ր» վերնագրով, վորտեղ մի քանի անմեղ բնդհանուր «կոմպլիմենտներ» շռայլելով աջ ու ձախ—ռևոլյուցիոներներին հատուկ մեթոդով—աստիճանաբար վարկաբեկէ և անուն մեր լավագույն ընկերներին, վորոնք հրապարակում չկային և չկան, վոր կարողանային պաշտպանվել Անանունի բամբասանքների, զրպարտությունների, սուտ լուրերի դեմ։ Ցելվ վորոնց պաշտպանությունը մեր այսորվան բալշևիկներիս պարտքն է։

Դժբախտաբար մեզ համար և ընթերցող հասարակության բարկացության պատճառով (տպվում էր հազիվ 2—3 հարյուր օրինակ) «Մշակ»-ը շուտով դադարեց։ Դ. Անանունին հաջողվեց տպել մի քանի յերկեր թերթոն, վորոնցից առաջինը նվիրված առանձին սիրով դաշնակցական Ալեքսանդր Առաքելյանին, մյուս յերկու թերթոնը—մեր ընկերոջը Սաենփանին։ Մենք վրկեցինք այդ բամբասագրի շատ «գոնարներից»։ Բայց յկատն էլ առատ նյութ և պարունակում։ Ահա այսոեղ—այդ շիբինների շուրջը շռայլած բարբաջանքների մեջ—խոսելով իր և Սաենփանի տարաձայնությունների մասին, նա ընդգծում է, վոր մեր ընկերը միանպատմային բացասական դիրք էր բռնել դեպի սպեցիֆիկների կազմակերպությունը և մերժում էր «հաշտվել նրա գոյության հետ»։

Յերբ 1913 թ. լույս տեսավ «Նոր Հոսանք»-ում Անանունի «Ազգային հարցը և դեմոկրատիան» հոդվածը, մեր ընկ. Սաենփանը—խոստովանում է Անանունը—

«1915 թ. Այաքս կեղծանունով հրատարակեց «Ազգային կուլտուրայի ավտոնոմիայի մասին» վերատառությամբ մի գրքույկ, վորի մեջ՝ հետևելով Լենինին և Ստալինին, իրեն ցույց է տալիս քաղաքական կենտրոնացման ջատագով և ազգային հարցով շահագրգռվողներին դասում բուրժուական և քաղաքական մտածողների շարքում։ Ինչ խոսք, վոր նա իր գրքույկի մեջ ինձ դասում էր դաշնակցականների շարքում։

«Սաենփանի իմ հոդվածի դեմ ուղղած գրքույկը դեռ չէր լույս տեսել, վոր մեր հարաբերությունները վչացան և մենք խոովեցինք իրարից։ Պատճառը նրա շրջապատողներն էին։ Առհասարակ նա խորթություն չէր դնում ծանոթների մեջ»*)։

Բերված պարբերության մեջ նկատելին այն չէ, թե վորպիսի անհամակացողություն և ցուցադրվում մի ռևոլյուցիոների կողմից մեր կուսակցության ազգային քաղաքականության գնահատման ժամանակ, և վոչ էլ այն, վոր Դ. Անանունը չի հավանում Լենին—Ստալին—Շահումյանի մոտեցումը ազգային խնդրին (այդ հենց այդպես էլ պետք է լիներ). այլ այն, վոր դեռ տասն ու ավելի տարի առաջ Դ. Անանունը մեզ համար անհանդուրժելի նացիոնալիզմի ջատագովն է յեղել։ Դաշնակցության հանրահռչակ ոգին, ղինակիցը ու գիտակից ագենտը,—և մինչ մահտեսը, ղինակիցը ու գիտակից ագենտը, այն աստիճան անհանդուրժելի արարած, վոր նույնիսկ մեր այդքան համբերատար, մարդկանց հետ վերին աստիճանի մեղմ (որ խոդիտելն է), հակառակորդների հետ ամենից ավելի «բարեկամ» Սաենփանը իր համար անպատվաբեր է համարել խոսել իսկ Դ. Անանունի հետ։

Այնուհետև կրեշչենդո թավալվում է Անանունը դեպի իրեն սպասող ցեխը և կատարում է ռևոլյուցիոներին հատուկ բնական եվոլյուցիան մինչև ամենամոայլ ռեակցիան—խուլիգանության։

III

Մենք բնավ անբնական չենք համարում մարդկանց դեպի ձախ ևվոլյուցիան։ Այդ պրոցեսը շատ ավելի հասկանալի է մանավանդ հեղափոխական ցնցումների ժամանակ, յերբ

*) Տես՝ «Մշակ», 1919 թ. մարտի 27, № 67.

մարդկանց հասկացողութիւնները անսպասելի սալտո-մորտալներ են անում։

Բայց կա եվոլյուցիա á la Պյոտր Սորուվե և եվոլյուցիա á la Մաբրինով։

Եվոլյուցիա à la Ժորես և եվոլյուցիա à la Բրիան։

1905/6 թ.թ. Ժորես—կլեմանսո հայտնի վեճի ժամանակ, երբ յերկու ներհակ դասակարգերի ամենացայտուն ախոյանները իրար ոճիքից բռած ամբողջ չորս որ պարլամենտի ամբիոնից բռնվել եյին կատաղի ու անխնա կռվի, և Ժորեան իրեր հատուկ հետաքրքրական հանճարով մարգարում եր Ժորժ Կլեմանսոյի դավաճանութիւնը կոմունային և նրա բացասական վարքագիծը հանրապետական Գամբետտայի հանդեպ 80-ական թվականներին, աչ դեպուտատ պատկառելի ծերունի եյնարը տեղից կծու հարց շպրտեց Ժորեսի յերեսին, կարծես «խոցած» լինելու համար վերջինիս.—

— Իսկ դուք վո՞րտեղ եյք այն ժամանակ, պ. Ժորես...

Ժորեսը այդ ակնարկած ժամանակ մի 25 տարեկան շատ չափավորական հանրապետական դեպուտատ եր, նույն կլեմանսոյի բանակում։ Հենց դրա համար էլ անձնապես տեղյակ եր իրեր բաղարձին ու իր սլաքներով խոցելի բուրժուազիայի համար։ Մեծ արիբուսը հանգիստ առարկեց ալեզարդ եյնարին՝ ընդհանուր ծիծաղի ու ծափահարութիւնների տարափի տակ.—

— Եվոլյուցիան մարդկային կյանքին հատուկ պրոցես է. իմ իրավունքն է, ինչպես և ձերը, սիրելի կոլլեգա, շարժվելու աչ կամ ձախ։ Յեվ դուք շատ «ջահել» եք, վորպեսզի նույն եվոլյուցիան կատարեք՝ ինչ յես...

Մենք ավելին կասենք։ Անհատական հարգանքը մարդկանց հանդեպ չի պայմանավորված այս կամ այն համոզումով կամ ուղղութեան եվոլյուցիայով։ Մ'թթե սովորական յերևույթ չե, վոր ուսանողական նատարանի վարվուն ծայրահեղ արմատականը կյանքում վեր է ածվում ծայրահեղ պահպանողականի։ կամ քաղաքական գործիչը աստիճանաբար, իրեն համար նկատելի կամ անկատ կերպով փոխում է իր կարծիքը, համոզումները, դավանանքը այս կամ այն կողմը։

Ամբողջ խնդիրը նրանումն է, թե ինչպես է կատարվում այդ եվոլյուցիան։

— Արդյոք այդ եվոլյուցիայի մեջ կան խուլիգանական կամ պրովոկատորական ելևմտնանքներ։

Ֆրանսիական հեղափոխական բանվորութիւնը իր պայքարի ընթացքում տվել է դեպի աչ եվոլյուցիայի յերկու կարգի տիպիկ որինակներ։ Ահա մեզ Միլլերանը—այսորվան ֆրանսիական հանրապետութեան նախագահը և 90-ական թվականների «փայլուն» սոցիալիստը։

1896 թվին նրա Սեն-Մանդեյում արտասանած ծրագրային նշանավոր ճառը—վոր ռեֆորմիզմի ձևակերպման առաչին փորձն եր—արդեն տարիներ առաչ նիշում եյին Միլլերանի հետագա եվոլյուցիայի ուղինները։ Նա շատ բնականաբար Ամստերդամի Սոցիալիստական Միջազգային Կոնգրեսի (1904 թ.) նախորյակին խոպան չվեց սոցիալիզմի տարաղը—20 տարի հետո, մինչդարաբաշխական բազմաթիվ աթոռների վրա նստելուց հետո—բուրժուական հանրապետութեան նախագահական «պատվավոր» գահը գրավելու։ Արդեն 1900 թ. Համաշխարհային Ցուցահանդեսին այդ «բանվորական դեպուտատը» դժվարանում եր հաղորդակիցը լինել բանվոր դասակարգի չարքաշ ապրուստներին և իր համար շոյելի յեր համարում, վոր նրա կինը ամենահարուստ ազամանդներ կրողների շարքումն է։

Դեպի աչ եվոլյուցիայի յենթարկվեց նաև մյուս ականավոր սոցիալիստ—Ռենե Վիվիանին, վորը արդի Ֆրանսիայի բուրժուական պետական խոշոր դեմքերից է։

Ասացինք խնդրեմ, դրա համար Ֆրանսիայի բանվորութիւնը առանձնապես ատից Ռենե Վիվիանիին կամ Միլլերանին։ Վոչ։ Նույնքան, վորքան մյուս բոլոր բուրժուական քաղաքական գործիչներին։ Հատուկ անհատական անհանդուրժելիութիւն չեր ցուցադրում վոչ դեպի մեկը և վոչ էլ դեպի մյուսը։

Բայց այլ եր մի ուրիշ ռենեգատի—Արիստիդ Բրիանի հանդեպ Ֆրանսիայի հեղափոխական բանվորի բռնած դիրքը։ Սա դեպ Ֆրանսիայի հեղափոխական բանվորի բռնած դիրքը։ Սա դեպ Ֆրանսիական պրոլետարիատի տիպիկ խուլիգան-եվոլյուցիոնիստի ներկայացուցիչ եր և որգանապես անմարսելի։

Ինչո՞ւ։

Վորովհետև նրա եվոլյուցիան համեմված է յեղել այնպիսի ստոր արարքներով ու դառն թույնով, վոր պատմութիւնը յերբեք չի մոռանում։

Ֆրանսիայի Սոցիալիստական կուսակցութեան անդամ Բրիանը 1904 թվին Ամստերդամի Միջազգային կոնգրեսում ընդհանուր դործադուլի—grève généralle-ի պերճախոս զեկուցողն եր։

նողն եր։ Ընդհանուր գործադուլի գաղափարը այն ժամանակ հաջողության չունեցավ գլխավորապես Բերելի դիմադրության պատճառով, վոր այդ միաքը գտնում եր «անարխիստական»։ Սակայն Բրիանի այդ պարտությունը պակաս դափնիով չեր պատում նրա անունը պարբերական գործադուլներով ապրող միջազգային բանվորության, մանավորապես Ֆրանսիայի պրոլետարիատի աչքում։ Նա «լավագույն հեղափոխականի» տիպարն եր համարվում։

Նույն այդ Բրիանի 1904 թ. Կյուլոզում գործադուլավոր հանքային բանվորների պաշտպանության ոգին դատարանում արտասանած ճառը տասնյակ հազար որինակներով տարածվել և Ֆրանսիայի բոլոր ծայրերը և շատ բանվորներ անգիր կրկնում եյին նրա ազդու հատվածները, վորովհետև Բրիանի ճառը—լավագույն ճառերից մեկն եր, վոր յերբևե արտասանվել եր գործադուլի պատության արդարացման համար։

Ահա այդ մարդը հաղիվ մի տարի անցած, արդեն վորպես Մոնիս-Կլեմանսոյի կաբինետի մինիստրը, խեղդում և գործադուլները և սրրագործում զինվորական ուժով Սենտ-Ետիենի քարածխահանքերի գործադուլի ճնշումը,—այն հանքային բանվորների՝ վորոնց նա նույնիսկ ներկայացուցիչն եր պարլամենտում...

IV

Դ. Անանունը յերբեք եվ չի փայլել մի առանձին սոցիալիստականությամբ ու հեղափոխականությամբ, վորոնցից նա հրաժարվեր կամ չհրաժարվեր։ Նա մի րոպե, 1905/06 թ.թ. ռուսական առաջին հեղափոխության ընդհանուր հոսանքի հետ «տրվեց ու տարվեց» կիսատ-պռատ հասկացած իր «սոցիալիզմով»,—վորպեսզի սպեցիֆիկի մյուս ազեիտների հետ որ-առաջ իր վրայից քցի կարմիրի տեղ ծախած իր դեղին տարազը Ստալիպինյան ռեակցիայի հարվածների տակ։

Անանունի եվոլյուցիան դեպի ալ չեր կարող մեզ առանձին մտահոգություն պատճառել և վոչ եվ այն ընդհանուր առերեսության պատճառ դառնալ, վորպիսին անկարելի կե լենում զսպել հեղափոխական-կոմունիստական դաժան կռիվը իրենց ուսերի վրա տարած շարքային թե պատասխանատու ընկերների մոտ և ժամանակ առ ժամանակ բռնկում և, յերբ այդ պարոնի անունը յերևում և մեր վորևե կուսակցական-խորհրդային հրատարակության կամ հատատաուության—ներկա դեպքում Յերևանի Թանգատանի—դրության տակ։

Դ. Անանունը չհասավ իշխանության հարկավոր չափով։ Շատ կարճատև յեղավ Դաշնակցության թագավորությունը։ Այդ «պատվին» արժանացավ նրա հոդևկից ընկեր Բախշի Իշխանության, վորի վոճրագործությունների առաջ ձյունի նման սպիտակ ևն ու անմեղ մի անհնար Ս. Գարագաշի վրա բարձված հանցանքները, թեև զզվելի Բախշիի վոճիրները չեյին խանգարում Անանունին համբուրվելու նրա հետ։ Անանունի հոդևկից Բախշի Իշխանյանի մինիստրական ծառայությունները «Փրկության Կոմիտեյում» տևեցին հաղիվ մի քանի որ։ Բայց Անանունի վարքագիծը,—առանց մինիստրական պորտֆելի—պակաս խուլիգան չե յեղել մենշևիկյան Վրաստանում, դաշնակցական Հայաստանում և մուսավաթական Ադրբեջանում։ Յեվ ինչ վոր ձեռքից յեկել ե—իսկ նրա՝ ինչպես և մյուս կարգի հակահեղափոխականների ձեռքերը վերջի-վերջո շատ կարճ են յեղել—նա չի խնայել։ Յեվ դրչով, և՛ խոսքով, և՛ գործով նա շատացել և, առանց սպասելու վոր իրեն հրավիրեն, խոցել ու վիրավորել մեր սիրտը։

Գիտեք ինչպես։

— Վոչ վորպես հոսանքի ներկայացուցիչ քաղաքական հակառակորդ։ Վոչ։ Այլ վորպես տիպիկ խուլիգան—հայհոյելով մեր «կուռքերը», թունավորելով մեր «հիշատակները» և այդ—հանուն «սոցիալիզմի», «մարքսիզմի»...

V

Թե ով եր պարոն Անանունը նախքան Հոկտեմբերյան հեղափոխությունը Բագվում ա՛րդեն 910-ական թվականներին, վերը խոսվավանում և ինքը Անանունը։ Շահումյանի կարծիքը նրա մասին—ամբողջ բալշևիկ կուսակցության կարծիքն եր։

Բայց գիտե՞ք ով և պ. Դավիթ Անանունը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո։

— Կամավորական բանակի ազենտը, «մեծ ազգասերների» Պուրիշկևիչ, Կալեդին և ընկ. գաղափարախոսը Անդրկովկասում։

Չկարծեք թե մենք կվորձենք վերհիշել այստեղ փաստեր ու անցքեր, վորոնցից ուշիմ ընթերցողը ինքը պետք և չեզրակացներ մեր պնդումների ճշտությունը։ Տողերի մեջ կարդալու կարիք չկա։

Սևով սպիտակի վրա Անանունը գրել և, զարձյալ իր կոտրած ձեռքով, վոր նա խուլիգան գեներալի ծրագիների վոչ-պակաս խուլիգան յերկրպագուն է։ Ահա լսեցեք։

Պատմելով թե ինչպես մի խումբ սոցիալ-դավաճաններ, միացած ամեն կարգի հակահեղափոխական խմբակցությունների հետ, փորձում են Բագվում «ուղղել ներքին ազգային ֆրոնտը» և թե ինչպես Սահակյան Շահումյանը դեմ է արտահայտվում դասակարգերի համագործակցության այդ ծրագիրներին, մասնավորապես չի համաձայնում «թաթար ցեղի» դեմ դիրք բռնել, —Անանունը գրում է.—

«Ի՞նչ եր ցնում անել։ Ուղղել ներքին ազգային ֆրոնտը, վերջ տալ անտեղի կրքոտ քննադատությունների ու վճռերին և հայ հեղափոխականությանը մղել դեպի ինքնապաշտպանություն։ Յես արտաքացությամբ այն կարծիքը հայտնեցի, վոր բոլշևիկական Ռուսաստանից մենք ոգնություն չենք ստանալու։ Մեզ կարող է ոգնություն հասնել միմիայն կալեդինը, վորովհետև նրա մեջ ամուր է հոսած թե ռուսական պետական գործության ամրողջության գաղափարը և թե այն հակացողությունը, վոր կորցնել Անդրկովկասը՝ ասել է վտանգի յենթարկել Հյուսիսյան Կովկասը և Ռուսաստանի հարավը։

«Սահակյանը գտավ, վոր մեր ժողովում դաշնակցականին պատշաճ խոսք ասացի չես, և իրենց կուսակցության կողմից հայտարարեց, թե իրենք մերժում են ազգային ներքին կապը, ընդունում են դրության սպառնալից լինելը հայերի համար և թուրքական վտանգի դեմ պիտի պայքարեն միմիայն միջազգային ուժերով։

«Այսպիսով հայ հեղափոխական կազմակերպությունները անկարող յեղան համաձայնության գալ բոլշևիկների հետ։ Նրանք իրենց միանգամայն զատեցին հայոց ազգային մարմնից»*)։

Այս տողերի մեջ—վորտեղ Սահակյանի մտքերը թեև ձևակերպված են անբարեխղճորեն,—զարձյալ յերևում է դասակարգային

*) Տես՝ «Մշակ», 1919 թ. մարտի 29, № 69, Դավիթ Անանուն—«Բագվի շիրմները»։

աշխարհայացքի հետևողական կիրառումը Սահակյանի տրամաբանության մեջ և անդավաճան ընթացքը դեպի Բագվի անխտիր բոլոր ազգությունների բանվորության։ Այստեղ յեթե մտքերի աղավաղում կամ անճիշտ արտահայտություններ կան, բայց վոչ ի վնաս Դ. Անանունի մտքերի, վորովհետև նրանց արձանագրողը ինքը՝ այդ մտքերի հեղինակն է։

Այսպես ուրեմն—կալեդինի պատմականության մեջ և փնտռում Բագվի «բանվորության» փրկությունը։ Զե՞, վոր Անանունը իրեն «սոցիալիստ» եր հորջորջում և «մտահոգված» եր բանվորական դատով։ Նա դեռ զարմանում, վոր Սահակյանը լսում է «հյուսիսից յեկող Լենինի հրահանգներին» ու արհամարհում կալեդինի գիտակից ազնտի, ազգասեր ու հեղինակավոր... խուլիգանության։

Այսպես, իրար հակադրելով բալշևիկների և իր ու դաշնակների ֆրոնտները, Անանունը իր այդ հիշողությունների մեջ առիթը չի թողնում իր անդուռն քերանով հայհոյելու Անդրկովկասի ամբողջ բանվոր դասակարգին ու կոմունիստ մարտիկների սրտին մոտ շիրմների հիշատակը։ Յեվ ահա անսանձ ծայր է տալիս անանունական զզվելի բամբասանքների, աղավաղումների, ստությունների։ Մի տեսք, թե ով եր Սահակյանը—ըստ Անանունի.—

ա.) մի անդիտակ գործիք մուսավաթական կուսակցության ձեռքին, Ռասուլ-Զադեների.

բ.) ծախված մեկը մուսավաթական Ջեվանշիրին.

գ). Նավթարդունաբերող Շիբաևի ագենտը բանվորության մեջ։

Ահա լսեցեք մեկը մյուսին հաջորդող այս լիրբ հերյուրանքները։ Սահակյանը չի ուզում իր ձայնը մասնակից անել Անանունների Դյուլքանդանյան հայ-թյուրքական դավադրությանը և վոչ միայն հրաժարվում՝ այլև մերկացնում և այդ նենգ ծրագիրը։ Անանունը այդ առթիվ գրում է.—

«Պարտվողական դառնալով՝ Սահակյանը բնականորեն պիտի դաշնակիցներ փնտրեր իր հոսանքի համար։ Յեվ ի սրտի հայտարարում ենք, վոր նման դաշնակից ներ հանդիսացան Մամեդ-Եմին Ռասուլ-Զադեները (տես «Մուսավաթի» պարագլուխը), Բեհբուդ խան Ջիվանշիր և այլն։ Յեվ այստեղ նորից կրկնվում եր նրա սխալ սիստեմը ընկերներ ու բարեկամներ ընտրելու մեջ*)։

*) Տես՝ «Մշակ», նույն №-ը։

Ապա պատմելով, թե ինչպես Սահիմանը աշխատում եր հաճոյանալ «Մուսավաթին», Դ. Անանունը վերհիշում է Սահիմանի բողոքը հայ կամավորների այն արարքների դեմ, որոնք հանրածանոթ եյին։ Դաշնակցական յենիչերինները կոտորում են թուրք անմեղ ժողովրդին և Սահիմանը պահանջում է, որ Բագվի քաղաքապետ Բիչի նախագահությամբ կազմված վախտականներին ղեկավարող միջազգային կոմիտեն իր դեկլարացիայի մեջ բողոքի նաև այդ ազդամիջյան անմիտ սիրաշգրծության հեղինակների—իմա դաշնակների դեմ։ Այդ բանը շատ է վրդովվում «վոչ-դաշնակցական» Անանունին և նա ուրախությամբ արձանագրում է Սահիմանի առաջարկության պարտությունը.—

«Ապա Սահիմանը պահանջեց, որ կոմիտեն իր դեկլարացիայի մեջ հայտարարե, որ հայ կամավորները կոտորում են Ղարսի շրջանի թուրքերին։ Այս պահանջը հրապարակ եր հանվում մի ժամանակ, յերբ թերթերը լի եյին Տանձոտի, Արդանուչի և մյուս վայրերի վողբերգությունների նկարագրությամբ։ Բնական է, որ Ռասուլ-Զադեներին հաճույք արած լինելու համար յեղած պահանջը պիտի մերժվեր»*)։

Այսպես ուրեմն, մեր Սահիմանի սիրտը վոչ միայն չի ցավում ցինիկ Անանունի սրտի չափ, յերբ թուրք-դաշնակցականները կոտորում են Տանձոտում կամ մի ուրիշ տեղում անմեղ հայ գյուղացիներին, այլև—նա պաշտպանում է «թաթար ցեղը» և ուզում է հակառակել թուրք նաչալնիկի անմեղ գյուղացիների կոտորելուն։

— Միայն թե «հաճույք արած լինելու Ռասուլ-Զադեների...»։

Այսպես, ուրեմն, մեր Սահիմանը սուլթանական Թյուրքիայի մի «գործակալ» եր, իսկ ղվվելի ղրպարտիչը—հայ ազգի բարեբարը!?

Բայց այդչանով չի բավականանում նա։ Ըստ Անանունի—Սահիմանը ստանալիս և յեղել իր վարձը մուսավաթից, գուցե և մուսավաթի միջոցով ավելի հեռվից իր պարավոզական քաղաքականության (պարաժննչեսավոյի) համար։ Բամբասագիրքը շեշտում է.—

«Գրել եմ արդեն, որ Զիվանշիրը պաշտոնի կանչեց Սահիմանին։ Առհասարակ նա չի խնայել իր ոգնությունը, որին Սահիմանը միշտ կարիք և զգացել բանտում և աքսո-

*) Տես՝ «Մշակ» նույն №-ը

րում։ Յերե Սահիմանին պատկանած կուսակցությունը մտահոգեր իր մասին, այն ժամանակ նա գուցե ստիպված չեր լինի հաղորդակցություն մեջ լինել Զիվանշիրի պես րոբենու հետ։ Սահիմանը շատ թանգ վարձատրեց իրեն հասցրած ոգնության համար»։

Այս ստոր ղրպարտությունն էլ Բագվի կոմունայի առաջնորդի անմոռանալի հիշատակին չի բավարարում Անանունին։ Հարկավոր և ավելի ուժեղ «փաստ»։ Պետք և հանել յերկու աչքը միանգամին, ցույց տալ բանվորության, վոր Սահիմանը ուղղակի ծախված եր վոչ միայն Ռասուլ-Զադեներին և վոչ միայն քաղաքականապես, այլև—ո՛ղվվելի խուլիգան—վոր Սահիմանը մի կտոր չոր հացի համար, պաշտոնը չկորցնելու նպատակով նույնիսկ դավաճանում է բանվոր դասակարգի շահերին։ Կարդացեք այս ցինիկ տողերը և յերե անգամ յերկաթե յեն ձեր ջղերը՝ փորձեցեք չվրդովվել.—

«Սահիմանը պարզ ծառայության եր մտել Շիբաև և Ընկ. մոտ։ Պաշտոն առաջարկողը յեղել եր այդ ձեռնարկության կառավարիչ ինժիներ Բեհբութ խան Զիվանշիրը ճիվաղը, վոր Բագվի հայկական նախճիրների կազմակերպողներից մեկն եւ Զիվանշիրը Սահիմանի դպրոցական ընկերն եր։

«Սահիմանը պաշտոնով տեղափոխվեց Բալախանի։ Նրա նյութական վիճակը լավացավ։ Նույնիսկ դրժե ձեռնարկեց, վոր մի գումար անտեսե և կարողանա վճարել հին պարտքերը։ Այդ գործին ընկերացրեց իր անգործ արհեստավոր ընկերներին։ Բայց այդ ընկերները, ինչպես սպասելի յեր, անախորժ մթնոլորտ ստեղծեցին նրա անվան շուրջը։ Գլխավոր դերակատարը այստեղ հանդուցյալ Սուրեն Սպանդարյանն եր, վորի մասին անկարելի յե ասել, թե համակրելի անձնավորություն եր։ Սահիմանը իր անունը փողոցային քաշքշուկներից փրկելու համար փակեց գործը և հրաժեշտ տվեց իր «ընկերներին»։ Նրա համար հաց վաստակելու մի միջոց մնաց միայն—շարունակել ծառայությունը Շիբաևի մոտ։ Այդպես էլ արավ, ընականաբար, հաշտվելով Զիվանշիրի կառավարչական յեղանակների հետ, վորոնց դեմ 1909 թ. սկզբին խիստ բողոք բարձրացրեց «Баку» թերթը, մի բողոք, վորի առիթով անհամաձայնություն ծագեց խմբագրական կազմի և հրատա-

բակիչ Կ. Խատիսյանի միջև. խմբագիր Կ. Պոնոմարևը և աշխատակիցները հեռացան»։

Պատկերը մեր լավագույն ընկերների բավական ցայտուն կերպով և նկարագրված Դ. Անանունի «հիշողությունների» մեջ, այնպես չէ՞...

Սահմանը «հաշտվում» և նավթային կրեսոսների կատարյալ գոհությանը հետևալն չափով «ծախվում» նավթարդյունաբերող Շիբաևին, որը իր մեջ մի կոստանդին Խատիսյանի գրչակների չափ անգամ ոչ չի զոնում պաշտպանելու Բագվի բանվորների շահերը...

Սուրեն Սպանդարյանը «գլխավոր դերակատարն» և «փողոցային քաշքշուկների»...

Սպեցիֆիկյան լրբության ծայրն և այս, անանունյան ստորության գագաթնակետը!

Անանունը քնքուշ զգացմունքներ չի տածում առանձնապես դեպի Սուրեն Սպանդարյանի հիշատակը։ Շատ լավ իմանալով, որ Դ. Անանունի խոսքերի «հեղինակությունը» բավական չի հարկավոր չափով մրոտելու Սուրենի անունը, նա դիմում է մեր մյուս, նույնպես վախճանվածի հասցեին, ընդգրկելով—Բողդան Կնունյանի «վկայությունը».—

«Հիշում եմ, որ հանգուցյալ Բողդան Կնունյանցը միանգամայն չէր կարողանում Սպանդարյանին, որ նույնպես հավակնություն ուներ կենտրոնական անձնավորություն լինել մարքսիստական շրջաններում»։

Այսպես, Անանունը միայն մի հոդվածում իր մեջ ուժ է գտնում այսպես հանճնարարելու ընթերցողին ու պատմությանը մեր լավագույն ու հեղինակավոր ընկերներին։ Յերևակայո՞ւմ եք այդ ցինիկ մարդու սանձարձակությունը, յերբ նրա գրիչը չի ընդհատվում դեթ թանաք առնելու և լեզուն պատում է հոգմաղածի արագությամբ։

VI

«Մշակ»-ը փակվեց։ Կաթնատնտես «մեկենասը« փակեց իր քրտնաթոր քսակը։ Թերթը (մինչև իր փակումը) անցավ կադետներին—ակցիոներական ընկերության գլխավորությամբ Սամսոն Հարությունյանի, որի սերվիլ առաջնորդողները մրցում են պարոն Անանունի սերվիլիզմի հետ։ Վերջինս արդեն բավական հող պատրաստած «թաթար ցեղը» և «ռուս մուժիկը» հոլովելով,

շտապում է Յերևան, իր անզուգական ու Ս. Գարագաշին հեչնման ու աննման Բախշիի մոտ, միասին շարունակելու իրենց խուլիգանական հովլյուցիան։

Բայց նախքան Յերևան մեկնելը, նա անցնում է Շուշի։ Այստեղ նա ժողովարանում անում է իր անմոռանալի զեկուցումը «մոմենտի» մասին։ Այդ դասախոսությանը ներկա յեն յեղել մեր շատ ընկերներ և հիշում են յերևի այն գոհարները, որը նա—ըստ սովորության—իր պատրաստած ու գրի բերանով շռայլեց մեզ շրջապատող ժողովուրդների ու բալշևիկներիս հասցեին,—ուր նա ցինիկաբար սկսեց հոլովել ամեն տեսակի հերյուրանքներ ռուս մուժիկի ու թաթար ցեղի հասցեին.—

— Բավակա՞ն է վորքան՝ մեր աչքերը հարեցինք բարբարոս Ռուսաստանի վրա. մեր փրկությունը պետք է սպասել քաղաքակիրթ Յեվրոպայից—Անգլիայից, Ֆրանսիայից, Ամերիկայից...։ Բավական է վորքան համբերեցինք վայրենի «թաթար ցեղի» վայրագություններին...

Նախագասությունը չվերջացրած—պատմել է մեզ ընկ. Ս. Շահունցը—առաջին շարքերում իր աշակերտների՝ նույն Ս. Շահունցի և մյուսների մեջ կանգնած Ա. Ռուբենին իսկ վրդովված դոռում է անպատասխանատու հռետորի դեմքին.—

— Բավական է, սրիկա...

Իսկ Ռուբենին իրավունք ուներ, ինչպես և ամեն մի Շուշվա բնակիչ, արհամարական լինել։ Ղարաբաղի ազգաբնակությունը ապրում էր հայ-թուրքական կատաղածների մթնոլորտում։ Դ. Անանունի շաղ տված խոսքերը չէին, որ պիտի նպաստեին ազգամիջյան յեղբայրության և մտքերի խաղաղացմանը։ Ա. Ռուբենին յերես էր դարձնում հինավուրց բարեկամից, վորովհետև նա տեսնում էր իր դիմացը իսկապես վոր մի հրեշավոր ոդիոզ ֆիգուրա, վորի մարդատյաց ու խուլիգան մտքերը հայ-թուրքական նոր, եվ ավելի սարսափելի պագրոմների դուռն էին բացում (և բացին իսկապես) դժբախտ Ղարաբաղ-Զանգեզուրի հայ և թուրք գյուղացիների առաջ։ Հայ և թուրք տասնյակ գյուղեր «մաքրվեցին» և տասնյակ հազար անմեղ աշխատավորներ թե՛ մեկ և թե՛ մյուս կողմից գոհ գնացին պագրոմային պրովակացիային ու ծրագրներին։

Բայց թողնենք ղարաբաղյան այդ վերջին ավանդատների ու պագրոմների պատմությունը—մանավանդ վերջին իմպերիալիստական պատերազմի շրջանում ու Անդրկովկասի խորհրդայնացման պատերազմի շրջանում։

նացման նախորյակին։ Մի որ բավական վառ դույներով կմերկացվի դաշնակ-սպեցիֆիկյան սև վինակցութ֊յան պատկերը այդ ծակ-ապգասիրական կեղտոտ գործում։

Դ. Անանունը անցնում է դաշնակցական Յերևանը։

Ողիոզ ֆիգուրան վերջապես անցնում է իր յերազած իրականութ֊յունը, վորտեղ նա իրան զգում է՝ ինչպես ձուկը ջրում։ Սկսվում է դաշնակ-սպեցիֆիկյան «պետական համագործակցութ֊յունը»՝ ամբողջ թափով։

Դ. Անանունի տիպի գործչի ու գործունեութ֊յան ընտրյալ վայրը—դաշնակցական Հայաստանն էր։ Դաշնակներին հարկավոր էր բոլշևիկների դեմ կռվելու համար ձեռքին ունենալ գործակալներ՝ թեկուզ կեղծ «սոցիալիստների», անմաքուր «մարքսիստների» շարքից, ճիշտ այնպես, ինչպես հեղափոխական բանվորութ֊յան դեմ իմպերիալիստական պատերազմի ժամանակ յեվրոպական բուրժուազիան ոգտվում էր գերազանցապես սոցիալ-խուլիգաններից, նրանց վստահելով իրենց շահերի պաշտպանութ֊յան բոլոր ավան-պոստերը։ Այնտեղ էր արդեն ու «գործում» էր ախտահրոչակ Բախշին։ Դաշնակցական Յերևանին պակասում էր միայն Դ. Անանունը։

Այդ «մարքսիստը», «սոցիալիստը», վոր յերբեմն «աշխատել»և Բագվի զարթաղցի բանվորների մեջ և շարունակ կոսեցրել և պրոլետարական գիտակցութ֊յան արագ առաջխաղացումը «սոցիալիզմի» սպեցիֆիկ ըմբռնումներով,—վորի դեմ միշտ էլ պայքարել են Շահումյան, Սալանդարյան, Կնունյան և մեր մյուս ընկերները,—բավական վորակված էր դաշնակցական Յերևանի մթնոլորտում կատարելու սոցիալ-դավաճանի սուրբ դերը՝ մանավանդ վոր կոմունիստների բերաններին մեծ փականք եյին դրել Անանունի վինակիցները, խուլիգանի խոզեյինները։

Յերևանում նա շարունակում է իր կիսատ ձեռացած գործը.—«թաթար ցեղը», «ռուս մուժիկը», «հեղափոխական ույժերի ազգային ֆրոնտ»—ինքնրկև ուղղած «ներքին և արտաքին թուրքերի» դեմ և այլն և այլն։

Մենք անձնապես հիշում ենք—և հիշում են մեզ հետ վրաստանից ու Հայաստանից միաժամանակ աքսորված շատ ընկերները—վոր յերբ Ռամիշվիլու կարգադրութ֊յամբ քշված մենշևիկ-ինտերնացիոնալիստ Արշակ Զուրաբյանը յերևաց Յերևանում և շրջապատված ընկերներով ու իր սովորական հանաքներն անելով առաջին անգամ անցնում եր Սատափյան փողոցով, հանկարծ վո-

ղոցի մյուս ափին նկատեց Անանունին։ Նա շուռ ավեց յերեսը և զզվանքով բացականչեց.—

— Уф, неужели этот подлец здесь!

Կարծում եք Արշակը ակնածում եր Անանունի «գիտնականութ֊յունից» և «հեղինակութ֊յունից»։ Վոչ. Զուրաբյան Ռաշիդի առաջ լեզուն շատ կարճ եր Անանունի և նույնիսկ Արշակի ներկայութ֊յունը վերջինիս դասախոսութ֊յան՝ շփոթեցնում եր ու սանձում Դ. Անանունին։ Անանունյան սակ վոտքերը կարճ եյին լինում Բագվում «իր մատուցած ծառայութ֊յունների» մասին, յերբ հենավուրց կալնինները դեռ չեյին ընկած։

Պ. Անանունի «Հառաջի» 1920 թ. սկզբների № №-ների մեջ լույս տեսած հոդվածների անալիզը թողնում ենք Յերևանի մեր ընկերներին։ Գոնարներ կան այնտեղ «Մշակից» անհնման, յերբ նրանց մեջբերողը Անանունը չէ։ Այդ աշխատանքը թողնում ենք Ազրբեջանի Հայաստանի Իսպառարտ հանձնաժողովին և Ազրբեջանի Հայաստանի մեր այն ընկերներին, վորոնք Անանունի յերևանյան սանձարձակութ֊յունների կենդանի վկաններն են յեղել։

Կհիշեն յերևի նույնպես Անանունի հայանի դասախոսութ֊յունը «հեղափոխական միասնական ֆրոնտը» կազմելու մասին մեր դեմ, վորտեղ նա առաջարկում եր հսերներից մինչև դաշնակները կազմել մի կուսակցութ֊յուն, վոր պարզապես կոչվի «սոցիալիստական», առանց մյուս «ավելորդ» ածականների՝ «դեմոկրատ» կամ «հեղափոխական»։ Նա այդ որը կաշվից դուրս եր գալի, ապացուցելու, թե մենք «սխալվում» ենք Դաշնակցութ֊յունը վոչ-սոցիալիստական կուսակցութ֊յուն համարելով։ Հիշողներ շատ կլինեն նույնպես, թե ինչպես Անանունը պարլամենտի սրահի ամբիոնից, դաշնակցական վարձկանների ծափերի տակ, անդուռն հայտարարութ֊յուններ եր անում մեր դեմ և ավելի ևս ծրմռում իր կապկանման յերեսը՝ վորքան կարելի յե նկատելի արհամարհական շեշտ տալու իր խոսքերին։ Նա ցոփ կարած կատեգոր դեմ (Ռեննեք. Կատեգ. ընկ. Լենինի գրած մանգոտ քննադատութ֊յան («Ռեննեք. Կատեգ. և պրոլ. հեղ.») պատճառով, հանդգնում եր դռռալ բառացի,—այսպիսի պատմական զարձվածներ չեն մոռացվում.—

— Եվ տգետ ռուս մուժիկի դիրքը ձեռքս վերցրի ու հավիտյան մի տասը յերես կարդացած՝ դեն շպռտացի. բայց լայտ ել չեմ անում եվ մարդու դիրքը կարդալու...

Յեվ այլն և այլն,—անանունական վորակումներ։ Այդ խուլիգանությունները իհարկե դյուր եյին գալիս դաշնակցական ամ-

բոխին և նրանց ծափերը ավելի անդուլ պարձնում հայ ևիիչևրության գաղափարախոս ու գլխավոր գաղափարին։

Բայց շուտով ներկայանում է առիթը խոսքից գործի անցնելու և Դաշնակցությանը ռեալ ապացույցներ տալու իր անկեղծ ու մինչև վերջ գործակցության միանշանակ ներքին ազգային ֆրոնտում։ Բռնկում է 1920 թ. մայիսյան ապստամբությունը։ Անանունը ու հչե-իսկի Ս. Դարագաշին չնմանող Բախչին ստանում են «открытый лист» և արտակարգ լիազորություններով մեկնում գավառ։ Դաշնակցական այդ carte blanche-ը տեսել են շատերը։ Այդ անզուգական դոկումենտի սևագրության իսկական —այն՝ որ պահվում է արխիվներում—տեսել է ի միջի այլոց ընկ. Արշավիր Մելիքյանը։ Մենք պահանջում ենք ընկ. Արշավիրից կատարել իր կոմունիստական պարտքը, վորպեսզի ապագա սերունդները, յերբ թերթեն Շահումյանի, Սպանդարյանի և մեր մյուս մեծ ու փոքր ընկերների վրա Անանունների հերյուրած պլպատությունները ու սուտությունները, տեսնեն թե մուսավաթին ու Շերբայի կանտորային ծախված լինելու մեջ Շահումյանին մեղադրող սրիկան ինչպիսի վատահություն եր վայելում դաշնակներից—և ինչպիսի վոսակիանական ծառայությունների ընդունակ*)։

VII

Ե՛լ բավական յեղավ։

Այդ ողիոզ փիգուրան կորցրել և ամեն իրավունք մեր ներողամտության։ Նրա պաշտպանությունը—անհուսալի ձեռնարկություն և և մեր իրականության «անիրազեկ» «Զարյա Վոստոկա»-յի հոդվածագիրը իր վրա մեծ համարձակություն է վերցնում, յերբ հայտարարում է «Անանունի ռենոմեն վերականգնած...»!

Զղվանքի զգացմունքը բրիգլիվոստին պետք է թելադրեր կուսակցականին մի փոքր ավելի զգույշ լինել Շահումյանի, Սպանդարյանի և մեր այլ ընկերների հիշատակը հայհոյողի պաշտպանությունը ստանձնելիս...

Նա՝ ով գործել և գաղնակ-մենշևիկ-մուսավաթական իրականության մեջ այսօրվան իրավակարգի հաղթանակի համար, գիտե, թե վորքան անջնջելի չե ողիոզ Անանունի այդ ռեպուտացիան և վորքան զզվելի նրա անունը մեր հեղափոխական բանվորության ու նրա մարտիկների համար։

Թող դուրս գա մեկը մեր այդ շրջանի ընկերներից ու ասի, թե Դ. Անանունը նրան կարող է այլ զգացմունք ներշնչել քան այն, վոր արտահայտում ենք մենք.—

— Նողկանք, արհամարհանք։

Այդպիսի ընկեր չի կարող գտնվել մեզանում։ Մեզ համար պ. Անանունը քաղաքական փիգուրա չե, կուսակցական հակառակորդ չե։ Նա մեզ համար մի վողոցային հայհոյիչ, ստոր խուլիգան է, վոր վաղուց վոչինչ ընդհանուր չունի սոցիալիզմի հետ և վորը մեզանից միայն coup de grâce կարող եր հայցել։

Ո, թող չկարծեն, թե մենք պահանջում ենք Դ. Անանունի համար վորպես «վրեժ»՝ կախաղան կամ գնդակ։ Դա մեծ պատիվ կլիներ նրա համար։ Ափսոս է գնդակը։ Մեր իրավացի պահանջն է վարվել նրա հետ այնպես, ինչպես վարվեցին Լենինգրադում ու Մոսկվայում մեր ավագ ու մեզնից խելոք ընկերները Խորհրդային իշխանության պիտնական խուլիտաելների հետ, յերբ մի քանի տասնյակ պրոֆեսորների ցույց տվին «յերանավետ յերկիրների» ճանապարհը, վորտեղ ամեն ինչ «իդյալական» է ու ժողովրդների դրությունը «յերջանիկ»։—

— հաճեցեք, պարոն պրոֆեսորներ, ճանապարհը բաց է...

Արտասահմանում քաղցած չեն մեռնում նրանք։ Նրանց տերերը առատորեն վարձատրում են այդ սրիկաների ծառայությունները և յեթե նրանց մեջ գտնվում են «փափկանկատներ», ապա այդպիսինների հատուցումը կատարվում է դեղին ինտերնացիոնալի միջոցով, այնպես վոր աջը «չգիտե»՝ թե ձախը ինչ է անում...։

Դ. Անանունը նույնպես քաղցած չի մեռնի։ Այնտեղ նա ազատ կլինի նորից շարունակելու իր գրավոր ու բերանացի բամբասանքները, ստությունները մեր դեմ անհատապես ու en bloc և կատանա առատ վարձը իր աշխատանքի։

Այնքան լավ մեզ համար և այնքան վատ Անանունների համար։

Ժամանակ է հասկանալու, թե անմահ Շահումյանի և Սպանդարյանի շիրիմները բողոքում են, վոր սոցիալիստական կարգերի վորևե հաստատության մեջ Դ. Անանունին վստահում է թեկուզ պատարկ արկղների պահպանությունը...

Բողոքում ենք և՛ մենք, կենդանի վկաները, վոր մեր ուժերի չափով մասնակցել ենք Խորհրդային իշխանության ու կոմունիստական իդեալների հաղթանակին, և խնդրում մեր Յերևանի ընկերներից—և՛ն, վորոնց ծաղրաբար Անանունը անվանում է «աբկերներից—և՛ն, վորոնց ծաղրաբար Անանունը անվանում է «աբկերներ» —հասկանալ մեզ, հեռացնել մեզնից դառնության դի մելիքներ»

այդ բաժակը և լուծված համարել այդ՝ վերջին հաշվում մի շատ
վ ո ղ ո ր մ ե լ ի ա ր ա ր ա ծ ի հ ա ր ց ը։

Չի՞ վոր խոհապես ընավ վիճելի չէ, թե մեր «սոցիալիստական» հակահեղափոխության մեջ չկա ավելի ո դ իո զ ֆ իգ ու ր ա՝ քան այդ ռենեգատ-խուլիգանը։

Ահա այսպես ե, վոր գրվում և հարցը և նա յերկու լուծում չի կարող ստանալ։

Յեվ նրա լուծման մեջ ընավ խոսք չի պատկանի Ստեփան Շահումյանի ու Սուրեն Ազանդարյանի գրպարտիչին, բամբասարկին,—խ ու լ իա ն ի ն։

Թիֆլիս—1923

ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ

I

ԿԱՐԵՎՈՐ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.

Կոմունիստական կուսակցությունները մյուս յերկրներում իրանցից ներկայացնում են դեռևս յերիտասարդ մարմիններ։ Ճիշտ ե, համեմատաբար սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների և ընդհանրապես մյուս քաղաքական համախմբումների հետ՝ նրանք թեև այսոր ել արդեն շատ տեղերում թե թվով և թե վորակով յերկրի առաջնակարգ կազմակերպություններից են,—բայց պահանջվում ե դարձյալ շատ աշխատանք ու հեղափոխական համառ մարզանք առաջ արտասահմանյան կոմունիստական կուսակցությունները այն ուժին ու կորովը, վոր ունի մեր Վ ե կ ա պ ե ն—ВКП(б)։

Պատճառները շատ են։ Յեվ այդ պատճառների մեջ վերջին տեղը չե բռնում այն, վոր նորակազմ կոմունիստական կուսակցություններից շատերը չեն կարողացել ամբողջապես ազատվել յեվրոպական յերկրներում տիրող մինչ-պատերազմական սոցիալ ի ս տ ա կ ա ն տրադիցիաներից կամ Յերկրորդ Ինտերնացիոնալի ժառանգություններից։

Կոմունիստական կուսակցությունների միջուկը արտասահմանում կազմված լինելով սոցիալ-դեմոկրատական կուսակցություններից ձախ, հեղափոխական թևի անջատումից,—նրա դեկավարությունը հաճախ իր հետ ել բերել պայքարի այնպիսի մեթոդներ, վորոնք հարազատ չեին բալշևիզմին։ Դրանով պետք ե բացատրել այն ներքին ճգնաժամերը, վորոնք տեղի ունեցան վերջին տարվա ընթացքում գերմանական, ֆրանսիական, իտալական, չեխո-սլավական, չվեդական կոմունիստական կուսակցությունների շարքերում և վորոնց լիքվիդացիայով բավական մանրակրկիտ կերպով զբաղվեց մեր կոմինտերնը։

Հասկանալի պատճառով կոմինտերնը իր հերթական խնդիրներից մեկն է դարձրել իր սեկցիաների բալշևիկանացումը, որ ասել է՝ լենինիզմի հիմունքների հիմնավոր յուրացումը մյուս յերկրների կոմունիստական կազմակերպություններին կողմից։

Նախկին «հեղափոխական» ու «սոցիալիստ» կուսակցությունների կազմալուծումը և նրանց իսկապես հեղափոխական ու անչակերտ սոցիալիստ տարրերի համախմբումը կոմունիզմի դրոշակի տակ՝ կատարվում է նաև արտասահմանյան հայկական կազմակերպությունների մեջ։ Այդ կազմալուծման ու վերակազմման պրոցեսի վերլուծման, ինչպես նաև նրա խորացման ու շեշտման է նվիրված ընկ. Ա. Մարտունի-Մյասնիկյանի վերջին աշխատությունը՝ «Կուսակցությունները գաղութահայության մեջ» վերնագրով։

Մենք կուզեյինք կանգ առնել մի յերկու յեզրակացության վրա, որ անհրաժեշտաբար բղխում է այդ հրատարակության ընթերցումից, և որ առանձնապես կարևոր է թվում մեզ։

2.

Մինչ-հոկտեմբերյան Հայաստանը շարունակ իր աչքերը հառած է ունեցել «արտասահմանյան հայության» կամ «հայկական գաղութների» վրա։ Յեվ դա շատ բնական է յեղել։ Նման վերաբերմունքը ուղղակի բղխել է դաշնակցական իշխանության ուղղակի բուրժուական բնույթից։ Վերջինս յերբեք էլ վստահություն չէ տածել դեպի մեր բանվորն ու գյուղացին և իր հաշիվները շարունակ կառուցել է դրսի ուժերի վրա—անգլո-ֆրանսիական «բարեկամության» և գաղութահայության «ժանդպակության»։ Դրանով պետք է բացատրել մասամբ այն հեղաշրջությունը, որով դաշնակ ջոջերը հրաժարվեցին «հայրենիքի» դեռ բաղանցապես տերիտորյալ հասկացողությունից և հարեցին «անհայրենիք հայրենիքի» չքնաղ գաղափարին։

Այդ ուղղակի բուրժուական իշխանության եյությունից էր բղխում դաշնակների գործելակերպը։ Այն ժամանակ, յերբ հայ ժողովուրդը ապրում էր Արարատյան դաշտի վրա, նրա բախտը տնօրինվում էր արտասահմանյան կաֆենների սեղանների շուրջը և այս կամ այն յեվրոպացի «մեծ հայասերի» ու դիվանագետի նրբանցքներում, վորտեղ խճողված էին Ահարոնյան, Նուբար-փաշա և այլ հայ-քրիստոնյա յերևելիներ։ Հայաստանի քաղաքական կյանքի «առանցքը» Յերևանը չէր, այլ Փարիզը և Լոնդոնը, վորտեղից սպասվում էին դիրեկտիվներ, հրաշքներ։

Այլ կերպարանք ունի այսօր Հայաստանը, վոր նույնպես հետևանք է մեր իշխանության բանվորա-գյուղացիական կամ Խորհրդային բնույթի։

Արտասահմանյան գաղութահայությունը, վորպես առանձին ամբողջության, մեզ համար գոյություն չունի։ Սա մեկ։ Հետո՝ մեր աչքերը մեխված չեն այնտեղի ունևորության վրա։

Ինչպես ընկ. Ա. Մարտունի-Մյասնիկյանն է ասում իր «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքույկում.—

«Յեթե արտասահմանում կան հայ հարուստներ, վորոնք ուզում են Հայաստանում շահեցնել իրանց գրամները, ճահիճները չորացնել և առուներ անցկացնել թող անեն։ Չե՞ վոր դա պայմանագրության հարց է, ռեալ գործ է և հաշվի խնդիր է։ Յուրաքանչյուր Խորհրդային յերկիր պատրաստ է կապիտալիստներին կոնցեսիաներ տալու» (եջ 22)։

Մեզ ավելի չեն հետաքրքրում հայ ունևորը, քան մի այլ ունևոր-կոնցեսիոներ, մանավանդ վոր այսօր պարզից ավելի պարզ է, թե գաղութահայ մեր ջոջերը Խորհրդային իշխանության դեղեցիկ աչքերի համար չեն և վոչ էլ առանձին «ազգասիրական» թուլության, վոր ուզում են «ճահիճներ չորացնել և առուներ անցկացնել»։ Խնդրի այս կողմն էլ արդեն բավական մերկացած է և բոլորիս հայտնի չե գաղութահայ ունևորության «անշահախնդրության» չափը։

Այսպես դնահատելով գաղութահայ ունևորության դերը և տեղը, բնական է, վոր մենք մերժում ենք կարուկ կերպով այն հերյուրանքը, թե Խորհրդային Հայաստանը նյութական ակնկալիքներ ունի գաղութներից։ Ընկ. Ա. Մարտունի-Մյասնիկյանը շատ տեղին նկատում է հայ բանվորի ու գյուղացու յերդվյալ թշնամիներին.—

«Վոչ, պարոնայք դաշնակցականներ։ Փողային հաշիվներով զբաղվեցեք դուք։ Դա ձեր փեշակն է։ Իսկ Խորհրդային Հայաստանի մասին ասացինք, վոր նա չունի նյութական ակնկալություն դրսից։ Նրա հույսը իր բազուկներն են, իր աշխատանքն է։ Խորհրդային Հայաստանը բանվոր-գյուղացիական յերկիր է» (եջ 21)։

Մեր վերաբերմունքը, կոմունիստական տեսակետը դեպի գաղութահայ ունևորությունը շատ պարզ է բնորոշած։ Նա միջ

ազգային բուրժուազիայի անբաժան և մի մասնիկն է միայն։ Վո՛չ-ավելի։

3.

Բայց բացի հայ բուրժուազիայից, բացի Նուբար-փաշաներից, Պոյաճյաններից, Կյուլպենկյաններից և նմաններից,—գաղութներում կա սակավաթիվ հայ աշխատավորություն։ Հենց միայն Ամերիկայում հայ բանվորության թիվը հասնում է 40—50 հազարի։ Ֆորդի գործարանում աշխատում են հազարավոր բանվորներ. Չիկագոյի հայության սպանդանոցում հայ բանվորների թիվը հարյուրներով է հաշվում։ Յեվրոպական և ամերիկյան կապիտալի համար հայ գաղթականը մի բավական ցանկալի ու համեղ պատառ է։ Լինելով կուլտուրապես շատ ավելի ցած, անգիտակ իր դասակարգային շահերին, հայ աշխատավորությունը հաճախ շտրեյկբրեխերի դեր է կատարում արտասահմանյան կապիտալիստի ձեռնարկներում։

Այն հանգամանքը, վոր այսոր Հայաստանում Խորհրդային իշխանություն է, չի կարող իր ներգործական դերը չունենալ գաղութահայ աշխատավորության դասակարգային գիտակցության սթափման և հեղափոխական կորովի ամրապնդման գործում։ Ընդհանրապես Խորհրդային Միության գոյության փաստը լինքնին արդեն մի բնական զորեղ խթան է միջազգային հեղափոխական շարժման արագացման։

Բայց կոմունիստական կուսակցությունը «ազգային» կուսակցություն չե և մանավանդ նման չե մեղ քաջ հայտնի հնչակյան ու դաշնակցական կուսակցություններին, վորոնց հատկանիշ կողմերից մեկն է պանտյուրքիզմը։ Այսոր, յերբ գաղութներում դաշնակ ու հնչակ կազմակերպվող շարքերից կոմունիզմին են անցնում հայ բանվորներ, վերջիններս առանձնապես լավ պետք է հիշեն այդ հանգամանքը և իրենց հետ չբերեն սովորությունները, վորոնցից դեռևս անսիալի բուրմունք է գալիս։ Իսկ դրա համար անհրաժեշտ է, վոր դաշնակի ու հնչակի խավարից ազատագրված բանվորը անմիջապես կապվի Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Բոլղարիայի և մյուս յերկրների կոմունիստական տեղական կազմակերպությունների հետ։

Ընկ. Ա. Մարտունի-Մյասնիկյանը շատ լավ է անում, վոր առանձնապես ընդգծում է այդ հանգամանքը իր գրքում (էջ126).—

«Այն ժամանակ, յերբ դաշնակցությունը հեռու յա

պահում իրան տեղական աշխատավորությունից, հայ աշխատավորները չեն կարող ապրել ու զարգանալ առանց յեղբայրական կապի և բարեկամական ոգնության, վոր նրանք ստանում ու տալիս են տեղական պրոլետարներին։ Ամերիկայի հայ կոմունիստական կազմակերպությունը Ամերիկայի Բանվորական Կուսակցության անբաժան մասն է, նրա սեկցիան։ Այդպես է կոմունիզմի առաջընթացության որենքը»։

Նեշտեվով նույն այդ միտքը մի այլ տեղ, ընկ. Ա. Մարտունի-Մյասնիկյանը նկատում է դարձյալ.—

«Ապրել Ամերիկայի և Յեվրոպայի խորշերում, նրանց պրոլետարիատի ծոցում և սերտ կերպով չկապվել նրա հետ, չտարվել նրա միջազգային կովով—դա անկարելի յե, դա անհնար է։

Այստեղ է, վոր մենք պետք է տանենք մեր հակառակորդներին.—վերջ, պարոններ, մենք չպետք է մտածենք այն «հյուրասիրության» մասին, վոր անում է գաղթականությանը հենց Հունաստանը, հենց Ամերիկան։ Դա վարիսեցություն է, վոր դուք քարոզում եք։

Չկան տերեր և հյուրեր։

Մենք, այսպես կոչված հյուրերս, պետք է ձեռք ձեռքի տանք տեղական բանվորության, միանանք միջազգային գաղափարներին և Յերրորդ Ինտերնացիոնալի դրոշակների տակ դուրս գանք ընդհանուր թշնամու դեմ։

Այսպես և լինելու բոլոր գաղութահայ բանվորների, գյուղացիների և առհասարակ աշխատավորների տակտիկան (էջ 134—135)։

Այսպիսի գործելակերպը—անհրաժեշտ պայմանն է գաղութահայ աշխատավորների, յերևկվա դաշնակ կամ հնչակ բանվորի կողմից յուրացնելու կոմունիզմի այբուբենը և ազատագրելու նրա միտքն ու սիրտը այն պանտյուրքիստական թույնից, վորով հիմնավորապես վարակված է «արևմտահայ» կամ «գաղութահայ» մասսան։

II

ՅԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.

Գաղութահայ մեր քաղաքականութեյան ճշմանն կարևորութեյունը դիտակցվում է մեր շատ ընկերների կողմից։

Այդ խնդրին եր նվիրված ընկ. Ա. Մարտունի-Մյասնիկյանի վերջին աշխատութեյունը—«Կուսակցութեյունները գաղութահայութեյան մեջ», որի մասին խոսեցինք իր ժամանակին մեր թերթի եջերից։

Այդ նույն հարցն է շոշափում ընկ. Աշոտ Հովհաննիսյանը իր վերջին—«Գաղութահայ խնդիրներ»—բրոշյուրում, որի վրա հարկավոր է ակնարկել հենց մեր հոդվածներից մեկում և խոստացել զառնալ մանրամասն և արդ (տե՛ս «Կոմունիստ» № 73—1925 թ. ապրիլ—«Հասունացած պահանջ» թերթոնը) ավելի ադատ ժամանակին։

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը նկատում է—նույնը ավելի առաջ պնդում եր ընկ. Ա. Մյասնիկյանը իր գրքույկում,—վոր գաղութահայ խնդիրները առաջնակարգ հետաքրքրութեյուն են ներկայացնում մեզ համար։ Ընկ. Ա. Մյասնիկյանը գտնում եր, թե չի կարելի աչքաթող անել արտասահմանյան գաղութների աշխատավորութեյունը, քանի վոր (եջ 6)—

«մեր յերկրի սահմաններից դուրս ապրում է ավելի հարյութեյուն, քան ներսում»։

Ծանոթանանք մի փոքր մոտից, վորքան թույլ են տալիս մեր թերթի սուղ եջերը, թե ընկ. Աշոտ Հովհաննիսյանը իր բրոշյուրում—

— ինչ խնդիրներ է դնում,
— ինչ մոտեցում ցուցադրում,
— ինչ լուծումներ առաջարկում—

գաղութահայ աշխատավորութեյանը և մեզ շահագրգռող այդ կարևոր հարցերում։

Տեսնենք, թե վորքանն նրա պատգամը հետևանք է դրութեյան ճիշտ պատկերացումի և գնահատման, մեր հետապնդած գաղափարներից ու նպատակներից բղխող։

«Գաղութահայ խնդիրներ»-ի ընկեր-հեղինակը—ինչպես ամեն մի հայ կոմունիստ—առանձին քաղցր զգացմունքներ չի տածում դեպի գաղութահայ բուրժուազիան։ Նա կողմնակից է նրա դեմ անհաշտ պայքարի։ Բայց գաղութներում կան—ըստ ընկ. Աշոտ Հովհաննիսյանի արտահայտութեյան — հիմնական յերկու խնդիր, վորոնց համար նա պատրաստ է բանակցել այնտեղի նույնիսկ արտոնյալների հետ։ Վորո՞նք են այդ հիմնական խնդիրները։ Թողնենք թվելու ընկ.-հեղինակին (եջ 9—10).—

«Խնդիրներից առաջինը—գաղութներում պահվածազգային դույքերի ու բարեգործական դումարների հարցն է։

Յերկրորդը—գաղթականութեյան և վորբութեյան հարցը»։

Այդ յերկու հիմնական հարցերից դուրս ուրիշ վոչ մի հարց չի գտնում գաղութներում մեզ հետաքրքրող ու հուզող։ Յեվ «Գաղութահահայ խնդիրներ» բրոշյուրի բոլոր քան—քանևհինգ եջերը, այսինքն ամբողջ գրքույկը նվիրված է հիմնավորելու և պաշտպանելու՝ մի կողմից՝ Խորհրդային Հայաստանի իրավունքները դույքերի կամ—ինչպես մի այլ տերմինով նույն միտքն է ձևակերպում ընկեր-հեղինակը—ֆոնդերի վրա, մյուս կողմից՝ ստեղծելու մի տեսակ «մասսայական ճնշում» գաղութահայ բուրժուազիայի վրա՝ արդարացնելու մեր ակնկալությունները (գրված ընկ. Աշոտ Հովհաննիսյանի բառն ու միտն է) արտասահմանյան գաղութներից, և «փողի քաշը» (եջ 18) դնել անելու։

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը փորձում է ապացուցել իր բրոշյուրով չգիտենք ում, թե (եջ 7).—

«Գաղութներում կան տակավին ազգային դույքեր և ֆոնդեր, վորոնց միակ իրավատերն է, անշուշտ, Խորհրդային Հայաստանը։ Գաղութներում գանվում են բարեգործական և այլ կարգի նյութական արժեքներ, վոր այս կամ այն չափով կապված են Խորհրդային Հայաստանի անվան հետ։

Մեր այդ իրավունքների պաշտպանութեյունն ու դրանց հետ կապված ակընկալութեյունների կենսագործումը պայմանավորված և մեծապես գաղութահայ մասսաների և նրանց կազմակերպութեյունների վարելիք պայքարի հետ։

Այս է, վոր պետք է շեշտենք մենք հիմա, ամենից առաջ և ամենից շատ»։

Ընդգծումները դարձյալ բնագրինն են։

Ցավ պետք է խոստովանել, որ իր բրոշյուրում ընկ. Աշոտ Հովհաննիսյանը բազմաթիվ անգամ և ամեն առիթով (տես եջ 5, 7, 17, 18, 19, 20, 21) շեշտելով դառնում է նույն այդ մեր ակնկալիքներին և մեր իրավունքներին, ըստ ամենայնի պատճառաբանելու, թե արտասահմանյան հայ գաղութներում կատարվելիք աշխատանքների ալֆա և օմեգան հիշած «հիմնական չերկու» կամ ֆոնդային-բարեգործական կետերի մեջ պետք է փնտրել։

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը այսպես դնելով և մոտենալով խնդիրներին, բնականաբար համապատասխան կազմակերպչական սխեմա և առաջարկում։ Նա դժգոհ է արտասահմանյան ՀՈԿ-երի գործունեությունից։ Իսկապես գոհ լինելու չել առանձին առիթ չունի, քանի որ չերեք-չորս տարում հազիվ մի չերեք հարյուր ռուբլի չի ժողովվել, թեև չերեք հարյուր անգամ չերեք հարյուր հազար աղմուկ ու թմբուկ է հարվել։ Այդ վողորմելի գրոշները և նրա շուրջ ստեղծած զալմազալն ու ցերեմոնիան միաժամանակ հնարավորություն են տվել գաղութահայ բուրժուազիային մի տեսակ կոնսոլիդացիայի (ընկ. Աշոտ Հովհաննիսյանի բառն է) չենթարկելու իր դրությունը գաղութների հայ աշխատավորության հանդեպ։ Բուրժուազիան իրան ճարպիկորեն հանձնաբարել է Խարհրդային իշխանության և բանվորա-գյուղացիական Հայաստանի «բարեկամը», համենայն դեպս նախանձախնդիրը նրա շահերի և նույնիսկ նրա ինտերեսների (դարձյալ ընկեր-հեղինակի տերմինն է) ներկայացուցիչը գաղութներում։

Վ.ՈՐՆ է ընկ. Աշոտ Հովհաննիսյանի առաջարկած կազմակերպչական նոր սխեմը, որ պետք է գաղութահայ մասսաները մի սոսկալի դրոհի շարժի արտասահմանյան ֆոնդերի և նրանց սնդուկների վրա նստած հայ բուրժուազիայի դեմ։

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը գտնում է, որ կոմունիզմը և կոմունիստական աոոջյա պրոպագանդը, ինչպես նաև հեղափոխության հաղթանակը կարմիր գծից դուրս լավ բաներ են, բայց դրանց համար պահանջվում են տասնյակ տարիներ (տե՛ս եջ 15—16)։ Մինչդեռ ընթացիկ հարցերին, կոնկրետ խընդիրների (որոնց ընդգծումները «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրինն են) լուծման համար նպատակահարմար կլիներ հատուկ կազմակերպություններ ստեղծել։

Ընկերը Աշոտ Հովհաննիսյանը արտահայտում է, թե այդպիսի

կազմակերպությունն կարող է լինել, (թեև նա այսօր դեռևս չէ) ՀՈԿ-ը արտասահմանում։ Բայց դրա համար ՀՈԿ-ը միանգամայն «նոր» ձև ու կերպարանք պիտի ստանա։

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը գտնում է, որ նրա հանձնարարած քաղաքականության, այսինքն ֆոնդային-բարեգործական նպատակների (ուրիշ նպատակ չեք գտնի դուք «Գաղութահայ խնդիրներ»-ի մեջ) հասնելու համար (եջ 22).—

> «Անհրաժեշտ է, որ ՀՈԿ-ի ճյուղերը վերածվեն գաղութահայ մասսայական կազմակերպությունների։ ՀՈԿ-ը պիտի բոնի զգալի չափով Յեգիպտոսի Բարեգործականի և Հայաստանում գործող Ամերիկյան Կոմիտեյի տեղը։ Ամենից առաջ ՀՈԿ-ը պետք է իր ճյուղերն ունենա հայաշատ վայրերում, որտեղ մինչև այսօր հաստատված է չեղել բուրժուական բարեգործական «մեծ խողովակը»։ Պետք է վերջ տալ այն դրությանը, երբ ամերիկահայ բանվորության հաշվին գանձվում է ազգային մի դրամագլուխ, որ հակաբանվորական նպատակների համար շահագործում են չեվրոպական հանգստավայրերում նիրհող ազգային մեծատուններն ու նրանց սպասավորները»։

Այսպես, ընկ. Աշոտ Հովհաննիսյանը կարծում է, թե Յեգիպտոսի Բարեգործականի ձևով կերտած Հ ո կ-երը ավելի ազդու և կարուկ կլինեն հայ մեծատուններին ու նրանց սպասավորների հակաբանվորական նպատակի ու շահագործումի դեմ կռվելու, քան նույն գաղութների կոմբջիջները կամ տեղական կոմկուսի «հայկական սեկցիաները»?!

Այդպես պատկերացնելով արտասահմանյան Հ ո կ-երի դերը, նա հանձնարարում է կարմիր գծից դուրս ընկած Հ ո կ-երի գործունեությունը հանել Յերևանի ՀՈԿ-ի կենտրոնական վարչության հսկողությունից և ղեկավարությունից, որովհետև—թվում է Աշոտ Հովհաննիսյանին—մեր ՀՈԿ-ի քայլվածքը շատ է «սովորական բարեգործական» բնույթ կրում և մասսաներն էլ առանձին սեր ու հարգանք չունին դեպի այսօրվի Հ ո կ-երը, մինչդեռ արտասահմանյան՝ ըստ «Գաղութահայ խնդիրների» ընկ.-հեղինակի ձևված Հ ո կ-երը՝ կլինեն «արտակարգ բարեգործական», և գաղութահայ «աշխատավորությունը» իրար գլուխ կչարդի որ առաջ նրա «մեծ խողովակում» դատարկելու իր գրպանները!?

Առաջադրած հիմնական քաղաքականությունը հիմնավորելուց առաջ մղելու համար, ընկ. Աշոտ Հովհաննիսյանը

անհրաժեշտ է դնում Երևանի Հոկ-ային վարչության խնամատարության հանված արտասահմանյան այդ Հոկ-երը անմիջական կոնտրոլի տակ առնել։ Թե ինչպես, այդ ընկ. Աշոտ Հովհաննիսյանի գաղտնիքն է, վոր պարզաբանված չե «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրում։

Նա միաժամանակ առաջարկում է արտասահմանյան Հոկ-երի կողքին,—վորոնց հանձնարարում է առատորեն բանալ բոլոր յերկրների «հայաշատ վայրերում» (եջ 22)—ստեղծել նաև «տեղական բնույթի» մարմիններ, վորոնք նույնպես մտածեն Խորհրդային Հայաստանի մասին, նման Պարսկաստանի «Հայ ժողովուրդ» ընկերության (եջ 24—25)։

Ուրեմն, Հոկ-ը կարմիր գծից դուրս մի տեսակ համադաղութային կամ համահայկական կազմակերպություն է, վոր զբաղվելու չե «մեծ խոզովակները» կարգի բերելով, իսկ նրանց ոժանդակիչ ու դուգահեռ զանազան անուն տեղական կազմակերպությունները հոգալու չեն «մանր խոզովակների» սանիտարական դրության մասին...

Այսպիսով, ըստ ընկ. Աշոտ Հավհաննիսյանի, արտասահմանյան հայ գաղութները ծածկվում են բազմահարկանի մեծ ու փոքր ֆոնդային-բարեգործական խոզովակային ցանցով, նման մեր Բագվի դեպի նավթային ըեզերվուարները տանող նավթամուղների ցանցին։

Բայց այդ յերկու կազմակերպություններով չի սահմանափակվում ընկ. Աշոտ Հովհաննիսյանը։

Հասնելու համար «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրում մատնանշված հիմնական յերկու նպատակներին, նա առաջարկում է մեր այդ ազգային-բարեգործական հաստատություններին շաղկապվել միջազգային-բարեգործական համապատասխան հաստատությունների հետ։ Այդպես—թվում է ընկ. Աշոտ Հովհաննիսյանին—ավելի հեշտ կլինի մեզ հասնել յերկու հիմնական խնդրի լուծման, տիրանալ ազգային սուն դուկին—ֆոնդերին, դույքերին, քսակին, խոզովակին, և այլն։

Ուրեմն, գաղութահայ բարեգործական «մասսայական» կազմակերպության սխեման—ըստ ընկ.-ի հղինակի—ընդունում է հետևյալ պատկերը.—

առաջին հարկը—տեղական կազմակերպություններ («Հայ ժողովուրդը» և այլն).

յերկրորդ հարկը—Հոկ-երը՝ ձևված ըստ Յեգիպտոսի

Բարեգործականի, վորպես համազաղութային բնույթի հնոտիտուտ.

յերրորդ հարկը—միջազգային-«բարեգործական» տիպի միությունն։

Սրանք են լինելու գաղութահայ խնդիրների լուծողները և մեր քաղաքական գծի «ճշտողները»...

Այս վերջինիս, միջազգային-«բարեգործական» համաձայնության և համագործակցության մասին ընկ. Աշոտ Հովհաննիսյանը տալիս է (եջ 20) հետևյալ իմաստուն խորհուրդները.—

«Գաղութահայ այդ աշխատավորական կազմակերպչական ջանքերն անմիջական նպատակ պիտի ունենան՝ ընդգրկելու գաղութահայ մասսայի ըստ կարելույն լայն շրջանները և նվաճելու ըստ կարելույն լայն իրավունքներ ազգային բարեգործական ֆոնդերի նկատմամբ։

Այդ հաջողելու համար կազմակերպված աշխատավորությունը չպետք է սահմանափակվի միայն ազգային-կազմակերպչական ու ազգային-քաղաքական ներքին շրջանակներով։ Հարաբերություն ստեղծելով այս կամ այն կերպ աշխատավորական միջազգային բարեգործական, պրոֆեսիոնալ և քաղաքական կազմակերպությունների հետ կամ մանելով այդպիսի կազմակերպությունների մեջ՝ գաղութահայ աշխատավորությունը ավելի պիտի ամրացնի իր դիրքը ազգային գործերի բնագավառում»...։

Խոսքը այստեղ շարունակ «մասսայականացրած» Հոկ-երի և նման կազմակերպությունների գործունեության «միջազգային» շաղկապման մասին է։

Ահա—յերկու խոսքով—այն գաղութահայ քաղաքականությունը, վոր ջերմորեն հանձնարարում է ընկ. Աշոտ Հովհաննիսյանը իր «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրում և վորոնք կոնկրետ ուղեցույց պիտի ազատագրեն գաղութների հայ մասսաներին տեղական ազգայնջիններից, և—ֆոնդային-բարեգործական մեծ ու փոքր խոզովակների ու քսակների բերանները դարձնեն դեպի Արարատյան դաշտը, դեպի իր իրավունքներից ու ակնկալություններից չհրաժարվող Խորհրդային Հայաստանը և—ասել լուռեցին—«վոսկեկոխ» անեն Ալագյազի շվաքի տակ մուրճ ու մանգաղին միայն ապավինած մեր ժրաջան աշխատավորներին...

Այդպես է արդյոք կոնկրետ ու ընթացիկ իրականությունը և իսկապես այդպես է մտածում մեր կուսակցությունը։ Չենք կարծում։

2.

Սխալվում է ընկ. Աշոտ Հովհաննիսյանը և սխալվում է չարաչար, երբ իր «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրի մեջ մեր հետապնդելիք գծի առանցքն և պարենում Ֆոնդերի խնդիրը և հայտարարում, թե մենք նյութական ակնկալիքներ ունենք ամերիկահայ կամ եգիպտահայ գաղութներից, կամ նախանձում ենք այնչափ Եգիպտական Բարեգործական Ընդհանուրին, որ ուզում ենք մեր արտասահմանյան Հոկ-երը վերաձևել նրանց տարազով և մի-մի «մեծ խողովակ» էլ անցկացնել դեպի այդ «խորհրդայնացրած» բարեգործական կազմակերպություններ։

Մենք, ընդհանրապես, ընկ. Աշոտ Հովհաննիսյանի չափ «կենսաբար» նշանակություն չենք տալիս բարեգործական սիստեմներին և վոչ էլ ավելի լավ կարծիքի ենք Նուբար-փաշաների ու Աղաթոնների հաստատության մասին՝ քան մեր Բագարատ Նավասարդյանների և Սամսոն Հարությունյանների առանձին ծնած և միասին վիժած «Կովկասի հայոց բարեգործական ընկերության»։

Դրանք—կիվկիվ-բուբիքո չեն։ Թե՞կուզ ընկ. Աշոտ Հովհաննիսյանի ծեսի մկրատած Հոկ-երը չեն կարող տալ ավելի՝ քան ավել են մինչև այժմ։ Մանավանդ նրանք բնավ չեն կարող մեզ ոգտակար լինել տանուտեր-տանու իրավական խընդիրները լուծելու, վորպիսին և գերազանցապես Ֆոնդային հարցը։

Միամտություն է կարծել, թե Հոկ-ական կազմակերպությունները—յենթադրենք իսկ մի րոպե—«մասսայականացնելով» կարելի չէ հարկադրել գաղութահայ բուրժուազիային բացել այն աղբյուրին անդունդի բերանը, վորի ծայրը պինդ սեղմած ունեին ձեռքին նրանք։

Ֆոնդի խնդիրները լուծվելու չեն վոչ թե ընկ. Աշոտ Հովհաննիսյանի կարծեցյալ «մասսայական» ճնշմամբ, այլ յերկու կերպ.—

— կամ իրավական, դատական-պետական ճանապարհով հարկադրել Խորհրդային Հայաստանին պատկանող գումարները հանձնել մինչև այժմ հայ բուրժուայից անտեսված միակ տիրոջը։

— կամ վոխադարձ համաձայնության գալով մեր իրավունքների ուղղակի ներկայացուցիչների հետ, վորոնք նստած են այդ վոսկեբեր քսակների ու խողովակների վրա։

Մենք շատ մեծ թերահավատությամբ ենք վերաբերվում վերջին հնարավորության։ Հենց ինքը ընկ. Աշոտ Հովհաննիսյանն էլ կարծես նույն կարծիքի չէ, վորովհետև նա փորձում է ամբողջ մի «հեղափոխություն» մացնելով արտասահմանյան Հոկ-ական կազմակերպության մեջ, հարձակողականի անցնել Հոկ-ական «աշխատավորությամբ» Ֆոնդերի բերանին նստած բուրժուազիայի դունչը ջարդելու...

Գաղութահայ բուրժուազիան—միջազգային բուրժուազիայի աջակցությամբ և քանի դեռ վերջնական դրությունը հարկավոր չափով խախտած չէ նաև կարմիր գծից դուրս—կզիջի մեզ Ֆոնդերի փոքրիկ մասը՝ պայմանով վոր մենք ստանձնենք վորբերի ու գաղթականների ծանրության կրկնակի ու յեռակի մասը։ Այս դեպքում Ֆոնդերի խնդիրը—պարզապես առևտրական կոմբինացիայի ու սպեկուլյացիայի հարց է։ Այս էլ կանխապես ասենք, վոր նման «առևտրական սպեկուլյանների» ժամանակ խաբվող կողմը միշտ մենք ենք լինելու, վորովհետև մենք վերին աստիճանի զգայուն ենք յեղել և կլինենք բնականաբար դեպի մեր գաղթականության ցավերը։

Բայց կրկնում ենք, մենք Ֆոնդերի այսպիսի լուծման վրա առանձին հույսեր չենք տածում։

Յերբ Խորհրդային Միության միջազգային դրությունը հարկավոր չափով կոնսոլիդացիայի կենթարկվի և մենք հնարավորություն կունենանք մեր արտասահմանյան Ֆոնդակերբուրժուաների հետ խոսել դատական պրիստավի և կատարողական թերթի լեզվով—ապա ինքնին կլուծվի բոլոր այն դումարների հարցը, վորոնց իրավատերն է Խորհրդային Հայաստանը։ Մինչ այդ՝ մենք ապարդյուն ենք համարում և նույնիսկ ձեռնակար մեր գծի համար, Ֆոնդերի մասին ընկ. Աշոտ Հովհաննիսյանի չափ կրքոտ ու չափից ավելի «սենսացիոնալիստիրական» վոճով վիճաբանելը, վորովհետև դրանից վոչ միայն վոչինչ չէ դուրս գա, այլև կաճեցվի այնպիսի վոչ-ցանկալի ապավորություն կարմիր գծից դուրս, թե իսկապես մենք նյութական վորևէ ակընկալություն կամ լուրջ ապասելիք-

ներ ունենք գաղութներից։ Մինչդեռ, իսկապես, մենք չենք կապում նյութական վիճ ակնկալություններ և վոչ էլ սպասելիքներ գաղութահայ մեր քաղաքականության հետ։

Ընկ. Ա. Մյասնիկյանը իր «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքույկում ընդգծել է մեր ընդդրկած քաղաքական գծի նյութական-ֆինանսական անշահախնդրությունը։

Նա գտնում է, շատ ճիշտ կերպով, վոր մեր բանակցությունները բուրժուազիայի հետ պարզապես պայմանագրության խնդիր է և վիճ թե ֆոնդային վեճի, ինչպես կարծում է ընկ. Աշոտ Հովհաննիսյանը։

Ընկ. Մյասնիկյանը նկատում է (էջ 22) իր «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքույկում.—

«Յեթե արտասահմանում կան հայ հարուստներ, վորոնք ուզում են Հայաստանում շահեցնել իրենց դրամները, ճահիճները չորացնել և առուներ անցկացնել, թող անեն։ Ջե վոր դա պայմանագրության հարց է, ռեալ գործ և հաշվի խնդիր է։ Յուրաքանչյուր Խորհրդային յերկիր պատրաստ է կապիտալիստներին կոնցեսիաներ տալու»։

Ահա սա յի ճիշտ մոտեցումը և լուծումը խնդրի,—միանգամայն համապատասխան մեր տեսակետներին։

Գաղութահայ բուրժուազիայի հետ պետք է խոսել պայմանագրության լեզվով։ Այլ լեզու չի համապատասխանի Խորհրդային յերկրի, այդ թվում և Խորհրդային Հայաստանի շահերին՝ բուրժուազիայի հետ բանակցելիս և հաշիվներ տեսնելիս։ Մինչդեռ ընկ. Աշոտ Հովհաննիսյանը միամտություն ունի կարծելու, թե իր առաջարկած ձևով մկրտած և ընկ. Արամայիս Յերզնկյանի կամ Գրիգոր Վարդանյանի վառվռուն ճառերով վոգեվորված Հ ո կ-ական գաղութահայ «մասսաներով» կարող կլինի չոքացնել մեծ ու փոքր Նուբար-փաշաներին և նրանց սպասավորներին...

Յնորք։ Հ ո կ-ական բոմանտիզմ!

Մի շատ խոշոր սխալ է արվում և մեր ընդդրկած ու ընդգծած ընթացքից շեղվում, յերբ ընկ. Աշոտը այդքան համառորեն պնդում է մեր նյութական ակնկալությունների ու սպասելիքների վրա։

Գաղութահայ աշխատավորությունը պիտի իմանա և մենք

(ընկ. Աշոտ Հովհաննիսյանն էլ մեզ հետ), պարտավոր ենք ամեն անկյունում շարունակ կրկնել —Աթենքից մինչև Փարիզ, Ալեքսանդրիայից մինչև Ֆրեզնո ու Լոս-Անջելես—ամենուրեք լսելի անելու մեր ձայնը, թե՝ Խորհրդային Հայաստանը վիճ մի նյութական ակնկալություն չունի յեվ ֆոնդերի համար չե, վոր հետաքրքրվում և գաղութահայ կյանքով։

Դաշնակցականները մեր դեմ պայքարելիս շարունակ կրկնում են թե զանազան հնչյուն գումարների փայլից են, վոր մենք սիրում ենք հիշել կարմիր գծից դուրս հայ գաղութները։ Ընկ. Աշոտ Հովհաննիսյանի բրոշյուրը մեր թշնամիներին զենք է տալիս։

Ընկ. Ա. Մյասնիկյանը առարկելով դաշնակցական այդ գրպարտության դեմ, գրում եր իր վերը հիշված աշխատության մեջ (էջ. 21) շատ պարզ ու վորոշ.—

«Վիճ, պարոնայք դաշնակցականներ։ Փողային հաշիվներով զբաղվեցեք դուք։ Դա ձեր փեշակն է։ Իսկ Խորհրդային Հայաստանի մասին ասացինք, վոր նա չունի նյութական ակնկալություն դրսից։ Նրա հույսն իր բազուկներն են, իր աշխատանքն է։ Խորհրդային Հայաստանը բանվոր-գյուղացիական յերկիր է»։

Ահա մեր գաղութահայ քաղաքականության հարազատ գիծ ու ճիշտ հասկացողություն։

Այնքան ավելի ցավալի յեն ընկ. Աշոտ Հովհաննիսյանի թյուր և մեր գծին հակասող վերը մատնանշված կարծիքները «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրում, վոր վերջինս լույս է տեսել 1925 թվին. իսկ ընկ. Ա. Մյասնիկյանի գիրքը 1924-ին։ Ցավ կարմիր գծից դուրս կարող է կազմվել սխալ կարծիք, իլլուզիա, թե մենք հրաժարվել ենք ընկ. Ա. Մյասնիկյանի վերը ձևակերպված անշահախնդիր քաղաքականությունից հանդեպ գաղութային աշխատավորության, և իբր վերանում ենք այն։

Սխալ դնելով և մոտենալով հարցերին, ընկ. Աշոտ Հովհաննիսյանի առաջարկած լուծման միջոցները անխուսափելիորեն նույնչափ սխալ պիտի լինեին։

Մեր գործունեության և ազդեցության հետևանքներից մեկն էլ գաղութներում այն պիտի լինի, վոր տեղական աշխատավորական մասսաները դաստիարակվեն նոր ոգով, այսինքն ազատագրվեն ազգայնչական մտածելակերպից ու գործելակերպից, սերտ կապ հաստատեն տեղական

միջազգային բանվորական, վոր մեզ համար ասել է կոմունիստական միջավայրի ու կազմակերպության հետ:

Սա մեր հիմնական անելիքներից և գաղութներում:

Դաշնակցությունը շարունակ աշխատել և գաղութային աշխատավորական մասսաները այդպիսի՝ իրենց համար վտանգավոր շփումից ու ազատագրումից հեռու պահել: Ընկ. Ա. Մյասնիկյանը այդ մեկուսացման դեմ նախազգուշացնելով, գրում է (եջ 126).—

«Այն ժամանակ, յերբ Դաշնակցությունը հեռու չե պահում իրան տեղական աշխատավորությունից, հայ աշխատավորները չեն կարող ապրել ու զարգանալ առանց յեղբայրական կապի և բարեկամական ոգնության, վոր նրանք ստանում են ու տալիս են տեղական պրոլետարներին»:

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը բնավ մոռացել է իր «Գաղութահայ խնդիրները» բրոշյուրում, թե գոյություն ունեն բոլոր յերկրներում կոմունիստական կուսակցություններ և նրանց յենթակա հայկական բջիջներ կամ կոմ.-կազմակերպություններ*), թե նրանք են մասսայական աշխատանքների բանը: Դրա փոխարեն նա մի բոմանտիկ ծրագիր է առաջարկում, մի ինչ-վոր շփոթ բարեգործական կազմակերպություն՝ յեհոարկանի—տեղական, Հ.Կ-ական, միջազգային—վորը պիտի վարի մասսայական աշխատանքներ և պատվար ծառայի բուրժուազիայի հակաբանվորական նպատակներին:

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը հանձնարարում է մեր գաղութային մասսաները իր մեջ պարփակող կազմակերպություններին սերտ կապ հաստատել (եջ 20)—

«Այս կամ այն կերպ աշխատավորական միջազգային բարեգործական, պրոֆեսիոնալ և քաղաքական կազմակերպությունների հետ կամ մտնել այդպիսի կազմակերպությունների մեջ»...

Կազմակերպչական այս լինչ սումբուր է:

Ի՞նչ է վերջապես լինելու Հ.Կ-ը կարմիր գծից դուրս: Ի՞նչ կնշանակի մտնել այս կամ այն կերպ աշխատավորական վրկ միայն «բարեգործական» բնույթի կազմակերպության մեջ, այլև պրոֆեսիոնալ և քաղաքական...

*) Մի փոքրիկ նկատողություն. Խոսել է «ամերիկահայ կոմունիզմ» և այլ նման դարձվածքներ: Չկան ամերիկահայ, ռուսահայ, տաճկահայ, արեվելահայ կամ արեվմտահայ «կոմունիզմներ»: Կա մի կոմունիզմ:

Հ.Կ-ական կազմակերպությունները,—մի բոպե յենթադրենք, թե իրականացան ընկ. Աշոտ Հովհաննիսյանի և ընկ. Գրիգոր Վարդանյանի յերազները,—դառնալով «մասսայական» կազմակերպություն, ուրեմն՝ նրանց թույլատրվում է քաղաքական կոմբինացիայի մեջ մտնել Յերկրորդ Ինտերնացիոնալի կամ պրոֆեսիոնալ կապ հաստատել Ամստերդամի հետ, հա՞: Չե՞ վոր թե՛ մեկը և թե՛ մյուսը ավելի քան «այս կամ այն կերպ աշխատավորական» մարմիններ են ?!

Մենք չպատեհեցինք ընկ. Աշոտ Հովաննիսյանի մտքերի շփոթը, բայց բավականանք այսքանով «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրի մասին, վորը ամբողջապես մի չմարսված մտքի հակասական ու անհետևողական մետաֆիզիկ խորհրդածություն է:

Այդ բրոշյուրը բնավ չի լուծել վորևե խնդիր, բայց հիմնավորապես խճճել է շա՛տ հարցեր: Ցավ վայ մեզ, յեթե նրա հետ միասին արտասահմանյան ընթերցողի ձեռքը մի ժամանակ չի ընկել ընկ. Ա.Մյասնիկյանի գաղութային հարցեր շաշափող աշխատությունը:

Մեր դիծը հետևյալն է.—

«Խորհրդային Հայաստանը,—գրում է ընկ. Ա. Մյասնիկյանը իր գրքում (եջ 7.),—մեծ հետաքրքրություն է առաջ բերում մեր գաղութներում. վերջիններիս նույնպես զբաղեցնում են Հայաստանի բանվորի և գյուղացու միտքը: Միմիայն դաշնակցականների նման մարդիկ ընդունակ են այդ յերևույթը հիմնավորել նյութական բարիքներով և սպասելիքներով: Թող մեկ ընդմիշտ իմանան նրանք, վոր Խորհրդային Հայաստանի տարատասահմանից նյութական սպասելիքն այն քաղաքական ու հասարակական համակրանքն ու համերաշխությունն է, վորը հավատացած ենք թե ունի և պիտի ունենա այսուհետև գաղութահայ աշխատավորության մեծագույն մասը, վորպես աշխատավորությունը՝ դեպի պրոլետարիատի կոմունիստական հեղափոխությունն ու խորհրդային կարգերը:

Այստեղ է թաղված, յեթե կուզեք մեր շահագործության աղբյուրը, մեր և գաղութահայության միջև յեղած կապի հանգույցը:

Ահա թե ինչու մենք շարունակ վերադառնում ենք այն հարցին, թե յուրաքանչյուր բոպե ինչ և կատարվում գա-

դուբեհայությեան խորշերում, վերլուծում ու քննում ենք անցուդարձերը...

Բայց և վերլուծությունը չպետք է կրի մակերեսային բնույթ, նա չպետք է բավականանա թեթև ակնարկներով, վորակումներով և յերկրորդ կարգի դիտողություններով:

Կարծես մըայն դաշնակցականների համար չեն գրված այս տողերը: Մեզ էլ և հարկավոր ականջին ող դարձնել այս ճշմարտությունը:

Ընկ. Ա. Մյասնիկյանի այս պնդումները մնում են իրենց կատարյալ ուժի մեջ և պիտի շարունակեն այսուհետև ևս ուղեցույց ծառայել մեր քաղաքականության՝ դաղութային խընդիրների լուծման ժամանակ:

Մեր կուսակցական-խորհրդային դծի «կոնսոլիդացիային» բնավ չի նպաստելու ընկ. Աշոտ Հովհաննիսյանի այդ բրոշյուրը:

Հուլիս—1925 թ.

ԻՆՔՆԱԲՆՈՒԹԱԴՐՄԱՆ ՓՈՐՁ

Timeo Danaos et dona ferentes!

Խորհրդային Հայաստանի Պետհրատը ընկ. Մյասնիկյանի մահվան առաջին տարեդարձին լույս է ընծայել Ցոլակ Խանզադյանի «Ալեքսանդր Մյասնիկյան» բրոշյուրը: Բայց ավելի ճիշտ կլիներ ասել, թե առանձին գրքույկով հրատարակվել է Ցոլակ Խանզադյանի այն հոդվածը, վորի մի մասը նախորոք լույս ընծայվեց (առանց խմբագրական վերապահումների) «Խորհրդային Հայաստանի» մարտի 22-ի №-ում, և յերևի նաև այն ճառը, (մի ակը, ի միջի այլոց), վոր նույնպես նախորոք արտասանվել և նույն որվա առիթով Յերևանի Պետական թատրոնում կազմակերպված սգահանդեսին:

Ինչպես յերևում է, մարտի 22-ը Ցոլակ Խանզադյանի բեն ե ֆիսն է յեղել, թեև ընկ. Ա. Մյասնիկյանի սգահանդեսը...

Միևնույն անձնավորության միևնույն մտքերի այդքան ինտենսիվ—բանախոսությամբ, թերթով, առանձին բրոշյուրով—գերարտադրումը և գերսիռումը օբյեկտիվորեն կարող են այն տպավորությունը ստեղծել, թե Ցոլակ Խանզադյանի կարծիքին (իսկ նա հավակնություն ունի բնութագրման մի պատմական յետադարձ հայացք լինել) առանձին արժեք ու կարևորություն և տրվել հասկանալու ինչպես ընկ. Մյասնիկյանին, նույնպես և նրա հետ կապված պատմական անցքերի շաղկապը:

Մարտի 22-ին Ցոլակ Խանզադյանը վչացած կոմնատպիատոնի դերումն է յեղել, վոր իր ականջ ծակող ձվոցով փորձել է հնարավորին չափ աններդաշնակություն մացնել հեղափոխական անցքերի ու բալշևիկյան անձերի ճիշտ արժեքավորման մեջ:

Ցոլակ Խանզադյանը իր մարտի 22-ի հոդվածը, բրոշյուրը, յերևի և բանախոսությունը «բնույթագրման փորձ է» անվանել: Մի փոքր մոտից տեսնենք, թե ինչպիսի բնութագրությամբ և ո՞ւմ բնութագրելուց նա հրապարակ իջել «Խորհրդային Հայաստանում», Պետհրատում, յերևի և Պետթատրոնում:

Հենց գրքի առաջին տողերից Ցոլակ Ջանդաղյանը—անշուշտ գիտակցաբար ու չարամտությամբ—դիմում է մեր հակառակորդներին հատուկ մանյորվի։ Հայտնի չէ, վոր այսոր արդեն սրբագործված մի ձև և հակահեղափոխական շրջաններում վկայություն բերել Լենինից՝ լենինիզմը ժխտելու և հայհոյելու։ Վրաստանի Ցոլակ Ջանդաղյանը—Սեյիդ Դևդարիանին (հազարներից մեկ որինակ) սիրում է մեր դեմ պայքարելիս շարունակ ցիտատներ բերել Լենինից և իր ամեն կարգի ափեղ-ցփեղությունները «հիմնավորել» Լենինի խոսքերով։

Հայաստանի Սեյիդը—Անդրկովկասի բոլոր սեյիդներին հատուկ ձևով և սկսել իր բրոշյուրը։ Նա բերում է 1908 թ. մի դեռևս չձևավորված և քաղաքականապես խակ ու տատանվող ուսանող Մյասնիկյանի մասնավոր նամակը և փորձում է թերթում, բրոշյուրում, յերևի նաև բանախոսության մեջ ապացուցել, թե այն, ինչ ասել է ընկ. Մյասնիկյանը 1908 թվին, նա նույն էլ իրականացրել է,—վոր ասել է, թե շարունակել է նույնը մնալ նաև 1925 թ.։ Հայաստանի Սեյիդը գրում է.—

> «Հաստատապես կարող եմ վկայել, վոր ինչպես կամ այժմ, այնպես էլ պիտի մեռնեմ»,—գրում եր Ալեքսանդր Մյասնիկյանը 1908 թվականին*)։
>
> «Յեվ նրա գաղափարաշունչ կյանքն ու զարհուրելի մահվան ցնցող հանգամանքները վկայեցին...»։ (ընդգծումը հեղինակինն է,—յերես 5)։

Այսպես ճարպիկորեն ու—կասեյինք մենք — խարդախորեն սկսելով իր բրոշյուրը, հոդվածը, յերևի նաև բանախոսությունը, Հայաստանի Սեյիդը կաշվից դուրս է գալիս գրքույկի հետագա եջերում «հիմնավորել» իր պատմական կեղծիքները։ Հայաստանի Սեյիդը մոռանում է, վոր հանճարեղ-մաքսիստ Պլեխանովի անցյալը բավական յերաշխիք չեր նրա կյանքի վերջին՝ ավելի քան մի տասնամյակի գործունեությունը կասկածի տակ առնելու և վոչ էլ Տրոցկու հետ-հոկտեմբերյան ծառայությունները հնարավորություն ավին 1908 թվականի և 1918 ու հետագա տարիների գործունեությունների մեջ հավասարության նշան դնելու։

Ընկ. Մյասնիկյանը 1908 թ. Ստ. Շահումյանին, Սուրեն Սպանդարյանի և մյուսների—այսինքն՝ բալշևիկյան կուսակցության հետ չեր, այլ այսորվան Հայաստանի Սեյիդի,

*) Համեստաբար լռում է հեղինակը, վոր այդ նամակը ուղղված և յեղել իրեն...

Բ. Իշխանյանի, Ա. Ռուբենիի, Դ. Անանունի և Ընկ.-յան։ Իսկ հայտնի չե, վոր Սահակյանը, Սուրենը և բալշևիկյան բանակը դեպի վոչ մի հակա-բանվորական խմբակցություն այնպիսի անհաշտ դիրք չունեյին, ինչպես դեպի տխրահռչակ Բախշիի, Մելչան Ռուբենիի, ոդիոզ Դավթի և կոմպանիայի վարժապետական-նացիոնալիստական թափթփուկները։

Ընկ. Մյասնիկյանը—ինչպես և այսոր շատ հայ ուսանողները—այդ կեղծ-սոցիալիստական միջավայրի կարճատև զոհերն եյին։ Տեսնք, թե վորպիսի զզվանքով և նկարագրված Բախշիի, Ցոլակի, ոդիոզ Դավթի և Ընկ. միջավայրը բրոշյուրում բերված 1908 թվականի դեռևս վոչ-բալշևիկ Մյասնիկյանի հենց այդ նամակի մեջ խոկ.—

> «Անշուշտ—գրում է Ցոլակ-Ջանին—քեզ համար նորություն կլինի, յերեթ հայտնեմ, վոր ներկայումս, գոնե Բագվում, գոյություն չունի հայ սոցիալ-դեմոկրատիա։ Բանվորական մասսաները հասած են անբարոյականության ամենածայր չափին, ինտելիգենցիան միանգամայն կրիզիսի յենթարկված, ֆինանսները՝ վոչ մի կոպեկ։ Կենտրոնական կոմիտեն վոչինչ չի շինում և յերբ ուզում ես մի գործ կատարել, ամեն կողմից հուսահատ և նույնիսկ քեզ նախատող շշուկներ ես լսում.—Ա՛յ մարդ, ի՞նչ գործ, ի՞նչ բան, չարժե աշխատել, վոչինչ դուրս չի գա» (եջ 16—17)։
>
> Իհարկե, Բագվում բալշևիկյան կենտր. կոմիտե չկար...
>
> Իհարկե, Բագվի պրոլետարիատը յերբե՛ք էլ անբարոյականության տիպար («ամենածայր չափին») չի ծառայել հեղափոխական-դասակարգային շարժման մեջ...

Իհարկե, բալշևիկյան ինտելիգենցիայի Բագվի հատվածը—Ստ. Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի և Լենինի մյուս աշակերտների համար «իդեոլոգիայի կրիզիս» գոյություն չի ունեցել։

Պարզ է, վոր անգամ միջավայրի ու շրջապատի զոհ—դեռևս յերիտասարդ ու անհայտ ուսանող Մյասնիկյանը վերը ավել և ճշգրիտ բնութագիրը դաշնակցականիզմից ամբողջապես չկտրված և սոցիալիզմին էլ ամբողջապես չհարած վոլորմելի ինտելիգենտական-վարժապետական անհոգ խմբակի, վորի վորակված լիդերներն եյին Բախշի Իշխանյանը և Ա. Ռուբենին։

Միջանկյալ ասենք, վոր Բախշի և Ընկ. «բանվորություն» չունեին, վոր նա բարոյական կամ անբարոյական լիներ։

Հայաստանի Սեյիդը ինքն անգամ խոստովանում է, վոր դաշ-

նակցականիզմը ամբողջապես թոթափված չեր այդ ուսա-
նողական խմբակի կողմից, վորի դերակատարներից մեկը հենց
բրոշյուրի հեղինակն է յեղել և սիրով խառնում է իրեն ընկ.
Մյասնիկյանի այդ վոչ-բալշևիկյան շրջանին ուղեկցող անցքերին
(«ես ինք»... «մենք»...).—

*«Ի հարկե, ի սկզբանե եր Դաշնակցությունն... Նացիո-
նալիստներ ես ինք, հարկավ, բայց խիստ յուրօրինակ
յերանգավորումով, այդ դաղափարի ուրույն առումով»
(եջ 6)։*

*Նացիոնալիզմի թույնը—թեկուզ յուրօրինակ ու տարօրի-
նակ—այնքան զորեղ եր նստած այդ խմբակի մեջ, վոր անգամ
1905—06 թ. թ. հեղափոխական ցնցումները չեն ոգնում Այսպես,
Հայաստանի Սեյիդը խոսելով ընկ. Մյասնիկյանի Դաշնակցու-
թյունից հեռանալու մասին, կասկածի յա յենթարկում նրա
իդեոլոգիական եմանսիպացիան, հենվական չակերտ-
ների մեջ առնելով նրա ազատագրումը.—*

*«Ա. Մյասնիկյանը 1906 թվականի ամառն «ազատագըր-
վեց» վերջնականապես ազգայնական իդեոլոգիայից և թո-
ղեց Հ. Հ. Դաշնակցությունը» (եջ 8)։*

*Յեթե բրոշյուրում կատարվում է քննադատական
բնութագրման փորձ, ապա Հայաստանի Սեյիդը պարտավոր եր
ընդգծել նաև ընկ. Մյասնիկյանի եվոլյուցիայի հետագա
ետապը։ Նա պարտավոր եր—յեթե միայն տոզորված չե նենդ
հաշիվներով ու խարդախ պատմական վորոնումներով—ընդգծել,
վոր վերջնականապես և առանց չակերտների ընկ.
Մյասնիկյանը ազատագրվեց այն ժամանակ, յերբ փախավ ան-
բարոյական ինտելիգենտական վերը հիշած միջավայրից և հարեց
Ստ. Շահումյանին ու Սուրեն Սպանդարյանին, այսինքն Լենի-
նի կուսակցությանը։*

*Բայց Հայաստանի Սեյիդը այդ չի անում։ Նա գիտակ-
ցաբար խառնում է կուսակցությունները, անձերը, անցքերը
մի «բնութագրական» սումբուրի մեջ, վորովհետև նա շահագըր-
գռված է տալու ավելի շուտ սեյիդների խմբակի բնութագրումը,
քան բալշևիկ Ա. Մյասնիկյանինը։*

*Այստեղ է թաղված շան գլուխը։ Ձեվ հենց այդ պատճառով
նա, կասկածի առնելով ընկ. Ա. Մյասնիկյանի ազատագրումը
նացիոնալիստական հովերից, հենց նույն տեղը ավելացնում է,
թե նա—ընկ. Մյասնիկյանը միաժամանակ գործում եր Բախշի և*

*Ընկ. հետ անհաշտ պայքարող Ռուսաստանի Սոց.-Դեմ. կուսակ-
ցության մեջ։ Աքսորդ միտք, բայց շատ բնորոշ ու բնութա-
գրող սեյիդների համար, վորոնք կաշվից դուրս են գալիս հա-
վատարության նշան դնել մի կողմից Ստեփան Շահումյանի, Սու-
րեն Սպանդարյանի, Լենինյան հերոսական կուսակցության և
մյուս կողմից Բախշի Իշխանյան և Ընկ. ինտելիգենտական-նա-
ցիոնալիստական մտավոր-անանկ խառնվածքի մեջ.—*

*«Ա. Մյասնիկյանը—գրում է Սեյիդը—1906 թվականի
ամառն «ազատագրվեց» վերջնականապես ազգայնական
իդեոլոգիայից և թողեց Հ. Հ. Դաշնակցությունը։ Նա ան-
դամագրվեց սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազ-
մակերպության, բայց այդ հանգամանքն, իհարկե, չեր
կարող արգելք հանդիսանալ Ռուսաստանի Սոցիալ-Դեմո-
կրատական Բանվորական Կուսակցության մեջ ևս աշ-
խատելու»։*

Իհարկեն—հենց ընդհակառակն է։

*Ընկ. Մյասնիկյանի հեղինակավոր վկայությամբ տրված է
անբարոյականության ամենածայր չափին հասած
Բագվի «բանվորներից» ու գավառական վարժապետներից կազ-
մված՝ այսպես կոչված «հայ կազմակերպության» պատկերը, վորի
մասին Ստ. Շահումյանը ու Սուրեն Սպանդարյանը, այսինքն
Լենինյան կուսակցությունը միայն զգվանքով եր հիշատա-
կում։ Այդ, այսպես կոչված բալշիկական կազմակերպությունը՝ մեր
աննման Ստ. Շահումյանը միշտ էլ պահում եր, իհարկե, на пу-
шечный выстрел, հարգելի տարածության վրա Լենինի կուսակ-
ցությունից, վորպեսզի բանվորական մասսաները չվարակվեն այն
անբարոյականությամբ, վորի մասին վկայում է իր նա-
մակում ուսանող Մյասնիկյանը և վորը այնքան հանրածանոթ
եր ու հատուկ այսպես կոչված «հայ կազմակերպությանը»,—
սպեցիֆիկներին։*

*Հայաստանի Սեյիդը իր բրոշյուրում կուտակել է շատ ափեղ-
ցիկեղություններ։ Բոլորը վերլուծել, կնշանակեր մի նոր բրոշյուր
գրել բալշևիկյան անցքերի ու անձերի մասին, վոր մենք պատ-
րաստ ենք անել, յեթե միայն Հայաստանի Պետհրատը խոստանա
ընկ. Մյասնիկյանի մահվան յերկրորդ տարեդարձին մեզ ցույց
տալ նույնպիսի սիրալիր ու լայն ընդունելություն...։*

*Բայց բերենք Հայաստանի Սեյիդի «բնութագրման փոր-
ձից» մի յերկու նմուշ ևս, վորոնք յեթե չեն համապատասխա-*

նում իրականության և չեն բնութարում Ա. Մյասնիկյանին, գոնե այն առավելությունն ունեն, որ բնութագրում են մոտաստության անցած կեղծավոր ու վոդովմելի խմբակի և նրա այսօրվան ղեկավար ներկայացուցիչներին։

Հայտնի է, որ Ստեփան Շահումյանը նաև գրական-քննադատության մեջ կատաղի մարտնչող եր բախշիականության դեմ։ Նա իր ժամանակին շատ բացասական վերաբերմունք և ցուցադրել դեպի Lucifer-ի (այսինքն Բախշի Իշխանյանի) քննադատական «մեթոդոլոգիական» մարզանքները և նրա—այսինքն Ստեփան Շահումյանի համակրանքը չեղել և մինչ-հոկտեմբերյան շրջանի պրոլետական հայտնի պոետ, Ստեփանի զինակից, բալշևիկ Credo-ի, այսինքն մեր Հակոբ Հակոբյանի կողմը։ Հայաստանի Սեյիդը հարկ և համարել—попутно—վերադառնալ նաև այդ վեճին և «բնութագրել», թե 1910 թվականին ընկ. Մյասնիկյանը «Մշակում» Ստ. Շահումյանի հետ չի եղել և Credo-ին հակառակ և արտահայտվել։ Բայց Հայաստանի Սեյիդը այդքանով չի բավականացել։ 1910 թվականին վոչ-բալշևիկ Ա. Մյասնիկյանը «Մշակում» կարող եր ուրույն կարծիք ունենալ զանազան ու բոլոր հարցերի մասին և չհամաձայնել Ստ. Շահումյանի կարծիքին ու գծին։ Հայտնի է, որ «Մշակը» այդ շրջանում տպագրեց բախշիականների ավելի մեծ անհեթեթություններ։ Բայց 1922 թվականին և ընկ. Ս. Կասյանի խմբագրությամբ լույս տեսած «Նոր Աշխարհում» (1922, № 1) արդեն բալշևիկ Մյասնիկյանը չեր կարող բախշիական-լյուցիֆերական մեթոդային մոտեցումներ ունենալ։

Հայաստանի Սեյիդը գրում է, որ Ա. Մյասնիկյանը—

«Ինչպես են գրվում րեցենզիաները «Մշակում» («Մշակ», 1910 թ., № 26) պաշտպանում է Շ. Կուրղինյանին և B. Lucifer-ին Credo-ի հարձակումներից։ Նույն մեթոդային խնդիրը շոշափում և տարիներ անց «Գրական քննադատության մեթոդի մասին» հոդվածում («Նոր Աշխարհ» ամսագիրը, 1922, № 1)»։ (Տես եջ 28)։

Հայաստանի Սեյիդը, որ կասկածի չե առնում հենց իր այդ բրոշյուրում ընկ. Ա. Մյասնիկյանի գրական, հրապարակախոսական, քննադատական, հռետորական ունակությունները և շատ համեստաբար գտնում է, որ—

«Մյասնիկյանի ընդհանրացումները չեր բոլոր ժամանակների վերլուծումները միշտ էլ ճշգրիտ չեն, նրա վերլուծումները միշտ էլ ներքամիտ չեն» (եջ 26)—

ինչո՞ւ չե հիշում այս եպիզոդը—իրար հակադրում Հակոբ Հակոբյանին և Շուշանիկ Կուրղինյանին, Ստ. Շահումյանին և Բախշի Իշխանյանին (այդ ամեն կոմմից կեղտոտ «Լյուցիֆերին»), ու հանդում չեղրակացության, թե ընկ. Մյասնիկյանը 22 և 24 թ.թ. էլ կանգնած եր 8 և 10 թվականների Բախշիի տեսակետների վրա։

Նոր-էնպիսի վոդովմելի շահախնդրությունից դրդված և, վոր Հայաստանի Սեյիդը գտնում է, թե Շանթերի, կարեն Միքայելյանների և այլոց մթնոլորտում և ընկերակցությամբ լույս տեսնող կասկածելի «մարքսիստությամբ» «Գարունը» կարող և «մարքսիստների առաջին կազմակերպված» արշավանքը համարվել։

Ռուսական հեղափոխական բանվորության պատմության մեջ քիչ չեն որինակները, երբ բռնակալական վոստիկանությունը խեղդում է հեղափոխական պայքարը՝ խրախուսելով լիկվիդատորական հոսանքները։ Լիկվիդատորական մի այդպիսի վիժվածքներից եր «Գարունը», և չպետք է դերագնահատել այն հրատարակչական հնարավորությունները, վոր տրվում եյին այսպես կոչված «հայ կազմակերպությանը»—սպեցիֆիկներին, երբ աքսորվում եյին Ստ. Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը ու նրանց ընկերները և խեղդվում պրոլետարական խոսքը։

Ինչո՞ւ չե Սեյիդը դիմում այդ մանրվրձին։

Վորովհետև նրան բալշևիկ Մյասնիկյանի բնութագրումը չե, վոր հետաքրքրում է,—այլ դատապարտված ու կյանքից դեն շպրտված կասկածելի Լյուցիֆերների խմբակի բնութագրումը։

Բնական է, վոր այդպես մոտենալով իր «բնութագրմանը», նա պետք է ապացուցեր, վոր նույնիսկ մեր շրջանի և բալշևիկ Մյասնիկյանը լենինիզմի ու պրոլետարիատի դրոշակակիրը չի եղել Խորհրդային Հայաստանում, այլ հայ ժողովրդի ազգային դարավոր իդեալների։

Հայաստանի Սեյիդը գտնում է.—

— վոր ընկ. Մյասնիկյանը գրական քննադատ չեր, նրան հատկիվ կարելի չե—թվանշանով արտահայտելով—յերքից հանած դնել...

— վոր նա վորպես հրապարակախոս-լրագրող կարող եր առաջավելն յերեք տասնյակ, այն էլ յերևի նրա համար, վոր «իպաշտոնեն» խմբագրել է մի քանի թերթեր...

— վոր իբրև հռետոր վոչինչ, ну, յերեք ու կես...

Նա նույնիսկ առանձին հեղափոխականություն չի գտնում

ընկ. Մյասնիկյանի մեջ, վորովհետև նա կլասիկ իմաստով հեղափոխական չեր...

Ուրեմն, ընկ. Մյասնիկյանի մեջ ի՞նչն է առանձնապես հմայում Հայաստանի Սեյիդին.—

— մի այն պետական գործչի խառնվածքը։

Բրոշյուրի հեղինակը շեշտում է.—

«Մյասնիկյանը ավելի պետական գործչի խառնվածք ուներ, քան թե կլասիկ իմաստով հեղափոխականի» (եջ 21)։

Մենք—բալշևիկներս համարում ենք, վոր ընկ. Մյասնիկյանը ուներ նայեվ պետական գործչի ընդունակություններ։

Նա—իր մյուս ընդունակությունների հետ—ծառայության եր բերել նայեվ այդ ընդունակությունը պրոլետարական հեղափոխության։ Նա Խորհրդային Հայաստանում իրականացնում եր լենինիզմի իդիալները նայեվ վորպես պետական մարդ։

Այդպես է բնութագրում արդյոք Հայաստանի Սեյիդը ընկ. Մյասնիկյանին գեթ այն միակ ասպարեզում, վորտեղ նրա ընդունակությունը կասկածի առարկա չե նույնիսկ մեր սեյիդների համար։

Նախ՝ հեղինակը գտնում է, վոր Մյասնիկյանի նշանակությունն իր ամբողջ ծավալով հասկանալու համար պետք է նրան դնել վոչ թե Անդրկովկասի և Ռուսաստանի հեղափոխական-բանվորական շարժման հեռանկարների մեջ, այլ հայոց պատմության և հայ ժողովրդի դարավոր տառապանքների։ Նա հայ «ազգային հերոս» է, և հենց միայն դրա համար անցնելու չե «հայոց պատմության»։

Սա մի այնպիսի հայտնություն է, վոր վոչ միայն պոկում է բալշևիկ Մյասնիկյանին լենինիզմի ու պրոլետարիատի անցյալի, ներկայի ու ապագայի հեռանկարներից, այլև ամբողջապես դնում է նրա գործունեությունը և նշանակությունը բրոշյուրի սկզբում հիշած 1908 թ. հեռանկարների հարվածի տակ, յերբ Մյասնիկյանի ազատագրումը ազգային իդեոլոգիայից կասկածի չե առնվում, չակերտների մեջ դրվում հայ Սեյիդի կողմից։

Սա մի հրեշավոր խեղաթյուրություն է բալշևիկ Ա. Մյասնիկյանի և ընդհանրապես բալշևիզմի գործունեության և նշանակության Խորհրդային Հայաստանում, վոր պիտի հարկադրի մեր Պետհրատին ընկ. Մյասնիկյանի մի իրական բալշևիկյան ընութագրում հակադրել Հայաստանի սեյիդների կեղծիքներին։

Պարզ է ամեն մի կոմունիստի համար, վոր ընկ. Մյասնիկյանը ոսոկ կամակատարն եր Լենինյան կուսակցության վորոշումների կյանքի բոլոր բնագավառներում, ոսոկ շարունակողը Ստ. Շահումյանի ու Սուրեն Սպանդարյանի հեռանկարների, վորոնք բնավ ազգային դարավոր իղձերից չեն բղխել և չեն էլ ներշնչվել, այլ միջազգային պրոլետարիատի հեղափոխական պայքարից։

Յերևանաբնակ «Դևդորյանին» գրում է (եջ 31).—

«Սակայն Ա. Մյասնիկյանի նշանակությունը իր ամբողջ ծավալով գծագրվում է միայն այն ժամանակ, յերբ նրան դնում ես հայոց պատմության հեռանկարների մեջ, անկախ նրանից, թե ինչ վերապահումներ պետք է անել, վորոնց մասին մենք գիտենք,—մեզ համար ակներև և միանգամայն, վոր Խորհրդային Հայաստանը բոլորում և այն անլուր տառապանքների, վոր դարերի ընթացքում կրել հայ ժողովուրդը, կատարում այն ազատատենչ իղձերի, վորոնք յերբեք չեն մեռել հայ աշխատավորության սրտում»։

Շատ պատկերավոր է ասված.—«դնել հայոց պատմության հեռանկարների» մեջ...

Բնական է, վոր այսպես մոտենալով բալշևիկ Մյասնիկյանի գործունեության ու նշանակության, Հայաստանի Սեյիդը պիտի հանգեր այն յեղրակացության, թե բալշևիկ Մյասնիկյանի համար «խնդիրների խնդիրը» վոչ թե պրոլետարիատ—արտահայտվենք հեղինակին ավելի դյուրալի տերմինով—պատն եր,—այլ տաճկահայ խնդիրը.—

«Տաճկահայ խնդիրը միշտ յեղել է Ա. Մյասնիկյանի մտահոգության հուզող առարկան։ Նա միշտ կարծել է, վոր պրոլետարիատի իդեոլոգը, հայ մարքսիստը չի կարող անտարբեր լինել այդ խնդիրների խնդրի վերաբերմամբ, վոր նա «անհնչալ» եր անվանում» (եջ 32)։

Վորքան մեզ հայտնի է բալշևիկ Մյասնիկյանը ամենուրեք և ամեն առիթին կրկնում եր, թե տաճկահայկական խնդիրը Խորհրդային Հայաստանի համար ընդմիշտ լուծված է, նա «հայ մարքսիստի» համար—յեթե այդ խոսքերի տակ հաս-

կացվում և կոմունիստը—ընդհակառակը՝ հենց «խընդիրների խնդիրը» չե։

Ուզղակի վնասակար և մեր որերին, մանավանդ մեր Պետհրատի հրատարակութիյամբ, այդպիսի մոքեր տարածել և պնդել, թե իբրև «խնդիրների խնդիրը» մեր բանվորական-հեղափոխական շարժման մեջ յեղել և «տաճկահայկական դասը»։

Բնական և, վոր այսպես «բնութագրելով» ընկ. Մյասնիկյանի գործունեությունը և այդպես արժեքավորելով Խորհրդային Հայաստանի գոյութիյան փաստը՝ Հայաստանի Սեյիդը հանգում և այն յեզրակացութիյան, թե ընկ. Մյասնիկյանը կլասիկ իմաստով հեղափոխական չեր, այլ—

«դաբերի փլատակների տակից վերածնված հայ պետականութիյան սիմվոլն և Ալեքսանդր Մյասնիկյանը» (եջ 31)։

Ամեն մի դաշնակ կատորգրի սիրով այսպիսի «բնութագրման» տակ, մանավանդ վոր Խորհրդային Հայաստանի գոյութիյունը գրվում և հայ ժողովրդի «դարավոր տառապանքների» ու Լենի հատատիտոր «հայոց պատմութիյան» հեռանկարների տակ։

Հայաստանի Սեյիդը վերջացնում և իր և իր նմանների բնութագրումը հետևյալ «մարգարեական» խոսքերով.—

«Սակայն անհամբերող հակառակորդի յերկչոտ կեղծավորութիյունը միայն կարող և զատել Ալեքսանդր Մյասնիկյանին իր կուսակցութիյունից, Լենինից և Հոկտեմբերից» (եջ 39)։

Առանց սեյիդների հարկավոր նախարնութագրումի Պետհրատի լույս ընծայած այս բորշյուրը, «Խորհրդային Հայաստանում» անվերապահ տպված նրա այս հոդվածը (նույնիսկ «Խորհրդային Հայաստանի» գրական հավելվածի № 1-ում ջատագովված եր) և յերևի նաև Պետհատրոնում նույն որը սանձարձակ արտասանած նրա բանախոսութիյունը ճիշտ վոր հյուսված են յերկչոտութիյուններից ու կեղծիքից, վորտեղ իսկապես վոր փորձ և փորձվում պակել բալշևիկ Մյասնիկյանի նշանակութիյունը և գործունեյութիյունը Լենինի ու Հոկտեմբերի, Ստեփան Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի, բալշևիկյան կուսակցութիյան ու միջազգային հեղափոխական պրոլետարիատի հեռանկարներից, և դնել նրան հայոց պատմութիյան ու խնդիրների խնդրի հեռանկարների տակ, անցողակիորեն գումար շահելու համար նաև այն մասվոր—ինչպես բնորոշել և ընկ. Մյասնիկյանը բորշյորի հեղինակին ուղղած նամակում—«անբարոյականութիյան ամենածայր չափին հասած իննաելիգենցիայի համար, վորի ներկայացուցիչներից մեկն և յեղել իր ժամանակին Խորհրդային Հայաստանի մեր այսորվա Սեյիդը։

Ապրիլ—1926 թ.

Ա. ՐՇԱԿ ՉՈՒՐԱԲՅԱՆ

ՆՐԱ ՏԵՂԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ

I

Կիրակի, հունվարի 7-ին, Պրոֆմիութիյան Խորհրդի դահլիճում, Ա. Չուրաբյանի մի յերկու համախոհները—Գևորգ Ղարաջյան, Ղազար Տեր-Ղազարյան, Լևոն Ելիբեկյան, Մաթեոս Դարբինյան և այլն—կազմակերպել հին մանվան յերրորդ տարելիցի առթիվ հուշհանդես։

Լսելով Արշակի նախկին գինակիցների ճառերը, վորոնց մեջ քիչ չեյին այլևս անհմաստ եք իվոք խոսքեր, մենք անկեղծ կերպով ցավեցինք, վոր Չուրաբյանի հիշատակին հարգանք կազմակերպելու նախաձեռնութիյունը իր վրա չեր վերցրել մեր մի վորևե կազմակերպութիյուն, վոր հեղափոխական Արշակի հարուստ գործունեութիյան վերլուծումն և ուրվագծումը վիճակված եր քաղաքականապես մեռած կամ «չեզոք» մարդկանց, վորոնց դժնատ խոսքերը մեզ չավին և չեյին էլ կարող տալ հեղափոխական անհանգիստ հոգու ճշտգրիտ պատկերը։ Բնական և, վոր պահանջկոտ ունկնդիրները հեռացան անգոհ, վորովհետև «նախկին գործիչները»—վորոնք իրենց մեջ ուժ են գտնում յերրորդ կոդմը լինել այս կատաղի պայքարի ժամանակ, յերբ մղվում և վճռական կռիվ պրոլետարիատի վերջնական իդեալի հաղթանակի համար,—կոչված չեյին գերազանցապես մարտիկ Արշակի հեղափոխական ծառայութիյունները դրվատելու։

Արշակը իրավունք ունի պահանջելու մեզնից ավելի ուշադիր վերաբերմունք դեպի իր հիշատակը։ Մենք գտնում ենք, վոր այսորվա քաղաքական ակտիվ գործիչներին և (վորոնց մեջ քիչ չեն Արշակի աշակերտները) վերապահված քննութիյան առնելու Անդրկովկասի իրականութիյան մեջ գործած հեղափոխականների անցյալը և բնորոշելու յուրաքանչյուրի տեղը մեր բանվորական շարժման մեջ։

Ֆիզիաքպես ապրել շարունակող քաղաքական դիակները չեն կարող հասկանալ նույնիսկ մեռած ըմբոստ վոլինեցին։

Դեռևս 1920 թվի սեպտեմբերին պատմական կրեմլում, զեկուցանելով Համամիութ. կուսակցական կոնֆերենցիային ընդհանրապես հեղափոխական շարժումը և մասնավորապես մեր կուսակցության պատմությունն ուսումնասիրող հանձնաժողովի—«Իսկապարտի» անհրաժեշտության մասին՝ ընկ. Պոկրովսկին նախազգուշացնում եր մեզ չվստահել ուրիշներին—«բարեմիտ» չեզոքներին և մանավանդ մեր կուսակցական հակառակորդներին—գրելու Ռուսաստանի պրոլետարիատի դասակարգային հերոսամարտի պատմությունը։ Գիտնական պատմաբանն ընդգծում եր, որ մենք պետք է ամենալուրջ ուշադրություն դարձնենք խնդրի այս կողմի վրա, որը թե այժմեական և թե պատասխանատու՝ ապագա սերնդի հանդեպ։

Արշակի հիշատակին խոսողների ճառերը մեզ մի անգամ ևս ապացուցեցին, թե վորքան ճիշտ և մոտեցել գործին մեր կուսակցական կենտրոնը հիմնելով «Իսկապարտը» և թե, իսկապես, կարող և խեղաթյուրվել բանվորական ընդոստացումի պատմությունը, յեթե նրա գրի առնողները կոմունիստներս չլինենք։

Արշակը բալշևիկ չեր. նա մինչև վերջին շունչը մնաց մենշևիկ։

Բայց այդ հանգամանքը չի կարող խոչընդոտ հանդիսանալ կոմունիստի համար գնահատության առնելու նրա գործունեությունը։ Մեր կենտրոնը այդպիսի գնահատման ցայտուն որինակներ և տվել։

Բալշևիզմը շատ քիչ հակառակորդ և ունեցել Պլեխանովի չափ հեղինակավոր կամ Կաուցկու պես վաստակավոր։ Սակայն այդ չի խանգարում մեզ առանձին հարգանքով վերաբերվելու դեպի Պլեխանովի հիշատակը (տես ամբողջապես Պլեխանովին նվիրված «Պոդ զնամենեմ մարքսիզմա»-ի № 6), մի քանի որինակներով տարածելու նրա մեծարժեք ուսումնասիրությունները դիտական սոցիալիզմի մասին, մեր կոմունիստական յերիտասարդությունը դաստիարակելու նրա անթիվ սքանչելի մարքսիստական յերկերի վրա։ Նույնը մենք կարող ենք ասել Կաուցկու վերաբերմամբ, վորը հեղափոխական պրոլետարիատի համար իսկապես մեռավ այն որը, յերբ, փոխանակ Հոկտեմբերյան Մոսկվա վազելու, հակառակ իր 70 տարիների շտապեց հեռավոր Թիֆլիս՝ գրկախառնվելու «սոցիալիստական դրախտի» (?!) մեզ քաջ ծանոթ հերոսների հետ, վրացական մենշևիզմի խայտառակ իրականությամբ «գիտնականորեն» հիմնավորելու գալիք իրավակարգի գեղեցկությունը և պրոլետարական դիկտատուրայի «անհեթեթությունը»։

II

Արշակ Զուրաբյանը Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո—միացած Ժորդանիայի, Զևեհինայի, Ծերետելիի, Դարաջյանի, Տեր-Դավթյանի և նմանների հետ—վճռական կերպով մեջ դրեց բալշևիզմին։

Նա վախավ—ինչպես շատերը—Պետրոգրադից Թիֆլիս, և այստեղ մենշևիկյան Բանվորական Խորհրդում կարդաց իր պատմական զեկուցումը մայրաքաղաքի անցուդարձի մասին։ Շատերն անշուշտ հիշում են նրա անհաշտ դիրքը։ Նա փորձված զեկուցանող եր, ունմպերամենտով հռետոր և գիտեր իր հակառակորդներին հարկավոր չափով խոցել։

Արշակի հետագա գործունեության մեջ չկա և փոչ մի մոմենտ, վոր թույլ տար մեզ ասելու, թե նա շեղվել է իր մենշևիկյան դիրքերից։

Հիմնական սխալ կլիներ վրացական մենշևիզմի դեմ պայքարելու կամ Ռուսաստանի որիենտացիայի կողմնակից լինելու մեջ տեսնել Զուրաբյանի «բալշևիկությունը»։

Նա դեմ եր հեղափոխական Ռուսաստանից և ռուսական պրոլետարիատից հրաժարվելու մտքին։ Բայց «հեղափոխական» և «պրոլետարիատ» ասելով նա չեր հասկանում կոմունիստական Ռուսաստանը, բալշևիկների յետևից գնացող պրոլետարիատը, այլ այն յերևակայալ Ռուսաստանը, վոր «անխուսափելիորեն» պետք է ծներ Հյուսիսի և Անդրկովկասի մենշևիկությունը, այն կարծեցյալ պրոլետարիատը, վոր պետք է վերադառնար Փետրվարյան հեղափոխության նվաճումներին, ամեն կարգի բուրժուական «հավասարության» և «ազատության»,—խոսքի, մամուլի, ժողովի, քվեյի և այլն, և այլն։

Նա խորապես հավատում եր մենշևիկյան «դեմոկրատիայի» հաղթանակին ընդդեմ «ուլտրապատերազմների» ինչպես «աջից», նույնպես և «ձախից», ու վախում եր, վոր Ռուսաստանից անջատված Անդրկովկասը զրկված կլինի հաղթանակող մենշևիկյան դեմոկրատիայի բարիքներից։

Աբշակը կողմնակից եր Անդրկովկասի առանձնացումին, «չեզոքացումին», քանի այդ «անկախությունը» կրում է լոկ «ձևական բնույթ» (Անդրկովկասի Սեյմի ժամանակ) և «ապահովագրում» եր մեր յերկիրը բալշևիկյան թուրքի վարակումից։ Բայց հենց վոր անջատումը խորացավ, Բրեստից ավելի խայտառակ դաշինք կապվեց Տրապիզոնում և առաջին սխալ քայլից հետո արվեց յերկրորդ ու տրամաբանորեն անխուսափելի քայլը, Աբշակը դադաց, վոր իր փայփայած ռուսական մենշևիզմը այլասերվում է, դառնում վրացական նացիոնալ-մենշևիզմ և ստեղծվում «վրացական Դաշնակցություն»։

Նա, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատը, վոր լռելյան իր սանկցիան եր տվել ամբողջ Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատիայի անունից Սեյմում արված Ոնիաշվիլու ցինիկ հայտարարության, թե «ռուսական ռևոլյուցիան՝ ռեակցիոն ռևոլյուցիա յե»,— վրդովվեց, յերբ ժամանակ վաստակելու համար արվող դատարկ թվացող հայտարարություններից Ժորդանիան ու Ռամիշվիլին անցան գործի։ Յեվ ծայր արվեց Վրաստանի նացիոնալ-մենշևիզմի և ռուսական ինտերնացիոնալ-մենշևիզմի ներքին պայքարին։

Մարտովը նախատում եր Ժորդանիա և Ընկ. ու իր հավանությունը տալիս Աբշակի գործելակերպին։

Կաուցկի-Վանդերվելդ-Ռենոդել իրենց հիացմունքն եյին հայտնում վրացական մենշևիզմի հերոսներին և մերժում զոհ դառնալ Աբշակի «միջկուսակցական ինտրիգներին»։

Վրացական մենշևիզմի և ռուսական մենշևիզմի պայքարն Անդրկովկասում, վորտեղ կոմունիստներս որենքից դուրս եյինք հայտարարված, որյեկտիվ կերպով նպաստում եր մեր գործին, վորովհետև՝ հակառակ բանակավոր կոմերի ցանկության՝ նա մերկացնում եր մեր բանվոր-գյուղացիական մասսաների առաջ ամբողջ մենշևիզմի (վրացական թե ռուսական, Ծերետելի-Լիբերի թե Զուբարով-Մարտովի) «հեղափոխական գործելակերպի» անհամությունը։

III

Վորովհետև այսոր կոմունիստական կուսակցությունը բանվորական շարժման վրչ միակ պատմություն է անում, այլև այդ պատմությունը արձանագրում. մենք մի փոքր ավելի կանգ կառնենք Աբշակի անցյալ գործունեության այդ կարևոր ժամանակաշրջանի վրա, մի յերկու խոսքով կհիշատակենք մեր պրոգրամները։

Նախքան Անդրկովկասի սովետիզացիան, հակառակ մենշևիկ-դաշնակ-մուսավաթյան ժժվարին իրականության, կոմունիստներին աջողվել եր բեկումն առաջ բերել տեղիս պրոլետարիատի շարքերում։ Հրապարակում ծեծվում եյին մի շարք խնդիրներ, վորոնց մոտեցումը ընորոշիչ եր ամեն մի քաղաքական գործչի դիրքի համար։ Աբշակը չափազանց դյուրազգաց ու ակտիվ հեղափոխական եր, վորպեսզի խուսափեր վորևե հարցի ուղղակի պատասխանից։ Այդպիսի անպայման կարղինալ հարցերից պետք է համարել հետևյալները։ Աբդյոք լինչ վերաբերմունք եր ցույց տալիս Զուբարյանը դեպի—

1. Կոմունիստական կուսակցությունը.
2. Կոմինտերնը և դեղին Ինտերնացիոնալը.
3. Խորհրդային Ռուսաստանը.
4. մեր արևելյան քաղաքականությունը։

Սրանք այնքան կարևոր խնդիրներ եյին, վոր յեթե կարողանանք լրիվ պատասխան գտնել Զուբարյանականների մոտ, ապա պարզած կլինենք ամեն բան։

Աբշակի անմիջական խմբագրությամբ հրատարակվել են շատ թերթեր—«Պայքար», «Մշակ» (մի քանի սմխ), «Սոցիալ-Դեմոկրատ» (ռուսերեն և հայերեն), ապա «Նոր-Խոսք»։

Դժվար է այդ թերթերի մեջ գտնել մի տող անգամ, վոր մեզ իրավունք տար յեղրակացնելու, թե Աբշակը լքել է մենշևիկյան դիրքերը բալշևիկության սիրո համար։

Պատռնական յենթադրություններ չպետք է թույլ տան իրենց Աբշակի հարղողները, վորովհետև նա չափազանց մարդված քաղաքական գործիչ եր, կուսակցական ամեն տեսակ բովով անցած մարտիկ, «ֆրակցիոներական» նրբությունները շատ լավ հասկացող և դիտեր հարկավոր դեպքում իր մտքերը ձևակերպել բավական աներկմիտ ու անվախ։

Սկսենք առաջին հարցից,—արդյոք վորևե մոմենտ զուրաբովցիները հրաժարվել են մեր կուսակցության հայացքին, ըմբռնումին, ծրագրին հակադրել իրենց կուսակցության ծրագիրը, ըմբռնումը, հայացքը։

Յերբե՛ք։

Ահա թե ինչպես եր ձևակերպվում մենշևիկյան գործելակերպը «Նոր-Խոսք»-ի առաջին №-ի առաջնորդողում։ Խորհրդային Ռու-

սաստանի հասցեին մի քանի շաբլոն կոմպլիմենտներ շռայլելուց հետո, այդ credo-ում ասված է բառացի.—

«Սակայն Սովետական իշխանությունը Ռուսաստանում կոմունիստական կուսակցության իշխանությունն է։ Նրա պայքարի, քաղաքական ստեղծագործության մեթոդները՝ այդ կուսակցության մեթոդներն են. նրա սոցիալիստական շինարարության գործի ըմբռնումը՝ կոմունիստական կուսակցության ըմբռնումն է։ Մենք այստեղ լինելու ենք շատ հաճախ քննադատի դերում և մեր հայացքը, մեր ըմբռնումը այդ խնդիրների, մեր կուսակցական ծրագիրը հակադրելու ենք նրա հայացքին, նրա ըմբռնմանը, նրա ծրագրին»։

Միանգամայն պարզ և ձևակերպված Զուբաբյանականների դիրքը մեր հանդեպ։

Պակաս ռելիեֆ կերպով չէ արձանագրված յերկրորդ կետի պատասխանը։

Հայտնի չէ, վոր Կաուցկու, Վանդերվելդի, Ռընոդելի և նմանների ճանապարհորդության գլխավոր նպատակն էր մի հակացույց կազմակերպել Արհրդային Ռուսաստանի և նրա դեկավար կուսակցության դեմ։

Ի՞նչպես էր դիմավորում Զուբաբյանականների թերթը։

Ահա (№ 4-ում).—

«Վողջույն նրանց։

Այսոր առաջին անգամ մեր անկախ գոյության սրից սկսած, Յեվրոպայից մեզ բարի լուր և հանում՝—գալիս են նոր հյուրեր, բայց այս անգամ անկեղծ հյուրեր ու լավ բարեկամներ։

Այնտեղից և միայն այնտեղից եկինք սպասում մենք բարեկամական ոգնության և յեղբայրական պաշտպանության։

Այսոր իրականանում և այդ ցնորքը։

Յեվրոպական բանվորները իրենք են գալիս մեզ մոտ»։

Զուբաբովցիների թերթը մատնոգում էր, վոր այցելությունը չսահմանափակվի միայն մենշևիկյան վրաստանով, այլ շարունակի մինչև «մանավանդ Հայաստանը»։

Նույն համարի մեջ խոսվում է նաև յերկու Ինտերնացիոնալների մասին։ Յերկուսևկես Ինտերնացիոնալը դեռևս չէր թխված։

«Նոր-Ռոսքը» հետևյալ կերպով էր բացատրում մեզ իր սերը «Լոնդոն թե Մոսկվա» հոդվածում.—

«Յեթե Մոսկվայի Ինտերնացիոնալի առաջին կոնգրեսը, վոր չէր ընդգրկում յեվրոպական բանվորության լայն շրջանները, հոռետեսության տեղիք էր տալիս և հավատիանալ չէր լինում, վոր առհասարակ ներկա պայմաններում հնարավոր է իսկական միջազգային համերաշխություն հաստատել,—ապա այժմ, յերբ Մոսկվայի յերկրորդ կոնգրեսին հավաքվել էին վոչ միայն ամբողջ աշխարհի կոմունիստական պատգամավորները, այլև ռուսական կոմունիզմի ծրագիրն ու գործելակերպը ժխտող սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները,—Մոսկվայի Ինտերնացիոնալը դառնում է բանվոր դասակարգի միջազգային քաղաքականության գործոն...»։

Արշակի թերթը Յերրորդ Ինտերնացիոնալին, մեր կոմինտերնին իր հարելը պայմանավորում էր կոմունիստական կուսակցության ծրագրի ու գործելակերպի ժխտմամբ և վոչ-կոմունիստական (մենշևիկ-եսերների) կուսակցությունների «մասնակցությամբ»...։

Մոռացվել էր Իսպոլկոմի մշակած պարտադիր 21 հոդվածները, մոռացվել Կոմինտերնի ամբողջ կյանքն ու պատմությունը։

Շատ ուրույն սպասելիքներ ուներ Արշակը Անդրկովկասի սովետիզացիայից, վորքան այդ կարելի է դատել նրա յերկու պինակիցների և հունվարի 7-ի ճառախոսների հոդվածներից։

Արհրդային Ռուսաստանին հետևյալ պահանջներն էր ներկայացնում «Նոր-Ռոսք»-ում «Բաղաքացի»-ն իր «Հայաստանի բլոկադան» հոդվածի մեջ.—

«Ռուսաստանը պարտավոր է առաջինը հասկանալ հայ դեմոկրատիայի, հայ աշխատավոր տարրերի կրած տանջանքները և ընդհառաջ գնալ նրա կենսական կարիքներին»։

Ինչպես տեսնում ենք, մեղադրանքներն ուղղվում էին վոչ թե դաշնակցական Հայաստանին, այլ Արհրդային Ռուսաստանին, և արդյունքն աչքերին յեղրակացնում էր «Բաղաքացին».—

«Դժբախտաբար Ռուսաստանը անտարբեր հանդիսատեսի դիրքի մեջ է հանդես այն տանջանքների, վոր կրում են Հայաստանի աշխատավոր տարրերը»։

Նույն համարում «Դնունին» իր «Նոր արհավիրք» հոդվա-

ծում պակաս խստությամբ չէր քննադատում Սորբրդային իշխանության արևելյան քաղաքականությունը, որը՝ ըստ նրա՝ վերջ ի վերջո սոցիալիզմ չէր, այլ պանիսլամիզմ.—

«Սակայն Ռուսաստանը պիտի դադ, որ չի կարելի վարել արևելյան քաղաքականություն հայաշխատավոր տարրերի դիակների վրայով։ Սոցիալիստական Ռուսաստանը պիտի հասկանա, որ թյուրքը վաշխարը ձգտում են ոգտագործել սովետական իշխանությունը իրենց պանիսլամական ձգտումների համար»։

Արշակը պակաս կատաղի հոդված չգրեց «բալշևիկյան բարբարոսության» (варварство) դեմ ռուսերեն «Սոցիալ-Դեմոկրատում, երբ մեր իշխանությունը Պետրոգրադում և Մոսկվայում բացեց «Ակադեմիկ կենտրոնի»—պրոֆ. Շչեպկինի և մյուսների դավադրությունը Սորբրդային իրավակարգի դեմ և վճռական միջոցներով ճնշեց այն։

Մենք չենք ուզում այս միանգամայն որչևիկով արձանագրված դոկումենտներին ավելացնել այն կոնկրետ, մեզ հայտնի շատ փաստեր, ապացուցելու համար, որ Արշակը մինչև վերջը մնաց համոզված հակառակորդը բալշևիզմի և իր ամբողջ հեղինակությամբ շատ հաճախ խանգարեց մենշևիկ-ինտերնացիոնալիստ բանվորներին, երբեմն էլ ինտելիգենտներին, որ առաջ կարել իրենց կապերը մարտավարության հետ և ձուլվել մեզ հետ։

IV

Արշակը համոզված մենշևիկ էր։ Սին աշխատանք և այսօր զբաղվել, թե ում հետ կլիներ նա մեր օրերին, չեթե անժամանակ մահը նրան դերեզման չէջեցներ։

Բայց Արշակը այնպիսին, որպիսին էր իրականության և մինչ թե հունվարի 7-ի ճառախոսների յերևակայության մեջ, այնուամենայնիվ թանկ և մեզ համար, և ահա թե ինչու։

Յերբ մի թոռւցիկ յետադարձ հայացք ենք ձգում վերջին քսան-քսանհինգ տարվա Անդրկովկասի բանվորական շարժման փշոտ պատմության վրա և փորձում ենք թվել սոցիալիզմի առաջին շարքերի մարտիկների անունները, ապա մեր առաջ անխուսափելիորեն ծառանում է Զուբաբյանը—հակառակ նրա հետագա «ֆրակցիոներական» տարաբարձիքության և վերջին տարիների անջատումին—իր բազմաշխատ հեղափոխական անցյալով, վորի մեջ մեզ համար ամենից թանգարժեքը նրա համառ պայքարն էր բանվորության դասակարգային գիտակցության և միջազգային համերաշխության ամրապնդման ասպարիզում։

Արշակը գիտական սոցիալիզմի առաջին ուսուցիչներից էր մասնավորապես հայկական խավարու աղքատիկ իրականության մեջ։

Մտաբերեցեք 900-ական թվականները, յերբ ներկա որերի մասին յերազելն անգամ մահացու հանցանք էր համարվում թե ցարական պետականության և թե մեր ճահճացած սեմինարիստական հասարակության կողմից։ Սոլոլակի միջավայրում և անձնական վայելքների ավյալների մեջ ծնված Արշակը, հրաժարվելով իր դասակարգից և ամեն ինչ մոռացած, վորպես անխոնջ ուսուցիչ նախ բանվորական և յերիտասարդական խմբակներում, ապա ավելի լայն հավաքույթներում արթնացնում ու կռմռմ-կռփում էր շահագործվածների մեջ բողոքի ու ընդոստացումի հեղափոխական կամքը։

Մենք ներողամտության և չափազանցության վոգով չենք տոգորված հոգուտ մեր հակառակորդների, ամեն կարգի մենշևիկների։ Բայց, վորպես փաստ, պետք է արձանագրենք, վոր Արշակը դասախարակել է մի քանի սերունդ մարքսիստորեն մտածող բանվորների, վորոնք իրենց ուսուցչից յուրացրած ոգմտունքից մինչև վերջը հանդիսին տրամաբանական յեզրակացությունը և այսոր կոմունիստական կուսակցության և Սորհրդային իշխանության անձնվեր աշխատողների շարքերումն են գտնվում։

Արշակը անփոխարինելի էր մասնավորապես նացիոնալիզմի դեմ պայքարելիս։

Նա մինչև ուղն ու ծուծը լինելով ինտերնացիոնալիստ՝ որդանապես չէր կարողանում հավասար չափով մարսել ինչպես դաշնակցական զոլոզպիական նացիոնալիզմը, նույնպես և քողարկված հայկական նացիոնալ-սոցիալիզմը (սպեցիֆիզմը) ու վրացական նացիոնալ-մենշևիզմը։

Վորպիսի կծու լեզու և անողոք գրիչ է մաշել Արշակը—Շահումյանի և Սպանդարյանի կողքին—մերկացնելու հայկական մասսաների առաջ մի կողմից Դաշնակցության հակահեղափոխական եյությունը և մյուս կողմից հայկական սպեցիֆիզմի հակամարքսիստ ու ջնասակար բնույթը։

Նույնիսկ վերջին որերը, յերբ Արշակի գոյությունն այլևս

անտանելի դարձավ իր յերեկվա մաերիմ պինակիցների՝ ժորդանիա-
Ռամիշվիլու համար և նա քշվեց դաշնակցական Յերևան, այստեղ
նրա ներկայությունը ամենից ավելի նեղում էր Բախշի Իշխան-
յանին և Դավիթ Անանունին, վորոնք սպեցիֆիզմի Բաղվի և
Թիֆլիսի անհաջող փորձերից հետո՝ մի վերջին փորձն էին ու-
զում կատարել դաշնակցական մայրաքաղաքում: Մեզնից շատերը
հիշում են այդ ընկերության տխրահռչակ դասախոսությունները:
Դավիթ Անանունը պարլամենտի սրահի ամբիոնից քարոզում էր
իր միամիտ ունկնդիրներին և իհարկե դաշնակցականների ծա-
փերի տակ՝ հրաժարվել Դաշնակցության վերաբերյալ մեր «նա-
խապաշարումներից», համարել այն եսդեկների ու եսերների նման
մի «սոցիալիստական» կուսակցություն և միասնական ֆրոնտ
կազմել «հյուսիսի բարբարոսների» դեմ, վորոնց առաջնորդ «մի
ինչ-վոր» Լենինի գլուխքները «նա»—Դավիթ Անանունը նույն-
իսկ չի արժանացրել ընթերցումի...:

Այսքան լուրթ վոճով եյին հանդես գալիս սպեցիֆիկները
Յերևանում՝ նախքան Արշակի այնտեղ աքսորվելը:

Վերջինիս ներկայությունը չափ դրեց Բախշիի և Անանունի՝
ունկընդիրների տգիտության վրա հաշված՝ սանձարձակ լեզվին: Բա-
վական էր Արշակին վորպես սոսկ հանդիսատես մտնել դահլիճը,
վոր մեշչանական սոցիալիզմի այդ դույզ-հերոսները իրենց ան-
հարմար զգային ամբիոնի վրա: Յերբեք չենք մոռանա Արշակի
մեզ արած ժպտադեմ դիտողությունը Անանունի մի դասախոսության
ժամանակ: Դեկտեմբեր 1919 թ., եսդեկների ու եսերների պատ-
մությունից եր դասախոսությունը. չենք հիշում ճշտությամբ վեր-
նագիրը, հետաքրքրվողները կարող են վերականգնել նույն թվի
դեկտեմբերի «Յառաջ»-ի օգնությամբ:

— Послушай, տեսնում ես, թե իմ ներկայությունը ինչքան
և նեղում ես Դավթին. չե՞ վոր Ռաշիդը կենդանի վկան է անցյալի.
ինչե՞ր չեր ասի նա, յեթե յես այստեղ ներկա չլինեյի...

Բոլորս զգում եյինք, վոր նա պատմական ճշմարտություն
եր ասում:

Յեվ իսկապես Դավիթ Անանունը սկսեց խոսել սոցիալ-դե-
մոկրատիայի անցյալից, շեշտելով Արշակի դերը նրա հիմնադրու-
թյան շրջանում:

Արշակից հավատար չափով վախում եյին և ակնածում թե՛
վրաց մենշևիկները, թե դաշնակները և թե սպեցիֆիկները:

V

Արշակ Զուրաբյանը Անդրկովկասի բանվորական շարժման
մեջ կատարած ունի խոշոր աշխատանք:

Մենք չենք փորձի հատկորել այն կոմունիստական:

Վրացական մենշևիզմից յերես դարձնելուց հետո, անձնապես
նրա գործունեության մեջ—վորպես մինչ-սովետական Թիֆլիսի
և Յերևանի իրականության ընդդիմադիր քաղաքական գործչի—
քիչ չեն փայլուն մոմենտներ, վորոնք որյեկտիվ կերպով մեծա-
պես նպաստել են մեզ դիմագրծ անելու հակահեղափոխությունը
Անդրկովկասում:

Բայց նրա հիշատակը կմնա Անդրկովկասի և մասնավորա-
պես հայ պրոլետարիատի սրտում, վորպես սոցիալիստական շար-
ժման պիոներների մեկի, վոր դեռ 900-ական թվականներին աշխատում եր մասնակից անել մեզ բոլոր յերկրների շա-
հագործվածների ձգտումին դեպի աշխատանքի թագավորությունը,
դեպի սոցիալիստական կուլտուրան:

Հունվար—1923

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

I. ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ 5

II. ՅԵՐԿՈՒ ՏԵՆԴԵՆՑ

1. «Յերկրից յեկող» բամբասագիրքը և Դաշնակցության հրճվանքը 8

2. «Թաթար ցեղի», «ռուս մուժիկի» և «ներքին թուրքի» նպատը՝ «Պատմական ծառայության» թեորիան 13

3. «Ժառանգականության» Դաշնակցության վարիանտը՝ Քաջազնունու և Մ[illegible]. Վարանդյանի հիպոթեզը 18

4. «Ժառանգականության» սպեցիֆիկյան վարիանտը՝ Ոզիոզ Դ. Անանունի «պատմական» վոլ՛տֆաը 25

5. Սպեցիֆիզմը՝ որպես Դաշնակցության սոցիալիստական վարիանտ կամ սոցիալիզմի դաշնակցական վարիանտ 29

6. Մի[illegible]ազգային-պրոլետարական և ազգային-բուրժուական դիրքերը՝ Սպեցիֆիկները՝ հայ-թուրքական պատրոնների իդեոլոգները 35

7. «Ինդիրների խնդիրը» կամ «տաճկա-հայկական հարցը»՝ Բալշևիկյան և դաշնակ-սպեցիֆիկյան տեսակետները 41

8. Դաշնակցական կուսակցության դասակարգային բնույթը՝ Հայ բուրժուազիայի «մարտական դունդը» թե՞ «վերջին հաշվում մի գարկան շարժում» 46

էջ

9. Դաշնակ-սպեցիֆիզմը ցարական իմպերիալիզմի գործակալը Մերձավոր-Արևելքում՝ Գործակցություն վոստիկանության և կազեռների հետ 53

10. Ազգային ներքին ընդհանուր ֆրոնտ բալշևիզմի դեմ՝ Ոզիոզ Դ. Անանունը գեներալ Կալեդինի ագենտ 66

11. Բալշևիզմը «հայ իրականության» վորպես «խորթ ու ոտար» կուսակցություն 71

12. «Թիֆլիսի խնդիրը»՝ Սպեցիֆիզմը հայ-ուբրժուազիայի «ազգային քաղաքականության» պաշտպան 75

13. Խայտառակ Բ. Իշխանյանի «Յերկու ամիս բոլշևիկյան բանտում» բամբասագիրքը՝ դաշնակ-սպեցիֆիկյան դավ-յեղբայրությունը բանտում 81

14. Հակասությունների սպեցիֆիկյան շփոթ մեր «Իստպարտի» վորոնումների մեջ 89

15. «Գուհեկացած մարքսիզմ» և «լրիվ մարքսիզմ»՝ «Ծունր դնենք» սպեցիֆիզմի առաջ՝ Ստ. Շահումյանի արձանի փոխարեն՝ սպեցիֆիկ-մեշչան Ռուբենի արձանը Յերևանում 92

16. Ստ. Շահումյանը սպեցիֆիկների մասին՝ «Պատմության մեջ մտնելու» ցավը 100

17. Յեզրակացություն.—Մարքսիզմը՝ բալշևիզմն և և բալշևիզմը միակ մարքսիզմը՝ Լենինիզմը և լենինցիները միայն ապահովեցին պրոլետարական բեժիմի հաղթանակը նա՛և «հայ իրականության» մեջ ու Արարատյան դաշտում 102

III. ԲԱԼՇԵՎԻԿՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՇՋԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՄԱՆ ՄԻ ՆՄՈՒՇ

1. Սիրելի ընկեր! 105

2. Հակա-բալշևիկյան բանավեճի մեթոդ 105

3. Բալշևիկյան պատմության անգիտակ կամ դիտակցական խեղաթյուրում *108*

IV. ՖԻԳՈՒՐԱ ՈՂՈՂԱ *128*

V. ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Կարևոր չհրապարակումները *147*

2. Յերկրորդ կարգի դիտողություններ *152*

VI. ԻՆՔՆԱԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՄԻ ՓՈՐՁ *165*

VII. ԱՐՇԱԿ ՋՈՒՐԱԲՅԱՆ — ՆՐԱ ՏԵՂԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ *175*

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀԱՍՌ-Ի ԳԱԱ ԸՍՊ
Ա. ԻՄ. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0418385

13633

ԳԻՆԸ 1 Ր. 50 Կ.

A Pm
3-43078

7732